


5

200  

---

204-4h.





10258

2

275-14

$\bar{V}$ <sub>29</sub> III

2004

200  
204-211  
1465

200  
204-211  
48

# Ի ԵՂ ԿՆԵՄՑ:

Որ և է Հողերու Բժշկարան:

Յօրինեալ 'ի Հ. Սկրտիչ վարդապետի  
Լազերեան 'ի միաբանութի մեծին Սխի-  
թարայ Լաբայի, 'ի լեզու կոստանդնու-  
պօլսոյ. յամի 1808. թմԾԷ:

'ի խնորոյ հոգեւեր պարոն Գեորգեայ օղոււտեան եղբօր  
գիտնական Յովակիմ Բժշկի:

Եւ տպագրեալ հրամանաւ Տն Տն Ստեփան  
նոսի Ազոնց' Աբբայի և Արքեպիսի:

1004  
19058

Յամի 1810. թմԾԷ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

7/XI 1922

ИМЕНА, МЯСНИ ПОНА

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Վ Ա

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Վանս սթյն Ղազարու:





# ՅԵՌԵՂԻՄԻԱՆ ԳՐԱՆԵՐԻ ԿՆՆՈՒՄԸ :

**Կ**եանքը ամմէն կենդանւոյն առջի ուղածը . և ան պիտի ըլլայ բանական կենդանւոյն առջի և վերջի ուղածը : Բայց կեանք որ կըսենք , կիմացուի աղէկ կեանք , ամմէն կողմանէ : Հանգիստ կեանք , որ ամմէնքս կըսինառենք , ու պէտք է որ վընառենք :

Ուստի որչափ որ մենձ ու պատուական է մէկ ըստեղծուածի մը կեանքը , այնչափ աւելի ցաւալի է անոր անհանգիստ ըլլալը . իսկ կորսուիլը կամ կեանքը կորսնցնելը մահուամբ՝ է ծայրագոյն ցաւ , որ անկից մենձ ցաւ չի կըրնար ըլլալ : Բնական կեանք մը չունեցողները , ի՞նչ բոլորովին անչարժ էւ անզգայ արարածները , փճանան նէ՝ ոչ իրենք ցաւ կիման , և ոչ ուրիշի ցաւ կուտան . թէ որ ցաւինք նէ անոնց վր , մը վր կը ցաւինք՝ անանկ պիտուական բանը մեզնէ պակսեցաւ աէյի . ի՞նչ քարի , փայտի , ջրի , կրակի համար : Անոնց նման բանք ունեցող բաները՝ որոնց կեանքը անկական կըսուի , ի՞նչ բոյսը , թէ խոտ ըլլայ , թէ ծաղիկ , թէ ծառ՝ թէ պտուղ , քանի՞ որ կրնան մենձնաւ , հասուննաւ , սրտերնիս կըսկըծայ՝ ու մեզք կըսէ պէնք ձեռք դայցընէլ փըրցընէլ զուր աեղը . չէ՞ թէ անոնք ցաւ կիման աէյի . ( ինչպէս կըկարծէին ոմանք անհաւատ և աղէտ մարդիկ ) , հասլա որ դեռ չէ ըմնցեր այն վայելչութի անկական կենաց՝ որ ձձ տըէր է անոնց . և կանուխ փըրցընէլով՝ մեզի ալ անպիտան կըլլան : Չգայական կի՞ շնչաւոր կեանք ունեցողները ինչպէս են ձձ՝ ինչ քանի , մէկզմէկէ աւելի զգայուն , ի՞նչ ծովու ժըժ մուկներ , ձկներ , հողի որդեր , ղեւուներ . մըր ջիմներ , հաւայի ճանձեր մեղուններ , քէփէէէկներ , թռչուններ , հաւեր , Յքիս վոյ պէսպէս չըբըտանիններ , թէ ուտուելու ըլլան և թէ չուտուելու , թէ ընտանի անասուններ՝ և թէ վայրի գաղաններ , հէ՞մ իրենք ցաւ կիման , հէ՞մ մեզի ալ ցաւ մը կուտան՝ երբոր ցաւ կը քաշեն , մանաւանդ

երբոր կրմեռնին , և աւելի ևս երբոր շարուշար  
կրտաակին , կի՛ շարչարանքով կրտաաննունին : Պատ-  
ճառն է՝ որ բնական է ցաւ զգացողին՝ ցաւակից  
ըլլալ ցաւ քաշողին • անգուժ մարդն է՝ որ արուն  
խմօղ գազանի պէս բնաւ ցաւ չիցըցնէր : Իսկ ար-  
դարն ողորմի անասնոյ իւրում , կըսէ գիրքը • միայն  
թէ անխելքուն է խղճալ էւելորդ ցաւով՝ անբան  
հայվաններուն վր՝ , կի՛ խղճել զանոնք սպաննե-  
լու , երբոր մեղի պէտք են ուտելու , կի՛ բանի մը  
ծառայեցնելու , կի՛ երբոր մեղի միտս մը կուսան-  
ղերէ Ծժ զանոնք ըրեր է մեր պիտոյիցը համար ,  
չափնալ մէյմէկու հերակուր ըլլալու համար :  
Պանք հիմա մարդուս վր՝ որ բանական կենդանի է •  
և բանական ըլլալովը՝ չէ թէ միայն ամեն կեն-  
դանեաց վր՝ տերութի թագաւորուն ունի , հա-  
պա իր կենդանուին ալ մէկ կերպ կեանք չէ , ամ  
մէն կերպ կեանք է՝ որ կրնայ գտուիլ երկրիս վր՝  
ու երկնքի վր՝ : Բնական կեանք ունի անզգայիցմէ-  
վեր , ունելով մարմին հողեղէն • անկական կեանք  
ունի բուսոց պէս , աճելով ու մենձնալով մէկ ու  
բոշեալ չափով մը • զգայական կեանք ունի՝ զգայա-  
կան և շնչաւոր կենդանեաց պէս , ունենալով ա-  
նոնց նման ծնունդ և մտուգ , գործարանք և ըզ-  
գայարանք , ուտել խմել , պառկիլ ելլալ , ապրիլ  
ու մեռնիլ • և ամեն բանէն վեր՝ բանական կեանք  
ունի՝ որով երկրային կենդանեաց կարգէն գուրս  
կեւլայ , ու երկնային կենդանեաց՝ քի հրեշտակաց  
կարգը կրմտնայ • և ասով կըլլայ իր կեանքը այն-  
չափ պատուահամ , աղնիւ՛ , ու անգին , որ բոլոր  
Յք իր զարգարանքովը միճանար նէ , ու ամեն  
բնական՝ անկական և զգայական կեանքերը կորսը-  
ճէին մէկ մարդուն կեանքը միայն պահելու հա-  
մար , արժան էր՝ ու մենձ բան չէր : Եւ աս կը-  
սում մարդուս մարմնաւոր կենացը համար • Իսկ  
հոգւոր կեանքը՝ որ բոլորովին հրեշտակային է ,  
և գրեթէ Ծժային , հիջ մէկ բանի հետ չի կշառ-  
սէիր Յքիս վր՝ : Տես թէ որչափ մենձ բան է ե-  
ղեր բանական կենդանւոյն կեանքը • և որչափ ցա-  
ւալի՝ անոր ցաւը , մանաւանդ մահը :

Այ բանս աղէկ հասկընալու համար գիտցիր որ  
մարդս բանական կըսուի իրէք կերպով • մէյ մը՝  
որ

որ ունի բան 'ի լեզուի, քի խօսք. մէյմալ որ ունի բան ներաբամագրեալ, քի բանահանութի 'ի միտս, որ կրտուի արամաբանութի. և մէյմալ ունի բան հոգեղինուէ, քի հոգի' մտօք և կամօք զարգարել. ուստի բանահան կրտուի մարդս՝ իբրև խօսող, իբրև տրամաբան, և իբրև իմացական: Խօսելը առաջ կուգայ տրամաբան ըլլալէն. անալ իմացական ըլլալէն՝ ու մարմնոյ հետ կապ ունենալէն: Բանահան կենդանի ըսելով՝ սովորաբար տրամաբան կ'իմացուի: քի անանկ բան հասկըցող մտքովը, որ այն բանէն նոր բան մը կը հանէ խելքովը. քի մտի տեսնայ նէ, անոր սլառաձուր կրակնալ կը գտնայ խելքովը. դարձեալ կը ճարտարէ լեզուովն ալ խօսել ու մտքը հասկըցընել դ'իմացինին, և որովհետև մտքին հետ բացարձակ կամք ալ ունի, յօժարուիլը մէկ բանի մը կապուած չէ, հապա ամ մէն ճանչցած բանէն ուզածը կընարէ, չուզածը մէկ դի կը ձգէ անձն շխան ազատութի:

Ասով կը հասկընաս մարդուս կատարելութիւնը, թէ որչափ իրմէն վար կը մնան անբան կենդանիք, որ ոչ մտք ունին բան մը հասկընալու, ոչ խելք ունին անկից բան մը հանելու, ոչ լեզու ունին հասկըցածնին հասկըցընելու, և ոչ կամք ունին տեղւոյն կէտէ աս բանս ուղելու կի՞ չուղելու. հապա մէկ թիւրլիւ ուղելիք կի՞ չուղելիք մը ունին բնական յօժարութենով, և իշարէթով կի՞ աննշան ձանով մը մի և նոյն բանը կը հասկըցընեն: անկից դուրս չեն կրնար ելլալ:

Տրամաբան ըլլալը իմացական ըլլալէն կուգայ ըստի. զերէ մարդս սոսկ մարմնն չէ շնչաւոր, հապա ունի անմահ հոգի՝ 'ի պատկեր այ ստեղծած. մարմնն 'ի մարմնոյ կըլլայ, քի 'ի ծնողաց, իսկ հոգին 'ի հոգւոյն, քի յայ նորանց կը ստեղծուի՝ նման հըրեշտակի, մանաւանդ թէ նման այ՝ գոյապուի հոգեղէն՝ մտօք և կամօք: Եւ այս կատարելութիւն իմացական՝ անմահական և անժական՝ պիտի երևնայ աւելի անդի ճրք. ուր ուղենայ նէ՝ տրամաբանելով բանէ բան կը հանէ, և ինչ լեզու որ ուզէ՝ էն աղէկը իր քովէն կը ստեղծէ ու կը խօսի. բայց կարօտ չէ աս կերպս միշտ բանեցնելու. հապա աստուծու առեւտրով ամմէն բանը մէկէն

խմեց կրքնոյ հասկընալ , և առանց խօսելու՝ միտքը ուրիշի կրնայ հասկըցընել • ( որ կըսուի շեղուհընշարհոց • ) իսկ կամքն կատարեալ կըլլայ ամ մէն իր ուզածովը , որ ալ բան չի մնար ուղեւու • վն զի զի՞ծ տեսնալով՝ անով կըզմայլի անհնապէս • և այնու յծատեսութիւն կըլլայ յծանման բան մը՝ անմահ կենօք յաւիտեան : ( Արու վերայ գեղեցիկ գրեր է մեր հայր Յակօք վարդապետը 'ի տեսարան Տի • մենք ալ ուրիշ ոճով խօսեցանք 'ի դիմառնութե չորից վերջնոց յազադս արքայուէ ) :  
 Հիմա ի՞նչ կըսես , ասանկ կեանք մը ունենալը ի՞նչ կարժէ , ի՞նչ չարժէր • ասկից մենձ բան կըրնայ մի ըլլալ • ասոր ներհակ՝ որչափ ցաւալի է աւասնկ կեանքը կորսնցնել , ասանկ կեանքը փձացնել , ասանկ կեանքը յաւիտենական՝ յաւիտենական մահուան հետ փոխել , ինչպէս որ կըփոխեն յամ մեղաւորք , որ աստուծմէ ետ կենալով մահուալի մեղօք՝ իրենց հոգին կը մեռցընեն • թ՛ող զանոնք որ ներքի մեղքով իրենց հոգին կըհիւանդացընեն , ու մենձ բան չեն սեպեր , զերէ իսպար չեն՝ թէ որչափ մենձ բան է հոգւոյն կեանքը , առողջ կեանքը , հանգիստ կեանքը • և այն՝ յաւիտեան :

Աս ողորմելի և ողբալի վիճակը տեսնալով մարդկանց վր՝ քարոզութես օրերը , և շատ կերպով ճարմը՝ գեղ մը մոմտալով՝ անց տուն առճածին կեօրէ , ձեռք զարկի աս պղտիկ գիրքս հանելու , ամ մէն մարդու առջևը դնելով ընտանի խօսքերով թէ քանի կերպով կըրնայ մարդուս հոգին հիւանդանալ ու մեռնիլ , որ անկից ետ քաշուին • և քանի կերպով գեղ կըրնայ ըլլալ մեր հոգւոյն ողջութե և առողջութե : Մէկ խօսքով , կըբանաս ով մեղաւոր եղբայր իմ և որդի աս գրքիս մէջ գիտէ կենաց՝ փարատիչ ցաւոյ և մահու հոգւոյ : Տը ինքնին տացէ ինձ նախ առնել , և ապա ուսուցանել , և ձեզ ընթերցողացդ և լսողացդ աւնու և առնել առողջարար յանձինս զայս գեղ կենաց 'ի կեանան յաւիտենականս :

Այլ ես աստանօր զսակաւամասնեաց երկս նուաստացելոյս 'ի կարգի որդեգրաց սրջ կուսին , որ՛մ այլ ումեք , բայց քեզ միայնոյ մօր և կուսի՝ Տէրաւ

բամայր, Տերն Եայնի Բժիշկի, դէլ կենաց ստուգապէս  
ստորոգեալ 'ի սբօց վարդապետաց, նոյն և ծառ կէ  
նաց, քոռնի անճահոռնէ, միանգամայն և արճաք քնիոյն  
անճահոռնէ, նուիրեմ 'ի բոլոր սրտէ՝ ը նուիրանաց  
որդեգրեան բարեպաշտ ծառայի քո՝ բանկցս փա  
փաբողի : զի ընկալցիս քեզ 'ի հաճոյս, և արգիւ  
նացուսցես զուխտ սրտից մերոց 'ի փառս որդւոյ  
քո միածնի :

Եւ դու ար իմ ար՝ լուր բանիւ հոգեկիր հսկողի՝  
գոչման յեանեւոյս . \* Եւ արասցեն զսոյն ընկերոցացն  
'ի սիրքս յաբախ՝ Բժիշկոռնի հոգւոց, և ճաբոռնի յանցա  
նաց, ըողոռն պարտոց, և արճաբար մեղաց կապանաց . . .  
Եւ արասցեն ընեւ զեղ կենաց՝ առ հնարս յաւոց հոգւոց  
( և ճաբոց ) Կոց սպեղծութոց . . . Չսխեալս իմ դո՛ւ  
կաբարեմ . Եւ ի՞նչ հոգի ք խառնեալ 'ի սա || անարեկ . Կ :





Ընդհանուր քահանայի տառապի ամուսնու շնորհաց նի:



# Գ Ե Գ Կ Ե Ն Ե Լ Ե Յ

## Գ Լ Ա:

Աստուծոյն ողջութեամբ ճարտոյն, եպսի ցաւը, և դեղը՝  
այսինքն են էրէք վիճակս՝ անմեղ բնութեամբ, անհեալ  
բնութեամբ, և նորոգեալ բնութեամբ:



\* \* \* \* \*  
 \* \* \* \* \* Լ \* \* \* \* \* Ա Ս Ո Ւ Ա Ճ Չ Մ Ա Հ Ո Չ  
 \* \* \* \* \* արար, և ոչ ինդայ Է կորուստ  
 \* \* \* \* \* կենդանեաց. քանզի հաստա-  
 \* \* \* \* \* տեաց ՚ի լինել զամբ. և ՚ի փրկուի են դործք  
 \* \* \* \* \* Յի. չիք ՚ի նս դեղ սատակման. և ոչ թա-  
 \* \* \* \* \* գաւորուի դժոխոց ՚ի ներքոյ երկնից, (կմ  
 \* \* \* \* \* ՚ի վի երկրի.) զի արդարուի անմահ է. իսկ  
 \* \* \* \* \* ամպարիշտք ձեռօք և բանիւք կոչեցին զնա  
 \* \* \* \* \* (իմ զմահ) առ իւրեանս . . . . Չ ի ամ հաս-  
 \* \* \* \* \* տատեաց զմարդն յանեղծութեամբ. և ՚ի պատկեր  
 \* \* \* \* \* իւրոյ բարերարութեն արար զնա: Մախանձու  
 \* \* \* \* \* բանսարկո՛ւն եմուտ մահ յՅ. և փորձեն  
 \* \* \* \* \* զնա՝ որ նր վիճակին սակի են: Իմաստ. ան.

13 = 16. և Բ. 23 = 25:

Թ. Մարդն որ ստեղծուեցաւ նէ, երկու բան  
ուներ. մէյմը՝ բնական տուրք. մէյմալ՝ դերբ-  
նական շնորհք: Բնական տուրքն էր՝ իր բնու-  
թիւն, որ է բանական կենդանի ըլլալ՝ ունե-  
լով մարմին նիւթական, և հոգի աննիւթ ի  
մացական, սքանչելի միաբանութիւն իրարու  
հետ կապուած՝ պէսպէս զարդարանքով: Արդ  
ինչ-

ինչպէս մարմինը շարունակ ըլլալով չորս բանէն , \* 'ի զգալի տարերց՝ քառից , հակառակաց միաբանից ॥ , ցի են հող , ջուր , օդ , հուր , ինքիրմէ կրնար բնականաբար ապականիլ , և քակուիլ 'ի նոյն չորս նիւթս՝ որոնցմէ եղեր է . ասոր ներհակ՝ հողին աննիւթական և իմացական՝ չունենալով իրեն սլառճառ մը քակուիլու , որովհետև բոլոր մը նէր անբաժանելի , առանց մասանց՝ որ հարենայ 'ի նոյն մասունս քայքայիլ , իրեն քակուիլը ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ , բայց եթէ՝ ոչինչ դառնալով , և բոլորն բոլորովին փճանալով , և սակայն անոր իր ըրած բանը չի փճացներ , ուստի բնականաբար պէտք էր որ բանական հողին ըլլայ միշտ անեղծ և անմահ : Ուրեմն մէյ մը աս մտքովս կիմացուի այն բանն դրոց , \* **ԱՃ** հաստատեաց զմարդն յանեղծուեի ॥ ց՞ տուաւ մարդուն հողի անմահ : Այս է փիլիսոփայական մեկնուի՝ ճշմարիտ ընդհան . միայն թէ աս տեղը բառս **Մարդ** կիմացուի փոխանակ զլիաւոր մասին մարդոյ , որ է հողին : Ը . Իսկ գերբնական շնորհքն՝ այն էր , որ անձ զմարդը աս աշխրբիս համար միայն չըստեղծեց՝ որ անցաւոր կեանք մը նէ , հապառուզեց որ երկնային փառաց ալ հասնի , և յաւիտեանական կեանք վայլէ . ասոր համար հէ՛մ մարմնոյն հէ՛մ հողւոյն մէյ մէկ գերազանց ձիրք տուաւ դրախտին մէջ . ցի գերբնական անմահ հուի մահկանացու մարմնոյ , և գերբնական անմահ հուի անմահական հողւոյ : Եւ այս է բուն անմահական մեկնուի՝ սյն բնաբանին , \* **ԱՃ** հաստատեաց զմարդն յանեղծուեի ॥ . որ և է ճշմարտութի հաւատոյ . ցի թէ անձ զբոլոր մարդն անեղծ և անմահ մնալու համար

մար ստեղծեց . անանկ որ մարմինը առանց  
հիւանդութիւն և ցաւ քաշելու ապրի առեն մը  
աս Յքիս մէջ՝ վայելելով այ տուած մարմնաւոր  
բարիքը , և ետքը կենդանի կենդանի երկինքը  
համբառնայ , ու յաւիտեան վայելէ այ հետ  
հողևոր բարիքը :

Աս բանս կարենայ ըլլալ տէյի՝ հողւոյն ալ  
տըճաւ ( բաց ՚ի Փիզիզական և ՚ի բնական ան-  
մահութիւն ) գերբնական և բարոյական ան-  
մահութիւն մալ , իմ բնութիւն ՚ի վեր կատարելու-  
թիւ մը՝ որ շնորհք կըսուի . որ է անանկ սրբա-  
բար պարգև մը ներքին՝ որ անով այ հաճոյա-  
կան ըլլայ , և անհաստատ գործքեր ընելով՝ ար-  
ժանի ըլլայ իբրև իր աշխատանքովք վաստը-  
կած վարձքի տեղ ալ ձգել երկինից արքայուիւր :  
Եւ այս երկու սքանչելի գերբնական բաները՝  
իմ անմահութիւն մարմնոյ Փիզիզական , և ան-  
մահութիւն հողւոյ բարոյական , անանկ կա-  
պուած էին իրարու հետ անբաժանելի , ինչ-  
պէս կապուած էին հողի և մարմին անբաղ-  
տելի . որ ինչպէս հողին բաժնուի նէ՝ մարմինը  
մեռած լէշ մը կըմնայ , ասանկ ալ հողւոյն  
բարոյական անմահութիւնը մէկ դի երթալէն  
էտև՝ մարմնոյն Փիզիզական անմահութիւն ալ  
պէտք էր որ վերնար , ու բոլոր մարդը մեռնէր .  
ինչպէս որ եղաւ :

Դ. Աս էր ան դաշինքը՝ որ ան առաջուց  
դրաւ մարդուն հետ՝ իմ աղամայ և եւայի ՚ի  
դրախտին . պատուիրանքս որ չի պահէք նէ՝  
ըսաւ , նոյն օրը մահու մեռանիցիք . սոսկ մե-  
ռանիցիք չըսէր , հապա՛ մահո՛ւ մեռանիցիք , ( ծնն-  
ք . 17 . ) իմ հողուով և մարմնով մեռնիք . մար-  
մինը՝ որ հող էր , հող դառնայ . հողին՝ որ  
փճանալ չունի , իմ երեսէս ինկնայ . իմ զրկուի  
յստ .

յոճայլն շնորհաց , և 'ի պարզեաց հոգւոյն  
սբլ . ինչպէս որ ջրհեղեղն ատեննալ ըսաց .  
\* Մի մնացե ոգի իմ 'ի մարդկանդ յայդ-  
միկ՝ յաւիտեան , վն լինելոյ դոցա մարմին ॥

ծնն . 4 . 3 :

Ասոնք հերիք չեն . առ երկու կերպ մահո՛ւանս  
հետ՝ իրենց պատճառներն ալ մէյտան ելան՝  
էբրև կարաստեք մահու և առաջնորդք կորս-  
տեան , բիւրակերպ թոյնք մահաբերք կամ  
դաղանք պատառօղք . քի պէտպէս հիւանդու  
թիւնք մարմնոյ , և պէտպէս հիւանդութիւնք  
հոգւոյ : որ անմեղ բնութե վիճակին մէջ հիջ

մէկը չիկար :

Զորօրինակ , դլխու ցաւ չիկար , խելքի ցաւ  
ալ չիկար . ո՛չ հոգևոր և ո՛չ մարմնաւոր խել-  
լագարուի : դլխու պտուտ չիկար . մտքի տա-  
տանում ալ չիկար : երեսի ծուռուծուռութի  
կամ անշնորհքուի չիկար . միտքն ալ խենդու  
խելառ բաներու ետեէ չէր երթար . երևա-  
կայունն ալ անշնորհք և այլանդակ բաներով

չէր խաղար :

Աչքի ցաւ չիկար , աչքի ցանկուի ալ չիկար .  
աչքով մեղք մը չէր ըլլար , հոգւոյն աչքն ալ  
չէր կուրնար , ամմէն բանը յիստակ ու շիտակ  
կրտեսնար . ըրածը կըղիտնար , ուրիշներուն  
ըրածին չարաչար դատաւոր չէր ըլլար :

Անկըճի ցաւ չիկար , անհնազանդութի բանի  
որ չիկար . անկաճդրութիւնին աղէկը կար ,  
դէշը չիկար :

Բերնի , ակռայի , լեղո՛ւի , պողազի ցաւեր չի-  
կար . բերաննալ մէկ մեղք մը դուրս չէր հա-  
ներ . ակռան ուրիշին անունը բամբասանքով  
չէր խածխճէր . լեղուն անվայել խօսք մը չէր  
խօսեր . պողազը՝ իր չափէն հւել բան խա-

պուլ

պուլ չէր ընէր . ո՛չ կեր և ո՛չ խում : Տապա  
 չափաւոր և կամաւոր ճաշակ մը կառնէր՝ եր-  
 քոր ուղէր՝ մայ ստեղծած բարիքներէն ու պա-  
 տուական ջրերէն . չուզէնար նէ՛ նեղութիւն  
 չէր քաշեր , ո՛չ անօթուի և ո՛չ ծարաւ . հերիք  
 էր որ ատեն ատեն ՚ի ծառոյն կենաց համտեւ  
 մը ընէր իբրև նախապահօղ դեղ կենաց և  
 բանդէհիբ անմահութե՛ : Իսկ մարդուս ան-  
 խելքութիբ ան եղաւ որ գնաց արգիլած ծա-  
 սէն կերաւ , որ էր մահադեղ : Աւաջ դի-  
 տուի բարւոյ ունէր . դիտուի չարի չունէր .  
 ետքը ուտելով ՚ի ծառոյն դիտուի բարւոյ և  
 չարի , բարին մտոցաւ , չարը սորվեցաւ . ու  
 բով ամմէն չարիք մէկէնիմէկ գլուխը թափե-  
 ցաւ ինչ հոգւոյ և ինչ մարմնոյ . \* յօտից մինչև  
 ցղուխ չիք ՚ի նմառողջուի ॥ . Եսայ . Կ . 6 :  
 Դ . Այն ոտքն որ՝ ցաւը ինչ էր՝ չէր դիտեր ,  
 դէպ ՚ի արդիլած ծառը քալելով՝ արժանի  
 եղաւ որ ետքը փշերու վր՛ քալէ ու խոցոտի .  
 և գլուխն ազամ՝ իր ոտքին մը եւայի խոնարհ  
 հելով , անանկ տակնուվրայ ըրաւ զինքն ալ՝  
 զբոլոր ճքն ալ , որ ուրիշ ճար չիկար շոկելու ,  
 քայց և թէ գլուխն մեր մեծ զայ խոնարհի  
 յերկնից իրենն օտից , մը մեզի , ու կանգնէ  
 մեր ընկած բնութիբ , գլուխը փշէ պսակ պիլէ  
 առնելով :

Այն ձեռքն որ՝ աշխատանք ինչ ըսել էր՝  
 չէր դիտեր , հապա սէՖայի ու էյլէնձէի հա-  
 մար դրախտին պախձան պէտ պիտի ընէր ,  
 երկննալով դէպ ՚ի պտուղն արգելեալ ծա-  
 ռոյն , հէ՛մ ինքը պատժովեցաւ՝ որ բոլոր կեան-  
 քը աշխատանքով անցընէ , ու քրտամբք երե-  
 սաց հաց ուտէ՛ իր զաւկըներովը , հէ՛մ իր մորը  
 իրեն համար խաչին վր՛ ձեռքը ոտքը տարածէ

ու դամու՛ի . \* տարածեալ ձեռք լէ՛ ձեռաց ,  
ոտք լէ ոտից ընթանալեաց ॥ . ևն :

Այն կողն՝ որ կենդանուէ աղբիւր ըլլալով ,  
և պահարան սրտի՝ որ կենաց արմատն է ,  
հրաշալի կերպով զիրեն նմանը ծներ էր՝ ոչ  
իբրև զաւակ , այլ իբրև ընկեր օգնական ին-  
քեան , քի՛ զեւայ՝ զմայրն իմ կենդանեաց ,  
անմտածութիւնք և անհոգութիւնք ույժիչ ըլլալով  
խաթերը իր ընկերոջը՝ կերաւ արդեւած պտու-  
ղը , չէ՛ թէ խաբու՛ելով եւայի պէս՝ թէ՛ ան-  
նման կըլլայ , այլ՝ յաղթու՛ելով ՚ի բնական  
սիրոյ նի՛ , անոր խաթրէն չանցնի տէյի՛ ան-  
խաթրէն անցաւ , ու պատճառ եղաւ որ հէ՛մ  
եւայ՝ հէ՛մ ամիկն դստերք նորա ցաւով ու  
տրտմութիւնք զաւակ բերեն , և իմ որդիք մարդ-  
կան ամիկն կերպ ցաւ քաշեն ՚ի սրտի և ՚ի  
փորի . որոնց դեղ ընելու չեն հասնիր իմ  
բժշկարանք . և՛ ս առաւել հոգևոր ցաւեր ու  
հիւանդութիւններ քաշեն ներսէն , որ չեն կրնար  
բժշկել իմ բարոյականք : Մի միայն դեղ  
կրմնար որ որդին ան՝ որ եղև որդի մարդոյ ՚ի  
դստերէն եւայի յանարատ կուսէն մարիամայ ,  
խաչին ծառին վրէ՛ ելայ , ու հոն տեղը իր կողմ  
բացու՛ի , ու բխէ արիւն և ջուր . արունովը  
քաւէ զմեղս թի , և ջրովը մարէ զմեղաց հու-  
րը՝ որ ելաւ ՚ի կողէն ադամայ :

Է . Տահա ինչ ըսեմ , ինչպէս հասկըցնեմ  
հոգևոր և մարմնաւոր ցաւերը՝ որ պատճա-  
ռեցաւ ՚ի մեղացն ադամայ . \* որով մեռաք  
արդարուէ ॥ . և ՚ի վիճակէ անմեղ բնութիւն  
սկզբնական արդարութիւն՝ ընկանք ՚ի վիճակ  
ապականեալ բնութիւն . որուն ուրիշ ճար չի-  
կար , բայց միայն որ դար մի միայն դեղ կե-  
նաց կենարարն մեր յս քի . վնյ կըսէ շարա-  
կանն .

կանն . \* Որ զանազան վիրօք մեղաց հարաք  
յողիս 'ի թշնամւոյն , և 'ի բազմապատիկ հե-  
ւանդուիս կարօտացաք մարդասիրիդ բառ-  
նալոյ զցաւս մեր , վնջ բժշկեա՛ զմեզ քս ուն  
մարդասէր ॥ :

Այս երկնաւոր դեղս՝ նոյն և բժիշկ , սոր  
վեցուց մեզի բանիւ՛ և օրինակաւ , թէ որ ցա-  
ւին որ դեղ շահ կընէ . որ բանէն զգուշ պի-  
տոր կենանք՝ սանքի փէհրիզ պիտի բռնենք ,  
և որ բանը պիտի բանեցնենք՝ որ վրայ դանք ,  
մէյմալ չիհիւանդանանք . ինչպէս որ երսուն  
ու ութ տարի հիւանդացողին՝ որ ընտցուց  
հողւով և մարմնով , աս պատժէրքս դրաւ .

\* Ահաւադիկ ողջացար , մի ևս մեղանչեր .  
զի մի չար ևս ինչ ինիցի քեզ ॥ . յովն . Ե . 14 .  
հապա մենք ալ քսի մեզի սորվեցուցած դե-  
ղերը ամիէն մէկ ցաւի դէմ սկսինք առաջ բե-  
րել ու բանեցնել իր շնորհքովը :



Գ Լ Բ :

Դեւ սնդիհաւան մեղաց . որ է մերսոսի :

մ . Բովանդակ մարդկային բնուիս՝ մահա-  
ցու հիւանդութի մէջ ընկաւ ադամայ մեղ-  
քովը , որ կըստնի սկզբնական , անանկ պու-  
լաշըն ցաւ , և անանկ չարաչար ու մէկէնիմէկ  
սպաննօղ հասարակաց , որ անոր նման եու-  
մուրճախ չի կրնար ըլլալ , զերէ ամիէն մարդը  
մէկէն պլտրկեց , ու զամիէն մարդ տահա չի  
ծնած , սպաննեց :

Ասոր

Ասոր ուրիշ դեղ չէր կրնար ըլլար, բայց միայն ինքն երկնաւոր բժիշկն՝ որ և է բուն դեղ կենաց, այն՝ որ միայն բացարձակ կրնայ ըսել. \* Ես հարկանեմ, և ես բժշկեմ, ես սպանանեմ, և ես կեցուցանեմ ॥ : Ուստի տեսնալով մեր ողորմելուիք՝ ողորմեցաւ ու եկաւ մեզ բժշկել և կենդանացնել. Ըմ, \* Ոչինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ՝ հիւանդաց. և ո՛չ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղաւորս ॥ . Ժաբէ, Թ. 17 : \* Ես եկի՝ զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին ॥ . Եւ. Ժ. 10 . Կի առաւել քան զառաջին կենդանուին՝ զոր ունէին յանմեղ վիճակի դրախտին : Եւ ինչպէս որ սկզբնական մեղաց մահացու հիւանդուին հասարակաց էր, նմանապէս կենարար դեղնալ հասարակաց տրուեցաւ, Ըմ, \* Ունի բարամաւ ամենեքին մեռանին, նոյնպէս և քսիւն ամենեքեան կենդանացին ॥ . Կ. Կորնթ. Ժ. 22 :

Բայց թէ ինչպէս կըլայ՝ որ ամմէնքը չեն կենդանանար, քի շատն ալ կմեռնի նոյն սկզբնական մեղքով, պէսպէս խորունկ պատճառներ կան՝ որ անբարեկամները ճորով կրնան հասկընալ, թո՛ղ թէ հասկըցընել. քեզի հերիք ըլլայ աս երկու դիւրին պատճառը :

Մէյմը որ ինչպէս մարմնաւոր կենաց լինանքական դեղը թէպէտ խօլայ գտնուի նէ ամմէնտեղ, ճապայ ալ ըլլայ առանց ըստկի, այսու ամիւ կըլլայ հիւանդ որ այն դեղը կամ չի գտնար, կամ չառներ, ու կմեռնի պէսպէս պատճառներով. զորօրինակ մէկը պուտմը ջուր առներ նէ՝ պօղազը կըբացուէր, չեն տուներ, եւ չէ առեր նէ, պօղազը գոցուէր ու խղդուներ է. մէկալը հոտած հավայի մէջ

դոցումս նստելով մեռեր է . հավան փոխեր  
 նէ , չէր մեռնէր . մէկալը իր մարդիկներուն  
 անհոգութենէն երեսի վր մնացած կրմեռնի .  
 Լն . ասոր նման հոգևոր հիւանդութեան  
 մէջ կըլայ :

Մէյմալ որ ինչպէս սկզբնական մեղքը մեր  
 ամիլնուն առջի ծնողացմէ մեզի կանցնի՝ միջ-  
 նորդութիւն մեր առանձնական ծնողաց . ըմ ,  
 \* անօրէնութիւն յղացաւ , և 'ի մեղս ծնաւ զիս  
 մայր իմ ॥ . սալ . Ծ . 7 : անոր դեղն ալ՝ մեր ամ-  
 մէն մէկին ծնողաց ձեռքովը ճարճելու ճամ-  
 բան դրած է աստուծմէ : Հին օրինաց մէջ՝  
 ծնողքն որ հաւատացեալ ըլլային նէ , անոնց  
 հաւատքովը զաւկներն ալ եկեղեցնայ մէջ  
 կրօնաւորէին . և ասոր նշանը յայտնի ըլլայ  
 տէյի՝ ամ հրամայեց որ ամապաշտ ազգն ար-  
 բահամուն զիրենց մանչ զաւակները թլփա-  
 տեն . որ թէպէտ ըստ ինքեան սկզբնական  
 մեղքը չէր ընջէր , բայց յայտնի կրնէր՝ թէ  
 այդ նշանը ունեցողը զատուած է հեթանոս-  
 ներէն , ու ան ժողովուրդն է . և ան ժողո-  
 վուրդը ըլլալովը՝ իր հաւատքը շիտակ կըլար ,  
 և իր հոգին ալ փրկութեան ճամբուն մէջ կը-  
 դառնէր . ասոր համար կոչի յառաքելոյն նշա-  
 նակ և կնիք արդարութեան հաւատոց . (հոռմ .  
 Դ . 11 ) :

Ասոր ներհակ անհաւատի զաւակը՝ իր ծնո-  
 ղաց պէս անհաւատ մնալէն՝ սկզբնական մե-  
 ջաց դեղէն ալ զուրկ էր . և քանի որ խելքը  
 չէր բացում , կարելի չէր որ հաւատացեալ  
 ըլլայ անհաւատին զաւակը :

Թ . Գանք հիմա նոր օրէնքն՝ որ քս ան մեր  
 ամիլն կերպով դիւրին դեղ դրաւ սկզբնական  
 մեղաց զմք մկրտուիլ . և սակայն ծնողքն որ

անհոգ ըլլան երեխան մկրտել տալու նէ , 'ի հարկէ անկնուսք կրմնայ . և յանկարծ մեռնի նէ , սկզբնական մեղաց տակը կրմնայ : Թող որ ծնողքը անհաւատ են նէ , ինչպէս իրենք անկնուսք կը կորսընին , ասանկալ իրենց զաւակը անկնուսք կը կորսնցնեն :

Ասոնք յայտնի են սք աւետարանէն , ուր կրսէ ինքը փրկիչն մեր : \* Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայուին ւնյ ॥ . յով . 7 . 5 : Որ հաւատայ և մկրտեցի , կեցցէ . և որ ոչն հաւատայ , դատապարտեցի ॥ . Ժառի . ԺԳ . 16 : Ասկից հասկըցիր , թէ որչափ ծանր պատժոյ արժանի են այն ծնողք կամ կնքահարք , որ երեխային մկրտուէ աղէկ մուխայէթ չեն ըլլար . եւ կուշացընեն ատենը՝ Տային ղիննէթ ընելու համար . եւ ատենան որ երեխան մեռնելու վն է , փոյթ չեն տանիր շուտով մկրտել տալու՝ որ ճամբով որ կարելի է : Ճամբան ալ աս է , որ շուտով քահանայ մը կանչեն՝ որ մկրտէ . քահանայ չի կայ նէ , էրիկ մարդ մը՝ ով որ ըլլայ . էրիկ մարդ չի դառնի նէ , դայեկն է եղեր՝ կամ ուրիշ ճարտար կնիկ մը , ըն դիտաւորու թէ մօր մերոյ սք եկեղեցւոյ պէտք է որ մկրտէ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ . չէ՛ նէ՛ անոր հոգին իր ծնողացմէ կուղէ : Ուստի դարձել կրսեմ երբոր մէկ երեխայ մը դժար ծներ է , ու վտանգ ունի մահուան , հէլպէթ նոյն ատեն պէտք է որ մկրտուի . անկից էտե թէ որ մեռնի նէ , արքայու թէ զաւակ է . ղերէ ծնաւ 'ի ջրոյ և 'ի հոգւոյ . ասպ թէ՛ չմեռնի նէ , պէտք է ժամ տանիլ , ու մնացած արարողութիները կատարելով , առանց մկրտելու՝ սոսկ սք մեռոնը տալ : Ասալ դիտցած ըլլան մարերը՝ որ ւնյ դժար պաւ

պատասխան պիտոյր տան . երբոր իրենց անհոգութենովը կմ' ճահիլութենովը սէպէպ կըլլան որ դաւակնին հասըլ չըլար , ու մկրտութեան չի հասնիր նէ : Մէկ խօսքով հասկընալ պէտք է աս բանս . չէ նէ՝ շատ բան կար ըսելու . թող քեամիլները խրատեն զճահիլները , և ճահիլները խրատ առնեն քեամիլներէն :

Գ . Կըրնայ հարցընել մէկը նախ . Անկնունք մեռնող երեխաներուն հողիները ո՞ր կերթան , ի՞նչ կըլլան :

Պննի . Ասոր վմ' տղէտները մէյմէկու պէտպէս տղիտական պատասխան կուտան . և պաղի պօշպօղազ դայեկներ՝ ցաւագին մարերու մոխրութարանք տալու համար՝ իրենց քովէն բանեղ կըստեղծեն կըխօսին . բայց ո՞վ որ ճըլմարտութիւր կուզէ սորվիլ նէ , աս է՝ որ ամէն անկնունք երեխայ զուրկ կըմնայ արքայութէ . այս է ճըմարտութի հաւատոյ . Ըմ ,

\* Եթէ ոչ ոք ծնցի՝ ի ջրոյ և ի հողոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւնն ւայ ॥ . Երկ . Գ . 5 :

Ասկից զուրկ մնայ նէ , ուրեմն դժոխք կերթայ պիտի ըսես : Չէ : Հապա ը հասարակ խօսից ամ վարդապետաց , և ը սովորական վարդապետուն կաթողիկէ եկեղեցւոյ պիտի ըսենք , թէ դատապարտելոց դժոխքը չերթար , նահապետաց դժոխքը կերթայ՝ քի լիմպոսը . ուր կայ պատիժ զրկման կմ' մեասու , բայց չիկայ պատիժ զբայուն կմ' կրակի : Ասանկ կըխօսին հասարակօրէն հարք և ամծաբանք . աւելի բան պէտքը չէ , ոչ հարցընել , և ոչ պատասխանել . չէ նէ , կըսխալիս . ւայ դատաստանին խորը մտնասնէ , կընկղմիս :

Գ . Հապա ( ըսէ մէկը ) , չաիահաս մարդ մը

ուղևնայ քրիստոսնէ ըլլալ, ու շիշառնի զինքը  
մկրտող նէ, ինչ ընէ :

Պիսնի . Իբ կողմանէն պիտի ջանայ՝ որ կարելի  
է նէ՝ մէկ մարդ մը գանայ զինքը մկրտող . ինչ  
մարդ կուզէ՝ թող ըլլայ . պիտի աղաչէ զանի  
որ առնու զինքը ջուրը խօթէ, կամ դուխը  
ջուր լեցնէ՝ ըսելով առ խօսքս իր նիւթին, (որ  
է դիտաւորութի սք եկեղեցւոյ .) \* Մկրտի  
ծառայոս քնի՝ այս անուն՝ (կի՛, ես մկրտեմ ըղ-  
բեզ) յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սք .  
ամէն ॥ : Միայն թէ ջուրը ըլլայ հշմարիտ և  
բնական ջուր . ինչպէս է գետը, աղբուրը,  
անձրևի ջուրը, ծովին ջուրը . չէ թէ խտե-  
րէն կամ ծաղկրններէն շինած արուեստական  
ուռ հ մը, կի՛ ջրի պէս բան մը, կի՛ թաց բան մը :  
Բայց թէ հիչ մէկ մարդ մը շիկարենայ զանալ  
լուան դուխը կի՛ եապանի տեղ մը, կամ թէ  
զաած մարդը չուզէ զանի մկրտել, և ինքն կե-  
նացմէ վախ ունի, որ պիտի մեռնի կամ բնա-  
կան կամ բռնական մահուամբ, զոր օրինակ  
ճէնկ պիտոր մտնայ, կի՛ մարտիրոս պիտի ըլ-  
լայ, ան առեն մկրտութե ջրոյ տեղը՝ երկու  
կերպ հոգևոր կնունք կրնայ ըլլալ . մէկն է մկր-  
տութի սիրոյ, մէկայը մկրտութի սրոյ : Մկր-  
տութի սիրոյ՝ որ և հրոյ կրտուի, է սաստիկ  
փափաք սիրոյն այ՝ որով մէկը կուզէ մկրտու-  
ուիլ, բայց իր ձառքը չըլալէն՝ այ կը յանձնէ  
զինքը կատարել զըջումով, ու անանկ կըմեռ-  
նի : Մկրտութի սրոյ կամ արեան՝ է մարտիրո-  
սութի . որ տահա աղէկ կըլեցնէ մկրտութե  
տեղը . վն զի է գործ ծայրագոյն սիրոյն այ .  
լի՛, \* մեծ ևս բան զայս սեր ոչ որ ունի, եթէ  
զանձն իւր դիցէ՝ ի վի՛ բարեկամաց իւրոյ ॥ .

է . Մէկնալ հարցընէ . Ք՛ս տրն մեր երեսուն  
տարեկան մկրտոնեցաւ , մենք ինչո՞ւ համար  
նոր ծնած երեխան կրմկրանք :

Պիմնի . Այն բանը որ ընդհանուր եկեղեցին  
կընէ յամ աղղս քրիստոնէից , քնէ իջած սովո-  
րութի է՝ առաքելոց ձեռքովը . արդ՝ մոմ քրիս-  
տոնեայք նոր ծնած երեխան կրմկրան . ու-  
րեմն ք՛ս տրն մեր սասնկ հրամար է առաքելոց .  
անալ մեր օգտին համար . չէ՛ նէ՛ անհամար տը-  
ղաք և մարդիկ անկնունք կմեռնէին . որովհե-  
տե տահա շատ է երսուն տարին չի հասնողը՝  
քան հասնողը : Իրան է որ առջի ատեն պաղին  
նոր հաւատք եկողներէն՝ մախառս կրտայասէ-  
ին որ երսուն տարին հասնին , ու մկրտոնին .  
պաղին ալ հավէս կընէին՝ որ ատեն զանան նէ՛  
երթան յորդանան գետը մկրտոնին յնի պէս :  
պէլքիմ ծածուկմիտք մը նալ կըմտնար աս բա-  
նիս մէջ , որ ամիէն մեղքը գործելէն ետե խօ-  
լայ սրբոնին մկրտութի . բայց պաղին ալ չի  
հասան՝ անկնունք մեռան . անոր համար պա-  
տոնիրեց եկեղեցին որ որչափ կարելի է նէ ,  
շուտով մկրտոնին : Թո՛ղ որ հին օրինաց մէջ  
ալ՝ տղաքը տղակուց կըթլխատէին , մենծուստ  
հաւատք եկողները՝ մենծուստ : Առունելիսս  
հարիւրապետը իր բոլոր անովը մկրտոնեցաւ .  
և այնչափ աներ որ մէկէնիմէկ քրիստոնէ ե-  
ղան նէ , ասոնք ամիէնքը երսուն տարեկան  
էին մի . յայտ է թէ ամիէն պոյէ կային , մեծն  
ու պղտիկ : Աստի յիմար են այն աղանդաւ որ  
ները՝ որ անկնունք կըտոնին . զէրէ անկնունք  
կըպահեն տղաքը ինչո՞ւն երսուն տարին . կի՛  
ջափահաս քլայ կըսեն . անխէ շատին չափը  
առաջուց կըհասնի , ու տհաս կըմեռնին :

1. Մկրտութիւնը կրտրբէ զամմէն մեղք , թէ սկզբնականը՝ թէ ներգործականը . քղի է բոլորական մաքրուի հոգւոյ , առջի դեղ կենաց , եկեղէցւոյ դուռը , և որդէգրուի հօրն երկնաւորի , որով կըլանք անդամք քսի , և հարսն հոգւոյն սբ ) սրբարար շնորհք առնելով . զերէ 'ի ծնողաց կրծնանինք որդիք բարկութե , աւաղանէն վերածնանիմք որդիք փրկութե . \* զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մարմին է , և ծնեալն 'ի հոգւոյ՝ հոգի է ॥ . Երէ . Գ . 6 :

2. Մկրտութիւն յովհաննու խորհուրդ չէր , խորհրդական արարողութի էր : շնորհքի նշանունէր , ու շնորհքի պատրաստութի էր , բայց շնորհք չէր բերէր . ուստի յովհաննէս մկրտչէն մկրտուածները՝ նորանց մկրտուեցան քսի մկրտութիւն . տես Գրծ . ԺԺ :

3. Մկրտութի ջրոյ՝ իրեք կերպով ալ կընայ ըլլար . ցմբնկղմամբ , հեղմամբ , ցօղմամբ : Ընկղմումն սովորական է արևելեան ազգի . հեղումն՝ յատուկ եղաւ արևմտեան ազգի . իսկ ցօղումն՝ ետքի հարկաւորութե ատեն միայն կըլլայ , երբոր ատեն չիկայ , կի՞ առատ ջուր չի դանուի : միայն թէ այնչափ ջուր պարէ պիտի ըլլայ , որ կարենայ ըսուիլ լուսացումն կերպով մը :

4. Ինչպէս ջուրը հարկաւոր է 'ի նիւթ մկրտութե . նոյնպէս և ձև բանին . ուստի կըսէ օգոստինոս 'ի ծառն Ծ . \* Բարձ զբանն 'ի ջրոյ . և զինչ մնայ , եթէ ոչ ջուր : Յարեացի բանն 'ի տարրն , և լինի խորհուրդ : Աւստի՛ իցէ այդչափ զօրութի ջրոյ . 'ի մարմինն մերձե՛նալ , և զտիրան լուանալ . բայց եթէ ներդուր

• դործութիւն բանին , ոչ զի լոկ ասեմք , այլ  
 • զի և հաւատամք . քանզի և 'ի բանի անդ այլ  
 • է հնչումն անցողական , և այլ է զօրութիւն  
 մնացական ॥ :

5 . Մկրտութե՛ն շնորհքը զհոգին կըլուճանայ  
 ու կըմաքրէ մեղքէն . և անանկ կընորոզէ որ'  
 նոր ծնած կըլայ 'ի նոր կեանս . բայց անմե-  
 ղանչական չընէր զանմեղը . ինչպէս որ լաթեր  
 նիս լըվացվի առջի աղտոտուէն , անկից ետև'  
 մաքուր պահենք նէ՛ չաղտոտիր . հապա թէ  
 անհոգութենով աղտոտենք նէ , խապահատը  
 մերն է . անկից ետև խոստովանանքով պէտք  
 է մաքրուիլ : Ասոր համար կըսէ օգոստինոս .  
 'ի Գիրսն յապագս Թա՛ն Կրք . \* Մկրտութիւն քնի  
 • այս ինչ դործի , զի մարմին մեղացն խափա-  
 • նի . բայց ոչ այնպէս խափանի , զի մի՛ մնաս-  
 • ցէ ցանկութիւն բնածին , այլ զի մի՛ վնասե-  
 • ցէ : Չի թէ զկնի մկրտուէ 'ի բնական չափ  
 • հասակի հասանեն , ունին յայնժամ զայն՝ լէ  
 • որում ունին պատերազմիլ , և օգնականութիւն  
 • ան յաղթել նմա . եթէ ոչ լուսնայն իցէ ա-  
 • ռեալ նց՝ զշնորհս ( կամ անվաւերութիւն , և  
 կմ կորուսանելով զշնորհս մկրտուէ : ) ॥

6 . Մկրտութին է կնիք ( իմ տամզայ ) քնական  
 հօտին՝ լուսարիայլ տպաւորել յանուն երրեակ  
 լուսոյն 'ի հողիս մեր՝ անջնջելի յաւիտեան .  
 վնյ և անկրկնելի : Ուստի կըզրէ օգոստինոս 'ի  
 Բողոքն առ հասի՛մ . \* Կրկին մկրտել զայր հե-  
 • ընտիկոս , որոյ առեալ իցէ զայս կնիք սբյ  
 • երրորդուէ , զոր աւանդէ բրիստոնէականն  
 • վարդապետուի , մեղք է ամ իրօք . իսկ կրկին  
 • մկրտել զուղղափառն՝ անհնարին ապիրա-  
 տութիւն է ॥ :

7 . Ճնօղք մարմնոյ՝ ինչպէս որ պարտական են

Տողալ զսնունդ մարմնոյ զաւակաց , նոյնպէս  
 պէտք է հողան զհողևոր ծնունդ և զսնունդ  
 նց , քի փոյթ տանիլ մկրտել տալու , և անկից  
 էտե 'ի շնորհս ւոյ մենծնալու : Մոյն հողևոր  
 պարտք կիյնայ նաև կնքասօր ու կնքամօր վր :  
 որ ինչպէս հողևոր ծնող եղան իրենց սանին  
 նէ , նմանապէս հողևորապէս սնուցիչ ըլլան  
 ինչո՞ւն 'ի չափահասութի : Աս է օգոստինոս  
 փն ըսածը . 'ի ճառն զիսի զարի . \* Չե՞զ ազդ առ  
 ~ նեմ նախ քան զամ ' եթէ կանայք , և եթէ  
 ~ արք , որք զորդիս 'ի սբ աւազանէն ընկալայք ,  
 ~ զի ծանիջիք զանձինս երաշխաւորս լեալ առ  
 ~ ւոյ վս այնոցիկ ' զորս կնքեցիք . վսյ հանա  
 ~ պաղ խրատեցէք զնս ' պահել զմաքրուի , սի  
 ~ բել զարդարուի , պահել զսէր : Յառաջ քան  
 ~ զամ , զհանգանակն և զմորունական աղօթս  
 ~ և դուք ինքնին պինդ կալարուք , և որոց է  
 ~ զէք վերընկալ 'ի սբ աւազանէն , ուսուցէք ॥ :



Գ Լ Գ :

Ի եղ ներգործական մեղաց առ հասարակ , որ է ա  
 պաշխարութի :

ւս . **Թ** ո՞ղ մեղադրեն որդիք մարդկան իրենց  
 նախասօր և նախամօր , թէ անոնք մեղ դրախ  
 տէն դուրս ձգեցին աս աքսորանաց վայրը ,  
 մեղ չի ծնած ' մեռուցին հողևով և մարմնով .  
 ի՞նչ կըլլար , մէկ ծառի պտուղ մը չուտէին  
 համբերէին : Աղէկ աղէկ ամմա , աղամն ալ  
 ի՞նչ կըսէ ' թո՞ղ լսեն . իրաւ որ ' ես անխրաւե  
 ցայ ,

հայ, առաջ առ անձ, ետքը իմ բոլոր զաւա-  
կացս . բայց սակայն իմ պանծալի զաւակս՝ որ  
է միանգամայն իմ նորս և անձս, ԿՅ ԵՍ ԲՍ, Ե-  
կաւ Տքս նորոգեց, իմ աւրածս շինեց, զմե-  
զաւորքս արդարացոյց, և հաշտեցոյց զհայր  
Լ արարածս . և կենդանարար սը հողին՝ նո-  
րէն ծնաւ ՚ի սը աւաղանէն զիմ մեռած զա-  
ւակներս, ու կենդանացոյց . անկից ետև Լ-  
րենք իրենց առանձնական յանցանքովը՝ որ է  
ներգործական մեղքը, զիրենք նորանց կրմեռ-  
ցընեն նէ, իս չի մեղադրեն, զիրենք մեղադ-  
րեն :

Եւ իրաւ որ՝ ազամ մէկ անգամ մեղանչեցնէ,  
բոլոր կենացը մէջ՝ հազար տարիի մօտ ապաշ-  
խարեց . դուն ադամորդի քանի՞ անգամ մեղք  
ըրած ունիս, մէկ անգամ մը աղէկ ապաշխա-  
րած չունիս . անխտէ անոր սխալանքը քեզի  
խրատ պիտոք ըլլար . տեսար որ մեղքը ի՞նչ  
գէշ բան է եղեր, որչափ չարիք կընէ եղեր,  
ինչո՞ւ մեղանչողին կը հետևիս . տեսար որ ա-  
պաշխարելը ի՞նչ աղէկ բան է եղեր, որչափ  
բարիք կընէ եղեր . ինչո՞ւ ապաշխարողին չես  
հետևիր :

Բ . Այս ի՞նչ բնեմ մարդկան տկարութիւն, աղի-  
տութիւն, և չարութիւն . որ մէյմէկ հիւանդուի-  
են հողւոյ . բայց առջի երկուքը խղճալու է .  
ԿՅ թեթև ըլլալով՝ ներելի սորմութիւն է . բայց  
ետքինք ծանար բան է, ու որի շարք անգամ  
անարժան կրմնայ սորմութիւն չի առնուի .  
սորմութիւն կըսեմ, որ մեր տկարութիւնը  
տուե՞ր զխանայով մեր հիւանդութիւնը կետի-  
երկրորդ աւաղան և դեղ կենաց դրամ  
ապաշխարուի . ուր զի ի՞նչ որ յետ կենդանանա-  
լոյ ՚ի մեռելութիւն մեղացն ադամայ՝ նորէն կը-

59861

5951

Տիւնդանայ նէ , ապաշխարուէ դեղը առնէ  
 ու առողջանայ . որչ սղջ մեռնի պիլէ նէ մա-  
 հուչափ մեղօք չարութե , նոյն դեղը ապաշ-  
 խարութե առնէ կատարեալ զղջմամբ և ճշմա-  
 րիտ խոստովանութիւն , նորէն կենդանանայ :  
 Այսչափ որ , եօթն անգամ չէ , եօթանասու-  
 նը եօթ անգամ պիլէ ինկնայ նոյն մեղքով ,  
 տեղիք ունենայ ռօք ելլալու խորհրդով ա-  
 պաշխարուէ : Ո՛վ անբաւ մարդասիրուէն ւնյ :  
 Ի՞նչ . Ապա թէ մէկը աս երախտիբս չի գիտնայ ,  
 ու սանձարձակ տայ զինքը ամմէն մեղաց , կի՞մ  
 մէկ ծանօտ մեղքը իրեն սովորութիւն ընէ՝ ու  
 չուզենայ ետ կենալ , կի՞մ թէ ամ անկից երես  
 դարձընելու տեղը՝ ինքը աստուծմէ երես դար-  
 ձընէ , ու ումուր սեպէ առ ամ դառնալ և ա-  
 պաշխարել , սանքի թէ ւնյ բան մը կընէ կոր .  
 կի՞մ թէ ատէ զդեղն կենաց , և անզեղջ սրտիւ  
 պաղի բոլորովին խոստովանանքէն . որով կամ  
 ՚ի յուսահատուի ինկնայ , և կի՞մ ՚ի յանդգնուի՝  
 թէ ի՛նչպէս ըլլայ նէ՝ ետքը սէլամէթ կելլամ  
 տէյի , և կի՞մ արհամարհէ ւնյ պարզենալ պա-  
 տիժնալ , խենդ չէ՞ մի այնպիսին , արժանի չէ՞  
 մի կապելու դժօխքին բանտը : Անանկ է՝ կը-  
 սենք ամմէնքնիս մէկ բերան :

Անանկ է նէ , աչու՛րնիս բանանք մեղաւոր  
 եղբարք , խելու՛րնիս դիւրնիս ժողովենք . զերէ  
 ասանկ խենդեր քիչ չեն մեր մէջը : Տիւնդա-  
 են , գիտեն . բայց դեղ առնել չեն ուզեր . և  
 անոր համար իրենց հիւնդ ըլլալը պիլէ չեն  
 ուզեր իխրար ընել՝ պարէ խոստովանանքի մէջ-  
 որով իրենց վրայ կուգայ այն վայն՝ որ կըսէ  
 շնորհալին . \* Այն ախտացելու մն յախտէ , որ  
 խոցի , և ոչ ընդոսանու ॥ :

Ի՞նչ . Տիւնա բանը ասոնց խօսք հասկըցընելն է ,  
 որ

որ իմանան իրենց խելագարութիւնը, ու խելաբերին, ճանչնան իրենց հիւանդութիւնը, ու դեղառնեն՝ որ բժշկուին: Իմ բտելիքս իրենց ասէ: մէկ բնական խելագար խենդ մը տեսնաք նէ, կրցաւակցիք, խեղճ է կըսէք, հայվանի պէս բան մը նէ եղեր: ձառու՛նէդ գայ նէ՝ ողորմուի ալ կուտաք: կի՛մ ճարը կըմտմտաք որ դեղով մի կըլլայ՝ ծեծով մի կըլլայ, խելքը գլուխը գայ: հա՛պա դուք ով մեղաւորք՝ այն պիտի խենդերէն էք, որ ցաւակցելու ալ արժանի չէք: ղերէ կամաւոր է ձեր խելագարութիւնը: և անոր համար չէք թողուր որ մէկը ձեր վր խղճայ, ու ճարմը ընէ՝ դեղ մը ընէ ձեզ խելքըցնելու: Ամէն մեղք խենդութի կըսուի բարոյապէս: և առջի դեղը ան է՝ որ ամմէն մարդ իր մեղաւոր ըլլալը ճանչնայ, որ անոր կեօրէ երթայ հոգևոր բժշկի մը ղինքը ցրցնէ խոստովանանքի մէջ, ու կենաց դեղը առնէ: Ե. Մէկ մարմնաւոր կոյր մը տեսնաք նէ, կըխղճաք, ճամբայ կըրցցնէք: ձեր հոգևոր կուրութիւնը տեսնայիք նէ, է՛ն առաջ ձեր վր կըխղճայիք, ու ճամբայ կուգայիք: ճամբան ալ չի գիտնաք նէ, առաջնորդ մը կըփնտռէիք, ու կըգանայիք իմաստուն հոգևոր հայր մը: Բայց ի՛նչ ընեմ որ ահամայ չէ ձեր կուրութիւնը, այլ կամաւոր, որ \* ոչ երբէք եկեսցէ յառողջութիւնս ॥ կըսեն բժիշկք հոգևոյ՝ սբ վարդապետք, բանի՛ւ երկնաւոր բժշկին, որ ըսաց առ փարիսեցիս: \* Եթէ կոյրք էիք, ոչ էր ձեր մեղ: բայց արդ ասէք՝ եթէ տեսնեմք, և մեղքն ձեր՝ ի ձեզ հաստատեալ են ॥. յովհ. թ. 41: Ասկից ողբալի բան չեկայ: Ասանկները թող երթան այն աղօթքը ընեն ղիշերցորեկ. \* Լոյս տուր տէր աչաց իմոց, ղի

զի մի երբէք ննջեցից 'ի մաս ॥ , սաղ . ժք . 4 :  
 Չերկնցնեմ յայտնի բաները . դանք հիմա տեղն  
 'ի տեղ հասկըրնելու , նախ՝ թէ քանի՞ ցեղ  
 ներգործական մեղք կայ , որ մէյ մէկ հողեւոր  
 ցաւ են . և երկր՝ թէ ինչպէս պիտի ըլլայ ամ  
 մէնուն թշանբական դեղը , որ է խորհուրդն  
 ապաշխարութե :

**ՅՕԴՈՒ ԱԾ . Ա :**

Բացաբրութի պէսկայ ներգործական մեղաց :

ն . Սեղքն որ մտածենք մարդուս բնութե  
 կողմանէ , որ դոյացած է 'ի հողւոյ և 'ի մարմ  
 նոյ , պազին պիտի ըսենք հողեւոր , պազին  
 մարմնաւոր :

Հոգեւոր մեղք են առջի իրեքը գլխաւոր մեղ  
 քերէն , որ մաքով կմ՝ սրտով կըրործուին՝ 'ի  
 կամաց , թէև գործիք ունենան զմարմինն ալ .  
 Իմ Հպարտուի , նախանձ , բարկուի . և ինչ որ  
 ասոնց տակը կիյնայ :

Մարմնաւոր մեղք են ետջի իրեքը գլխաւոր մեղ  
 քերէն , որ մարմնով կմ՝ մարմնաւոր բանի վի  
 կըրործուին 'ի կամաց , թէպէտև 'ի ձեռն մը  
 տաց . Իմ Ազահութի , որկրամուտի , և բղջա  
 խոհուի . և ինչ որ ասոնց տակը կիյնայ :

Իսկ ծուլութին , որ ոչ այնչափ դրական բան  
 է , որչափ բացասական , հէմ հողեւոր՝ հէմ  
 մարմնաւոր մեղք կըրնայ ըլլալ . ինչպէս որ վա  
 րը կիմանաս :

Թ . Դարձեալ մեղքն որ մտածենք մարդուս  
 հողեւոր և մարմնաւոր կարողուեք կողմանէ ,  
 իրեք կերպ կըրնայ ըլլալ . խորհրդով , բանիւ ,  
 և գործով :

Խորհրդով կը լլան՝ չէ թէ միայն վերի ըսած հոգևոր մեղքերը, այլև ամ մարմնաւոր մեղք, երբոր իրաւցընէ կը ցանկանք սրտով. անանկ որ թէպէտև պիտի չնենք, կի՛ չի կարենանք բնել այն մեղքը, բայց անանկ յօժարութի և հաւանութի կայ սրտին մէջ՝ որ Փասանա գտնայինք նէ, պիտի ընէինք. օրինակ ըլլայ չար խորհուրդն ցանկաւե՛ որ բնի ըսածին պէս, \* Ամ՝ որ հայի ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ թ նմա ՚ի սրտի իւրում՝ . Եպե . Ե . 28 :

Ըսի, "երբոր իրաւցընէ կը ցանկանք սրտով" . չէ նէ՛ սոսկ մտքէն անցնիլը առանց սրտին յօժարութե և կամաց հաւանութե, բնաւ մեղք չի սեպուիր . զէրէ անատեն մենք ընող չենք, հապա՛ կըզ ցի քաշող ենք . ինչպէս շատ անգամ սրբերուն միտքը պիլէ ակամայ կուգայ ցանկութե մեղքը . որ վանտելուն պէս՝ վարձք ունի, պատիժ չունի: Ապա եթէ մէկին մտքէն անցնի չար բան մը յօժարութենով մը, առանց կատարեալ հաւանութե, (ինչպէս շատ անգամ կը լլայ անհոգ մարդկանց,) կը լլայ թե թե մեղք մը . քիչ մը նալ էյլէնմիշ ըլլայ, առ խօշանմիշ ըլլալու պէս ըլլայ նէ, կը լլայ աւելի ծանր մեղք, որ կը սուրի յաճալ հեշտութի: Իսկ եթէ ըլլայ կատարեալ հաւանութե, կը լլայ կատարեալ մեղք մահաւջափ:

Չոր օրինակ . դնենք թէ մտքէդ անցեր է՝ որ հարրդ մեռնի նէ, քեզի աղէկ կը լլայ . զէրէ մէրաս կուտես . թէ որ դուն մէկէն իմէկ թոթ վէցիր կի՛ խապուլ չըրիր այն բանը իբրև անարժան մտածութի, ըսելով իմ հօր կեանքը շատ մենծ բարի է լը ինքեան, բան թէ ինծի անոր ստակը, բնաւ մեղք մը չիկայ: հապա թէ

Թէ քիչ մը էյլէնմիշ եղար ատ մաքի վն, Թէ  
 իրաւ ինծի աղէկ կըլլայ հօրս մահը, բայց կա-  
 տարեալ հաւանութի չիտո՛ւիր; Թէ Թե մեղք  
 մը եղած է: Ապա եթէ՝ (ան պահէ) իրաւցու-  
 նէ ուղեցիր սրտովդ, որ քու մարմնաւոր շա-  
 հուդ համար՝ հարրդ քիչ ապրի, կատարեալ  
 հաւանութի եղածին պէս՝ ծանր մեղք գործե-  
 ցիր խորհրդով: Աս է քնի ըսածը. \* Չի՛ ՚ի  
 սրտէ ելանեն խորհուրդք չարք. սպանուիք,  
 շնուծիք, պոռնկուիք, դողուիք, սուտ վկայ  
 ուիք, հայհոյուիք ॥ . ԺԲ. ԺԵ. 19: Կմ՝ Եկ. Է.  
 21. \* Չի՛ ՚ի ներքուստ՝ ՚ի սրտէ մարդկան խոր-  
 հուրդք չարուէ ելանեն, շնուիք, պոռնկուիք,  
 դողութիք, սպանութիք, աղահուստութիք, չա-  
 րութիք, նենգութիք. դիջուի. չարակնուի,  
 հայհոյութի, ամբարտաւանութի, անդդա-  
 մութի ॥ :

Բանի՛, քի խօսքով կըլլան այն ամ մեղք, որ  
 խորհրդով ըլլալէն էտե՛ մարդու՝ բերնէն կել-  
 լան. զորօրինակ ստութի, սուտ վկայութի,  
 երդումն վայրապար կամ սուտ, առնուլ զա-  
 նուեն այ լեռնայն, ուրացուի, մոլոր վարդա-  
 պետուի, չարախօսուի, զրպարտութի, բամ-  
 բատանք, նախատինք, հայհոյութի, յիշոցք,  
 անէծք, ցոխաբանուի, ինդկատակուի, ծաղ-  
 րել զբնկերն, չպահել զխորհուրդ, բնդ վայր  
 հարկանել զնք և զարբազան իրս. ևն: Ըսի,  
 "խորհրդով ըլլալէն էտե՛". զերէ բերնէն ելա-  
 ծը՝ Թէ որ մաքէն չանցնէր առաջ, ու չի հա-  
 ւանէր նէ, դուրս ալ չէր ելար. \* քանզի՛ ՚ի յա-  
 ւելո՛ւածոյ սրտի խօսի բերան ॥ . ԺԲ. ԺԵ. 34:  
 Գործով կըլլան այն ամ մեղք, որ մաքէն անց-  
 նելէն էտե, ու կամքը հաւնելէն էտե, մարմ-  
 նաւոր կարողութիք զայն քանը՝ ՚ի գործ կը-  
 դնեն՝

դնեն՝ գլուխ հանելու համար . թէև կիսկատար  
մնայ դրսի պատճառով մը : Ուստի մեղք դոր-  
ծոյ են ինչ որ կըլլայ հինգ զգայարանօք մար-  
դոյն : զորօրինակ՝ գէշ հայեցումս , չար ան-  
կաճդրուի , օրկրամոլութի , արբեցուի , էւե-  
լորդ հոտերու էտեւէ ինկնալ , մարդ զարնել ,  
սպանուի , գողուի , յափշտակուի , գէշ ճամ-  
բայ երթալ , լեզէմ բնուե մեղքեր , շնութի ,  
կախարդութի , խարդախուի առուարի մէջ ,  
խարէութի , և այլ ամ անարժան և անկարգ  
գործք չար մարդկանց :

Գ . Գարձեալ այս ամ մեղք , նայելով՝ ՚ի պատ-  
ճառս մեղանչական բնուէս մերոյ՝ իրեք պատ-  
ճառէ կրնան ըլլալ . Ի՞նչ տկարուէ , ՚ի տղի-  
տու թէ , ՚ի չարութէ :

Մեղք փարուէ ( որ կըսուի լեզէմ հօր ամենա-  
կալի , ) այն է , որ մեր ապականեալ բնութիւր  
էբրև երկիր անիծեալ և փշաբեր՝ անդադար  
ինքերմէ անպիտան բաներ կըբուսցընէ : Ըմ ,  
\* զի միտք մարդկան հաստատեալ են ՚ի ինամս  
չարի ՚ի մանկութէ իւրմէ ॥ . Ծնն . Ը . 21 : Ուս-  
տի առանց մեր մտմտալու՝ ինքիրմէ մեղանչա-  
կան բաներ մեր միտքը կիյնայ . կի՞ լսելով և  
տեսնալով արգելած բանը՝ սրտերնիս կուզէ ,  
կի՞ յանկարծ գտնվելով բերաննէս անշնորհք  
խօսք մը կելայ . կի՞ մեր կամքին գէմ բան մը  
ըլլայ նէ , շուտով մը սրտերնիս տակնուվրայ  
կըլլայ . ոչ առաջը ոչ ետքը մտմտալով՝ գինդ-  
վի պէս կիրք բարկուե և ուրիշ սրտի շարժ-  
մունքները ոտք կելան . մէկ խօսքով՝ լոսիլի\* Թ-  
շոյ ըսածնին մէկ ըլլալով անխորհրտածեալ շարժ-  
մանց հետ՝ յանկարծ մեղք մը կըլսով թեն մեղ-  
որու նիւթը թեթեւ բան է նէ , թեթեւ մեղք  
կըլլայ . ծանար բան է նէ , ծանար մեղք կըլ-  
լայ :

լայ : դիձ՛ շուտով մը վրայ դանք նէ , [Թե [Թե  
մեղք կըլլայ • քիչ մը ուշանանք նէ , կըծանտը  
նայ • միայն [Թէ բոլորովին չի տիրէ մեր վն •  
դէրէ ան ատեն տկարութիւր 'ի չարութի կը  
փոխուի :

Ռամկորէն խօսելով՝ տկարութե մեղքերը ա  
նոնք են ( [Թէ [Թե [Թե , և [Թէ ծանտը ) , որ սէ  
պէպ ըլլողին կըսենք , իս մեղք մի խօթեր , ու  
մեղքը սկսած չըսկրած՝ ետ կըքաշուինք , կ՛մ  
մենք մեղի դուրիս շարժելով՝ մէկ դիէն մեղան  
չական բանին քիչ մը մէյիլ ենք տօ՛ւէր , ու  
մէկ դիէն՝ մեղայ մեղայ կըսենք : Ասանկ տկա  
րութե մեղքեր շատ կը մտնան 'ի նիւթ բար  
կութե , հեշտուե , և որկրամոլութե • անանկ  
որ եօլու բան մը ընելու պիլէ ըլլանք , մեր  
տկարութենով եօլուզ կերպ մը կըխօթենք  
մէջը : Ասըլ հիւանդութի հոգւոյ կըսուի աս  
տկարութե մեղքը , որ դեղոյ կարօտ է • և դեղը  
ընենք նէ՝ կառողջանանք • առէն տաէն նորէն  
անհանգիստ ընելու ըլլայ նէ նոյն հիւանդու  
թիւր , մենք ալ նորանց դեղ առնլու ոչ պիտի  
խպնինք , և ոչ անհոգանանք :

[Թե [Թե մեղքերն որ շատ անգամ կինկնանք  
նէ , հասարակորէն տկարութե մեղք կըսուին •  
ծանտը մեղք մը նալ՝ որ սովորուի չենք ըրած ,  
մէկ երկու տարին անգամ մը պատահի նէ , տը  
կարութե մեղք կըսուին : Սրտանց կըցաւինք  
մէկ բանի վն , ու էփէյի խայրէթ ընելէն ետև՝  
պաղի պաղի նորէն կիյնանք նէ , տկարութե  
մեղք կըսուին , [Թէ մենձ ըլլայ՝ [Թէ պղտիկ :

Խնդրէ՛ յամենակարողէն ան , որ տայ քեզ կա  
րողութի և զօրուի յաղթել մարմնոյ , ճի , և  
սատանայի , չէ՛ նէ՝ կինկնաս քու տկարութե •

\* Տուր զօրուի ծառայի քոյ , կեցն՛ զորդի ա  
ղախ

դախնոյ քոյ , և արա՛ առ իս նշան բարութե՛ .  
սաղ . ձե . 16 : \* Տուր զօրուի հոգւոյս կամայ՝

հնազանդել զկամս մարմնոյս ॥ . շարահան :

Տգիտութեան քոյ ( որ կըսուի թղթմ սրբւոյն ւնյ ,  
որ է իմաստութի հօրն երկնաւորի , ) ան է՝ որ  
աղէկ մը չէինք գիտեր այն բանին մեղք ըլլա-  
լը , որ պարտըկան էինք գիտնալ . զերէ մեր  
գիտնալու բանը չըլլայ նէ , բնաւ մեղք չըլլար .  
զորօրինակ մէկը ուրբաթ օրը միտքը վրան  
չըլլալով՝ միս ուտէ նէ , ուտելովը մեղք չի գոր-  
ծէր , հապախելը վրան չունենալուն՝ որ կա-  
բենար գիտնալ թէ օրը ուրբաթ է . ուր Յքիս  
ամմէն բանը միտքը կը պահէ տէ՛ ւնյ օրը իր  
պարտքը ընելու խելք չի տար : Մէկնալ հա-  
ւատքի վրձ բան մը խօսելու ատեն , եւ չգիտ-  
ցածը թէ վէքէլի խօսի , ետ պէլ լի բանը չը գիտ-  
նայ ու չի կարենայ ճուղապ տալ , տգիտութե  
մեղք կը գործէ , ծանր կի՛ թեթև՝ բանին կեօ-  
րէ : Տղայ մը որ չարը բարին կը ճանչնայ , ամ-  
մա իրեն կամքին կեօրէ եղած բանին աղէկու-  
թիը գէշութիը բարակ կը նտրէ . իր ուզածին  
դէմ բան ըլլայ նէ , անչափ բարակ խելք չի  
թափեր , աղէկը դէշի տեղ կը դնէ , դէշը աղէ-  
կի տեղ . ասով տգիտուէ կի՛ անգիտուէ մեղք  
կը գործէ՝ մենձ կի՛ փոքր՝ բանին կեօրէ . հապա-  
թէ իրեն ըսեն՝ թէ աս չար է , մեղք է . ու հաս-  
կընալով մը աիկ չընէ նէ , չարութեան մեղք  
կը ըլլայ :

Կուսապաշտը կի՛ անւնձը չի կրնար տգէտ ըլլալ  
ճշմարտին ւնյ . ուստի միշտ չարութի կայ սիր-  
տը , որ չի թողուր ճանչնալ և պաշտել զանձ .  
ուստի կըսէ՝ Ժգ սաղմուտ . \* Ասաց անզգամն՝ ի  
սրտի իւրում , թէ ոչ դոյ ւնձ ॥ . տեն որ չըսէր ,  
ասայ՝ ի ճախ . զերէ մտքովը կի՛ խելքովը ուղե-  
նայ

նայ նէ՛ կը գտնայ . ամմա սրտովը չուզեր՝ որ  
ըլլայ, որ զինքը չիսպատժէ :

Ուրիշ անհաւատներուն մէջ, հրէից մէջ, և  
հերետիկոսաց մէջ՝ երկու կերպն ալ կայ . պա-  
զին թանձր տղիտուէ մեղքով կուրցած են .  
պազին ալ կը ճանչնան, բայց չարութիւն չեն  
դառնար, պատճառ ունենալով հպարտուիլ,  
արժաթսիրուիլ, փառասիրուիլ, մարմնասէ-  
րութիւն : Եւ որչափ է նէ գիտուէ և տղիտուէ  
տարբերուիլ, անոր կեօրէ է և պատժոց զա-  
նազանուիլ . ըմ, \* Ճառայ՝ որ գիտիցէ ըզ-  
կամա մն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ը կա-  
մաց նր, արբցէ գան բազում . և որ ոչն գիտի-  
ցէ, և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ  
գան սակաւ : Ամենայնի՛ սրում շատ տու՛աւ,  
շատ խնդրեսցի՛ ի նմանէ . և որում բազում  
աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն՛ ի  
նմանէ ॥ . զէ . ԺԲ . 47 . 48 :

Իսկ շարուէ Բըշը, ( որ կը սու՛նի լեզէմ հոգւոյն  
սթ ) որ է աղբիւր բարուէ, ) այն է՝ որ տկա-  
րութիւն և տղիտուէ սեպէպմը չունի . հապա-  
իր կամքը կատարելու համար՝ այ կամքը կը-  
կոտրէ . գիտէ՛ թէ բրածը չար է, մեղք է .  
թող չիսպատնայ թէ որչափ է այն մեղքին մեռ-  
ծուիլ . գիտէ թէ այ դէմ է, թէ և կամօք այ  
դէմ ըլլայ տէի ջըներ . զորօրինակ Ադամ և  
Եւայ գիտէին այ հրամանը, որ պիտի չուտ-  
ու՛նի այն ծառէն . և մէկ տկարուի մը նալ չու-  
նէին . բրած անհնազանդուինին՝ կատարեալ  
չարութիւն էր . և աւելի չար՝ զիրենք արդարա-  
ցընելը, ու շուտով մը մեղայ ջըսելը : Չար էր  
և նախանձն կայէնի լեզէմ բարի եղբօր իւրոյ  
արէլի . և աւելի չար՝ չգիտնալէն գալը իր  
բրած արուելը . և ծայրագոյն չար՝ ետքի յու-  
սա

սահատուծիր : Չարուէ էր և դաւածին կրկին մեղքը՝ շնուծէ և մարդասպանուծէ . յայտնի են և այլ ծանր ծանր մեղք մարդկան , որ 'ի չարուծենէ կըլլան . Բայց ծայրագոյն չարուծի էր հրեշտակաց մեղքը՝ որ հպարտուծեամբ սատանայ եղան . մենծ չարուծի էր և դպրաց և փարիսեցւոց ըրածը , որ դքսն հրաշքները՝ սատանայի կուտային . ետքնալ զանմեղ դառն ան իբրև մեղասպարտ սպաննել տուին . անոնցմէ շատ վեր էր յուղային չարուծիւնը , որ զիւր երկնաւոր վարդապետն վաճառեց անոնց ձեռքը իբրև պայաղը մարդ մը :

Չերկնցնեմ . չարուէ մեղքը ինչպէս յուղային վ'ի աղէկ կիմացուի . տկարուէ մեղքն ալ պետրոսի վ'ի յայտնի կիմացուի . և տգիտուէ մեղքն ալ պօղոսի վ'ի : Ուստի շարականը կըսէ յուղային ու իրեն համախոհից համար . \* Չքէն խորհեցան 'ի չարուծէ՝ անձ յաւիտենից : Իսկ կորստեան որդին յուղաս 'ի համբոյր մերձեալ նենդուծի՝ նշանակ և առիթ մահու անմահիդ ॥ : Բայց պետրոսի համար կըսէ . \* Այսօր զվէմն հաւատոյ շարժել փորձողին խաբէուէ մարտ , առ 'ի քէն թողացուցեալ , զմարդկային տկարուծիս յանդիմանելով . և առ յոյս դարձի մեղաւորաց ॥ . ևն : Եւ պօղոս իրեն համար կըսէ . ան . ԳՃ . ան . 13 . \* Որ յառաջագոյն հայհոյիչն էի և հալածիչ և թշնամանիչ . այլ դաի սղորմուծի . զի զայն յանդիտուէ և յանհաւանուէ դործէի ॥ : Իսկ դաւածի իրեն տկարուէ և տգիտուծէ մեղքը ասանկ կըխոստովանի . \* Չմեղս մանկուծէ իմոյ և զանդիտուէ իմոյ մի յիշեր ॥ . Կառ . իդ . 7 : Բայց չարուէ մեղքը ասանկ կուլայ . \* Բեռ

միայն մեղայ ար, և զգար առաջի քո արարի և  
առաջ . Ծ . 6 :

Ե . Ինչու՞ն հիմա ըսածնիս՝ առնելու՞նք մեղք  
կրկնու՞նք . Ի՞նչ կանոնէ դուրս բան մը՝ որ կը  
նենք այ կամացը դէմ : Հայա շատ բարի բա  
ներ ալ կան , որ այ կամքը կատարելու համար  
պարտքան էինք ընելու ու չենք բեր , ուստի  
զանցառու՞նք մեղք կըսու՞նք . ինչպէս՝ այ տու՞ած  
շնորհքը չի բանեցնել քանքարաթաքոյց ծա  
ռայի պէս . ներսի աղբարարու՞նք կի՞ հոգւոյն  
սքոյ տուն տու՞ած բարի խորհուրդները չի բա  
նեցնել . պարտքերնիս եղած աղօթքը և պա  
տարագը՝ պարապ բանի համար մէկ դի ձգել .  
ափերնէս եկած աշկուհիը և օգնուհիը չընել  
մեր եղբօրը . ևն :

Ասոնցմով , և տահա ինչ որ ետքը 'ի մասնա  
ւորի պիտի խօսինք , կիմանաս մեղաց պէսպի  
սու թի՞ր . և անով ալ կիմանաս , թէ ի՞նչպէս  
զղջալ և ապաշխարել պէտք է ամեն մէկին հա  
մար . բայց ես աւելի պայծառ կուղեմ՝ հա  
կըցընել քեզի . ապաշխարու՞նք . զերէ կըտե  
նամ որ մեղք գործելը սատանայի չափ դի  
տես . իսկ ապաշխարելը դեռ մարդու պէս չես  
դիտէր :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ . Բ :

Եղանակ ճշմարիտ ապաշխարու՞նք :

Ի՞նչ . Ապաշխարելն է ապա աշխարել , կամ ապ  
աշխարել , որ է՝ լալով դուրս ձգել . Ի՞նչ պակ  
սուհի մը ընելէն էտե՞՞ փիւշման ըլլալ , խելա  
բերիլ , ցաւիլ ըրածին վր , անանկ որ մէյժալ  
այն բանը չընէ , հապա ձառքէն եկածին չափ  
իրմէն

իրմէն հեռացնել, ու այն բանին խորշը լըսը  
 ընել: Այ ողորմութիւն է՝ որ մարդիկ ասանկ  
 ապաշխարեն նէ ճշմարիտ սրտանց, ու առա-  
 ջադրեն մէյմալ չընելու ան մեղքը նէ, ան ալ  
 խապուլ կընեմ կրսէ կոր անոնց ապաշխա-  
 րուիլ. և անանկ կըհաշտուիմ, սանքի բնա-  
 ինծի հետ թշնամի չեն եղած. \* Ամ մեղք իւր՝  
 զոր մեղաւ, մի յիշեսցի || . էդէ՛ . լի . 16 . տես  
 և ժը: Դժոխքի արժանի եղածը՝ ապաշխա-  
 րութենով արքայուէ որդի կընէ անձ . և աս  
 կերպով անհամար մեղաւորք սք են եղեր, աս-  
 կից մենձ բան կայ մի: Բանը ան է՝ որ ճշմար-  
 տապէս ապաշխարենք . սոսկ բերնով չըլայ  
 Բղան, հապա գործքով ետ կենանք՝ ի մեղաց .  
 սալթ տերեւ չըլայ ապաշխարուէ ծառին վր-  
 պտուղ ալ երեւնայ. լամ, \* Արարէ՛ք այսուհե-  
 տե պտուղ արժանի ապաշխարութե || . Եսփր .  
 7 . 8 : Ի՞նչպէս կըլայ ըսես նէ, աղէկ ան-  
 կած դիր :

Դուն մէկ ծառայ մը ունենաս՝ որ մենձ յան-  
 ցանք մը ըրած ըլլայ . զորօրինակ տնէն ծանր  
 բան է գողցեր, կի՛ ընտանեացդ ըողին է ան-  
 ցեր, կի՛ քու երեսիդ քճրելով՝ ծանր նախա-  
 տինք է տուէր, կի՛ չարախօսուէ ընելով՝ քու  
 անունդ է աւրեր, կի՛ ետեւդ է ընկեր, որ քեզ  
 սպաննէ՝ ետ սպաննել տայ . հէլպէթ ասանկ  
 ծառան տնէ կըլնուտես, երեսէ կըձգես, պէտք  
 ըլլայ նէ՝ հասէնալ կուգաս: Հիմա ըսենք թէ  
 ան աներես ծառան դայ ոտքդ ինկնայ, մեղայ  
 դոչէ, միջնորդ ալ բունէ չէ թէ միայն բարե-  
 կամները, հասրս քու մէկ հատիկ սիրական որ-  
 դիդ, դուն ի՞նչ կըսես, ի՞նչ կընես: Ի հարկէ  
 կընայիս, արդեօք ծառայիդ Բղան սրտանց է,  
 թէ երեսանց . և անոր կեօրէ ետ կընդունիս,

եա չես ընդունիր : Ասկից չափէ՛ք ու ապաշխարութիւնդ ալ . արդեօք ընդունելի՞ է ան ,  
թէ չէ :

Մեղայ դոչեց աքար զարմեան , սաւուղ կիսեան , անտիօքոս թաղաւոր սելեկիացոց , և յուդա իսկարիովտացի , բայց սրտանց չըլլալով , հապա սոսկ երեսանց , ողորմուէ արժանի չեղան : Մեղայ դոչեց դաւիթ , պետրոս , պօղոս , մաքսաւորը , մագդաղենացին , ևն . չէ՛ թէ երեսանց , հապա սրտանց . անոր համար ողորմուէ արժանի եղան : Ուրեմն բոլոր բանը հոս է , որ դիտնաս՝ թէ ե՞րբ կըլլայ երեսանց ապաշխարելը , և ե՞րբ կըլլայ սրտանց ապաշխարել :

Թ . Ամէն մարդ՝ որ խոստովանու՛նիլու ապաշխարել կուզէ՛ նէ , գիտէ որ հինգ բան պէտք է ապաշխարութե՛ հարկաւոր՝ պզտըկուց պէրի քրիստոնէականէն սորված , ց՛ք քննութի՛ն , գղջումն , առաջադրուի՛ն , խօստովանութի՛ն , և ապաշխարանաց վճարումն : Եւ ամէնքը աս բաներս կընեն . ամմա տասին մէկը չէ , հարուրին մէկը կելայ չելար՝ որ պտուղը տեսնայ իր ապաշխարուէր , բոլորովին ետ կենալով իր մեղքէն . ինչո՛ւ համար . զերէ՛ սրտանց չընէր , հապա երեսանց :

Երեսանց կըսեմ՛նէ , կեղծաւորութե՛ համար մի հասկընար , կի՛մ երեսպաշտութենով դրսըւանց ուրիշները խաբելու համար . ( ատիկակ ուրիշ ծանօտ զարհուրելի մեղք կըլլայ . ) հապա կուզեմ ըսել՝ թէ ինքը զինքը միայն կրիաբէ . դրսի կեղևները կուտէ աս բաներուս , ներսը եղած պտուղը համտես չընէր . ջրին երեսը կըլողայ , խորունկը չի մտնար . սովորութի՛ն ըրածի պէս կըխոստովանի , շատ շատ էր

իր սիրտը խղճմտանքը հանդէն տէի, չէ թէ  
 զանձ հանդէնցնելու համար: Մեզքը բեր-  
 նէն դուրս կըթափթըրիէ, սրտէն դուրս չի  
 թափեր, չի կորսնցնէր, չի վռնտեր, չի դա-  
 նիր. բերնով այ հետ բարեկամուի ընել կու-  
 ղէ, սրտով մեղքին հետ հին բարեկամութիւնը  
 կըպահէ: Իսպաթը ան է, որ խոստովանելէն  
 հազորդուեցէն էտն՝ սահաթ մը՝ շատ շատ օր  
 մը կանցնի չանցնիր, կենէ իր առջի սրտին չա-  
 րութիւնը վրան է, կենէ հին խույերը կենդանի  
 են. առջինին պէս՝ քիւֆիւրը տեղը, ատելու-  
 թիւնը, բամբասանքը, բարկուիւնը, կամապաշ-  
 տուիւնը, ազահուիւնը, պղծուիւնը. մէկ խօսքով՝  
 ամեն պակասութիւնը առջինէն եւել է, պակաս  
 չէ: Ասանկ չէ՞ մի մարդկանց սովորութիւնը -  
 տեսնուի, երեսանց պիտի ըսենք ասանկ ա-  
 պաշխարութիւնը, թէ սրտանց:

Գիտեմ որ հիմա աս բանիս կարդացողը՝ ո՛վ  
 որ ըլլայ, պիտի ըսէ. իրաւ է, ասանկ կըտես-  
 նամ կոր՝ թէ՛ ուրիշի վր, թէ՛ իմ վրաս. ու-  
 րիշը ի՛նչ ընեմ. ես ինձի նայիմ. անանկ է  
 նէ, աղէկ մը փնտռեմ՝ թէ ի՛նչնա կըլլայ սրը-  
 տանց ապաշխարելը. մէյեր խալպ է եղեր ինչ-  
 ուն հիմա ըրած ապաշխարութիւնս, սըռչայ  
 է եղեր. աման ի՛նչպէս կըլլայ ճշմարիտ և ան-  
 խարդախ ապաշխարուի. վն այ՝ ինձի սորվեցը-  
 նող մը դտնայի:

Ո՛վ քրիստոնեայ եղբայր, մեղաւոր որդեակ  
 սիրելի, որ ճշմարիտ ապաշխարութիւն կըփա-  
 փաբիս, և կուզես գտնալ զգանձն ծածկեալ  
 յադարակի, գակն պատուական, և զանդին  
 մարդարիտ՝ որ գին է արքայուէն, մի խաբեր  
 զիս՝ որ չիխաբես զքեզ: Կուզեմ կըսես կոր՝  
 տորվիլ, ի՛նչպէս կըլլայ սրտանց ապաշխարե-

լը . սորվածդ՝ դործքով ընելու կամք ունիս նէ , եկուր քովս , ւայ կողմանէ ուղածդ սորվեցնեմ . չէ նէ՝ դուր տեղը մ՝ աշխատիր , ու մ՝ աշխատցըներ զիս : Չէ՛ , հայր սբ . սրտովս ու կամքովս՝ ւայ շնորհքովը՝ կուզեմ պտուղ արժանի ապաշխարութե ընել . անոր համար կուզեմ սորվիլ : Անանկ է նէ , ես ալ սիրով կը սորվեցնեմ քեզ՝ ւայ տուն տունաճը :

ի . Սրտանց ապաշխարելու իրեք բան պէտք է . հաւատք կենդանի , յոյս հաստատուն , և սէր եռանդագին :

Կենդանի հաստատով . Իբրև աջօք բացօք պիտի տեսնաս ւայ արդար դատաստանը մեղաւորաց վր , որ մէկ հպարտուն մեղաց համար պատժեր է ու կրպատժէ յաւիտեան ՚ի հուրն անշէջ անհամար հրեշտակները՝ որ սաղայէլի հե տեւեցան ՚ի սկզբան Յի . թղթախոհուն համար բոլոր Յքը ջրհեղեղով՝ նոյայ ատենը , և սո դոմ դոմորը հրհեղեղով՝ զովտայ ատենը . նը մանապէս ուրիշ չարագործները՝ ամենը մէյմէկ թիւրլիւ մեղաց համար . ուրեմն պիտի ըսես . ես ալ անոնց պէս մեղաւոր մնամ՝ չապաշխարեմ նէ , անանկ պիտի կորսըճիմ . ըմ , \* Եթէ ոչ ապաշխարիցէք , ամբին նոյնպէս կորնչիջիք ॥ . շէ . ժի . 3 : Աս ճշմարտութիւս որ սրտիդ մէջ լոյս հաւատքով վառուի նէ , երկիւղն ւայ՝ որ է սկիզբն իմաստուն , կրղորանայ ՚ի քեզ , և կըլայ հիմն ճշմարիտ ապաշխարութե . ուստի խնդրէ յայ՝ ըսելով . \* Բեւեռեալ երկիւղ քո զմարմին իմ , զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ . սաղ . ճժը . 120 :

ի . Անկից էաւ հաստատուն յոսով պիտի զօրացնես դուն քեզ՝ նայելով ւայ խոստմունքը , գուժը և մարդասիրութիւր առ զղջացեալ մե

դաւորս . որ շատ կերպով կրսէ , \* դարձա-  
 բնութիւնս , և ես դարձայց առ ձեզ : Ոչ կա-  
 միմ զմահ մեղաւորին , այլ զդառնալ նր յա-  
 պաշխարութի , և կեալ : Ապաշխարեցէք , զի  
 մերձեւ է արքայութի երկնից ॥ . և ն : յիշէ ա-  
 նառակ որդին , որ հայրը ի նչպէս զինքը սի-  
 բով լնունեց . յիշէ քնի ըսածը , թէ ես երկ-  
 նաւոր բժիշկս եկայ հիւանդներուն , չէ թէ  
 ողջերուն համար . յիշէ թէ քեզի համար մե-  
 ռաւ քու արդ , որ դուն ողջնաս . քեզի հա-  
 մար թափեց բոլոր արիւնը , որ քեզ նր արու-  
 նովը դնէ ու խալըսէ մեղքէն ու դժոխքէն :  
 Ասանկ է նէ , դու քու կողմանէդ ափէդ ե-  
 կածին չափ ճշմարիտ ապաշխարութե փոյթ  
 ցցնելէդ էտե , պիտի չի տարակուսիս , հող  
 չընես , թէ արդեօք ամ թողմնց մի իմ մեղ-  
 քերս , աճապներեց մի ինձի . առ աճապը վեր-  
 ցուր , աեղը հիճապ ունեցիր խոնարհութե-  
 նով , և շնորհակալութենով՝ որ ամ քեզ ողոր-  
 մեցաւ՝ ապաշխարութե ատեն տուն . և այն-  
 պէս հաւատքով և յուսով ան ապաւինէ , ու  
 նայէ որ ահիւ և դողութի զանձին փրկութի  
 դործես . քի խոտորիս ՚ի չարէն՝ ուսկից զղա-  
 ցար , և առնես զբարին՝ որ ինչուկ հիմա ծու-  
 լացար : Ասոնք ալ ինքիրմէ կրլլան , թէ որ ան  
 սէրը սրտիդ մէջ ըլլայ նէ . \* Բայց արդ մնան՝  
 հաւատք , յոյս , սէր , սք երեքեան . և մեծ  
 քան զսոսա սէր է ॥ . ան . կորն . ժի . 13 :  
 Ե . Սէր , սէր , սէր . ուր ես , ուր դտնամ ճըշ-  
 մարիտ սէրը : \* Սէր անուն յն , սիրով քո ճըմ-  
 լեան , սիրտ իմ քարեղէն ॥ . Ժամագր : Սէր պէտք  
 է կրսեմ սրտանց ապաշխարելու . չէ սանկ  
 նանկ , թուլումուլ , դաղմաղղ , հապա՝ սէր  
 եռանդագին . աս ըլլայ նէ , ամ ինչ կատարել  
 է .

է. \*Սէրն է զօղ կատարման. դու իս պատուի  
 րանին սէր է. լրումն օրինացն սէր է ॥ : Ի՞նչ  
 պէս հասկըցընեմ աս սէրս, որ կրակի պէս  
 մարդուն սիրտը կը վառէ կը բորբոքէ, մեղքե-  
 ըը կերէ կը լափէ, չար սովորունքներուն քեօ-  
 քը կը չորցընէ, քեղապիպէս կուտէ կը իրտ-  
 տեցնէ ամմէն չարիքը. դառն արցունք կը բը-  
 խեցնէ աչքէն, և անուշ միսի թարանքով սիր-  
 տը կը ճխացնէ : Նայէ՛ մէյմը պետրոս առաքե-  
 լուն վր՛ զղջման ատենը. Ի՞նչ սրտով կուլար  
 ջերմ սիրելին քնի. անոր սէրը ունեցիր, տե՛ս  
 անոր պէս կուլա՛ս՝ թէ չէ՛ բոլոր կենացդ մէջ :  
 Օգոստինոսին խոստովանութե՛ն դիրքը ( Իր  
 բերնէն ), և նարեկացիին աղօթագիրքը ( ամ-  
 մէնուս բերնէն ), աս սիրովս զանգո՛ւած են  
 ծայրէ՛ ի ծայր. անոնք ըլլան քեզի վարդա-  
 պետ ճմարիտ ապաշխարուէ :

Այս եռանդագին սիրոյ կրակը սրտիդ մէջ  
 պիտի արծարծես երկու մտածութենով. մէյ  
 մը՝ թէ ո՞րպիսի սիրականիդ խաթրը աւրեր  
 ես մեղանչելով. մէյ մալ՝ թէ աս ո՞րպիսի մար-  
 դասէր Խոր է, որ ապաշխարողին մեղքը երեսը  
 չի զարներ, հապա ղ թած հօր պէս զիր անա-  
 ռակ որդին սիրով կընդունի, և առջի փառ-  
 քը պատիւը կը հանէ :

Օրինակ մը տամ քեզի. մէկի մը հետ աւրը-  
 ված ըլլաս, ու իրիկո՛ւան մի՞թուն ճամբան մէ-  
 կը դէմդ ելլայ. առէկ մը սէջմիշ ըրած չըրած՝  
 ասոր սիլլէ մը զարնես. ետքը ձայնէն հասկը-  
 նաս որ՝ քու սիրելի բարեկամդ ես՝ եղբարդ  
 է. ո՞րչափ կըցաւ իս, ձառքը ոտքը կը պաղ-  
 նես, մեղայ կըսես, սխալեցայ, չըգիտցայ՝ թէ  
 հրամանքդ ես եղեր. չէ՛ նէ՛ ձառքս չորնար,  
 ու քեզի չի դպչեր. ևն :

Ալ

Ալ աւելի . օռմանի մը մէջ կարծելով մէկ գա-  
 ղան մը որսալ, կի՛թ թշնամիդ զարնել . սխալ-  
 մամբ քու հայրդ զարնես սպաննես նէ , ի՛նչ  
 սրտի ցաւ , ի՛նչ կսկիծ կրլլայ քեզի . ախ՛ ես  
 իս սպաննէի տէ՛ սիրական հօրս չի դպչի կը-  
 սես . ախ ի՛նչ ըրի ես , ի՛նչ ապուր կերայ ,  
 ի՛նչ ձուն տամ գլխուս . և իրաւցընէ հայրդ  
 ասանկ մեռուցած ըլլաս նէ , ինչուան ՚ի մահ  
 ցաւը կելլայ մի սրտէդ . չէ՛ . հապա այ դէմ  
 ըրած մահուչափ մեղքերդ՝ ամիէն մէկը մէյ մէկ  
 սոսկալի անասպանութի է , որ քու խելքդ չի  
 հասնիր . աղէկ մը մտմտաս նէ , ի՛նչ կերպով  
 պիտի չի ցաւիս ինչուան ՚ի մահ :

Աս օրինակս աւելի զգալի ընելու համար ,  
 դնենք թէ դուն զքու հայրդ չի գիտնալով  
 զարկեր ես մահացու վերքով , ա՛մա անկատ  
 չէ մեռեր . վրայ հասար՝ տեսար որ գետինը  
 փրովեր է՝ արունվըլայ կիսամեռ . ախ օղու՛  
 կըսէ կոր , ի՛նչ ըրիր ընծի , աս ի՛նչ հալ հա-  
 սուցիր իս , ասանկ խըյմիշ ընել կրլլայ մի քու  
 սիրական հօրդ՝ ըսէ նէ , դուն ի՛նչ կրլլաս ան-  
 տղը . քարասիրտ ըլլաս նէ , սիրտդ կըճաթի  
 լալէն . ոտքդ ձառքդ կըղողայ , ձեռքդ գլխուդ  
 կը զարնես , կը ծեծկո՛ւիս , կըփետառու՛իս , ոտ-  
 քը կըփաթթըվիս , մեղայ դոչելով՝ ո՛րպիսի է  
 բած սրտանց . աման հայր իմ սիրելի , թողու-  
 թի՛ ըրէ , չէի գիտեր , գլուխս տաքցած՝ աչ-  
 ու՛րներս դարձած՝ քեզ թշնամի կարծեցի ես  
 անօրէնս . քեզ չիճանցցայ . ևն : Ասանկ ըսելը  
 ալ հերիք չես սեպեր . շուտով մը կըճարտար-  
 շորիս , արունը կըսրբես , վէրքը կը պատես ,  
 ճար մը կը գտնաս՝ որ հայրդ գետնէն վերցը-  
 նես , տուն տանիս՝ հանգչեցնես՝ դեղ ընես ա-  
 ողջացնես , որ քու սիրտդ ալ հանգչի ու ա-  
 ող .

առողջանայ, չէ՛ նէ՛ անբժշկելի վերք կը լայ քե-  
զի ինչո՞ւնն ՚ի մահ . և ամիէն օր՝ ամիէն սա-  
հաթ՝ մահ է քեզի անանկ եարայլ տեսնայլ  
քու հարդ քու ձեռքովդ :

Ահա ասանկ և աւելի որդիական սիրով պի-  
տի ցաւիս ու զղջաս ամիէն մէկ մեղքիդ վրայ  
որ այ դէմ ըրեր ես . գիտնալով՝ որ առաքե-  
լոյն ըսածին պէս , մեղքով կը լայ \* Աերստին  
՚ի խաչ հանել անձանց զորդին այ , և դարձ-  
եալ խայտառակել ॥ : Եբր . Գ . 6 :

Նոյն օրինակը բանեցո՞ւր մէկալ ըսածս ալ  
հասկընալու համար , թէ ԿՅ ԽՆՃԱՅ մարդա-  
սիրութի՞ կընդունի մեղաւորաց դարձը : Ուս-  
տի դնենք թէ քու հայրդ որ քեզնէ վերաւո-  
րեցաւ ՚ի մահ . հասկընալէն էտե՛ թէ դուն  
ըրածիդ վիւշման ես , մէյմալ ձեռքդ զէնք  
չես առներ , չէ՛ թէ հօրդ , հապա հիջ մէկին  
դպչելու համար , բոլորովին ներէ քեզի քու  
ըրածդ , ու առջինին պէս սիրով վարուի քե-  
զի հետ , ոչ քու երեսիդ տայ , ոչ ուրիշի առ-  
ջև խօսի , ի՞նչ կըսես , կըրնաս մոռնալ հօրդ  
աղէկուածիդ . չէ՛ս մի գովեր ամիէնուն առջև ,  
թէ չիկայ ասանկ հայր , իմ հօրս նմանը չիկայ :  
մէյ մալ անկից էտե հօրդ դէմ ապերախտ կը լ-  
լան մի . մէյ մալ իրեն ձեռք կըրնան վէրցընել  
գիտնալով . անանկ ձեռքդ կը քաշես ուրիշի  
ալ դպչելէն՝ որ ամիէն անգամ միտքդ կու-  
դայ , չը լայ որ հօրդ դպչիս տէյի :

Ասոնք օրինակ են , բայց ճշմարտութիւն վեր  
չեն , վար են . զերէ ԿՅ՝ մեր հայրն է . ԽՆՃԱՅ  
հայր . սոսկ մարմինը չէ ծներ , մարմինն ալ  
հողին ալինքն է ստեղծեր , և ամիէն օր՝ ամ-  
մէն ըոպէ մեզ նորանց կըստեղծէ՛ պահելով  
պահպանելովը . մեր ամիէն բարին իր ձառ-  
քն .

բովը կուտայ մեղի , և պատրաստեր է տալ  
 իր յաւիտենական արքայութիւն ալ . ո՛ր թո-  
 ղունք մարդեղուն , և նք խորհրդոց , և ամ-  
 մէն շնորհաց բարերարութիւնները : Ասոնք որ  
 մամտաս նէ , ինքիքմէ եռանդազին սէրը կը-  
 վառուի սրտիդ մէջ . որով միայն կըլլայ ճըշ-  
 մարիտ ու սրտանց ապաշխարուիք , որ է մէկ  
 հասիկ դեղ կենաց մերոց՝ յետ հի՛ւանդանա-  
 լոյ ներգործական մեղօք :

Ինչո՞ւն հիմա ըսածնիս՝ լեհանրական դեղ էր  
 մեր լեհանրական հիւանդութեք . ասկից էտե  
 խօսինք մասնաւոր դեղոց վրայ՝ մասնաւոր և  
 գլխաւոր մեր ցաւերուն դէմ :



Գ Լ Դ :

Հարկաւորութի մասնաւոր բեղոց՝ ընդդէմ Իւրաքան  
 չի-ր մեղաց ՚ի մասնաւորի :

իւ . \* **Ե**րանի՛ ում թողութի եղև մեղաց , և  
 ծածկեցան իմ յանցանք նի՛ : սալ . լիւ . 1 : Եր-  
 նէկ անոնց որ ճշմարիտ ու սրտանց ապաշխա-  
 րութե շնորհքը դանալով՝ իրենց բովանդակ  
 մեղացը թողութի առեր են , անանկ որ բոլո-  
 րովին գոցու՛ած ու թաղու՛ած է իրենց խա-  
 պահաթը՝ բնաւ յանցանք մը չորածի պէս ի  
 բենց կենացը մէջ . և իրաւ որ՝ իմ ասանկ կը-  
 մոռնայ՝ կըջնջէ՝ անհետ կընէ ճշմարիտ ապաշ-  
 խարողաց մեղքը . սևը կը ճերմկցընէ՝ ձուս  
 կը դարձընէ . հինը կը նորցունէ , ընկածը կը  
 կանգ-

կանգնէ . հիւանդը կողջնցնէ . մեռածը կը  
կենդանացնէ , թաղուածը կը յարուցանէ ,  
մէկ խօսքով՝ նոր սիրտ կը ստեղծէ . զերէ զճշ-  
մարիտ ապաշխարօղ՝ իրեն ճշմարիտ բարե-  
կամ կընէ . իսկ բարեկամը բարեկամի հետ  
նենդ ունենայ սիրտը նէ , բարեկամ չի կրնար  
ըլլալ , չարակամ թշնամի կըլլայ :

Անանկ է նէ , վարպետութիւր բարեկամ ըլ-  
լալը չէ , բարեկամ մնալն է , հերիք չէ հաշտ  
ոճիւր , թէ որ բարեկամութիւր չի հաստատուի  
նէ . հերիք չէ ողջննալը , առողջ ըլլալու է .  
հերիք չէ այսօր առողջութիւր ունենալը , բոլոր  
կեանքը առողջ անցնելն է բանը : Կուզեմ ը-  
սել , ի՞նչ շահ աս օրս ճշմարիտ ու սրտանց  
ապաշխարելը , ու թէքրար այսօր կի՞ վաղը նո-  
րանց մեղանչելը . ի՞նչ դիտես . մէյմալ ճշմա-  
րիտ ապաշխարութե արժանի կըլլան մի . չըլ-  
լան նէ . կըլլաս որդի կորստեան : Հապանայ-  
ինք անանկ ապաշխարութե ընելու՝ որ պտուղ  
ունենայ մեր ապաշխարութիւր՝ մէյմալ չմեղան-  
չելու , մեղաց տեղը առաքինութիւր պողաբե-  
րելու : Հոս է բովանդակ աշխատանքնիս , և  
հոս է բովանդակ վաստակնիս :

Ի՞նչ ընելու է՝ ըսես նէ , շատ բան կայ ընե-  
լու , դուն ալ դիտես , ալ ի՞նչ կը հարցընես .  
անհոգութի մը՛ներ , խայրէթի՛ եղիւր հոգւոյդ ,  
ան ատեն կըտեսնաս ընելիքդ ալ չընելիքդ  
ալ : Բայց ես քեզ օգնելու համար՝ երկու բան  
միտքդ ձգեմ : Նախ և առաջ՝ էտե մնալու չէ ,  
առաջ երթալու է : Երկրորդ՝ առաջ երթալը  
քնդ հանրապէս բարին ուղելով չըլլար . մաս-  
նաւորապէս աս և ան բարին ուղելու և ընե-  
լու է :

Թ . Առջի ըսածս յայտնի է՝ իմաստնոց ըսածին  
պէս ,

պէս , \* ոչ կամին յառաջանալ է կամիլ յնտս  
 դառնալ ։ Քսի մն մերոյ վճիռն ալ զիտես ,  
 որ \* Արքայութիւնն երկնից բռնադատի՝ և  
 բռունք յափշտակեն զնա ։ Ժաբ . Ժն . 12 :  
 Ուրեմն ջանա՛ սիրելի օրէ օր չար սովորու-  
 թիւներդ մէկ դի ձգել՝ որ արքայուէ ճամբուն  
 արգելք են . և բարի բարի բաներուն էտեէ  
 ընկնալ՝ որ քեզ արքայութե՛ դուռը կը հաս-  
 ցընեն :

Մի վախնար՝ թէ չես կրնար մեղքերէդ վազ  
 դալ . մի վախնար՝ թէ ես երբ առաքինութի  
 պիտի սորվիմ , ու սը ըլլամ , մոր հովուցեացէ  
 զքեզ , և քեզ ինչ ոչ պակասեսցի . Ի՞նչ հետդ  
 ըլլալէն էտե՛ ամմէն բան կըլլայ . դուն աշ-  
 խատէ՛ , Ի՞նչ կը յաջողէ . այն՝ որ զիկադիս ե-  
 զիպատացուց դերուէն խալըսեց , ծովը ցամբե-  
 ցուց , իր ժողովրդը դիմացը անցուց , թշնա-  
 միքը կորսնցուց , և հազարաւոր հրաշքներով  
 զիրենք երկիր աւետեաց հասուց . քեզ ալ  
 կրնայ ու կուզէ սատանային ձառքէն խալը-  
 սել , ու արքայուէ տանիլ . միայն դու մի՛ ըլ-  
 լար խտտապարանոց և ապերախտ ժողովրդ-  
 եան պէս . այլ եղի՛ր հաւատարիմ ծառայ մն  
 ւնջ քո . ալ ուրիշ բան մի հոգար : Աս ջանքը՝  
 աս եռանդը ւնջ ծառայութե՛ քու սրտիդ մէջ  
 ըլլալէն էտե , կարօտ չես ըլլար ուրիշ խրատ  
 լսելու . բայց որովհետեւ հիմակուց հիմա պա-  
 կաս է քու ջանքդ , մէկալ ըսածս ալ քեզի  
 հասկըցընեմ՝ որ խայրէթի դաս :

Դ . Երկրորդ ըսի , առաջ երթալը ընդհանուր  
 բանով չըլլար , մասնաւոր բանի ձեռք դար-  
 նելու է . զորօրինակ . Դուն որ զաւկիդ կամ  
 աշկերտիդ կըսես ընդհանրապէս , ծօ խելօ՞ք  
 կեցիր , խենդութի մըներ . խելք սորվէ , կար-  
 դալ

դա՛լ սորվէ • զէնասճա՛թ սորվէ • ասով տղան  
մարդ ըլլալիք չունի • հապա պիտի ցրցնես կ՛մ  
պիտի ըսես մէկիկ մէկիկ , ան բանս ըրէ , ու  
տանկ ըրէ • ան բանը մը՛ներ • կ՛մ տանկ մը՛ներ •  
աս խելայի խօսք է • մէկալը անխելք կ՛մ անշը  
նորհք խօսք է , կարգալը կարգով սորվէ , ա  
ռաջ պնակիտ ու քերական , ետքը սաղմոս՝ ա  
ւետարան • ետքը քերականութի , թո՛ճաբա  
նութի , ևն • նմանապէս զէնասճա՛թի եկօղը ա  
ռաջ սա բանս պիտի սորվի , ետքը նա բանը  
պիտոր ընէ • սանկ բռնէ պիտոր ձեռքը , մա  
տը , ևն :

Ասոր նման հողւոյն կրթութիւնը դրեր է անձ՝  
մեր խօլայութենը համար • սոսկ չէ ըսեր ընդ  
հանրապէս , թէ սք եղիր՝ ինչպէս ես սք եմ •  
խղճմտանքդ մաքուր պահէ • խտտորեա՛ ՚ի չա  
րէ , և արա՛ զբարի • հապա հարցընողին՝ թէ  
ո՛րն է բարին , պատասխան տո՛ճաւ • զպատ  
ո՛ւնիրանս գիտես , որ տասն են թո՛ճով • մէկիկ  
մէկիկ նայելու է , ընելիք կայ՝ ստորասական ,  
չընելիք կայ՝ բացասական • և այն պատո՛ւն  
բանքններնալ տեղւոյն կէօրէ երկան բարակ  
բացատրեր է անձ՝ մարդարէից և առաքելոց և  
վարդապետաց ձեռքովը • ոսկ զի ամիէն բանին  
աղէկը գէշը հասկըցո՛ւի • և անոր կէօրէ կա  
րենան մարդիկ խտտորիլ ՚ի չարէն , և առնել  
զբարին :

Դ. Աս բանս չի մտմտալով՝ կրգանկրտին շա  
տոնք , թէ աս ի՛նչ է՝ որ առաջ չենք երթար ,  
էտև որանց կերթանք • մեղայ կըսենք , կըխոս  
տովանինք՝ կապաշխարենք , կենէ կինկնանք •  
նիէթ կըղնենք , ու չենք կրնար կենալ նիէթ  
նուս վ ՚ի : Պատճառը ան է՝ որ ըսի , թէ հանրա  
պէս միայն մեղայ կըսէք , ալէսե՛վիէ նիէթ մը  
կը-

կը դնէք, որ խօլայ բան մը նէ. 'ի մասնաւորի  
 ամմէն մէկ մեղքին դէմ դեղ չէք ըներ, որ քիչ  
 աշխատանք չուզեր. անոր համար՝ ինչ որ էք  
 նէ, ան կը մնաք. թէ որ պէթէր չըլլաք նէ :  
 Քեզ օրինակ բերեմ քեզի : Այսօր դնենք թէ  
 խոստովանանք եղար, նիէթ դրիր լէհանրա-  
 պէս՝ թէ պէտեւ սրտանց, որ մէյմալ զմծ չի-  
 բարկացնես, մեղք չի գործես. աղէկ է նիէթդ,  
 քեզ տեսնամ հաստատ կենաս առաջադրու-  
 թեդ վր. հապա ինչպէս կը լլայ որ ես այսօր  
 ես վաղը կենէ առջի ջուրը կը բռնես. բան  
 մը կը հանդիպի՝ մէկին հետ սէրթ կը խօսիս,  
 մէկալը կը դատես, մէկ քանին ալ կը բամբա-  
 սես. ուրիշ մը խաթերը համար խղճմտան-  
 քիդ դէմ գործք մը կընես. զգայարանքդ մա-  
 քուր չես պահեր. կամքդ չես կտորեր. ան սի-  
 բոյն կը պակսիս. եղբայրսիրու թէ ետ կը կե-  
 նաս. աղօթքէ կը ծուլանաս. չափէն էւել  
 դէՖքի սէՖայի էտեէ կինկնաս. նեղութեդ  
 կը տօգոհաս. ուրիշ պակսուէ չես համբե-  
 րեր. ևն :

Ե. Ո՞ր մէկը ըսեմ. համրանք չունի մեղաց ա-  
 ութը և պատճառանքը, ( քի սէպէպը. ու վէ,  
 սիլէն ), և անոր կեօրէ անհամրանք կը լլայ կոր  
 մեղանչելդ, ատ ելլալու ճամբայ չէ. ո՞ր մէկ  
 մեղքին հախէն պիտի դաս, որ չի մեղանչես :  
 Չիկայ ալ մէկ լէհանուր դեղ մը՝ ո՞չ էղաճի-  
 ներուն խանութը, որ ամմէն հիւանդութիւր  
 խարշըլամիշ ընէ. և ո՞չ բարոյականի մէջ՝ որ  
 ամմէն մեղքը չորցընէ մէկէն 'ի մէկ : Հապա  
 ինչպէս որ՝ սըթմային դեղը ուրիշ է, հիւմ-  
 մային ուրիշ, գլխիցաւին ուրիշ, խոստուկին  
 ուրիշ. ասանկ ալ հոգևոր հիւանդութե մէջ :  
 Եւ ինչպէս որ ամմէն հիւանդութի մէկ մար-

դու վր չի գտնուիր, հապա մէկ երկու գլխաւոր ցաւ կըրնայ ըլլալ մէկին վր՝ որ անկից բովանդակ մարմինը զանազան ցաւ կըբաշէ . աւսանկ ալ ամմէն մեղք կի՞ եօթը մուռթի մէկ մարդու վր չի գտնուիր . հապա ամմէն մարդ մէկ երկու մեղաց տրն է, որ իրեն բնութի է ըրեր՝ քի խույ կի՞ մարազ, ( որ մենք մուռթի կի՞ ախտ կը կոչենք ) . որով ուրիշ բաներուն մէջն ալ կինկնայ . զորօրինակ մէկը հարբեցօղ է, չար սովորութի է ըրեր դինովնալը . ան պատճառաւ շատ մեղաց տր կըլլայ, գողուն, մարդասպանուն, շնուն, հայհոյութե, յիշուցատուութե, ծուլուն, դատարկապորտուն, ևն : Մէկալը գող է . մէկալը քիւ՜՜քիւրպաղ . մէկալը հպարտ . մէկալը բղշախոհ . մէկալը սըտախօս, ստերդումն ևն : որոնց պատճառաւ ամմէն մէկը տահա շատ մեղաց մեջ կինկնայ : Արդ՝ ասանկին զղջումը և առաջագոյութիւր պիտի չըլլայ սոսկ ՚ի վերացեալն լեհանրապէս, այլ և ՚ի թանձրացեալն մասնաւորապէս . քի մէյ մալ գինի բերանը չդնելու . մէյմալ տեղաց մը բան չի վերցնելու . մէյ մալ սա անձին հետ չտեսնուելու՝ որ իրեն մեղք գործելու վործութի կուտայ . մէյմալ բերնէն անարժան կի՞ սուտխօսք չի հանելու, ևն : Ասանկ է նէ, սկսինք ասկից էտե մէյ մէկ առաջ բերել մեր հոգւոյն գլխաւոր հիւանդութիւները, ու ամմէն մէկին դեղն ալ դիմացը դնել ՚ի բժշկարանէն ան . որ ուզօղը առնէ ու բանեցնէ նէ, անկ կողջնայ ու կառօղջանայ բոլորովին հոգւորով :



Գ Լ Ե :

Ախարհայարարութիւնք : Եւ դէպ յարտա՛ խոնարհութիւնք :

Ին . Ակիզքն և արմատ անմեղաց հպարտութիւն , որ և ամբարտաւանութիւն . և սկիզբն և առաջնորդ անմեղաւորաց՝ առջի հպարտը , որ է ամբարտաւանն սաղայէլ՝ դիւանց գրուիսը :

Տես , ինչպէս չար բան է եղեր հպարտութիւնը , որ անձ այնչափ սրդողի անոր դէմ , որ իր էն սպառնական ստեղծունածը՝ արուսեակ ըսածնին , անմ երկնային զօրաց գլուխը , և անմ արարածոց աննմանը , մէկ հպարտութիւն մը համար մէկէն՝ ի մէկ երկնքէն վար ձգէ երկրիս խոր անդունդը , ի միջակէտ հողոյ՝ ի դժոխս , որ և սանդարամետ անդնդոց :

Ամենայն մեղք՝ անյ դէմ են . բայց ամմէնէն աւելի անձ հպարտութիւն իրեն դէմ կըսեպէ , ու հպարտի դէմ կըղնէ . անմ . \* Տիւ ամբարտաւանից հակառակ կայ , և տայ շնորհս խոնարհաց ॥ . առաջ . Գ . 34 : Մարդիկ ալ չեն կրնար քաշել հպարտը . ծանր բեռ մը կը սեպեն՝ որ ամմէնուն վր կուղէ նստիլ . ուստի իրենց մուղէն կմ գլխէն կուղեն վար ձգել : Շատ բան կայ խօսելու հպարտութիւն վր . բայց մենք սոսկ աս բանս կուղենք հասկըցընել , թէ ինչ մարտ է հպարտութիւն . և որն է անոր դեղը :

Թ . Հպարտութիւն է \* անկարգ բաղձանք սեպ

Հական գերազանցուէ ॥ . Կ' էւելորդ փափաք մը՝ որ ինքը վեր ըլլայ քան զուրիշները . սանքի բարձրնայ իր պոյէն՝ ի վեր , կամ մենծնայ իր չափէն՝ ի դուրս . երկու ըստկի մարդ է նէ, հազար քէսէ արժօղ կամ ունեցօղ երևնայ , երկու ըստկի խելք ունինէ , ամմէնէն խելացի երևնայ . մէկ մանղորի աղէկութի՛ ունի չունի նէ , ամմէնէն աղէկ , առաքինի և սք երևնայ . ձառքէն քիչ բան կուգայ , եա հիչ բանի եարար չէ նէ , ամմէնէն հիւնէրի , վարպետ , ու զարմանալի երևնայ :

Ասանկ խելագարութէ կուգայ 'Նախ՝ որ իր պղտիկ բանը իրեն մենծ կերևնայ , ու ինքիը զինքը մարդու սրայէն վեր կը սեպէ , և ինքը զինքը միշտ կը մեծցընէ ու կը գովէ : Աս սոյ հպարտութիը՝ կըսուի ծանծաղմտուի , անձնահաճութի , անձնացուցուի , անապարծութի , պարծենալուի , անձնագովուի , ամբարհաւաճութիւն : Ասոր դէմ կըսէ սք զիրքը . \* գովեսցէ զքեզ ընկերն , և մի՛ քո բերան . օտարն , և մի՛ քո շրթունք ॥ . առաջ . իէ . 2 :

Երկրորդ՝ չունեցածը ունեցածի պէս կըցըցընէ , ունեցածն ալ իր խելքովը գտած՝ կամ հէլպէթտէն իրեն արժանաւորութեը կեօրէ եկած կը սեպէ : Մէկէն կելլայ ստուի , կեղծաւորուի , երեսպաշտուի , մարդահաճուի . մէկայէն՝ ապերախտութի , ապաշնորհութի , յանդգնութի , անմտութի : Ասոր դէմ կըսէ առաքեալն . \* Չի՞նչ ունիս՝ զոր ոչ իցէ առեալ . և եթէ առեր , զի՞ պարծիս իբրև զչառեալ ॥ ան . հորնի . դ . 7 :

Երրորդ՝ կը ջանայ որ ուրիշի հրամանին տակ չերևնայ , ուրիշի խօսքին տակը չերևնայ . իր կամքը առաջ տանի , իր խօսքը քալեցնէ : Աս կից

կից կելլայ անհնազանդութի . կամապաշտու-  
 թի . կամակորութի . խստապարանոցուի . դը-  
 մադարձութի . հակառակասիրութի . բանա-  
 կուսուի . կագ . կուի . հերձուած . հերեաի  
 կոսութի . և ամ ազանդ . մէկ խօսքով՝ չար  
 կամք ըսածնին , ինատ , նիսպէթ , նախսուի .  
 ևն : Ասոր դէմ կըսէ ինքը երկնաւոր բժիշկն  
 մեր . \* Իջի ես յերկնից , ոչ զի զկամս իմ ա-  
 ըրարից . այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն  
 զիս ॥ . յովհ . Դ . 38 : Ամաչէ՛ ով մարդ հպարտ  
 և անհնազանդ . քս ով , դուն վով :

Չորրորդ՝ կուենայ ուռենալ մը սրտին մէջ ,  
 անոր կեօրէ դրսէն ալ սիրամարդի պէս . զին-  
 քը կուռքի մը պէս պաշտել , ու պաշտելի ը-  
 նել ամմէնուն , որով զինքը կեօյա բարձր տեղ  
 մը նստած կըսեպէ , ուրիշները իրեն ոտքին  
 տակը կը կարծէ , ու կուզէ առնել . զամմէնքը  
 կուզէ խրատել չեխել , ինքը ուրիշմէն չուզեր  
 խրատուիլ . խօսք մը լսածին պէս տակնու-  
 վրայ կըլլայ . ուրիշը չեսեպէր , կարհամարհէ ,  
 կընախատէ . ինքը հիչ մէկ նախատանաց չի  
 կրնար տանիր : Եւ ասոր համար էտեէ կիյնայ  
 մենծութի , ազահուէ , փարթամուէ , աղէկ  
 հազուճելու կապուճելու , տիւղէն ընելու , իւր-  
 վան ծախելու , որ զինքը բանի տեղ դնեն ,  
 իրմէն վախնան , հիճապ ընեն , զարմանան ,  
 գովեն , սիրեն , փայփայեն . ևն : Ասկից կել-  
 լան անհամար մեղք . փքացումն . բարձրամը-  
 տութի . բարձրայօնուի . մեծամտուի . ինքնա-  
 հաւանութի , Կր Եսոսի ըսած չմծը՝ որ հոռ-  
 մէվար էզօյիսօս կըսուէր , ուամկօրէն՝ պէնլէս ,  
 կի՛ պէնիսիլէս . որ է բուն ամբարտաւանուիր .  
 Ծօրէն՝ մենծ սիրտ ըլլալը , անոր կեօրէ՛ մենծ  
 մենծ խօսիլը , մեծաբանութի . գոռոզութի .

յոխորտալ . խրոխտալ . արհամարհանք . թըշ-  
նամանք . նախատինք . դատողուի յանդուզն .  
հարստահարութի և կեղեքումն աղքատաց .  
ընչասիրութի . փառասիրուի . փառամոլուի .  
խենեշուի . պչրանք . ևն : Օրինակ ըլլան՝ նա-  
բուգողոնոսոր , որ իր պատկերքը ոսկիէ շե-  
նել տուաւ , ու հրամեց՝ որ պաշտեն . հռո-  
մայու հին կայսերները՝ որ զիրենց անձացնէին .  
համան՝ որ կարծէր թէ ինքն է միայն փառաց  
և պատուոյ արժանի . հերովդէս ազրիպպաս՝  
որ տիվանք կը նստէր նէ , կուզէր որ անձա-  
նման բան մը երևնայ , ու այ պէս պատիւ ը-  
նեն իրեն՝ մարդկան կարգէն վեր : Ասոնց և  
այլ անհամար ամբարտաւաններուն զլխուն  
եկած պատիժը յիշէ . քեզի հերիք խրատ կըլ-  
լայ : Մի մոռնար աս օրերս եղած բաներն ալ  
ստամպոլուն մէջ , որ էն երևելի կառավար-  
ները տասնէն էւել ինչպէս չարաչար մեռան  
մէկ երկու օրվան մէջ . որոնց հետ առաջ մարդ-  
ջեր կրնար խօսիլ , ետքը ինչ եղան . իպրէթի  
ալէմ , օրինակ և նշաւակ Յի : էն աղէկ մեռ-  
նօղը զլխատվեցաւ , մէկալնոնք բզիկ բզիկ ե-  
ղան թրի տակ . թող չիլսուած ու չի տեսն-  
ուած թուբումուրը :

Ըսածներովս կիմանաս և այլ ուրիշ ճուղերը  
հպարտուեալստին . և անոր կետի գեղն ալ  
կը հասկընաս , որ բանիւք և օրինակօք մը  
զրոյց միտքդ ձգեցի : Բայց ամմէնէն էւել երկու  
զլխաւոր դեղ կայ . որ միշտ վրանիս պիտի  
պահենք , ու ամմէն օր ամմէն սահաթ պիտի  
բանեցնենք :

Դ . Առջինն է նայիլ ՚ի քս մորն մեր , որ է բուն  
դեղ կենաց և անմահութեան . և մէկ հատիկ  
հպարտուեալ դէմ բանդէհիլ , այնի՛ ինչպէս որ  
խա-

խաջածե ձողի վի գամուճած պղնձի օձին նայեցողը՝ կրքժշկուէր օձերուն զէհիրէն, և սանկ ալ առջի օձին սատանայի զէհիրէն կը խալըսիս՝ թէ որ քու խաջելեալ փրկչիդ խոնարհութե օրինակին նայիս նէ. ինչպէս որ ինքն ալ ըսաց. \* ուսարձք յինէն, զի հեղեմ և խոնարհ սրտի՛ւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց ॥. Տաք. ԺԿ. 29:

Ուստի երբոր հպարտութիւր քեզ կըդրդէ՝ որ մենծուէ, փառաց, ու գովեստի էտուէ ինկնաս, նայէ՛ դէպ ՚ի յս՝ ՚ի վեր. յիշէ՛ քու արդ, որ մեծատունն էր, և վս քո աղքատացաւ (ք. հորն. ք. 9): Ի՞նչպէս մեծատուն, ար և թազաւոր երկնի և երկրի, ար և արդի. ի՞նչպէս աղքատ, որ տուն տեղ չունենայ՝ խարիպութե ծնանի բեթղէհէմ գեղին կողմերը՝ ախրուի մը մէջ՝ ՚ի մտուր անբանից. պղտըկուց հալածում քաշէ քաղքէ քաղաք, տեղէ՛ ՚ի տեղ փախչի. իրեք թագաւորներուն բերած ընծան չառնէ, ու անանկ աղքատ կէջինմիշ ըլլայ՝ որ մօրը քառսունքին օրը տաճարը գառնուկ մը չի կարենայ տանիլ, ջուխտ մը աղաւնի կամ տատրակ տանի. աղքատ և խոնարհ ապրի նազարէթ, ու սբ. յովսեփայ խանութը ծառայէ. զինքը պէլլի չընէ Յքի՝ ինչու՛ն երսուն տարի. անկից էտու իրեք տարի որ քարողութիւն ըրաւ՝ ոչ հանգիստ ունենայ, և ոչ աղէկ ապրուստ. հապա ցորեկը աշխատի, գիշերը չի հանգչի՝ լեռները աղօթք ընէ. մենծերէն հեռու կենայ, զինքը թագաւոր պիտի ընէին նէ՛ փախչի, վարի թախրմը սիրէ, անոնց աւելի հոգ տանի, աղքատաց գանձանակէն ապրի. մենծերը զօռ ընեն կանչեն նէ, անոնք վատըկելու համար միայն տներնին երթայ. հիւ

ճանդները բժշկէ , ու ապրսպրէ՝ որ մարդու  
 չըսեն . սքանչելի բաներ ցցնէ աշկերտներուն ,  
 ու սաստիկ պատուէր դնէ՝ որ իր յարուծէն  
 առաջ չալ չընեն . իր փառքը չըփնտռէ , իր  
 հօրը պատիւը փնտռէ . \* ոչ խնդրեմ ( կըսէ )  
 զփառս իմ , ես փառս ՚ի մարդկանէ ոչ առ-  
 նում . այլ պատուեմ զհայր իմ ॥ : Ետքը ետքը՝  
 խաչի վր՝ որ մերկ մարմնով հոգի տուաւ նէ ,  
 իր պատանքն ալ՝ դերեզմանն ալ՝ ողորմութե-  
 նով բլայ ուրիշմէն : Ասոնք որ մտաքդ բերես  
 նէ , ո՛ր կըմնայ քու հպարտութիդ :

Երբոր հպարտութիւր քեզ կը դրդէ՝ որ քեզի  
 հաւնիս , ուրիշը վար զարնես , քաւ խեղճովդ  
 շարժիս , ուրիշն խօսքը չըմռես , յիշէ՛ զքու  
 փորդ՝ որ իմաստուի էր անհուն . և իբրև յե-  
 տին միամիտ մը՝ ամմէնը մարդու տեղ կը դնէր ,  
 իրմէ վարերուն խօսքը մտիկ կընէր . չէ թէ  
 միայն մօրը՝ և հօրը տեղը եղած նք յովսեփայ  
 կը հնազանդէր , ըմ , \* և էր նց հնազանդ ॥ ,  
 շէ . ք . 51 . հապա ինչուան չարչարողներուն  
 ու խաչ հանողներուն հնազանդ եղաւ , աս է  
 ըսելով իմ երկնաւոր հօրս կամքը . \* լեալ  
 հնազանդ մահու չափ , և մահու խաչի ॥ . Գեւ .  
 ք . 8 : Տգէտ ու խոնարհ մարդիկը ընտրեց ի  
 բեն աշկերտ . \* զտկարս Ծիս ընտրեաց ան , զի  
 յամօթ արասցէ զհզօրս . և զոչինչսն՝ զի զէսն  
 իմն խափանեաց ॥ . ան . կորնի . ան . 27 . 28 :

Երբոր հպարտութիւր քեզ կը դրդէ՝ որ չի համ-  
 բերես խրատի , յանդիմանուէ , նախատանաց ,  
 բամբասանաց , զրկանաց , անիրաւութե , ա-  
 պերախտութե , ևն , յիշէ՛ քու փորդ , որ ամմէ-  
 նուն բարիք ըրաւ , ինչպէս որ իրենք վկայե-  
 ցին , \* զամ ինչ բարւոք գործեաց սա ॥ . Տարի .  
 է . 37 . և առաքեալք կը հասկըցնէին ամմէ-  
 նուն ,

նուն, թէ \* շրջեցաւ բարի առնելլ . հործ . Գ .  
 38 . ու ամմէնէն ամմէն չարիք քաշեց՝ մինչև 'ի  
 մահ խաչի . Ըմ, \* հատուցին ինձ չար փոխա-  
 նակ թէ բարւոյ , ատելու թի փոխանակ սիրոյ  
 իմոյ ॥ . սաղ . ճը . 5 : Դուն ըլլայիր յսին տեղը  
 նէ , արդեօք ի՞նչ կրնէիր անօրէն աշակերտին՝  
 յուդայի մատնչին . ի՞նչ չէիր ըներ մաղքոսին՝  
 որու կտրուած անկաճը ողջացուց . որ կամ  
 ան էր կրսեն յսի ապտակ զարնօղը քահանայա-  
 պետին առջև , և կամ երսուն ու ու թ տարի  
 հիւանդու թէն խալըսօղը :

Երբոր հպարտութիւր քեզ կը դրդէ , որ քեզ  
 արժանի սեպես աղէկ օրեր տեսնալու ամմէն  
 կողմանէ , կի՞ ըսկսիս զանկտելու ան դէմ , թէ  
 ո՞ր մեղքիս համար աս բաներս կը քաշեմ , ամ-  
 մէն տէրտը ան ինձի՞ մի կուտայ , աճապ ի՞նչ  
 անթողի մեղք եմ ըրեր՝ որ ասանկ պատիժ-  
 ներ կը քաշեմ կոր , ( որ է սոսկալի հպարտուի ,  
 զերէ կուղես ըսել թէ դուն աղէկ ես , ու ան  
 քու աղէկութեդ դէմ ասանկ բաներ կը բերէ  
 կոր դիտուդ ) , յիշէ՛ քու արդ , որ բոլորովին  
 անմեղ էր և սքու թի սքց , և ինչէ՞ր քաշեց .  
 աս որ մտմտասնէ , կը պապանձիս , որ եթէ  
 ան յիւր որդին ոչ խնայեաց , 'ի քեզ խնայիցէ :  
 Անոր պէս սք չես կրնար ըլլալ , անոր պէս  
 մենձ չես կրնար ըլլալ . հապա ի՞նչ մենձսը-  
 տու թի է աս՝ որ դու մեղաւոր և խեղճ ողոր-  
 մելի ըլլալդ դիտես , ու աղքատ հպարտ ես .  
 այնչափ որ՝ քու տիրոջդ և թագաւորիդ քա-  
 շածն ալ չես ուզեր քաշել :

Աս ձեռնարկութիս ալ ըրէ՛ դուն քեզի . ես  
 արդար ես դու , ես մեղաւոր . մեղաւոր եսնէ ,  
 մեղացդ պատիժը հո՞ս քաշէ՛ որ անդին չի քա-  
 շես . արդար եսնէ , երնե՛կ քեզի՛ որ համբե-  
 թու .

բութենով դանձ կըլաստկիս : Թէ որ քս բ-  
 սաց , \* ոչ զնոյնս պարտ էր չարչարիլ քսի , և  
 մտանել 'ի փառս իւր ॥ . շէ . ի Դ . 26 . դուն պի-  
 տի ըսես . " ոչ աւելի քան զնոյնս պարտ է ինձ  
 չարչարիլ , և նմանելով քսի ' մտանել 'ի փառս  
 քսի " : Վս զի \* եթէ չարչարանացն կցորդ լի-  
 նիմք , և փառացն հաղորդ լինելոց եմք ॥ . հը-  
 ում . Ը . 17 :

Դ . Երկրորդն է ' նայիլ քու վրադ , որ բովան-  
 դակ նիւթ ես խոնարհութե : Ուտի երբոր  
 քեզ կըդրդէ հպարտութիւ ինչ կերպով որ  
 ըլլայ , դուն քեզի ըսէ . Չի ' հպարտանաս հոդ  
 և մոխիր . ով անդգամ ամբարտաւան ' ինչ բա-  
 նիդ ես կիւվէնմիշ եղեր . որ հիչ բան մը չես ,  
 ու հիչ բան մը չունիս քեզնէ . ունեցածդ ա-  
 տուծմէ է , չունեցածդ քեզմէ . աղէկութի մը  
 ունիս նէ , ամ է տուներ . պակասութի մը ունիս  
 նէ , քեզնէ է . հոգի ունիս , մարմին ունիս ,  
 ամ է ստեղծեր . հոգևոր և մարմնաւոր բա-  
 րիք ' ինչ որ ունիս նէ ' շատ քիչէ , կենէ ամ է  
 տուներ : Ըստ է տուներ ըսենք , պիտի չի հը-  
 պարտանաս , հապա պիտոր վախնաս . զի \* ա-  
 մենայնի ' որում շատ տուաւ , շատ խնդրեցի  
 'ի նմանէ ॥ . շէ . Ժ . 48 : Քիչ է տուներ ըսենք .  
 պիտի չի դժգոհաս , հապա դոհանաս . մէյմը  
 որ ' այնչափն ալ չիտարնէ , քեզ պարտրկան  
 չէր . շատը կայ որ ' անոնց տահա քիչ է տուներ ,  
 անոնց նայէ , որ քեզի եղած բարերարութիւ  
 մենձ ճանչնաս , չէ թէ ' անոնց նայելով հպար-  
 տանաս . կամ քեզնէ վերերուն նայելով նա-  
 խանձիս . որ մէկ մէկէ պէթէր խենդութի են ' հպարտութիւնալ , նախանձն ալ : մէյմալ քիչ  
 ունենալովդ ' ճուղապղալ քիչ կըլլայ . \* խառ-  
 նիճաղանջն ( կմ ուամիկն ) ներելի ողորմութե  
 է

է. Տղօրք Տղօրադոյնս պահանջեսցին ॥ Ի Տապ. 7: Թէ որ աղէկ հասկըցար ըսածներս, հպարտութե կատարեալ դեղը սորված ես՝ որ է խոնարհութի. բայց որովհետև բանեցնելը չես գիտեր, աւելի մասնաւոր կերպով քեզ վարժեցնեմ, սատանային առջի հպարտին տուղախները մէյտան հանելով, որ մէկիկ մէկիկ խայտառակելով անլ:

Ե. Սատանան՝ հպարտութե վարպետը՝ քու սովորական հպարտութիներուդ չի հաւնիր պիլէ, կուզէ քեզի սորվեցնել իր ասը անտանելի ամբարտաւանութի: Աս յայտնի է՝ որ ինքը թէպէտ աղէկ գիտէր, թէ աստուծմէ է իր ունեցած ամմէն կատարելութի, ուստի պարտական է անոր շնորհակալ ըլլալ խոնարհութենով, և աղաչել որ հաստատ պահէ զինքը նոյն շնորհաց մէջ՝ որ արժանի ըլլայ փառաց արքայութե, բոլոր սրտանց զինքը այ ձեռքը յանձնել, և անոր ամմէն հրամանացը պատրաստ ըլլալ հնազանդելու. բայց իրեն քիպիւրութիը չի կրցաւ կերցնել՝ որ եվալաս ընէ այ. իրեն կիւլէնմիշ եղաւ, ինքն իրեն հանեցաւ, այ գլուխ չի ծռեց, գլուխ քաշեց, այ դէմ մէկ նոր այ պէս երևնալ ուզեց, \* եղէց (կրսէ) նմանօղ բարձրելոյն ॥ Եսայ. 64. անոր տակը չըլլամ տէ՛ ինչ ըլլամ նէ՛ ըլլամ, թող դժոխքին տակը ըլլամ ըսաց: Ասոր պէս ալ քեզ կըսորվեցնէ՝ որ ինքնադլուխ ըլլաս, այ կարօտ չերևնաս: Ասկէց է՝ որ հպարտութիը քեզ կրկուրցընէ. քու հիչ մէկ պակասութիդ քեզ մենծ չերևնար. անոր համար սրբտանց ալ այ դուռը չես չալեր աղքատ մուրացկանի պէս. հապա ումուրով մը բան կուղես աստուծմէ, ինչո՞ւ ինձի սանկ չընէր, ինչո՞ւ

չոր նանկ կրնէ կրեսս . անոր կամացը քեզ չես  
 յանձներ , հապա ան կրնայիս՝ որ քու քէֆդ  
 կատարէ , չէ նէ՝ կը դժարիս կը դժգոհաս :  
 Ասկից է՝ որ ունեցած բարիքդ ալ խելքդ , գի-  
 տութիդ , ճարտարութիդ , շնորհքդ , ինչ և  
 իցէ աղէկ դործքդ՝ չես պահեր այ էմանէթի  
 պէս , շնորհակալ չես ըլլար պէտք եղածին  
 կեօրէ , հապա քու մալիդ պէս կիւ վէնմիշ կըլ-  
 լաս , ամմէն ըրածդ քեզի աղէկ կերևնայ խեն-  
 դի պէս պղտիկ բանդ մենծ կրեսպես . մար-  
 դու խելացը չես հաւնիր , ինչու որ՝ քեզի ես  
 հաւնեմ . մարդու խօսքը չես մուր . հիչ մէ-  
 կին է վալլաս ընել չես ուղեր . որ է կատա-  
 րեալ հպարտութի և անտանելի ամբարտա-  
 ւանութիւն :

Պ . Ասոր դեղը խոնարհութիւն ան տտեն կառ-  
 նես և աղէկ կըբանեցնես ու կողջննաս , եր-  
 բոր գիտնաս հպարտ ըլլալդ . զինքը հիւանդ  
 ճանչցողը՝ ի հարկէ դեղ առնելու էտեէ կինկ-  
 նայ . գիտնաս թէ հպարտութե՛ հիւանդութի  
 ունիս . գիտնաս՝ թէ աս քու կերպերդ բոլոր  
 սատանայի վարպետութենով սորվեր ես , որ  
 քեզ իրեն աշկերտ է ըրեր . գիտնաս թէ հը-  
 պարտութիւն խենդուի է , որ հրեշտակը սա-  
 տանայ ըրաւ , քեզ ալ անոր գերի կուղէ ընել :  
 Ասոր ներհակ խոնարհութիւն կատարել իմաս-  
 տութի է . որ զմարդիկ հրեշտակ կրնէ , մա-  
 նաւանդ թէ այ նման կրնէ . դերէ ԿՍՏՈՐ  
 հակառակ է նէ ամբարտաւաններուն , այն-  
 չափ ալ խոնարհքները կը սիրէ ու կըբարձ-  
 րացնէ . Ըմ , \* ցրո՛ւեաց զամբարտաւանս մտօք  
 սրտից իւրեանց . քակեաց զհզօրս յաթոռոց ,  
 և բարձրացոյց զխոնարհս ॥ . Ղ . ԿՍ . 51 . 52 =  
 է . կրնայ մէկը ըսել , թէ ինչ ընեմ . խոնարհ  
 կու .

կուղեմ ըլլալ՝ ամմա , եւ ինքիրմէ հպարտուի  
կուղայ միաքս՝ իմ կամքիս դէմ , եւ ուրիշ-  
ները իս կը գոյլեն , ու կը հպարտացնեն , չեմ  
գիտեր՝ ինչ ընեմ :

Իրաւ որ աս երկու կերպ հպարտութե փոր-  
ձութիւր շատ մտատանջութի կը բերէ բարե-  
պաշտներուն . բայց բան մը չէ ատոր հախէն  
զալը՝ երկու կերպով . մէյմը ֆաղը ընելով ին-  
քիր զինքը . մէյմալ ւոյ առջև հանելով մեր հա-  
սիմ հպարտութիւր :

Տաղը ըրէ , կամ ղէ ֆքլէնմըշ եղիր ինքիր  
զինքդ աս կերպով . օ . վճով ինչ կըսէ , ինծի  
պէս աղէկ չիկայ Ծքիս վրայ . հպարտանալ  
ինձ կը վայլէ . հրեշտակ չեմ ամմա , մարդ ը-  
սելը ինծի կը վայլէ . ղերէ մարգարէներուն ու  
առաքեալներուն պէս ւոյ մօտիկ՝ հրաշալի ար-  
եմ , մարտիրոսներուն պէս ւոյ համար արուն  
կը թափեմ կոր . սողումն իմաստունէն էւել  
խելացի եմ . անոր եղբօրմէն արքիսողումն էւել  
աղւոր եմ . սամիսունէն էւել ուժով եմ . գո-  
ղիաթէն էւել հսկայ եմ . դեմոսթենէսէն ու  
չիչերոնէն էւել ճարտասան եմ . թաղաւոր ըլ-  
լալու մարդ եմ . ամմէն մարդկանէ էւել իշկիւ-  
ղար , ճարտար , զարմանալի եմ : Ան է զար-  
մանալին՝ որ մարդ երեսս չինայիր՝ ասանկ կը-  
գիտնան մարդիկ մարդու խըյմէթը . հօշուն-  
տու եւ , մարդիկ չեն գիտեր կոր իմ ինչ ըլ-  
լալս . հերիք է որ ան գիտնայ : Հիմա դուն  
էկուր տէ դիմացիր աս հպարտ խօսքերուս .  
դուն քեզի չես դիմանարնէ , կը խոնարհիս  
կըխպնիս :

Իսկ մարդկան դովեստը ճանչցիր քեզի թշնա-  
մութի , և ոչ բարեկամուի . լմ , \* ժողովուրդ-  
իմ , որ երանենդ ձեզ , խաբեն զձեզ , և զշա-  
ւիլս

ւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն ॥ . էսայ . Ի՞  
 12 : և թէ՛ \* և եղիցի որ երանիցեն ժողովըր  
 դեանս այսմիկ , մոլորեալք և մոլորեցուցանի-  
 ցեն ॥ . էսայ . թ . 16 : Թող որ՝ դիտես մարդ-  
 կան սովորուիլ . այսօր կրգովեն , վաղը վար  
 կրզարնեն . դրսը՛անց կամ երեսիդ աղէկ կը-  
 զուրցեն , հեռու՛անց կի՛մ էտեւէդ՝ չքսածնին չի  
 մար . սրտանց ալ սիրեն ու դովեննէ քեզ ,  
 անոր համար է՛ զերէ սիրող չեն գիտեր , քու  
 պակսու թիներէդ խապար չունին . անանկ է  
 նէ , ( դուն քեզի ըսէ՛ , ) չըլլայ թէ՛ ՚ի մարդ-  
 կանէ դովու՛իմ , ու ստեղծողէս անարդու՛իմ .  
 հերիք է ինծի իմ մեղքս . \* զանօրէնուիս իմ  
 ես ինձէն դիտեմ ॥ . սաղ . Ծ . 5 :

Ը . Այ առջև ալ հանէ դուն քեզ՝ ու քու հա-  
 սիմդ հպարտուիլ , ասանկ ըսելով . է՛Ֆէնտիմ  
 աս ի՞նչ հալ է իմ հալըս . աղբատ եմ մտքով ,  
 իս մեծատունի տեղ եմ դրեր խելքովս . մերկ  
 եմ շնորհքէն , իս արժանի կըսեպեմ փառքին .  
 կուրցեր եմ հողւով , հերիք կարծեմ կոր աչ-  
 քաբաց ըլլալ մարմնով . ամիէն կողմանէ խեղճ  
 ողորմելի եմ , տկար , տղէտ , և ոչինչ . ու կը-  
 հպարտանամ ալ . մէկ բանս դովեննէ մար-  
 դիկ , ես իս ամիէն կողմանէ աղէկ կըկարծեմ .  
 սուտ տեղ ալ դովեն , կենէ խօշլանմիշ կըլլամ ,  
 իս մարդու տեղ կըդնեմ , ամիէնուն կուղեմ  
 խրատ տալ՝ հրամել . զամիէնքը կդատեմ . ու-  
 բիշի պակսու թիլ կըբռնեմ , իս մոռցեր եմ ,  
 ուրիշին մեղքը կիմանամ , ուրիշին մեռելը կու-  
 լամ . \* լոյս տուր ար աչաց իմոց , զի մի՛ երբէք  
 ննջեցից ՚ի մահ ॥ :

Տես ի՞նչ պատասխան կուտայ ան : Մուծը  
 լուսի առջև ելածին պէս՝ զինքը կըկորսնցնէ .  
 ասանկ ալ քու հպարտուիդ իմ առջևս փռա-  
 ծիդ

ծիդ պէս՝ կրօնականայ՝ մի վախճանար հպարտութե  
փորձուիէն, շուտով իմ ատեանս հանէ՛, հե-  
րիք է՝ նոյն տեղը կրգտնաս խոնարհութիւր,  
ու մեղքէն կրխալըսիս: Միայն դուն ջանա՛  
խոնարհութե գործքեր ընել, որ հպարտութե  
բնաւ տեղիք չգտնայ քու սրտիդ մէջ:

Թ. Գործք խոնարհութե ասոնք են՝ որդեակ.  
(ա.) Ամեղ և անպնաս բանին մէջ՝ նայէ՛ որ  
քու խօսքդ չի քալեցնես, թող ուրիշին ըսա-  
ծը ըլլայ՝ քու կամքդ չի կատարուի, ուրիշն  
ուզածը ըլլայ:

(բ.) Քու աղէկուիդ՝ աշխատանքդ՝ դուն մի  
պատմեր, հապա ծածկէ՛ որ մարդ չիմանայ.  
ես դիտեմ, հերիք է՝ քեզ գովելու խօսք չե-  
լայ բերնէդ. ոչ մենձ խօսիլ, ոչ պարծենալ,  
ոչ բան ծախել. ինչու որ՝ ինչպէս մեղքդ խոս-  
տովանիսնէ, մեղքդ կրկորսուի. ասանկ ալ  
առաքինութե խոստովանիսնէ, առաքինութե  
կրկորսուի: Ասոր ներհակ՝ զեղբայրդ գովէ,  
աղէկ խօսէ, աղէկութիւր սլատմէ, պակասութե  
պարտըկէ. անով դուն աւելի գովելի կրլաս  
այ ու մարդկան առջև:

(գ.) Աղէկ տեղը, ուտելիքը, հագնելիքը,  
փառք ու պատիւ՝ եղբորդ մինասիպ սեպէ՛.  
դուն ամմէն բանին անպիտանը քեզի պիտ-  
ւական ճանչցիր. \* զի որ խոնարհեցուցանէ  
զանձն, բարձրացի ||, ըսեր եմ էս՝ որ տուօրն  
եմ ամ բարձրութե. ես ուզած ատենս՝ գի-  
տեմ քեզ բարձրացնել. ինչպիս յովսէփը դու-  
րէն հանեցի, ու եգիպտոսի թագաւորութե  
անոր ձեռքը տուի. լուսաւորիչը խոր վիրա-  
պէն հանեցի, ու բոլոր հայաստանու հայր-  
ըրի: Ասոր ներհակ, \* որ բարձրացուցանէ  
զանձն, խոնարհեցի ||: գիտես ամբարտաւան

սաղայէլին գլխուն եկածը , համան հպարտին  
գլխուն եկածը . ևն :

( Դ . ) Դնենք թէ դուն պզտիկ ես , աղքատ  
ես , տիրուի ունող չունիս , տղէտ ես , տկար  
ես , ճարտար չես . անոր համար երեսդ չեն  
նայիր , ամիէն տեղ երեսդ վար կառնեն , քու  
հախդ կուտեն , քեզ կը նախատեն , կը զրպար  
տեն : Կտրիճ եղիր , սիրտդ մի կտարեր . Ի՞նչ  
հետս է ըսէ , ան ինծի հերիք է . ան իս կրնայ  
մեծցնել , ան ինծի տիրութի կրնայ ընել , ու  
դիս փառաւորցնել . ինչպէս դաւթի ըրաւ ,  
դանիէլի ըրաւ , շուշանայ ըրաւ , թեկղի ըրաւ .  
ևն : Չէ ուղեր ( ըսենք ) աս Տքիս մէջ իս փա  
ռաւորել . անդին մնայ իմ փառքս Փայիզով .  
մէկին հարիւրապատիկ ու հազարապատիկ՝  
քիւրապատիկ ալ կուտայ ինծի . ինչպիս տուներ  
է աղքատ զաղարին , և Ի՞մ սքց : Քանի քա  
նի մեծատուններ , իշխաններ , թագաւորներ ,  
թագուհիներ , փիլիսոփաներ , ամիէն կերպ  
Տքիս մէջ մենծութի փառք ու պատիւ ունե  
ցողներ՝ որ մարդկանց առջև երես ունէին ,  
իրենց հպարտութեը համար՝ Ի՞նչ երեսէն ըն  
կան , և ընկած են յաւիտեան . \* զի որ առաջի  
մարդկան բարձր է , պիղծ է առաջի Ի՞նչ || .  
դէ . ԺՂ . 15 : Քանի քանի խեղճ մարդիկ՝ որ  
մարդ անոնց երեսը չէր նայեր , Ի՞նչ հետ հիմա  
կը թագաւորեն , և յաւիտեան պիտի թագա  
ւորեն : Հիմա որը աղէկ է . տահա աղէկ չէ՞  
մի , որ հոս վար ըլլամ , հոն վեր ըլլամ . վայ  
անոնց որ հոս վեր ըլլալ կուզեն , ինչու որ՝  
հոն վար պիտի ըլլան :

( Ե . ) Դնենք թէ դուն մենծ մարդ ես . խե  
լացի , ձառքէդ բան կուզայ , ու կենէ խըշ  
մէթդ գիտցող չիկայ , երեսդ նայող չիկայ .  
ա

աղէկութիւն կրնես, չեն ճանչնար, անոր դէմ  
 դէշուածն ալ կրնեն: Աղէկ եա, իշտէ եղեր ես  
 ճշմարտ աշակերտ քսի, շիտակ անոր էտեէն  
 կերթաս կոր, արքայուն ճամբան գտեր ես .  
 տահա ի՞նչ կուզես: Տրտմիսնէ, խելք չու-  
 նիս, ուրախանաս պիտոր՝ որ քսի նման ըլլա-  
 լով՝ ւայ որդի կըլլամ, և ժառանգ արքայուն:  
 Աս ուրախուիս է հասուն պտուղ կատարեալ  
 խոնարհութե՛ն, անո՛ւշ անո՛ւշ կեր, ու փառք  
 տուր ւայ, ւայ ալ փէշկէշ ընես նէ, շատ մախ-  
 պուլ կանցնի, խօշը կուգայ, քեզ անդին իր  
 սեղանը կընստեցնէ: Ասոնք երազ չեն, մա-  
 սալ չեն. յաւիտենական ճշմարտուի են. \* ծա-  
 նիր զճշմարտութիւն, և ճշմարտութիւն ազա-  
 տեսցէ զքեզ ॥ :

Ժ. Գիտեմ, դիտեմ, կըսես, ամմա խօլայ բան  
 չէ՛ ատանկ խոնարհութիւն ընել, համբերել, ձան-  
 չհանել. մարդուս խելքին դէմ կուգայ, մար-  
 դուն արունը կըցամքի: Ղերէ մարդը խենդի  
 տեղ կըգնեն, զէՖքը կըհանեն, ոտից տակ  
 կառնեն, մարդուն սիրտը կերեն, հոգին ալ  
 կըհանեն. ատ ըլլալու բան չէ:

Ասոր շատ պատասխան ունիմ, թէ որ պա-  
 տասխան տալ արժան սեպէինէ: Է՛ն առաջ  
 խնտալս կուգայ կոր. Ղերէ ես քեզ խելացիի  
 տեղ էի դրեր, քեամիլ մարդ կըկարծէի. տես-  
 նամ որ տղի պէս կըխօսիս կոր, ու խենդ չե-  
 րենամ տէյի՝ իրաւցընէ խենդ կըլլաս կոր:  
 Խենդ չէ՞ մի այն մարդն՝ որ ուրիշներուն բե-  
 րանը նայելով, որ ո՛չ օգուտ և ո՛չ զէն կըը-  
 նան տալ, իրեն մենծ շահը թողու, մենծ  
 վնասը ուզէ: Խենդ չէ՞ մի այն մարդն՝ որ մէկ  
 պզտի խղմէթ մը ընելով, մէկ նախաափնքի մը  
 համբերելով, կի՞ ի՞նչ թիւռլիւ խոնարհութի

կուղեօնէ՛ ընելով, մէկէն հարուր քէսէ, կժ հազար քէսէ պիտի ափ ձգէ, ու իր հպարտութենովը ետ կենայ: Եօխսա՛ աշխարքիս համար չե՞ն մի քաշեր մարդիկ շատ կերպ բաներ, նախատինքներ, խոնարհութիւններ, ևն. ամմա ծայրը մէկ քանի բարայի վաստակ կայ տէյի՛ քաշածնին ուսհաթի լօխում կըսեպեն: Մէկը իրենց ըսելու ըլլայ, խե՞նդ ես, ի՞նչ է ատ քաշածդ, ատ ի՞նչ խոնարհութի է. ևն. ճուղապ կուտան. մենք մեր բանը դիտենք. Յք ի՞նչ կուղէնէ՛ ըսէ, մենք մեր շահը պիտի նայինք. ասանք չընենք նէ, չըլլար: Ե՛ւ՛ մարմնաւոր շահդ դիտես եղեր, հողւոր շահդ ինչո՞ւ չես գիտեր. չե՞ս մի գիտեր՝ որ \* հողի առաւել է քան զմարմին ॥ :

ԺԿ. Գանք հիմա՛ ըսածիդ շտկէ շիտակ կըտրուկ ճուղապին: Իրա՛ւ է, խօլայ բան չէ խոնարհութի ընելը. ետ խօլայ բան է մի արքայութի երթալը. քէ՛Քդ նայէ. երթալ կուղեսնէ, ճամբան աս է. \* քանզի անձուկ է դուռնն, և նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս ॥ . Տաբ. է. 14: Չես ուղեր եղեր, զոռով քեզ տանող չիկայ. դուն քեզի զոռ ընես պիտոր՝ որ կարենաս երթալ. \* քանզի բռնադատողացն է արքայութիւնն ւնյ, և բռունք յափշտակեն զնա: Ար ունիցի ականջս լսելոյ, լու՛իցէ՛ ॥ :

Քեզի՛ կըսեմ՝ ո՛վ ընթերցող կենաց դեղիս. հի՛ւանդ ես նէ հպարտութենով, ատ չար ախոր ժանտամահէն պէթէր բան է, հէլ հէլ պէթ քեզ կըմեռցնէ հողւով. քեզ կըսէ կոր երկնաւոր բժիշկը, թէ ուրիշ ճար չիկայ, խոնարհութե՛ դեղ պիտի առնես՝ որ պիրապիր քեզ կըբժշկէ: Ամմա լեղի է եղեր դեղը. ատ

ալ խօսք է մի . խըմէ սիրելի խըմէ , մի վախնար . բերնիդ մէջ լեզու թեր կտորմը կիմնաս չես իմնար , ետքը անուշուիը կրվայլես սըը տիդ մէջ . կառողջանաս , ու կօրհնես դեղն ալ բժիշկն ալ : Մարմնաւոր հիւանդուէդ այնչափ լեզի՝ զէհիր զըխըմ բաներ կըխմես . ինչ է թէ՛ չիմեռնիս : ո՞ր բժիշկ՝ ո՞ր ճեռահ՝ ինչ դժար բան տան , կի՞ չարըրկենն նէ քեզ , քեզի բարերարութի կըսեպես , ու շնորհակալըլլալով՝ բարայ ալ կուտաս ավուճով , դեղին զատ , բժշկին զատ , ճեռահին ալ զատ . ես հողևոր հիւանդուէդ ինչո՞ւ նազ կընես դեղ առնելու , որ ոչ խարճ ունի , և ո՞չ մասրաֆ : Անանկ է նէ , կենէ առջի խօսքս է , դուն խենդ ես մէյեր . հիմա խնտալս դադրեցաւ , լալս կուգայ կոր խենդութեդ վր , ինչպէս որ հրեշտակները լացին բաբելոնին վր . \* բժշկեցաք զբաբելոն , և նա ոչ բժշկեցաւ ॥ . էբէ՛ . ծմ . 9 : և արն մեր լացաւ եհմայ վերայ . ևն :

Ասչափս հերիք է խօսք հասկըցողին . աս հիւանդիս դեղը աս է . կուզէ առնէ՛ ողջնայ , կուզէ չառնէ՛ մեռնի . ես առեն չունիմ՝ խօսք չիհասկըցող հիւանդին մէտէն ընելու . ուրիշ ծանտը հիւանդներ ալ շատ ունիմ , երթամ անոնք տեսնամ , ու անոնց դեղն ալ տամ անվ :



Գ Լ. Զ:

Ախար նախանձոս . և զէզ նորա՝ եղբայրսերոսի :

Իս . Ախարանձ , անուննալ վրան , որ նախ իր անձը կերէ , ետքը՝ նա կը խանձէ ու կը խածնէ իր եղբարը : Ախար իր անձը կերէ՝ ըսի , տրտմելով ուրիշի աղէկութիւնը վրայ , և անոր աղէկ ըլլալուն համար ինքիւր զինքը չարութենով մաշելով , որ չըլլայ թէ անոր բարձրնալը՝ իրեն վար ինկնալ ըլլայ . զերէ \* նախանձ է տրտմութիւն թէ բարին եղբօրն , ըստ որում կարծի նստազել զիւր պատիւնն ॥ :

Տեսար որ նախանձը հպարտութիւն առջինեկ զաւակն է , չար ծնողին չար զաւակը . որ զինքը արժանի սեպելով միշտ բարձր բանի քան զուրիշները , երբոր կրտեսնայ զուրիշը քան զինքը վեր , քան զինքը հարուստ , ողջ , հանգիստ , անոճանի , գովելի , ևն , կարծէ թէ ինք անով վար կիյնայ : Իրեն ցածութիւն կըսեպէ եղբօրը վեր ըլլալը . իրեն չար կըսեպէ եղբօրը բարին . իրեն վնաս կըսեպէ ուրիշին շահը . իրեն աչքին փուշ կըլլայ ուրիշին էն անուշ բանը . իրեն նեղութիւն կըլլայ ուրիշին հանգիստը : Չառքէն ալ որ չիգար զինքը վեր վերցընել , զուրիշը իրմէ վար տեսնայնէ , կըսկըսի դառնանալ , տրտմիլ , էրիլ , մրկիլ , հալիլ մաշիլ , թէ ինչո՞ւ ուրիշը վեր ելլայ , կի՞ աղէկ ըլլայ :

Թ . Աս ալ հերիք չէ . կըսկըսի ձառքէն եկածին

ծին չափ եղբօրը անունը կոտրել . կարելի է նէ՛ անոր տունն ալ կաւրէ կէրէ . իրեն անկից շահ մը եղեր է՛ չէ եղեր, չինայիր . միայն կուղէ որ, իրեն չեղաւ նէ՛ ուրիշի ալ չըլլայ այն բարին : Ասով կիմանաս որ նախանձը առաջ իրեն կըփնասէ անտարակոյս . անկից էտե՛ ճար կըփնտռէ ուրիշի ալ փնաս տալու . անոր համար ըսի՛ ուրիշնալ նա կըխանծէ ու կըխածնէ : Ասկից կելլայ չարակնութի, ատելուի, ռիսակալուի, բամբասանք, թշնամանք, զրկանք, անիրաւութի, խռովարարուի, մարդասպանութի . և ամ մեղք որ կըլլայ՝ ի փնաս ընկերին . զերէ ինչպէս հպարտութիւնը արդէմ կըկռուի անզգամութե՛, ասանկ ալ նախանձը եղբօրը դէմ կըկռուի անիրաւութե՛ : Թո՛ղ իր անձին ըրածը և եղածը . դառնութի, կատաղութի, տրամուի, անհանդստուի, դանդատ, տրտունջ, յիշոց, հայհոյուի, չարուի, խտտասրտութի, և յուսահատութի :

Նախանձը չէր մի՛ որ զստանան դրդեց ՚ի մահու չափ փնաս բովանդակ ազգի մարդկան՝ յետին կատաղութենով, որ մարդիկ իր տեղը պիտի լեցնեն երկինքը : Նախանձը չէր մի՛ որ կայէնը ձգեց յեղբայրասպանութի և ՚ի յուսահատութի . նախանձը չէր մի՛ որ յովսեփայ եղբարքը անոր արունը մտան՝ վաճառելով յեգիպտոս . ամա ուզեն չուզեն՝ ետքը եկան երկրպագութի ըրին իրեն . նախանձը չէր մի՛ որ հրէայք մտանեցին զքս՝ պիղատոսին ձեռքը, ու խաջ հանել տուին . ետքը յարութին ալ ծածկել ուզեցին . բայց ինչ ճամբով որ կուղէին անիկա վար զարնել ու խայտառակելնէ, իրենք աւելի խախք եղան, իսկ յս աւելի փառաւորեցաւ :

Գ. Աւրեմն առջի դեղը այսպիսի վտանգաւոր  
 ախտին՝ է յիշել այն չարիքն որ նախանձողին  
 դուռիս կուգայ, թէ՛ իր ձառքովը, և թէ՛ ւնյ  
 բարկութիւնը հանդիպելով: Եւ ետքի դեղը՝ որ  
 բոլորովին կրթչկէ, եղբայրսիրութիւնն է:  
 Առաջուց աս ըլլարնէ, նախանձ չէր ըլլար.  
 ետքէն պարէ ըլլայնէ, նախանձին հոտնալ  
 չիմնար. զերէ եղբայրսիրութիւնը հէ՛մ նախա-  
 պահօղ, հէ՛մ առողջացնող դեղ է նախանձու  
 դէմ:

Բայց ի՞նչ ընեմ՝ որ այս հարկաւոր և անգին  
 դեղ եղբայրսիրութեան՝ հիմակո՛ւնն ատենը  
 Յրիս հի՛ջ մէկ դեղարանը չիգտնո՛ւիր. ո՛չ քաղ-  
 քին խանութները կայ՝ որ ծախսո՛ւի ու դնո՛ւի,  
 ո՛չ դուրս տեղ մը բուսած կը գտնո՛ւի: Ո՞ր  
 պախճան, ո՞ր պօստանը, ո՞ր քաղաքը, ո՞ր լեռը  
 քալես, ամի՛ն կանանչ, ամի՛ն պտուղ՝ կրնայ  
 գտնո՛ւիլ՝ գոնէ դեղի համար տնկած. եղբայր-  
 սիրութիւնը չի գտնո՛ւիր կոր. անոր ետիրախն  
 ալ չորցեր է, ծաղիկն ալ, պտուղն ալ. չըլլայ  
 թէ բոլոր ծառն ալ արմատովը (որ է սէրն ւնյ)  
 չորցած ըլլայ շատերուն սրտին պախճային մէջ.  
 զերէ կերևնայ թէ քսի մն մերոյ ըսած ատե-  
 նը հասերենք. \* ցամաքեացի սէր քաղմաց ॥.

Եսաբ. ի՞՞. 12 :

Գ. Ե՛ս այսչափ մարդիկ կըտեսնանք՝ որ մէկ  
 զմէկու հետ սիրով կըտեսնո՛ւին, իրարու հետ  
 կապո՛ւած՝ մէյմէկէ չեն կրնար զատո՛ւիլ, թէ՛  
 ազգականաց մէջ, թէ՛ բարեկամաց, աս եղ-  
 բայրսիրութի չէ՞ մի:

Չորցած կի՛մ դեղնած ետիրախ սիրոյ՝ դետի-  
 նը թափած՝ շատ, ես ալ դիտեմ, իմ ուղածս  
 ան չէ՛. կանանչը թաղէն պէտք է ինձի՛ իմ է-  
 զաս շինելու համար. որ ւնյ սիրոյն ծառէն  
 հաւ

հասըլ կըլայ , մշտականաց է թէ՛ ֆնէի պէս  
և անուշահոտ • դերբնակն շնորհքով կըդոյա-  
նայ • ուստի չորնալիք չունի :

Չէ նէ , ատ քու ըսած եղբայրսիրու թիղ՝ որ  
կըտեսնաս մեր օրերը , ասըլ անձնասիրութի  
է • զերէ ոմանք կըսիրեն՝ որ սիրու՛ն • իրենց  
ըլլալու շահուն համար է այդ սէրը : ոմանք  
ալ կըսիրեն , զերէ սէր կըտեսնանկոր կ՛մ տե-  
սեր են • իրենց եղած շահուն համար է կենէ  
այդ սէրը : շատն ալ կըսիրեն բնական սիրով  
արենակցութի , թապիէթի յարմարուէ , ա-  
ռուտրի խաթեր համար , մարդեւլարուէ հա-  
մար , սոսկ երեսանց • սրտանց ալ ըլլայնէ ,  
էյրէթի , քիչ մը ատեն , ինչո՛ւն իրենց բանը  
լմնայ • քանի որ իրենց քէֆին չի դպչիր դե-  
մացինը , ևն :

Ապա թէ ոչ՝ մէյ մը մօտեցիր ատ թմրած օձե-  
րուն , տես ի՛նչպէս կըխածնեն • մէյ մը դըպիր  
ատ մազ լըմ հայվաններուն , տես ի՛նչպիս թէք-  
մէ կըզարնեն • մէյ մը մօտեցիր ատ հանդարտ  
կեցած ջրերուն , տես ի՛նչպէս գարշելի հոտ  
կըհանեն • մէյ մը մօտեցիր ատ անշարժ լեռ-  
ներուն , տես ի՛նչպէս զէրզէլէ կըհանեն , կ՛մ  
մուխ կըհանեն ետնայ լերան պէս • \* մերձեաց  
'ի լերինս , և ծխեսցին ॥ • «աղ. Ճիւզ. 5 : Եղբայր  
եղբօրմէ խօսք մը լսէ նէ , չի կրնար մոռնալ •  
էրիկ կնիկ իրարու խելքին դէմ բան մը տես-  
նան նէ , կըտռօտին • բարեկամ բարեկամէն  
խրատ մը լսէ նէ , թշնամի կըդառնայ • սիրա-  
կան սիրականին երեսը չի կրնար նայիլ մէկ  
չնչին խաթերմնայի համար • շուտով որ չի  
հաշտուին նէ , կրակը կառնէ ներսէն , եր-  
կու կողմն ալ էրեւէն էտե՛՛ էարաֆնալ մօխիր

կընէ :

Է. Ախ սէր , սէր ճշմարիտ , սէր բարեկամու-  
թե՛ , սէր անճային , սէր հոգւոյն սքեյ . որ զթշ-  
նամիս բարեկամ կրնէ , զբաժանեալս կրմիա-  
ւորէ , աւրածը կըշինէ , լեղին կանուշընէ .  
զիւծ յերկիր կըխոնարհեցնէ , զմարդիկ երկին-  
քը կըբարձրացնէ . զիւծ մարդու հետ կըհաշ-  
տեցնէ , զմարդիկ մէկզմէկու սրտակից կրնէ :

Աս է իմ փնտռած դեղս , որ աւետարանին  
պախճան կըգտնուի , և ճշմարիտ քրիստոնէին  
դրանը վրայ՝ ու ճակտին վրայ յայտնի նշան  
դրած է՝ ի բօնէ . \* Պատուիրան նոր տամ ձեզ ,  
զի սիրիցէք զմիմեանս . այս է պատուէր իմ .  
զի սիրեսցիք զմիմեանս , ո՞յ և ես զձեզ սիրե-  
ցի . յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ ա-  
շակերտք էք , եթէ սիրիցէք զմիմեանս ॥ . յովհ .  
ժի . և ժե՛ : Աս դեղս որ առնես նէ , ո՛ւր կը-  
մնայ նախանձը . պօղոս առաքելոյն խանութը  
վազէ , աղէկը կըգտնաս աս սիրոյս . որ կըսէ .

\* Սէր ո՛չ նախանձի , ո՛չ ամբարհաւաճէ . ո՛չ  
խնդրէ զիւրն ॥ . ևն . ան . հո . ժի :

Պ . Սէրը ե՛նչ է՝ ըսես : Սէրն է յօժարութիւն  
կամաց առ բաղձալի բարի մը . չարը սիրել  
չըլլար , բարին ատել չըլլար . ուր որ ատենք  
զբարին , յայտնի է որ խաբուներ ենք , բարին  
չար՝ աղէկը գէշ ենք կարծեր . չարն ալ սիրենք  
նէ , խաբուած պիտի ըլլանք , չարը բարիի  
տեղ՝ գէշը աղէկի տեղ ենք դրեր . ուստի վայ  
կուգայ գլխընիս . \* Այն այնոցիկ՝ ոյք ասիցեն  
զչարն բարի , և զբարին չար . ոյք դնիցեն ըղ-  
լոյսն խաւար , և զխաւարն լոյս . ոյք դնիցեն  
զդառն քաղցր , և զքաղցրն դառն ॥ . Էսայ .

Է . 20 :

Է . Կրնաս ըսել՝ թէ հապա ե՛նչիս հրամայեր  
է իւծ , որ զամմէնքը սիրենք , երբոր մարդ-  
կանց

կանց մենձ մասը չար է . մանաւանդ աւետա-  
րանը կը պատուիրէ թշնամին ալ սիրել, որ սի-  
րելու բան չէ : Ասոր ներհակ՝ ինչո՞ւ մեղք ըլ-  
լայ նախանձը, որ միշտ աղէկ բանի աջք կը տն-  
կէ, չէ թէ չարի :

Պատասխանը յայտնի է . սէրն ալ նախանձն  
ալ աղէկի էտեէ են, բայց սէրը աղէկ բանը՝  
ամմէնուն կուզէ, նախանձը հիջ մէկին չու-  
ղեր՝ իրմէն՝ ի զատ . սէրը աղէկ բանը ուրիշի  
վր կուզէ տեսնալ, նախանձը չուղեր տեսնալ .  
սէրը զեղբայրը կը սիրէ աղէկութիւնը համար,  
նախանձը կատէ նոյն աղէկութիւնը համար . սէ-  
րը մարդը կը սիրէ, մարդուն զէշուիը կատէ .  
նախանձը մարդուն զէշուիը չատէր, աղէ-  
կութիւնը կատէ . անոր համար աղէկ մարդն ալ  
չի կրնար սիրել . կըրնայ ըլլալ որ զէշ մարդը  
սիրէ :

Ո՛ր դոնամ բարի նախանձը, որ նախանձա-  
ւորուն կը սու՛ի, և սիրոյն սիրական եղբայրն  
է . մարդուն աղէկութիւնը այնչափ կը սիրէ՝ որ  
ան աղէկութիւնը սիրահարածի պէս կը ըլլայ, և  
կը վախաքի՝ որ մասնակից ըլլայ նոյն աղէկու-  
թիւնը . անոր պէս բարի և առաքինի ըլլայ, ա-  
նոր պէս խելացի ու ճարտար ըլլայ . անոր հա-  
մար աղէկներուն հետ կուզէ տեսնուիլ, որ  
անոնցմէ աղէկուի սորվի : ասոր նախանձ չենք  
ըսեր, խայրէթ կըսենք, ուրիշմէն իտրէթ առ-  
նել կըսենք . առնէ նէ ալ, ուրիշին պակաս  
մնայ չըսեր . ինչնիս ճրագէն ճրագ վառես նէ,  
առջինին բան չի պակսիր :

Ը . Առաքեալը մեղի սէրը սորվեցնելու հա-  
մար՝ աս խայրէթը, աս բարի նախանձը թէ-  
մէլ կըրնէ . \* նախանձաւոր լերուք շնորհացն՝  
որ լաւն են . այլ ես առաւել ևս ճանապարհ

ցուցանեմ ձեզ ॥. Թ. Կոր. ԺԷ. 31: Աղէկ մաիկ  
 բռէ. ետեէ ընկիբ կըսէ՝ որ աղէկ աղէկ շնորհք-  
 ներ աի ձգէք. չէ՛ թէ այնչափ դրսի շնորհք-  
 ներ ունենաք, զորօրինակ գիտուն ըլլաք, կար-  
 դացօղ ըլլաք, մեկնիչ գրօց ըլլաք, մարդարէ  
 ըլլաք. հապա աւելի ներսի շնորհքներ ունե-  
 նաք, քի զանազան առաքինութիւններ, համբե-  
 րութի, խոնարհութի, ողորմածութի, ևն :  
 Ամա ըսէք՝ թէ ասոնց որ մէկը մենք պիտի  
 ընենք, ինչպէս և երբ պիտի սորվինք, ճար-  
 մը չիկայ՝ որ մէկ զլիսաւոր բանիմը էտեէ ընկ-  
 նանք, որ անով ուրիշներն ալ զլուխ կարե-  
 նանք հանել :

Ահա կըսէ, ես ձեզի էն աղէկ, էն մեծ, և էն  
 հարկաւոր շնորհքը սորվեցնեմ : Ո՞րն է այն :  
 Սէրն է կըսէ. աս ըլլայ նէ, ամիէն բան կըլ-  
 լայ. առանց ասոր ուրիշ բան շահ չունի. այն-  
 չափ որ՝ թէ որ հրեշտակային լեզու ունենամ,  
 թէ որ Թի համար արուն թափեմ, կի՛ կրակը  
 մտնամ, թէ որ բոլոր ունեցածս աղքատներու  
 քածնեմ, ամա սէր չունենամ նէ առ Թի և  
 առ ընկերն, բոլորը դարտակ է. հապա թէ  
 սէր ունենամ նէ, ասոնք ամիէնքը տեղին կեօ-  
 րէ պիտուական կըլլան, ու ինքիրմէ կըլլան.  
 սիրով ամիէն պատուիրանքը կըպահեմ. ամ-  
 մէն կատարելութե՛ կըհասնիմ. ինչպէս որ ու-  
 րիշ անգամ ըսի. \* լրումն օրինացն սէր է.  
 սէրն է զօգ կատարման ॥ :

Ասանկ մենծ բան է սէրը. ալ ինչ գովեստ  
 կուզես. յովհաննէս աւետարանիչ՝ սիրոյ ա-  
 շակերտը՝ բանը կըլմացնէ. մէյ մը որ՝ իր բո-  
 լոր կենացը մէջ միշտ սիրոյ վի՛ կըխօսէր նէ,  
 աշկերտները դարձան ըսին, սէր՝ սէր, աղէկ,  
 ամա՛ հայր սէ՛, ուրիշ խրատմալ խօսէ՛. ան  
 ալ

ալ գարձաւ ըսաւ . որդեակից՝ ալ ուրիշ ինչ  
 բան խօսիմ . սէր ըլլայ , հերիք է . անով ամ-  
 մէն բան կըլլայ : մէյմալ որ իր թղթերուն  
 մէջ շատ ապսպրեկն էտեւ սէրը՝ առ ծայրա-  
 դոյն գովեստը վրայ կըբերէ : \* Ի՞նչ սէր է ||  
 կըսէ . անանկ է նէ , ինչպէս աստուծոյ մենծ  
 բան չի կրնար ըլլար , ասանկ ալ սիրոյ պէս  
 մենծ շնորհք և առաքինուի չի կրնար ըլլալ :  
 որ զմեզ կընէ այնման՝ աստ և ՚ի հանգերծ-  
 եալն . հոս չէշնին առնես նէ , անդին բոլոր  
 անուշութիւն կըվայլես :

Թ . Սիրոյն զօրութիւն կուզես հասկընալ նէ ,  
 մարմնաւոր բաներէն չափէ . ըստկի սէրը չէ՞  
 մի՞ որ մարդիկ գիշեր ցորեկ կաշխատին , արուն  
 կըբրտնին հազար փորձանքներու մէջ զիրենք  
 կըխօթեն , օքէ օք քալեն , ծովու ցամաքի  
 վտանգները յանձ կառնեն : Չաւկի սէրը չէ՞  
 մի՞ որ ծնօղբը ոչ գիշերը քուն ունին , ոչ ցորե-  
 կը հանգիստ ունին . պղտրկուց այնչափ խաճ-  
 րերնին կըբաշեն , մեծնան նէ՝ տահա մենծ պէ-  
 լաները կըտանին . առողջ ըլլան՝ մէկ թիւռլիւ ,  
 հիւանդ ըլլան՝ հազար թիւրլիւ հոգ . ըստկէ  
 ելլալ , սրտադող քաշել , ևն : Տահա շատ օրի-  
 նակ կըգտնաս սիրոյ . որ բանի որ աշըխ ես ,  
 որ բանի որ հավէս ունիս նէ , ամմէն քաշածդ  
 քեզի բան չերեւար . միայն թէ սիրած բանդ  
 ափ ձգես , կի՞ ափէդ չի հանես : Աս բաներուն  
 որը կընես կոր ինչային սիրոյ համար , թէ՛ այ  
 սիրուն ըլլայ , թէ եղբօրը սիրուն :

Շատը կան որ կարծեն թէ զի՞նչ կըսիրեն . ինչ  
 չու որ՝ հէլպէթտէ զի՞նչ սիրել պէտք է կըսեն .  
 ո՞վ կայ որ զի՞նչ չեսիրեր կըսեն . ամմա իրենք  
 ալ գիտեն որ եղբայրսիրութի չունին . անով  
 պէտք չէր մի հասկընային որ ինչսիրութիւն  
 ալ

ալ չունին : Մտիկ ըրէ՝ ինչ կրօէ յովհաննէս  
աւետարանիչը . թէ որ զեղբարդ որ կրօես  
նաս՝ չես սիրեր , զիմ որ չես տեսնար՝ ինչպիս  
պիտի սիրես : Պատճառն է՝ որ ինչպիս ըսինք ,  
սէրը աղէկ բանի բաղձանք է . մէկ բանն որ  
չենք տեսնար՝ աղէկուիք աղէկ մը չենք հաս-  
կընար . ուստի աղէկ մը չենք կրնար սիրել .  
ասոր համար կըսեն իմաստունք . \* ոչինչ է սի-  
րեցեալ , եթէ չիցէ ծանուցեալ ॥ : Էյ հիմա  
որ զիմ չենք տեսնար յայտնապէս , հապա  
մութ ճանաչումը ունինք , անոր կեօրէ ալ  
մութ կըլլայ իմասիրութիւնիս . իսկ եղբայրնիս  
աչքով կրտեսնանք . անոր կեօրէ ալ՝ որչափ  
պէտք է նէ՝ կրնանք սիրել . ու պէտք է որ սի-  
րենք , նայելով իրեն աղէկուիք . զերէ որչափ  
է նէ աղէկութիւր , նոյնչափ ալ սիրելի է , ու  
պիտի սիրուի :

Ժ . Աս որչափ ճշմարիտ է նէ , այնչափ ալ  
մարդկանց խելացը դէմ կուգայ . զերէ կըսեն  
սովորաբար , իշտէ մեր ըսածնալ ատ է եա .  
աղէկ մարդ դոնանք նէ , կըսիրենք . գէշ մար-  
դը ինչպէս սիրենք . և որովհետև Յքիս վի՛  
աղէկ մարդը քիչ է , գէշը շատ է , անոր հա-  
մար մենք ալ շատը չենք սիրեր , քիչ կայ որ  
սիրենք :

Հոս է բոլոր դժարութիւր , աս մէկ մենք ընդ-  
դիմութի մը նէ կամ առարկութի , զոր միշտ  
կրնեն մարդիկ՝ կամ բերնով , կամ աւելի սրը-  
տով , մանաւանդ եղբայրատեաց՝ նախանձոտ  
և կռուճոտ մարդիկ . աս բանիս ճուղապը կա-  
րենանք տալ , ու ամմէնուն միտքը խօթել նէ ,  
սիրոյն ծաղիկնալ՝ պտուղն ալ կրտեսնանք . ես  
կաշխատիմ , ամա աշխատանքիս պտուղնալ  
կուղեմ քաղել իմ :

ԺԹ. Աղէկ մարդը կըսիրես եղեր, գէշը չես սիրեր: Հախ ունիս ըսեմ. ամմա առաջ աս ըսէ ինծի. կըճանչնաս մի աղէկը գէշը. զիտես ինչ ըսել է աղէկ մարդ, ի՞նչ ըսել է գէշ մարդ: Միայն ի՞նչ կըրնայ գիտնալ մարդուն ներսի աղէկուհի գէշուհի. մենք դրսի կեղևը դիտենք՝ որն որ դիտենք նէ. Քանի՞ անգամ եղած է՝ որ աղէկ ըսածդ՝ գէշ է ելեր. գէշ ըսածդ աղէկ է ելեր. այնի խարբուղ ճանչնալուդ պէս, որ շատ անգամ թահմինիդ կեօրէ չելար: Սրտադէտ՝ ի՞նչ միայն է. նա գիտէ՞ զինչ կրի՞ի մարդն: Կեղծաւորները մեղ կըխաբեն, զի՞նչ չեն կրնար՝ խաբել. շատ մարդ մեր աչքին անշնորհք կերեւնայ, ի՞նչ առջև պիտաւական է. \* զի մարդ հայի յերեսս, և ի՞նչ հայի՞ ի սիրտս ॥. Թ. Բահ. ԺԿ. 7: Ասանկ է նէ, հիչ մէկին վրձիւ մի կտրեր, սա մարդս աղէկ է՝ ըսելով, ան գէշ է. դուն դատաւոր չես, քննիչ չես. \* մի է օրէնսդիւր և դատաւոր ॥. Կախ. Դ. 12: Հապա ինչպէս խարբուղ կըգնեսնէ, քեզի աղէկ երևցածը կառնես, մէկալնոնք դետին չես զարներ՝ որ տիրոջը քէտէր չըլայ, և ուրիշներուն աչքէն չելայ մնացածը, ասանկ ալ հաւնած մարդուդ հետ տեսնուէ՞ սիրով, բանըդ տես. մէկալնոնք վար մի զարներ՝ որ անոնք ալ ուրիշի պէտք են. և ամ մէնքը ի՞նչ պօստանը բուսած են: Արեմա առջի բանդ աս ըլլայ եղբայրսիրութե՛ կանոնին մէջ, որ՝ մէկը չես սիրեր նէ, պարէ մի ատեր. հետը բարեկամութի չունիս նէ, նախանձ կի՞ ատելութի և թշնամութի ալ մո՛ւնենար:

ԺՔ. Երկրորդ պատասխանս աս է. Ան մարդն որ դուն կըսիրես նէ, անոր չի սիրողն ալ կը դանուի, դիտես, ան մարդն որ՝ դուն չես սիրեր

բեր նէ , անոր սիրօղն ալ կայ , աս ալ չըտեսն  
նաս . հիմա ես որոնդ հաւտամ . դուն մի կը  
սխալես , թէ ուրիշը . ինչո՞ւ դու չի սխալես տե-  
ուրիշը սխալի , հէմէն երկուքդ ալ սխալահան  
ըլլալով՝ երկուքդ ալ սխալած էք , երկուքդ ալ  
խաբուած էք , հէմ սիրելնուդ , հէմ չի սիրել-  
նուդ : Ինչո՞ւ համար . զերէ վերի ըսածիս պէս՝  
այդ առանձնական սէրը սէր չէ , անձնասի-  
րուն է . ամիէն մարդ իր շահուն համար մէկը  
մէկալը կը սիրէ . ամիէն մարդ իրեն բնութեան  
յարմարը , իրեն խելացը եկածը , իրեն կամա-  
ցը կեօրէ շարժօլը կը սիրէ . ատանկ սէր մի  
կըլլայ . սուտ և խաբեբայ է այն սէրը՝ որ մեր  
շահուն համար կըլլայ . ստուծն ալ յայտնի  
կըլլայ , երբոր նոյն մարդը մեր կամքին կեօրէ  
չերթայ նէ . զերէ նոյն սահալթը՝ սիրելին ու-  
տելի կերևնայ : Դուն ալ քու վրադ վորձած  
ես , որ աս կերպով շատ բարեկամեդ վաղ է-  
կեր ես , ուրիշը անոր հետ բարեկամ է եղեր ,  
դուն ուրիշը քեզի բարեկամդ ես ըրեր . նոր ա-  
ռուտուր մը . քու բարեկամդ ուրիշի ես ծա-  
խեր , ուրիշի թշնամին դուն ես գներ : Ուրեմն  
երկրորդ կանոն եղբայրսիրու թե՛ աս ըլլայ քե-  
զի . քեզի աղէկութի ընօղը միայն սիրելու չէ ,  
ուրիշներուն աղէկութի ընօղն ալ սիրելու է .  
սալթ քեզի աղէկ երեցածը սիրելու չէ , ու-  
րիշներուն աղէկ երեցածնալ սիրելու է : ա-  
սով եղբայրսիրուիդ չի կապուիր աս ան մար-  
դու վր , հապա կըտարածուի անհամար մարդ-  
կանց վրայ :

ԺԳ . Երրորդ իմ պատասխանս այս է . Կամ  
զամիէնքը պիտի ատես , կամ զամիէնքը պիտի  
սիրես : Խոջինը չըլար ընել , ուրեմն ետքինը  
պէտք է ընես : Ի՞նչպէս : Զամիէնքը պիտի ա-  
տես

տես քու խելքիդ կեօրէ . զերէ գէշ մարդը պիտի  
 առես եղեր . սբ գիրքն ալ կնդունիս՝ որ  
 կըսէ, \* ոչ ոք է բարի՝ մինչև 'ի մի . ոչ ոք է ի  
 մաստուն . ոչ ոք է արդար ॥ . անանկ է նէ՝ ա  
 ղէկ մարդ չիկայ . ուրեմն հիջ սիրելու մարդ  
 չիկայ : Երանի թէ աս բանս շիտակ հասկը  
 նայիր , ու քու վրադ ալ իմանայիր . ան առեն  
 քեզ ալ չէիր սիրեր . էն առաջ քու անձդ կա  
 տէիր , կատարելաչկերտ կըլլայիր քնի . և ան  
 առեն կըղառնայիր՝ զամենքը կըսերէիր :

Ըսածս գրոց էր , ռամիօրէն բրոց ալ հասկը  
 ցընեմ քեզի : Քու խելքիդ կեօրէ՝ քու հաւնած  
 մարդդ միայն պիտի սիրես , ուրիշը պիտի չի  
 սիրես . է՛յ , դուն կըհաւնիս՝ մի կռապաշտնե  
 րուն անհաւատներուն , հրէաներուն , միւհ  
 լիւտիւներուն , ինքնազլուխներուն , հերետի  
 կոսներուն , և անզլուխներուն . չէ՛ . ուրեմն  
 Տքիս մենծ մասը դուրս ելաւ : Կրման քու  
 հաւատակից քրիստոնէ ախպարներդ . ասոնց  
 մէջ որոն կըհաւնիս . հարբեցօղներուն , խու  
 մարպաղներուն , գէշ ճամբա՞ դացողներուն ,  
 քիւֆիւրպաղներուն , խաբեքաներուն , պօշ  
 պօղաղներուն , անիրաւներուն , դողերուն , և  
 այլ անհամար կերպով անկարգուի՞ ընօղնե  
 րուն . չէ՛ . անանկ է նէ , ասոնցմէ ալ շատը  
 գնաց՝ քիջը մնաց սիրո՞ւելու :

Այն քչու՞որ աղէկներուն՝ ամենուն կըհաւ  
 նիս մի . կըրնաս նէ՝ հրամբես ըսէ՛ : Դուն չէս  
 մի ան մարդը՝ որ աղէկներուն աղէկը պիլէ  
 տեսնաս աղքատ , մուրացկան , հիւ՛անդոտ ,  
 ցաւազար , խեղճ , երեսն ալ չես կրնար նայ  
 իլ . չէ թէ սիրել . բնու թք անխելք՝ անբաղա  
 քավար՝ թէրպիէսիզ երևցածին՝ երեսը թքնելն  
 ալ հախ կըսեպես . խելացի՛ մարդեվար՝ շնոր  
 հալի

հալի տեսածներդ ալ՝ կեահ կըսիրես, կեահ  
 վար կըզարնես . պակսուի մը բրածնուն պէս՝  
 եա սոսկ բաճջասանքով քիչ մը պակսութի  
 վրանին լսածիդ պէս, աղէկութիւնին կըմոռ-  
 նաս, երեսնին վար կառնես . ես քեզ մարդ  
 կըկարծէի, անբան անասուն ես եղեր մէյէր՝  
 կըսես . կըլլայ որ բուն աղէկն ալ գէշի տեղ  
 կըղնես . ջերմեռանդ աղօթասէր տեսնաս մէ-  
 կընէ, թէմպէլ կեղծաւոր կըսեպես . աշխա-  
 տաւոր տեսնաս նէ, բարայի թամահին է ըն-  
 կեր կըսես . ևն :

Գանք գտնանք մէկ հատիկ հողի մը՝ որ դուն  
 վկայես իրեն, ու ըսես, իշտէ ես ասանկ մարդ  
 դու կըհաւնիմ, ասոր խօսք չունիմ . մարդ ը-  
 սելու մարդ է, կըրնամ ըսել՝ հրեշտակ է : Հիւ  
 մա աս քու հաւնածդ խաֆիլ քու մէկ բանիդ  
 չիհաւնի, եա՛ երեսիդ՝ եա էտեէդ բան մը  
 գուրցէ . յանկարծ քու ստակդ կորսնցնէ, կ'ի  
 մէկ կերպով մը քեզի մնաս հասցընէ, թէ՛ կա-  
 մայ՝ թէ՛ ահամայ, նոյն ատեն ամիէն սատա-  
 նայ վրադ կըժողզի . առջի ատելիդ՝ գլխաւոր  
 թշնամիդ կերևայ . անկից գէշ մարդ չըլլար  
 քեզի : Հիմա ի՛նչ ընենք քեզի . հիչ մէկ մարդ  
 մը չի կրցանք հաւնեցնել քեզի պէս խելացիին .  
 դուն քեզի հաւնիսնէ, խօսք չունիմ . ինքնա-  
 հաւան ես . անոր համար ալ ուրիշի չես հաւ-  
 նիր : Քեզ հաւնող կայ մի . ան ինչու չես մըտ-  
 մըտար . դիտցիր որ հէմէն չիկայ իրաւցընէ . ե-  
 րեսանց պէլքիմ հաւնին՝ ամմա, սրտանց հաւ-  
 նող չիկայ . իծմէ՛ դիտցիր . ինչու որ՝ ամիէնուն  
 չիհաւնողը՝ հիչ մէկին հաւնելու չըլլար . ամ-  
 մէնուն թշնամին՝ ամիէնուն թշնամի կըլլայ .  
 \* ձեռք նր յամենեսին, և ձեռք ամենեցուն՝ ի  
 նա ॥, եսաւայ պէս : Բանիդ ձեռք կուտայ նէ,  
 աս

աս ճամբան բռնէ . չէ՛ նէ՛ կենէ եկո՛ւր իմ ըսած ճամբաս , որ է ճանապարհ քնի . զամմէնքը սիրել , և ամմէնուն սիրելի ըլլալ :

ԺԴ . Չամմէնքը պիտի սիրես կըսեմ , չէ՛ թէ սիրուիս տէրի , այլ՝ զիմ սիրես տէրի . զամմէնքը պիտի սիրես՝ չէ՛ թէ քու աղէկուիդ փընտռելով , հապա անոնց աստուծմէ տու՛ած աղէկու թիւր ընտրելով . բանը բոլոր հոս է : Ինքն ստեղծողն ամի՛ \* ոչ խորշի յումբէ՛ յորոց աբար ॥ . ըստ որում \* ետես ամ զիմ , զոր աբար , և ահա բարի են յոյժ ॥ . \* զի ամ արաբածք ան բարի են , և չիք ինչ՝ ի նս խոտան ॥ :

Միայն թէ բարի կայ , բարի ալ կայ , որ բարեգոյն կըսուի . ամենաբարի՛ միայն ամ է . և աս մտքովս գրած է , \* չիք ոք բարի ( կատարեալ ) , բայց մի ամ ॥ . իսկ արաբածք ան բարի են՝ մէկմէկէ էւել պակաս . որչափ ան մաս են , այնչափ աւելի բարի են :

Արդ՝ գերազանց ստեղծուածով ՚ի բնութե՛ն՝ հոգեղէն գոյացուիք՝ իմ հրեշտակք աւելի մաս են ան ան բան զմարդիկ : Անկից ետքը մարդիկ՝ հոգևով ու մարմնով գոյացեալք՝ գերազոյն ըլլալով քան զայլ ամ արաբածս , աւելի մաս են ան ան թէ բովանդակ երկինք և երկիր իրենց զարդարանքովը : Անոնց մէջն ալ կենդանիք վեր են քան զանզոյ տունկս . տունկք քան զլոկ նիւթեղէնս : Միայն թէ ինչպէս մարդկանց մէջ կայ շնորհօք և փառօք գերազանցեալ քան զհրեշտակս , և մարդկանց մէջ մէկը մէկալէն՝ հէմ քնական հէմ գերբնական կատարելուք զարդարեալ . ասանկ ալ կենդանեաց մէջ կայ յաղթանդամ և աւժով և զօրաւոր զգայուք ու երկայնակեաց քան զմարդիկ . և տնկոց մէջ կայ դիմացկունը , վայելուչը , և

աշուճոր դունով ու անուշ հոտով քան զկենդանիքը . և ամմէն պապէթի մէջ մէկմէկէ աւելի կի՛մ պակաս կատարելութի, ՚ի մենձ կամ պղտիկ աղէկութի, և անոր ներհակ՝ մենձ կի՛մ պղտիկ պակասուի: Ասոնք որ հասկըցար, խօլայ կըգտնաս ճամբան՝ ամմէնուն աղէկութիը ճանչնալու և ընտրելու . և ամմէն մէկին աղէկութիը կեօրէ՛ զամմէնքը ճամբով սիրելու: Անզդայ և անբան արարածները սիրել՝ ուրիշ կերպ չըլլար, բայց եթէ անոնց բարիքը ճանչնալ՝ ու տեղւոյն կեօրէ վայելու բանեցնել, փառք տալով ՚այ՝ որ քեզի համար այսչափ անհամար բաներ է ստեղծեր՝ պէսպէս աղէկութենով . որ փիլիսոփաները քանի՛ որ կըքննեն՝ կը զարմանան, ճոթը չեն դտներ: Դուն իսէ կելլաս, անոնց պակասութիները կընայիս, մահանայ կըդնես . սա բանս ինչո՞ւ չիրքին է, նա բանը ինչո՞ւ հոտած է, մէկալը ինչու համ չունի, ինչո՞ւ զէհիրլի է կի՛մ փնասակար, ևն, դուն քեզի պէտք եղած աղէկութիը նայէ, վայէ . մէկալ բաներն որ խելքդ չիհասնիր, ստեղծողին իմաստութիը և խորին մտացը թող:

Թէ . Գանք բանական կենդանեաց՝ ՚ի մարդկանց, որ մեզի նման են, ու մեզի պէս կրնանք զանոնք սիրել . ինչպէս որ Իժ ալ ասանկ հրամեր է՝ բնական և գրաւոր օրէնքով . \* սիրեսցէս զընկեր քո իբրև զանձն քո: Ասոնց մէջ հէ՛մ Էհանրական աղէկութիներ կան, հէ՛մ մաս

նաւոր . որն որ նայիս, սիրելդ կուգայ:

Ընդհանրական կըսեմ նէ, (Իժ) ամմէն մարդը քեզի նման կըտեսնաս հոգւով և մարմնով . արդ բնական է աս բանս՝ որ նման զնմանը կըսիրէ: Օրինակով հասկըցընեմ . դուն մինաւորիկ անապատ տեղ մը ըլլայիր, կամ օռման

ներուն մէջ, կ'մովկիանոս ծովին օրթան, որ սոսկ տարերքը տեսնայիր, շատ շատ անբան կենդանիքը. մէկ օր՝ երկու օր, մէկ երկու շաբաթ, մէկ երկու ամիս, ասանկ մինակութեւր կը դիմանայիր մի. հապա մէկ քանի տարի աւանակ մնալու ըլլայիր նէ, ի՛նչ կընէիր. սիրտդ կը սըխմընէր կենացմէդ կը ձանձրանայիր: Ետքը յանկարծ մարդ մը դիմացդ ելլար, ի՛նչ կըսես, որչափ ուրախուի կըլլար քեզի՝ մարդու երես տեսայ տէյի. քիչ մը խօսէիր նէ, սիրտս բացո՛ւնեցաւ կըսէիր. մարդ ի՛նչ ըսել է, անատեն կը հասկընայիր, խըյմէթը կը դիտնայիր, ու ան մարդը քեզի մէկ հատիկ սիրական կընէիր. տգեղ անշնորհք մարդ մալ ըլլար նէ, քեզի հրեշտակ կերևնար. ինչո՛ւ, քու նմանդ է, քեզի այախտաշ կըրնայ ըլլալ, աս ընկերութիս է՝ որ աղամայ և եւայի մէջ անչափ մուհապէթ ձգեց, այնչափ սիրեցին իրարը՝ որ մէկմէկու խաթրէն չի կրցան անցնիլ, այ խաթրէն վաղ եկան. դուն անանկ մը՛ներ, առաջ զի՛մ սիրէ՛ քեզնէ վեր, ետքը զընկերդ իբրև զանձն քո:

( ք . ) Ամէն մարդ՝ մէկ մարդէն եկած են, քի աղամորդի են, ամէնուս հայրը աղամ է, մենք ամէնքս եղբարք ենք. ուստի պէտք է որ եղբօր պէս մէկզմէկ սիրենք:

( ք . ) Ամէն մարդ՝ մէկ ստեղծողի ստեղծո՛ւած են. իսկ ստեղծողը հօրէն մօրմէն շատ էւէլ է. ուրեմն ամէնքս այ սիրուն զաւակն ենք, ամէնուս սիրական հայրը ի՛մ է. ի՛մ, \* Հայր մեր՝ որ յերկինս են ||. անանկ է նէ՛ մէկմէկու սըրտակից եղբար ալ ենք, և անուշ եղբօր պէս մէկ զմէկ պիտի սիրենք: Ասոնք ՚ի բնական կարգի:

( Գ . ) ' Ի գերբնական կարգի ' ամեն մարդ զին է արեանն քսի . զերէ քս բոլոր մարդկանց համար մարդ եղաւ ու խաչուեցաւ . միայն թէ կան որ գիտեն խրյակթը , կան որ չեն գիտեր . ուստի կըսուի քս \* փրկիչ ամ մարդկան , մանաւանդ ' հաւատացելոյ ॥ : Թ . Գ . Գ . 10 : ուրեմն ամենքս նոր կերպով ալ եղբայր ենք , մանաւանդ քրիստոնեայք , որ քսի աշկերտ ենք եղեր մէկ դպրոցի մէջ , և ծննդեամբ սք աւազանին ամենքս որդի ենք եղեր եկեղեցոյ . ըմ . \* և ամենեքին դուք եղբարք էք ॥ . Թ . Գ . 8 : Առանկ է նէ , ամեն մարդը սիրելու պարտական ըլլալէն էտե ' աւելի սէր ունենալու պարտական ենք մեր քրիստոնեայ եղբարներուն . ինչպէս որ քս ալ աս մասնաւոր սէրը նշան տուաւ քրիստոնէից ' իր աշկերտ ըլլալուն . \* յայսմ գիտասցեն ամենեքեան ' եթէ իմ աշակերտք էք , եթէ սիրիցէք զմիմեանս ॥ :

Գ . Գ . 35 :

( Ե . ) Ամեն մարդ գերբնական շնորհքով կըրնայ հասնիլ յաւիտենական փառքին , քս արքայութե որդի ըլլալ . ուստի քանի որ կենդանի է , յոյս կայ փրկութե . ինչպէս աւազակը ետքի սահաթը փրկուեցաւ . ուրեմն ապկողմանէ ալ իրարու ազնիւ ' եղբարք ենք , մանաւանդ ' հաւատացեալք ' կոչեցեալք և ընտրեալք . ամենքս մէկ սեղանի տավէթին ենք . ամենքս մէկ մէկու սիրտ պիտի տանք պատրաստ ըլլալու , որ յաւիտենական մէկ հարանիք երթանք . ամենուն աղէկ աչքով պիտի նայինք , որ չըլլայ թէ եա ' մենք ' եա ' անոնք զրկուինք Թյ տավէթէն . չէ նէ ' հոս մէյակու հետ ծուռ նայեցողները ' անտեղը միատեղ չեն

կրնար ըլլալ :

Գ . Գ .

ժող. Իսկ մասնաւոր աղէկութի՛ կայ մարմնաւոր, կայ հոգեւոր: Առջինը բան մը չէ, ամ մա ին որում այ տուրք՝ սիրելի և գովելի կընէ զմարդիկ, երբ որ ճամբով բանեցնեն նէ. ինչպէս է ուժով ըլլալը, կորիճ սրտոտ ըլլալը, վայելուչ կերպարանքով և տեսքով ըլլալը. ձեռքին սաքին յաջողակ, իշխելու զար համարաթ ըլլալը. քաղաքավար՝ մարդավար՝ խօսքի արժէքի խօսք հասկըցող, անուշ լեզու, խելացի, խոհեմ, ծանրակաց, մարդասէր, առատաձեռն, ողորմած սիրտ. և ն: :

Երկրորդը՝ որ այ մասնաւոր շնորհքն է, բնական՝ և՛ ս առաւել գերբնական առաքինութի ունենալը՝ կընէ զմարդ ստուգապէս սիրելի. զորօրինակ խոնարհութի, հնազանդութիւն, անսիրուի, եղբայրսիրուի, խաղաղասիրուի, հաւատարմութի, խոհեմութի, արդարուի, արիութի, բարեխառնուի. և այլ ամ առաքինութիք, և գործք ողորմուէ և սիրոյ:

Արդ երնէկ թէ ասանկ մարդիկ գտնուէին: որ այս ամ աղէկութիւնները ունենային. անանկները չէ թէ միայն մարդիկ կըսիրեն, այլ և անասունները. բայց որովհետև հասարակօրէն ասոնք ամմէնքը մէկ մարդու վր չեն գտնուիր, մեզի սիրելու պիտի չիփնտուենք չգտնուածքանը. անիկակ անդի ջքը կըլլայ. հոս տեղս հերիք է որ ամմէն մարդու վր մէկ քանի ազէկ բան գտնանք, ինչպէս որ կը գտնուի. զէրէ հիչ չիկարծած մարդուդ վր, որ կարծես թէ անկից անպիտանը չըլլար, պակաս չէ մէկ երկու աղէկութի կամ կատարելութի. փորձէ, կըտեսնաս:

Թող որ չեմ գիտեր՝ թէ դուն որ քեզ աղէկի մը տեղ ես դրեր նէ, իրաւցընէ ունի՞ս մի մէկ

քանի կատարելուհի . կըհաւտամ որ պիտի ունենաս մէկ երկու աղէկ բան , չէ նէ դուն քեզ չէիր կրնար սիրել . ասանկ ալ ամէն մարդ որ զինքը կըսիրէ նէ , 'ի հարկէ զինքը մէկ աղէկ բանի մը տեղ կըդնէ , կամ սուտ , կամ իրաւասակից է որ ուրիշներէն ալ սիրուիլ կուզէ . ինչպէս որ դունալ կուզես . հախ ունիս թէ չէ՛ ան չեմ գիտեր . աս դիտեմ որ՝ ինչպիս դուն քեզ արժանի կըճանչնաս սիրուելու ուրիշներէն , ամէն մարդ ալ զինքը անանկ կըճանչնայ՝ թագաւորէն ինչո՞ւն չէօփճիւն : Արեմս իրաւունքը աս է՝ որ ինչպէս մենք մեզ կըօրրենք , և կուզենք որ սիրուինք , ասանկ ալ ուրիշները սիրենք մեզի պէս , և ուզենանք որ ուրիշներէն ալ սիրուին :

ԺԷ . Աս իրաւունքը որ բնական և դրական օրէնքը միաբան կըհաստատեն , աւետարանական օրինաց մէջ քս արն մեր նորոգեց գերագոյն օրինակաւ իւրով , և ամէն կերպով ապսպրեց մեզի . այնչափ որ՝ ո՞վ որ չսիրեր չէ թէ միայն եղբարը և բարեկամը , հապա թշնամին ալ , քսի աշկերտ չէ , ու քսի հետ մասն ու բաժին չունի : Ասանկ ըլլալէն էտե՛ ի՞նչ պիտի շտենք եղբայրատեաց և նախանձոտ՝ չարասիրտ և ոխակալ սուտ քրիստոնէից համար . յայտ է թէ անոնց բաժինը դժոխքն է , ան ալ էն խորունկ տեղը սաղայէլին քովը , որ է մարդատեաց և մարդասպան 'ի սկզբանէ հետէ : Ասակալութե վր՝ վարը պիտի խօսիմ՝ բարկութե ճառին մէջ :

Հիմա նախանձով հիւանդացած հողիներուն ետքի բարևս կուտամ աս խօսքերով : Ա՛վ նախանձոտ՝ քու հիւանդուիդ վէրէմ է , որ կա՛մաց կամաց քու դուրսդ պիտի ուտէ՛ , հալելով մա՛

մաշելով քեզ հոգևով և մարմնով . եկուր խօսք  
 մտիկ ըրէ , վա՛ղ եկուր ատմարագէ՛ղ՝ քանի որ  
 վրադ չէ հնցեր : Ի՛նչ ընեմ ըսես նէ , մէկ հա-  
 տիկ դեղը եղբայրսիրութի՛ն է , որ պիրապիր  
 քեզ կըրժշկէ . աս դեղս բանեցու՛ր , մէյմալ  
 նախանձին շոշորդնալ չի մնար . անկից էտե  
 ո՛չ կըխանծիս , ո՛չ կըխանծես :

Ներսի կրակին վր՛ որով նախանձօղը կըխան-  
 ծի , հերիք խօսեցանք , դրսի կրակին համար՝ ո-  
 բով ուրիշները կըխանծէ , մէկ հարկաւոր բան  
 մը կայ ըսելու . Ո՛րչափ որ կըտեսնաս , թէ  
 մէկ անձին ըրած դործքը աղէկ բան է , կամ  
 գո՛նէ աղէկ կողմն ալ կըրնայ հասկըցու՛իլ ,  
 բայց մարդիկ անոր դէմ կըխօսին տաքութե-  
 նով , վար կըզարնեն , աղէկութի՛ր կըդոցեն ,  
 պակսութի՛ր կըմեծցընեն , ( ինչպէս որ շաա  
 անդամ կընեն՝ մանաւանդ մեծատուն մար-  
 դու , առաջ եկող մարդու , գրական մարդու ,  
 հոգևոր մարդու , ) դիտցի՛ր որ նախանձն է՝  
 որ զիրենք կըշարժէ՝ զայն անձը խածնել ու  
 խանծել . և սակայն անոր բան մը չեն կընար  
 ընել , իրենք իրենց կընեն . զիրենք կըխանծեն ,  
 զիրենք կէրեն նախանձով : Աս ըսի՛ որ դուն  
 ասոնց կարգը չի մտնաս , որ է մենձ անկար-  
 դութիւն :

Բայց թէ ըսես , ձառքս չէ , բնութ՛ նախան-  
 ձոտ եմ , պէ՛տք է որ բանի մը նախանձ ունե-  
 նամ . ինձի բան մը գաի՛ր , որ անոր նախան-  
 ձիւք բարի ըլլայ :

Քեզի մէկի տեղ երկու պապէթ բան ցցնեմ ,  
 որ անոնց նախանձիւք հէ՛մ աղէկ է . հէ՛մ հար-  
 կաւոր : Առջինը Յքիս վր՛ եղած առաքինի և  
 դովելի մարդկանց՝ ջանալով անոնց նմանիլ .  
 երկրորդը՝ երկկ՛քը եղած սքեբուն , ջանալով

անոնց շնորհքը ունենալ, և անոնց փառքը ստանալ:

Ասոնք որ ընես նէ, Յքիս անցաւոր բաներու շես կրնար նախանձիլ, տեսնալով անոնց ունայնութիւնը, թէ՛ փառք ըլլայ՝ թէ պատիւ, թէ մենծութիւն՝ թէ հարստութիւն. ևն. հապադուն կըլլաս նախանձելի ամենեցուն, որ է նշան կատարեալ աղէկութեան:



Գ Լ. Է:

Ախր բարեգործ, և դեռ նորա հեղուքի:

Թ. Բարկուհն է բարեգործը, իմ բէսկին՝ նման բարկ քացախի, որ մարդուն սիրտը կըկտրտէ. առաջ իր սիրտը, ետքը ուրիշինը. ուստի բարկանալը սրտոտիլ կըսո՞ւն (պաշպալովի լեզուով, կ՞մ (արևելեան լեզուով) սրդողիլ, իմ սրտադողիլ:

Պատուական և անոյշ դինին՝ սիրոյ օրինակ է. քացիածը՝ ատելուն. բոլորովին քացախ եղածը՝ բարկուն: Եւ ինչպէս որ քացախը տեղւոյն կեօքէ բանեցո՞ւն՝ ուրիշ բաներու հետ բարեխառնելով, պիտուական կըլլայ, ամմա մինաւոր խրմո՞ւնէ, անկից դէշ բան չըլլար, առանկ ալ բարկուի կայ օրինաւոր և հարկաւոր. բարկուի կայ անօրէն և անհարկի:

Առջինն է կիրք բնական և բանական, զոր անտու՞ն է մարդուս իբրև պէնք մը՝ որ ուրիշի գէն չիքաշէ. հապադէմ դնէ դիմացը ելլող թշնամիին. ուստի օրինաւոր. շատերազմի պէս օրի-

օրինաւոր է բարկանալը սատանայի դէմ ( որ է ամօհնուս հողւոյն թշնամին), սատանութի ընօղ մարդու դէմ, մեղքի դէմ, անշնորհք կի՛ ճամբէ դուրս բանի դէմ, որ ձեռուրնիս է ճամբայ բերել, վախցընելով ու փախցընելով չարագործները և ֆրասակարները : Այնչափ որ՝ տեղ կայ որ չիբանեցները նէ արդար բարկութի թուրը կի՛ խալխանը, մենք ւոյ արդար բարկութի կը հանդիպինք . ինչպէս եղաւ հեղի քահանայապետին , որ կակուղ խրատելով մը իր անզգամ տղաքը, և չուզենալով կտրուկ կերպով զանոնք չեխել՝ վախցընել ու պատժել, ւոյ բարկութի հանդիպցուց տղաքը հողւով և մարմնով, ու զինքն ալ մարմնով :

բ . Միայն զգուշանալ պէտք է որ օրինաւոր բարկութի կանոնէն դուրս չելլանք, չէ՛ նէ՛ անօրէն բարկութի կինկնանք . աս է մարգարէին ըսածը . \* բարկանայք, և մի՛ մեղանչէք ॥ .

առ . դ . 5 :

Ասոր կանոնն է . (ա .) Բարկութի պատճառը ըլլայ վրէժխնդրութի օրինացն ւոյ, պաշտպանութի կենաց՝ և կենաց հարկաւոր բաներու, թէ՛ քու անձինդ ըլլայ, թէ՛ անմեղ անձանց : (բ .) Բարկութի պատճառը թէ որ ըլլայ սոսկ պաշտպանութի ընչից կի՛ անո՛ւան, և այլ ուրիշ մարմնաւոր բարիք մը, նայէ՛ որ բարկութիդ ըլլայ սոսկ և պարզ բարկացողութի, և ո՛չ բարկասրտութի . քի սաստիկ խօսիս լեզու՛ով, բայց ո՛չ սրտով . զերէ՛ սիրտդ փոխու՛ածին պէս՝ տակնուվրայ ըլլալով մարմնաւոր բանի մը համար, բարկութիդ ալ կը փոխու՛ի յօրինաւորէն յանօրէն : Ասանկ կըլլայ շատ անգամ անխոհեմութի՛ և անկարգ նախանձայողութի՛ անձային օրինաց վրէժխնդրութի մէջ պի .

պիլէ • կըսկըսինք սրդողիլ վն ւոյ , և կըլմնց  
 նենք մեղանչելով ըդէմ ւոյ • \* սկսել Տոգւով  
 և արդ մարմնով վախճանիք ॥ • Գաշ . 7 . 3 : ու  
 բիշք ճամբայ բերենք տէյի՝ մենք ճամբէ կել  
 լանք • ուրիշը աղէկ ընելու համար՝ մեղ դէշ  
 ընելը խենդուծի չէ՞ մի • և իրաւ որ ասը չար  
 բարկուծին ալ է աստ յիմարուծե՞ն հոգւոյ •  
 որու վն սկսինք խօսիլ , ու դեղը փնտռել :

Ուտի՛

7 . Երկրորդն , ցո անօրէն և անհարկի բար  
 կուծին՝ է կիրք անբանական , և անկարգ բոր  
 բոքումն սրտի՛ ՚ր վրէժխնդրուծի՛ կամ անպի  
 տան բանի , կմ պիտոճաւոր բանի բայց կո  
 բուսմամբ բանի , ցո բանականուծե՞ն : Ղորօրի  
 նակ , չափաւոր գինի խմելը՝ ստամոքսի ուժ  
 ըլլալու համար՝ դէշ չէ • բայց այնչափ խմել  
 որ գինովնայ , հարբած խենդ մը դառնայ , ու  
 բանականուծի կորսը՛ն ինքիւր զինքը չի ճանչ  
 նայ նէ , մահուչափ մեղք կըլլայ • ասանկ ալ  
 անօրէն բարկուծիը հարբեցուծի մընէ հոգ  
 ւոյ՝ որ բանականուէ դուրս կըհանէ զմարդ •  
 անոր համար անբան դազանի պէս կըկատուի •  
 ըրածը թողածը չի ճանչնար , ոչ մարդու խաթ  
 ըր կընայի , և ոչ ւոյ վախը կըյիշէ • բերնին ե  
 կածը կըզուրցէ , ձառքէն եկածը վար չիգնէր •  
 մարդկուծէ ելած է : Գազանուծիը հիչ մէկ  
 ճանավարի չըլմանիր՝ ոսկեբերանին ըսածին  
 պէս , հապա կարդէ դուրս աճալ աճայիպ  
 ցուցանք մը կըլլայ • զէրէ ամմէն դազան՝ ան  
 բան անասուն ըլլալով՝ մէյմէկ կերպ պէլլի  
 պաշը կատաղուծի մը ունի , անկից դուրս  
 բան ընել չիտէ • իսկ մարդը բանական իքէն՝  
 բանականուծիը մէկ դի դրածին պէս՝ ամմէն  
 դազաններուն դէշուծիը միատեղ կըժողվէ ,  
 և

և անոնց չըրածը կընէ . առիւծիպէս պատա-  
 ոօլ կըլայ , արջու պէս փառատօղ , Կայլու  
 պէս յափշտակօղ , շան պէս հաչող ու խածնօղ ,  
 կատուի պէս ճանկօղ բզրկօղ ու մրմռացօղ ,  
 ըղտու պէս ռխակալ , ևն : Ասոր համար բար-  
 կու թէ՛ ծնած մեղքերն ալ՝ բոլոր զազանական  
 և ցուցանքաւոր բաներ են . ց՛ կատաղութի ,  
 մարդասպանութի , մարդ զարնել , բաները  
 կոտորել , մենծ մենծ ֆրասներ ընել . հայհոյ-  
 ութի , յիշոցք , անէծք , աղաղակ , մեծաբա-  
 նուի , չարախօսուի , նախատինք , անարգանք ,  
 թշնամանք • թշնամութի , ատելութի , ռխա-  
 կալութի , քինախնդրութի , խստասրտութի ,  
 յանդգնութի , անզղջութի , յուզահատուի ,  
 անձնասպանութի , ևն :

Դ՛ . կրակ մընէ բարկուիը . որ սովորական ա-  
 ռակին պէս՝ ներսէն զինքը կէրէ , դրսէն զու-  
 րիշը կէրէ : Ա՛ծ կրակը ստեղծեր է՝ ձմեռը տաք  
 նալու համար , ատենով կերակուր եփելու ,  
 շատ բանը հալելու , կակղցնելու , պէտք չե-  
 ղած բանն ալ կերելու . խենդ է ան մարդն՝ որ  
 կրակը բանեցնէ իր տունը կերելու , և անով  
 ուրիշներուն տունն ալ բռնկցնելու :

Թուր մընէ բարկութիը , կամ սուր դանակ  
 մը , որ շինած է՝ պէտք եղած բանը կտրելու ,  
 շատ բանի բանեցնելու , պէտք ըլլայ նէ՛ թա-  
 դաւորին հրամանովը մահապարտին գլուխն  
 ալ կտրելու , և ուրիշներուն սիրտը վախ ձգե-  
 լու : Խենդ է ան մարդն՝ որ դանակը իր սիր-  
 տը կըխօթէ , կ՛մ ինքիւր գլխուն մարդ կըզար-  
 նէ , մանաւանդ անմեղը ու իր բարեկամը . կ՛մ  
 մէկ երկու բարայի տավային համար ուրիշին  
 կենացը խըյմիշ կընէ . թող որ իշխանութիւն  
 չունի ոչ իր կենացը և ոչ ուրիշի վրայ :

Իշտէ

Իշտէ առ ըսած խենդը՝ բարկացող մարդն է՝  
այնչափ որ՝ ինչպէս խենդին հետ ինկնալ չըլ-  
լար, որ չըլլայ թէ կատողի տէ՛ չարիք մը հանէ,  
ասանկ ալ մարդիկ սախընմիշ կըլլան բարկա-  
ցողէն: Թո՛ղ երթայ ինքերմէն խնտայ խենդ  
բարկացողը՝ թէ մարդիկ ինծմէ վախցան կամ  
կըվախնան տէյի. կըվախնան քեզնէ, ղերէ ի-  
րենք խելք ունին, ու քու խենդ ըլլալդ աղէկ  
հասկըցեր են: Խենդուէդ մէկ մենծ իսպաթն  
ալ առ է որ կըխնդաս կոր ուրիշներուն քեզ-  
մէ վախ ունենալուն վրայ. վախ ունին նէ, չեն  
կրնար քեզ սիրել. անանկ է նէ՛ հիջ մէկ բա-  
րեկամ մը չունիս, ամմէնքը քեզ թշնամի են.  
տեղը կուգայ որ՝ հախէդ կուգան. անոնք չի-  
գաննէ, դուն քու ոտքովդ կինկնաս. ղերէ  
ինչպէս որ՝ \* ամենքեան որ սուր առնուցուն,  
սրով անկանիցին || . Դափ . ին . 52 . ասանկ ալ  
բարկացողները բարկութե՛ կը հանդիպին՝ ես  
երկրաւոր, ես՝ երկնաւոր դատաւորի:

Ե. Անոր աղէկը ան է, որ դուն քու հախէդ  
դաս, դուն քեզի դէմ սրդողիս. որ ան բար-  
կութե՛ր չի հանդիպիս. դուն քեզ ատես, քե-  
զի թշնամի ըլլաս, որ ամմէնքը քեզ սիրեն,  
քեզ բարեկամ ըլլան, դուն քեզնէ դանիս,  
որ անք քեզնէ խոշանմիշ ըլլայ: Ինչո՞ւ չար  
դազաններու նմանիս բարկութե՛ք, ու անմեղ  
կենդանեաց չինմանիս անմեղութե՛ք և անու-  
շութե՛ք. դառնուկ եղեր հեղիկ, աղաւնի՛ եղիր  
անմեղ. որ նմանելով յսի՛ հեղ դառինն ան, և  
սք անձաճնայ՝ ամբիճ աղաւնոյ, անոնց քովը  
երթաս, ը՛ք, \* երանի՛ հեղոց՝ ղի նոքա ժառան-  
գեսցեն ղերկիր || կենդանեաց . ան ղերկինս . չէ՛  
նէ՛ գիտցիր որ \* բարկացողը ղարքայուին ան  
ոչ ժառանգեն || :

Ուրեմն բարկուէ ախտին մէկ հատիկ դեղն է  
առաքինութի հեղուէ (յի մաղլումուն), որ է  
նմանութի քսի, և առջի համարը՝ որ կուտայ  
յս իրեն: աշկերտ գրու՞ողներուն, \* ուսարուք  
(կրսէ) յինէն, զի հեղ եմ, և խոնարհ սրբ  
տիւ՛. և գտջիք հանգիստ անձանց ձերոց ॥

Տարբ. ժամ. 29:

Դ. Ի՞նչ է ըսես հեղուիր, և ի՞նչպէս կըլլայ  
ստանալ զանի: Հեղուին է հազարուն մը սրտի՛  
որով մեզի դէմ եղած նախատինքներու, կամ  
դժարը դալու բաներու՝ անուշութենով սի  
րով ու լայն սրտով կըտանինք. զերէ ինչպէս  
բարկուիր՝ բանի մը կիւճէնմիշ ըլլալէն կըլ  
լայ. ասանկ ալ հեղութիւնը ան դժար դալու  
բանը՝ հեշտ ու խօլայ կերպով կընդունի. բար  
կը ու խիտը՝ կակուղի պէս խապուլ կընէ, ու  
բով դիմացինին սիրտն ալ կը կակողցնէ:

Բարկուիր կրակ է նէ, հեղուիր ջուր մընէ՛  
որ դայն կըմարէ: անանկ ջուր մը՝ որ հէ՛մ քու  
սրտիդ կրակը վառած չի վառած կըմարէ, հէ՛մ  
քու դիմացինիդ վառած ու բորբոքած ալէ  
ֆը կը մարէ. որով երկու դիմանց ալ բարկու  
թիւնը կը բարձունի, և կըթաղաւորէ խաղա  
ղութիւն:

Հեզ մարդը կակուղ մոմ մը նէ՛ որ վրան ու  
ղած մէօ՛հիւրդ կըրնաս կոխել: Կակուղ օսկի  
մընէ, որ ուղածիդ պէս կըրնաս բանիլ չէքի  
ճով, խալէմով, հէտօէէ քաշելով, ու եալ  
տըղընելով: Կակուղ բամպակէն կակուղ է.  
որ քար ալ ձգես վրան նէ, ձան չի հաներ,  
քարը իր մէջը կըթաղուի՛ կըկորսուի: Իսկ  
բարկասիրտը քարասիրտ է, պինդ, սերթ. որ  
հիջ մէկ բանի մը չես կընար բերել. չէ՛նէ՛ ես  
կը կոտրի, ես շամաթա կըհանէ: Հեղութիւր

եղ

եղ մընէ՛ որ զամմէն բանը կրկակղցնէ , կը խօ-  
լայցընէ . աս եղիս պակասութէն է՝ որ բարկա-  
սիրաբ անդադար ճաճոց կը հանէ՝ դրան ուէ-  
զէի պէս , առապայի լիսռան պէս , պօստան  
տօլապիներուն պէս :

Բարկունն որ առաջ կուգայ նեղսրտութէ ,  
կարճատութէ , ֆնաս մը քաշիլէն , ֆնասակար  
երեցած բան մը տեսնալէն , և ինչ և իցէ՛ քու  
կամքիդ դէմ եղած բաներէն , հեզուէ դեղն  
որ վրադ ունենաս՝ ու բանեցնես նէ , ան կու-  
տայ քեզի լան սիրտ ըլլալ , երկայնամիտ , հան-  
դարտ , լուակաց , դէմ խօսողին՝ դէմ պատաս-  
խան չիտալ , պօշ բանէ մը չառնընէիլ , փուճ  
բանի մը սիրտ չելլալ : Ասով կը սորվին համ-  
բերել մենծ բաներու ալ՝ շատ խօլայութենով .  
ֆնաս մը քաշես նէ , ֆնասողին չես նայիր , ան  
կամացը քեզ կը թողուս՝ որ առանց անոր տե-  
րև մը չի շարժիր . ֆնասակար բան մը տես-  
նաս նէ , սախընմիշ կը լաս՝ ո՛չ այնչափ դրսի  
զարարէն , հապա մեղքէն . և այն բանէն որ  
քեզի զէն պիտի հասնէր , օգուտ մը կը ջանաս  
հանել՝ ու կը հանես , ձան չի հանելով և համ-  
բերելով :

է . Ամմա խօլայ չէ՛ ( ըսէ մէկը , ) ամմէն բա-  
նի համբերել , բարկութե արալըխը մարդուն  
միտքը հեզութե՞ մի կուգայ :

Պոսին . աս : Իրաւ է , մէյ մը արունդ տաքնա-  
լէն էտե՛ դուն ալ զըվանայէն կելաս . ուզածդ  
չուզածդ բերնէդ կը հանես . ամմա ետքը՝ ը-  
բածիդ դունալ փիւշման կը լանս , թէ չէ : Ա-  
տանկ է նէ , առաջուց պատրանստ կեցիր . դա-  
րուվար ու ծար տեղ մի կայնիր , որ վար չիյ-  
նաս . հապա դուն որ ինքիր կամօքդ քեզ վե-  
րէն վար ձգես ինչունս սա տեղս հասնիմ տե-

յի, 'ի հարկէ չուզած տեղդ ալ կինկնաս : Կուզեմ ըսել . բարկուէ սեպէպներէն հեռու կեցիր . ըսենք թէ յանկարծ եղաւ որ մէջը դըռնո՛ւնսնեցար , մէկէն 'ի մէկ մի' նետուիք , լեզուդ մի երկնցներ . տեսար որ սիրտդ ելեր է՝ քեզնէ դուրս պիտի ելլաս , ան արալըխը մի խօսիր . սիրտդ իջնայ , ետքը հանդարտ սրտով խօսէ խօսելիքդ , որ հախդ առաջ երթայ . չէնէ՛ հախ պիլէ ունենաս , բարկութենով հախէդ կինկնաս . զերէնէ՛ հախ բաներ ալ կըխօսիս կժ՝ կընես , դուն քու խօսքովդ պարտաւոր կըմնաս . \* զի՛ 'ի բանից քոց արդարասցիս , և 'ի բանից քոց պարտաւորեսցիս ॥ . Տաքի . ԺԲ . 37 : Ետքը եկուր տէ՛ ( կըսէ ռամկը ) փօստը ջրէն հանէ՛ , քարը հորէն հանէ՛ , էջը չամուռէն հանէ՛ : Բարկութե՛ հէրարէթով մէկին խաթրը կուրես , մէկալին տունը կերես , առաջուց պէտքը չէ՛ր մի մտմտալ , թէ աւրելը խօշայ է , ամմա շինելը դժար . երելը դիւրին , մարելը դժուարին :

Ես չեմ ըսեր , թէ մէկ օրուան մէջ բարկասիրտ մարդը հեզ կըրնայ ըլլալ . հիբոկրատէս վարպետ բժշկին առածը միտքս է . \* որ 'ի բազում ժամանակի հիւծե՛լ են մարմինք , մեղմով վերադարձուցանել պարտ է . և որ 'ի սուղ ժամանակի , սղակի ॥ : հապա՛ կամաց կամաց քեզ կրթես նէ , ամմէն բան կըլլայ : Էրէկ բարկուի ելար , էտեէն փիւշման եղար . այսօր նիէթ դիր , քեզ բռնէ՛ . խաֆիլ բարկանալու ըլլասնէ , երեկու՛րնէ պակաս կըլլայ . անոր ալ փիւշման եղիր , նիէթդ ամրցուր . ապաշխարանք մընալ դիր դուն քեզի , թէ որ մէյմընալ սրդողիմ նէ՛ աղքտի այսչափ ողորմուի տամ , եա կէս օրը բերանս բան չի դնեմ , եա

երե

իրիկունը աս սղօթքս աւելի ընեմ. ասով բարկուեի վաղը տաճա քիչ կըլլայ, մէկան օր աւելի կը պակսի. և ասանկ օրէ օր սովորութի կըլլայ քեզի՝ բարկուեի յաղթել, ու հեղուի բանեցնել. ետքը դունալ կըզարմանաս, թէ ի՞նչ խենդ թապիէթ էր առջի բարկասրտութիւնդ. և ուրիշ բարկացողներն ալ տեսնաս նէ, կը դանիս :

Բան մալ սորվեցնեմ քեզի, որ մէկէնիմէկ իբրաճ ընես դուն քու բարկուեի ախտէդ : Հայլի մը առջև անցիր, դուն քու թախլիդդ ըրէ՝ դըպիը սաստիկ բարկանալուդ կերպովը. կըտեսնաս որ՝ դուն ան մարդը չես, դուն քեզ չես նմանիր. աչու՛ններդ դարձած, ընդվըներդ ցրցված, մաղերդ անկած, բերանդ ծռած, լեզուդ դուրս ընկած, պոկունքդ կախու՛ած, ձեռքդ ոտքդ դող ելած. բովանդակ մարմինդ դի՛ւահարի պէս լլկած : Թախլիթը ասանկ է նէ, իրաւը ի՞նչ կըլլայ. կատաղի գաղան մը, մարմնացեալ դե մը : Աս ի՞նչ գարշելի բան է եղեր բարկուիը՝ կըտես, ու քեզ կըսկսիս ժողվել ու զսպել :

Ը. Պատիւն. Բ : Խօլայ բան չէ եղեր մէյէր համբերե՛ք. բարկուեի ատենը հեղութի միտքդ չի գար եղեր : Հապա քու արդ և ստեղծողդ քեզի համար ի՞նչպէս համբերեց այնչափ նախատինքներուն, չարչարանքին, ու մահու խաչիմէյմընալ՝ քու ըրածիդ և ամիկն մարդկանց ամիկն օր ըրած մեղքերուն ի՞նչպէս կըհամբերէ կոր. ի՞նչպիս զամիկնքը իսկոյն չի պատժէր՝ երկնքէն կայծակով, երկիրը պատուելով, և ամիկն կերպ պատիժներով. դուն ո՞վ ես որ՝ քու ստեղծողէդ առաջ ուրիշին հախէն կուղես գալ :

խայրիլ ես , որ դուն ի՞նչպէս ուրիշի կը սրդու  
 ղիս կոր , Ի՞ծ ալ քեզի նոյնչափ սրդողի , չէ թէ  
 աւելի . դիտե՛ս հալդ ի՞նչ կըլլայ՝ մէյ մը քու  
 բարկութիդ քու վրագ թափելու ըլլայ նէ :  
 Ասոր խայրիլ չես նէ , ուրեմն խայրիլ եղիր համ  
 բերելու , հեզութի պցնելու : Եւ ինչպէս որ  
 դուն Ի՞նչ կաղաչես , \* Ի՞նչ սրտմտութի քով  
 յանդիմաներ զիս , և մի բարկութի քով խրա  
 տեր զիս ॥ , դուն ալ նմանապէս մի սրտմտութի  
 քով յանդիմաներ զքեզերդ , և մի բարկութի  
 քով խրատեր զուրիշը : Եւ ինչպէս որ Ի՞նչ կը  
 սես , \* ի՞նչ բարկութի քում զողորմութի յիշես  
 ցես ॥ , դուն ալ անանկ ըրէ եղբօրդ . չէ՛ նէ՛ ը  
 բաճդ կըդտնաս . ինչ սրտով կընայիս նէ ու  
 րիշի , Ի՞ծ ալ քեզի ան սրտով կընայի . ողորմիս  
 նէ , ողորմութի կըդտնաս . խստանաս նէ՛ Ի՞նչ  
 խստուեր կըհանդիպիս : Ետքը փիւշման կըլ  
 լաս՝ ամմա՛ , նէտէ՛ն սօնդրա . բանը բանէն  
 անցնելէն էտե , դուն ալ ասկից անդին դնա  
 լէն էտե , ետքի փիւշմանութիը բանի չիգար .  
 զեղջ անագան է անօգուտ : Յիշէ՛ այն բանը ,  
 ու սոսկա՛ . \* ահ մեծ է անկանիլ ՚ի ձեռս Ի՞նչ  
 կենդանոյ ॥ . էբր . Ժ . 31 :

Թ . Բարկութիը կրակի նման է քսինք . սալթ  
 ալէֆի նման ըլլարնէ , կանցներ կերթար . կրա  
 կը գէշ է՝ որ ալէֆ չիցցներ . կամաց կամաց  
 կըբանի , ետքը մենծ եանդըն կըհանէ : Ասանկ  
 ալ պաղի մարդկան բարկութիը ալէֆի մը պէտ  
 յանկարծ կըփռնկի կանցնի . պաղիներունը ոչ  
 անցնելիք ունի , ոչ մարելիք . մարդ չիմանար ,  
 ի՞նչպէս մարնն . ինքը պիլէ ինքեար կընէ , Իս  
 չեմ սրդողած կըսէ , իմ սրտիս մէջ ոչ քէն կայ ,  
 ոչ բան կայ կըսէ . ան իսէ՛ կատարեալ ատե  
 լութի և ռիսակալութի կայ . յորմէ Ի՞ծ պահէ .

զերէ այս է ախտ անբժշկելի . ենիր Եւրայ  
կըլմանի , զինքն ալ կուտէ , զուրիշն ալ կուտէ .  
Երկուքն ալ մահը միայն փառլամիշ կընէ : Ամ  
մա առիւն կայ նոր մահ անմահ : անտեղը այ  
անոխակալու թիւ չի կայ , յաւիտենական ոխ  
կայ . Դժոճարէն ոխ , որ է ըսել՝ Դժոճ :

Քեզ կըսեմ ո՛վ ռիսակալ եղբայր , ո՛վ անօրէն  
եղբայր , ( \* զի որ ռիսակալ է , անօրէն է ॥ . կը  
սէ սողոմոն . ) վախցիր ու դարձիր : ներէ և  
հաշտուէ՛ եղբօրդ հետ՝ այսօր աս սահալթս .  
չէ՛ նէ՛ ետքդ գէշ է , գէշին գէշը՝ որ խելքէդ  
չէ՛ անցեր : Եղբօրը հետ քէն ունեցողը , սա  
տանային հետ խօսքը մէկ ըրած է , կըսէ սքն  
նեղոս . \* որ ոխ ունի ընդ ընկերին , դաշնասոր է  
սասանայի .

Սատանան որ հիմա քեզ կըխրատէ ոխ պահե  
լու ուրիշի հետ՝ քեզի հախ տալով , քու հախդ  
քեզի պիտ թամամ պիտի վճարէ դժոխքին մէջ՝  
չարքրկելով , ու ասանկ երեսիդ խնտալով , ոխ  
օխ , քեզ ոխով ու քէնով խաբեցի , ու հոս  
քերի եա . աս մէկ մեղքդ ինծի հերիք էր , ու  
րիշ ամէն բարեգործուիդ իմ հոգս պիտ չէր :  
Ան ատեն ի՞նչ օխեր պիտի մտնայ սիրող , հը  
մակու՛րնէ մտմամ . հոս որ ոխ պահելով՝ եղ  
բօրդ սիրտը օխերով կուզէիր վիրաւորել ,  
դժոխքին մէջ կրակէ օխեր սիրող սափլանմիշ  
պիտոր ըլլան . որ յաւիտեան ելլալիք չունին .  
անբժշկելի վերք պիտի ըլլայ սիրող ան կրա  
կէ օխերով , որ սրտիդ կրակը յաւիտեան մա  
րելու պէս չէ . \* զի նետք նր՝ այրեցելովք են  
գործեալ ॥ :

Աշխրբիս վրայ ալ չէշնին կառնես կոր , գե  
տես . ատ ի՞նչ կրակ է սրտիդ մէջ՝ որ չիմարիր  
կոր . քանի որ թշնամիդ կըտեսնաս՝ որու հետ  
որ

որ սրտիդ մէջ ոխ կայ, եօխ կըլլաս կոր . մեռնիլ կուզես՝ քան թէ անոր երեսը տեսնալ . քանի որ անոր անունը կըլսես, մանաւանդ բարի անունը ու բարեյաջողութիւն, այնչափ կըչարանաս որ՝ ձեռքէդ դարնէ, եւ զանի՝ եւ քեզ կըխըղդէիր . ատ ի՛նչ դժոխային խարէզ է . չես հասկընար որ իրաւցընէ դժոխք է սիրտդ : Ատոր դէմ արքայուէ դեղ պէտք է քեզի . որն է՝ ըսես նէ, իշտէ քեզի ուիչէթան կը դրեմ աս խօսքերով :

Անոխակալ և անյիշաչար տիրոջդ նմանէ : Հախը քուկդ է նէ, այ հախէն մենծ չէ եւ . մարդիկ այ հախը կերեր էին, անձ երկէքէն ինջաւ մարդուն ոտքը՝ հաշտեցուց իրեն հետ՝ ներելով՝ ողորմելով, փոխանակ չարի բարի հատուցանելով . և ասով իր սիրտն ալ ուստացաւ, մեր սիրտնալ ուստացուց : Դունալ որ ասանկ ընես եղբօրդ, ոտքը երթաս . հաշտուիս, ներես, ու սիրով կապուիս նէ, զիտես ի՛նչ ուստացութի կիմաս, ի՛նչպէս Փէռաս կըլլայ սիրտդ . պախճայի պէս սիրտս բացուեցաւ կըսես ; փառք կուտաս այ, և իրաւցընէ արքայութի չէշնին կառնես . փէյն ալ կառնես . զերէ մի որ եղբօրը կըներէ, մանաւանդ մենծ յանցանքը, մենծ վնասը, ինքն ալ աստուծու ներողուի կառնէ լիախատար : \* Զի եթէ թողուցուք մարդկան իւրաքանչիւր՝ ի սրտից ձերոց զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր : ասխ թէ՛ ոչ թողուցուք, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ ըզյանցանս ձեր : Ահա հուր, և աստ ջուր . յոր և կամիս՝ միտեալ զձեռն քո ॥ : Իշտէ կենաց դեղ, իշտէ մահադեղ . մեռնիլ կուզես նէ յաւիտեանական մահուամբ, ատ մահադեղէն վազ մի՛

գար . ապրիլ կուղես նէ յաւիտենական կենօք ,  
այ տո՛ւած կենաց դեղը սիրով առ :

Ժ . Արի ռիչէթան գրեւէն էտև յանկարծ  
միտքս խօլայ դեղ մալ ընկաւ , հազըր տունդ  
գտնո՛ւած բան , միտքդ ձգեմ , հէմէն աս աւ  
հաթ աս թաքիքէ ան , մէկէնիմէկ կըխալըսիս  
ատ ատելուէ և ռխակալուէ տէրտէն : Հազըր  
սիրտդ հէրարէթ կայ ատելուէ , հին մարազ  
կայ ռխակալուէ , որ չեմ կրնար հանել սրտէս  
կըսես : Թէ որ չիգայթակղիս նէ ըսածիս , մի  
հաներ սրտէդ , հապա՛ թշնամիդ փոխէ : \* մի  
միայն է մեր հասարակաց թշնամին , ( կըսէ  
լամբրոնացին . ) Է այն մարտիցուք ։ կըլայ  
մի . կըլայ : Ի՛նչպէս :

Դնենք թէ դուն կիրակոս եղբօրդ հետ քառ  
լուծի ունիս , զերէ քու հազար խուռուշ կի  
տասը հազար՝ ստակի է կերեր , եա քու ա  
նունդ է աւրեր , եա քեզ կուզէ եղեր սպան  
նել : Ես հիմա քեզ հէվալէի թուղթ մը առ  
նել տամ աստուծոյ՝ որ ատ առնելիքդ անցնի  
սադայէլի վրայ , որ այ դէմ անչափ պարտք  
ունի . մեզի ալ շատ պարտք ունի՝ մեզ շատ դէն  
հասցընելով . կուղեսնէ՛ ատ թահվիլը կի թէ  
մէսիկը հազար վկաներով ալ հաստատեմ մէօհ  
րել տամ , որ իրաւցընէ քեզնէ սադայէլի շատ  
բան անցեր է , հարիւր քէսէ չի , հազարներով  
քէսէներ . հէմ նոյն անիրաւ սադայէլն է՝ որ  
քու անունդ աւրեր է ու միշտ կաւրէ այ ու  
մարդկան առջև . անունն ալ քանսարհո՛ւ բան  
խառնօղ է . և ամէն օր էտուէդ ընկած է քեզ  
սպաննելու . ամէն կերպով միշտ քու բար  
չոյդ հակառակ է , անունն ալ վրան՝ սպանայ ,  
չէթան : Ատանկ է նէ , ատ անօրէն թշնամին՝  
չէ՛ թէ կիրակոս ախպարդ՝ պիտի ճանչնայս աս

կից էտև քու հասիմդ, ատելիդ, և ոխերիմ  
 թշնամիդ: Ինչ զէհեր որ ունիս սրտիդ մէջ  
 պատրաստ, անոր վր թափէ. յաւիտեան ա-  
 նոր հետ մի հաշտուիր. ամեն տեղ անի վար  
 զարկ. նախատէ երեսէն ու էտևէն. զիշեր  
 ցորեկ հնարք մտմտա՛, որ անոր հախէն դաս  
 մայ ալ աղաչէ որ անոր հախէն դայ: Ասկից ա-  
 ղէկ ատելութի չըլար. որ է կատարեալ ան-  
 սիրութի. որով կըլլայ և կատարեալ եղբայր-  
 սիրութիւն:

Ժմ. Մնաց ալէֆի բարկութիւն՝ որ թէզով  
 կանցնի՛ ըսինք՝ անցանք. անոր ալ մէկ դեղ մը  
 ճարելու է, չէնէ՛ դժոխային ալէֆի պէս ան-  
 համար հոգիներ կը լափէ: Բարեւոնի հնոցին  
 բոցը երեք մանկունքը չէրեց, զերէ հրեշտակ  
 մայ ցողազին շնչմամբ զովացուց զիրենք. բայց  
 քաղդէացիքը էրեց՝ որ նոյն հնոցը վառեր  
 էին. ասոր նման քու ալէֆի բարկուիդ ալ  
 կրնայ ըլլալ որ մայ շնորհքովը չիդպչի հեզ և  
 խոնարհ համբերողաց. բայց քեզ կերէ կը-  
 լափէ անտարակոյս՝ որ կուզէիր ուրիշներուն  
 սիրտը էրել:

Գիտես քու ալէֆիդ դեղը որն է. մայ բարկու-  
 թիւն է՝ որ երկնային հրով, քի կայծակ իջեց  
 նելով քու գլուխդ, կի՛ տամլայի հանդիպցնե-  
 լով, և կի՛ հազար կերպ փորձանք բերելով  
 կրնայ հախէդ դալ աս ճքիս մէջ. իսկ անդիմ  
 ճքը բոց սրամտունն մայ է՝ որ յաւիտենական  
 անշէջ կրակին մէջ քեզ պիտի բոցակիզէ՛ ՚ի լիճ  
 հրոյ և ծծմբոյ, քի՛ դժոխս: Ասոնք մտմտայն  
 է քու դեղդ. ինչու որ՝ այդ դժոխային ալէֆն  
 որ քու բերնէդ կելլէ սոսկալի հայհոյանքնե-  
 բով, յիշոցներով, աղտեղի խօսքերով, սիրտ  
 տաղօղ նախատինքներով, ո՛չ ջրով կը մարի:

և ոչ ուրիշ դեղով . այ բարկուիլը յիշեսնէ ,  
դուն կըմարիս , թող թէ քեզնէ ելած ա-  
լէ՞Քր :

Աս դեղը աս տեղս հիմակուճընէ՛ բանեցնելու  
է . չէնէ՛ ետքը շահ չունի . դժոխք երթալէդ  
էտև սրտիդ կրակը մէկին տեղը հազար խաթ  
կէւեկայ . հոս որ մարդիկը կըհայհոյէիրնէ ,  
անտեղը զամ կըհայհոյես . այ բան չես կրնար  
ընել , ինչ կընես նէ՛ քեզի կընես . ինչպս պազի  
չարագործները՝ գլուխնին կտրուճելու ատենը՝  
թագաւորին կըբըժրեն յուսահատութենով ,  
կեօյա սրտերնին պիտի պաղի խենդերուն . ան-  
նիսէ աւելի չարչարանքով կըսատկին : Դժոխ-  
քը մեռնիլ չկայ որ խալըսի մարդը . էօրքէն  
ալ չի կրնար առնել . կըբորբոքի անմարելիք  
կրակով իր սրտին , անշէջ հրով դժոխքին , և  
աննիւթական բոցով սրտմտութեն այ յաւի-  
տեան . այն մարդն՝ որ չուզեց իր կենացը մէջ  
իր բարկութիւր մարել :

Ժք . կըհիանամ , կըսոսկամ , կըփշաքաղիմ աս  
անօրէն սովորուէ որդւոց մարդկան , որ ամ  
մէն Յք , ամմէն քաղաք , ամմէն գեղ , ամմէն սո-  
խախ , աւելի մեր օրերը խիստ շատցեր է քիւ-  
Ֆիւրպազուիլը դժոխային բերաններուն . ի-  
րեք չորս տարեկան ջոճուխէն սկսած տեսայ  
ինչոճան խռՔած ծերերը , ինչպէս անճոռնի  
հայհոյանքներ կըբանեցնեն , ընտոր չիլսոճած  
քիւՖիւրներ , որ ոչ բերան կըրնայ առնըլի .  
և ոչ անկաճը կըրնայ լսել . մէկմէկէ դարշելի ,  
մէյմէկէ անտանելի . բոլոր բովանդակ դժոխք  
է եղեր Յքս :

Ասանկներուն տներն ալ պակաս չէ անէծք ,  
պէտտուվայ . որ նոյնպս դժոխքէն ելած կրակ  
մը նէ . ըսօղը չիմանար կոր , լսօղը խելք թըռց-  
նէ .

նելու կըլայ . աչքը անկաճը՝ քիթը բերանը՝  
 ձառքը ոտքը՝ փճացնելէն ետև անէծքով՝ թէ  
 ուրիշներուն վր, թէ իրենց անձին վր , չա-  
 րաչար մահը ուզէլ, ճէճէննէմ ընել բոլոր  
 մարդը , թող թէ հոգւով մարմնով դժոխք  
 խաւրել՝ շատին բերանը սովորական խօսք է  
 եղեր :

Ճիչ ուրիշ մեղք չըլար Ծքս , աս քիւֆիւրը և  
 անէծքը՝ որ երկուքն ալ բարկութէ առջինեկ  
 էքիդ զաւակներն են , հերիք էր այ բարկուիը  
 շարժելու : Աս աղէկ գիտնան հարեր ու մա-  
 բեր՝ որ պղտրկուց իրենց տղաքը չեն չեխեր, ու  
 սաստիկ պատիժներով իրենց զաւկըներուն լե-  
 զուն չեն կտրեր աս քիւֆիւրներէն ու անէծք-  
 ներէն , հապա պազին երեսն 'ի վեր ալ կըին-  
 տան , պազին ալ թօաֆ բանի մը պէս կըսոր-  
 վեցնեն պիլէ , գնա՛ կորի՛ր ըսել , գետինը մըտ-  
 նաս ըսել , շուն ըսել , և աւելի յայտնի ցնդի  
 փնդի ու գարշելի խօսքեր բանեցնել . աղէկ  
 պիտոր գիտնան կըսեմ , որ իրենք ալ իրենց  
 զաւակներն ալ պիտի լսեն երկնաւոր թագա-  
 ւորին բերնէն այն ահագին վճիռը . \* երթայք  
 յինէն անիծեալք 'ի հօւրն յաւիտենական ॥ :  
 Ուրեմն աս վճիռս ըլլայ քեզի անձային ուիչէ-  
 թա մը՝ ո՛վ հայհոյիչ և անիծանող , որ հիմակ  
 ուրնէ կարգաս , և ասով ետ կենաս քու չար  
 սովորութիւնդ . չէ նէ՛ քու չար լեզուդ քեզ յա-  
 ւիտեան պիտի էրէ չարաչար :

ԺԳ . Եթէ որ սոսկ բարկուիը ասանկ կրակ-  
 ներ կըթափէ՝ հոս ուրիշի դիտուն , և անդին  
 իրեն դիտուն , հապա որ նախանձնալ հպար-  
 տութին ալ հեաը մէկ ըլլան նէ , ինչէր չեն ը-  
 ներ . աշխարհքը կերեն կըլային . և աշխրբիս  
 մեղքը գործելով ու գործել տալով , նոր դը-  
 G 4 ԺՈՒ

ժողովի մը արժանի կրլլան : Կուղեմ ըսել թէ ուրիշներուն մարմնաւոր դէն տալէն էտե , և շատ տներ քանդելէն էտե , մէկ համձական դէն մալ կուտան՝ որ հոգիի և մարմնի միապէս էրօղէ : Որն է ըսես . բամբասանք է՝ ցուցանքաւոր ճանաւար մը իրեք ճանաւարէ ծընած , ՚ի հպարտուէ , ՚ի նախանձէ , և ՚ի բարկուծէ . զերէ ասոնք մէկ տեղ գալով կրգոյանայ բամբասանքը , որ է կրակի խունտախ մը՝ բոլոր ձքը էրօղ . կմ բունաւոր մը՝ բոլոր ձքը թրէ անցնօղ : Բամբասողին էտեէն շատ բան չեմ ուզեր խօսիլ , որ ես ալ իրեն պէս բամբասօղ չերևնամ . հապա երեսին յայտնի կրսեմ իր հիւանդութիւնը . թո՛ղ իր ճարը տեսնայ :

Ո՛վ բամբասօղ եղբայր , դուն որ քեզ առողջ կրկարծես , ու ուրիշներուն ցաւը ու մեռել կուլաս , դիտցիր որ՝ քեղնէ գէշ ու դժար հիւանդ չի կրնար ըլլալ . բուն դալուկ ք սարըլըխ կայ վրագ ըսեմնէ , սուտ չէ . որ աչքդ ալ դեղընցեր է՝ որով ճերմակ բաները դեղին կրդատես . դատելէն բամբասանք կելլայ : Բայց և ուրիշ շատ մարագներ մէկ են եղեր վիճուտիդ մէջ , որէն վարպետ բժիշկները շաշքովի կընես . չեն դիտեր՝ քու ո՞ր ցաւիդ դեղտան՝ որ մէկալ ցաւդ ոտք չի հանեն :

Հպարտութե ախար թէմէլ ձգեր է սիրելի՛ սրտիդ մէջ , որով էն առաջ քեզ ուրիշներէն աղէկ ու արդար սեպելով՝ ուրիշի պակսութե էտեէ կիսկնաս . նոյն հպարտութե յանդուդն դատաստան կը կտրես ամմէնուն վն . զերէ թէ որ առաջուց մտքովդ չի դատելիր զեղբարդնէ , լեզուովդ ալ անոր գլուխը չէիր կտրեր . որ է ասըլ բամբասանքը . (որ շատը խառնելով ասեր

Երկուքս՝ խոստովանանքին մէջ սալթ կըսենն ։  
 Թէ դատեցի . անիսէ բամբասերէն ալ . կի՛սոսկ  
 դատերէն մօքօվնէ , մեղքի տեղ չեն դներ՝ ու  
 զատ չեն խոստովանիր ) : Մոյն հպարտութի՛ւն  
 մյ դատաստանը կըյափշտակես քեզի , իրմէ  
 սուաջ աշխարհիս առանձնական և լէհանրա  
 կան դատաստանը մէկ կընես . ուզածդ մըտ  
 քով կի՛ խօսքով արքայութի՛ կըտանիս , չո՛ւ  
 զածդ դժոխք կըխաւրես , որ է նոր սուտ քօ  
 մը ըլլալ , կի՛ մյ քեահայուի բանեցնել : Մոյն  
 հպարտութի՛ւն բամբասանքը կըբանաս՝ կեօյա  
 քան զիտցօղ մընես . կի՛ ուրիշն որ առաջ բե  
 թէ պօխճան , ու կտոր մը բան ցցնելու ըլլայ  
 նէ , դուն մէկէն բոլոր պօխճան կըբանաս ,  
 բաները կըխառնես , որ քեզ ցցնես աշնայ  
 այն մալին , և աղէկ ճանչցօղ առուտրի բամ  
 բասանքին :

Մախանձն ալ շատ եարարմ՝ կընէ քու հպար  
 տութե՛դ աս բամբասանքի առուտրի մէջ . մէ  
 կին որ մենձուիք , առաջանալի , աղէկ անուն  
 ունենալը , և ինչ և իցէ աղէկութին որ չես  
 կըցեր քաշել , անոր վրայ խօսք մը բացուածին  
 պէս , կը մռմռաս կատուի պէս՝ ու կըրնասնէ՝  
 ճանկ ալ կըձգես . գէշ խօսին նէ ան մարդուն  
 վրայ , դուն աւելի կըհաստատես . աղէկ խօսին  
 նէ , ամմա մը վրայ կըբերես . աղէկը կըգէշը  
 նես կըլմնցնես : Հապա բարկուի մը նալ ու  
 նենաս առելութենով , գետնէ՛ ի գետին կը  
 զարնես հերարէթով . խեղճին տուննալ կէ  
 րես՝ զինքն ալ կէրես . էարա՞ֆին ձեռքն ալ  
 մէյմէկ մաշալայ կուտաս որ՝ բոլորովին էրեն  
 մոխիր դարձընեն . անունը մէկ ըսակի կըլլայ ,  
 ի՛նչ թիպարէն կինկնայ , ինչ զեն ըսես՝ կըրնայ  
 ըլլալ :

ժողովրդի մասնաճիւղերը կը զուրցնէմ կը սեւեւ , նիւթաբամբասանք ընելէ : անոր համար՝ գիտեմ որ շատ անգամ խոստովանանքի մէջ ալ չես յիշեր . ինչու որ միտքդ դրնր ես՝ թէ աւելի բան մը չես խօսած . եղածը պատմեր ես . ան ալ գիտցողներուն առջևը ըսի՝ նոր բամբասանք չըրի ես , կըսես :

Աճ շնորհք տայ քեզի , ան խելք ու միտք տայ՝ որ հասկընաս ըսելիքս : Ո՛վ խելացի , թէ որ քու ըսած խօսքդ ուրիշի պակսունք վրայ՝ իրաւ չըլար , սուտ ըլար , կամ եղածէն էւել բան ըսելիք նէ , ատիկայ բամբասանք չէ , տահա ուրիշ ծանր մեղք է . քի զրպարտութի , կամ իՖտիրայ . որու մէջը կայ նախ ստունք մեղք . ուստի ստասպցներուն տէՖտէրին գլուխը պիտի գրուիս , և անոնց էն ծանր պատիժը պիտի քաշես : Երկդ՝ սուտ վկայունք մեղքը կայ . ասոր պատիժնալ գիտես թէ ի՞նչ է Ծքիս վր . բայց դժոխքին մէջ շատ ծանր խազէպ կայ՝ որ խապար չես : Երկդ՝ ատելունք և չարունք մեղք կայ՝ բուն եղբայրսիրութե՛ն դէմ . որու պատիժը ամմէնէն վեր է : Եւ չի՞ր բամբասանքը իր կատարեալ աստիճանովը կը բովանդակի զըրպարտութե՛ն մէջ : Բայց իմ խօսքս հիմա սոսկ բամբասանքի վրայ է :

Սոսկ բամբասանք ըսածս՝ այն տնաւեր մեղքն է , որ մէկին իրաւցընէ ունեցած պակսունքը կը խօսիս իրաւ , բայց խօսելովդ անիրաւունք կը ըլլայ . անիրաւութի չըլար նէ՛ քի զրկանք մը հողւոյ կիմ մարմնոյ , մեղք չէր ըլլար :

Զոր օրինակ , քու ըստկովդ հաց ուտես նէ , մեղք չէ հախ է . ուրիշին հախը քեզի անցնելով՝ անոր ըստկին հացը ուտեսնէ , հարամ է . ասանկ ալ՝ քու մարդուդ կիմ քեզի ընկած ան  
ձին

ձին պակսութիւն խօսիս , որ ճամբայ կարենաս  
 բերել՝ եւս դուն , եւս լսողը , ասիկա բամբա-  
 սանք է , պարաք է , եղբայրսիրուի է : Հապա  
 թէ ան մարդուն պակսութիւն վրայ խօսիս որ՝  
 քեզ չենկնար , անոր ալ օգուտ մը ընելիք չու-  
 նիս . կի՞ անանկ մարդու կը պատմես որ անոր  
 ալ չենկնար , հէմ ափէն բան մը չիգար , ան  
 ատեն բամբասանք է ստուգապէս . ինչու որ  
 զուր տեղը ուրիշի պակսութիւն խօսիլ եղաւ ,  
 ուրիշի անունն որ դրսէն աղէկ էր նէ՛ աւրե-  
 ցաւ կոտորեցաւ , սիրելին ատելի եղաւ . մենծ  
 զրկանք և անիրաւութիւն եղաւ , օգուտ մը չե-  
 դաւ . քեզնէ լսողն ալ կերթայ ուրիշի կը խօսի-  
 ւաւ ասանկ պզտիկ կայ՛ մը քանի կերթայ՝ օւ-  
 մանները կերէ : Թող որ մէջը կրմոնայ ամիէն  
 բամբասանքի ատեն՝ պզտիկ պակսութիւն մենծ-  
 ցնել , շիտակը ծուռ դատել , տարակուսական  
 բանը ստուգի տեղ խօսիլ : Եւն . մէկ խօսքով՝  
 բամբասանքով կըսկըսիս , զրպարտութենով  
 կըմնցնես :

Ըստ անգամ ալ մէկի մը պակսութիւնը ափ առ-  
 նելով՝ էտեէն ձեռք կերկնցնես , կի՞ պատճառ  
 կըլլայ որ՝ ուրիշները լեզունին երկնցունեն՝  
 նոյն անձին էտրաֆին վրայ . որով կըլլայ ան-  
 տանելի բամբասանք և սուտ զրպարտութիւն  
 ՚ի վերայ բոլոր տան , հասարակուէ , միաբա-  
 նութիւն , եղբայրութիւն , կարգի քահանայուէ ,  
 ազգաց և թագաւորաց միանգամայն . ուրի-  
 շի վրայ փորձը դիտես , քու վրադ չի տես-  
 նաս :

Մասնաւոր բամբասանքալ կայ՝ որ լեհանրա-  
 կան չարիքներ կը ծնանի շատ կերպով . օրինակ  
 ըլլայ մասնաւոր բամբասանք նշանած մանչու  
 կի՞ աղջկան վր ( որ աւելի չար է : Բայց դրեթէ  
 սո՛

տովորական) : Նշանուճելէն առաջ հարցուն  
 նէս նէ , աղէկ կրկօսին մենժ մասը կմ ամօնն  
 քք . նշան տուճած օրէն կրակըսին լեզունին փո  
 խել զժոխքի լեզու մը կրհնարեն . որով շինա  
 ծը կաւրեն , և պատճառ կըլլան՝ որ շատ ան  
 դամ առանց բաւական պատճառի կըքակուճի  
 կէս պսակ սեպուճած բանք , քն նշանը . հետն  
 ալ եղբայրսիրուէ և բարեկամուէ կապը կար  
 ձրկուճի , երկու դիանց անհաշտ թշնամուճի  
 կըմտնայ . տներ պիլէ կաւրին . թող որ երկու  
 անձին տունը աւրեցաւ դնաց . այ տուճած խըս  
 մէթը փոխուճեցաւ , որ ոչ լինի հասարակօրէն  
 լաւագոյն , այլ չարագոյն . և այսմ ամի պար  
 տական է այ առջև չարալեզու բամբասօղը :  
 Ասչափէն կրհասկըցուճի և այլ ամենայն չա  
 րիք բամբասանքին :

Ասոր դեղը բնական և դրական օրէնքին ու  
 չէթան է . դուն չես ուզեր բամբասուճիլ ու  
 րիշմէն , ուրիշն ալ դուն պիտի չուզես բամբա  
 սել . \* Զամենայն՝ որ միանգամ կամիջիք՝ թէ  
 արասցեն ձեզ մարդիկ , այնպէս և դուք ա  
 րարէք նոցա . ( և անդրադարձեալ ) . զի այն  
 իսկ են օրէնքն և մարգարէք ॥ . Եսփ . է .





Գ Լ Ը:

Ախար ծուլութիւնք . և զէշնորս Գոյն , հոյս ետանդն  
հոգոյ :

Մ . ( ) Գոյն ( որ է թէ մաէլ ) , Երայն ( որ է ծանտը  
շարժօղը , ) և Բոյն ( որ է կէվշէկը , ) իրեքն ալ  
անդամալուծու թեան , յօդուճածացուի , և ի  
ջուճածքի , քի քէօթրիւմի , մէճայի , ու էնմէյի  
նման բաներ են . իրեքն ալ մէկ զմէկէ ցաւալի  
ցաւադարուի . իրեքին մէկն ալ ունենաա՝ գէշ .  
երկուքը ունեցօղը տաճա գէշ . իրեքն ալ ու  
նեցօղը՝ գէշին գէշ : Աս ցաւս ունեցօղները հո  
գևորապէս՝ իրենք ալ մերաքլը կըլլան , իրենց  
ծառայօղներն ալ մերաքլը կընեն . գեղ մը տա  
լու ըլլաա , չեն ուղեր առնել՝ իւշէնմիշ ըլլա  
լով յուսաճատ կերպով . մեր քանը բուսեր է  
կըսեն , աման փուճ տեղը գեղով մեզ մի չար  
չըրկէք . թող տուէք , ասանկ ապրինք՝ ասանկ  
մեռնինք կըսեն : Քիչ մը իրենց դպչիլ ուզե  
նաա՝ որ շարժին , ու անդամին կարենայ խու  
ղէթ առնել , տէօշէկին մէջ չիփտօրին տէյի ,  
աման աման կըկանչեն . մեր ցաւը մեզի հերիք  
է՝ կըսեն , քանի որ մեզ շարժելու ըլլաք նէ՝  
սրզընիղ թէփէնիս կելլայ :

Եա ասանկ թող տանք երթամք մի . չէ . հե  
ճանդը իրեն աղէկը գէշը չիճանչնար . թող  
ճաճաայ , թող մամաայ , ինչ կուզէ նէ ըսէ ,  
մենք մեր պարտքը պիտի ընենք . անվճայ տուճած  
գեղը տանք նէ՝ յորդորելով՝ սիրտ տալով չե  
լսե .

խելով վախցնելով, կողջնայ. ետքը մեզնէ ալ  
շնորհակալ կրլայ: Ասանկ է նէ, առաջ ծու-  
լու թեան մարազը հասկըցընենք, ետքը դեղը  
ճարենք:

Թ. Տուլուիը՝ հոգևոր անդամալուծուի մընէ,  
որ կը պատճառի թուլուէ կի թուլամորթուէ  
իջուածքէն; և յուլուէ մէճայէն. և անանկ  
քեօթրիւմ կընէ զմարդը՝ որ բոլորովին կը-  
թուլնայ սիրտը: Իւշէնմիշ կրլայ ձեռքը ոտքը  
շարժելու բանի մը, և անհոգ կը կենայ կա-  
տարելու իրեն պէտք եղած ու պարտք եղած  
գործքը՝ մանաւանդ հոգևորին կողմանէ: Եւ  
որովհետև սատանան բան գործ չունի՝ մարդը  
մեղք ձգելէն՝ ի զատ, ասանկ անգործ և պա-  
րապ մարդ կը փնտռէ՝ որ հետը էյլէնմիշ կրլայ,  
ու անոր բան գործ բանայ ի կորուստ հոգ-  
ւոյն: Աստի ծոյլը կրլայ խաղկըլիք մը սա-  
տանայի, որ խաղցընէ զինքը ամմէն կերպով,  
ու մեղքէ ի մեղք գլորտը կէ. ասոր համար ծոյ-  
լը կը սու՛նի նաև փետրալից բարձ սատանայի  
(ի՛նչ խուշ թիւլիւյէ եաստըխ մը); որու վրայ  
եան կուգայ, ու սանքի կը հանգչի անզղամ  
դէր, որ չի հանգչեցնէ զծոյլ մարդը. չի թո-  
ղուր բարի գործ մը ընել, կը դրդէ ամմէն չար  
գործքը կատարել:

Գլխաւոր գործ ծուլուէ է տրամուի՝ առջևը  
եղած աշխատանքի մը վրայ, և ուրախութիւն  
ան աշխատանքը չըրած խալըսելուն վրայ. դա-  
տարկութի, որ պօշ պարապ նստի կամ ժուռ  
գայ. ժամալաճառուի, ի՛նչ ավարայուի. դա-  
տարկապորտութի, ի՛նչ հովարտայութի. դա-  
տարկաբանութի, ի՛նչ փճախօսութի. հետն ալ  
բամբասանք, դատողութի. պաղութի ի հո-  
գևորս, և ի մարմնաւոր պիտանի գործս. զը-  
ղունումս

կոճումն յառաքինութիւն . ատելութիւն անձային  
 իրաց . յուսահատութիւն . մարմնապաշտութիւն .  
 քնասիրուի . զեղխուի . արբեցուի . որկրամու-  
 լուի . խեղկատակուի . ցոփաբանուի . անմտա-  
 ծութի . չարահասարկութիւն . գողուի ( որ հազար  
 բանով ապրի առանց աշխատելու ) . անհնա-  
 զանդութիւն ( որ չըլլայ թէ զինքը աշխատանքի  
 դնեն ) . անհամբերութիւն , և դժգոհուի ( թէ  
 ինչո՞ւ իրեն խղճէ թ մը կը դնեն ) . և այլ ամ  
 չարիք՝ որ ասոնցմէ կելլան :

Գ . Օրինակով , ծոյլը՝ անշարժ և հոտած ու  
 մեռած ջուր կըլմանի . որ մէջը ամակն ճճի և  
 ճանաւար կը դոյնայ . բանի եկող բան մը ու-  
 տելու խոտ մը պիլէ , չէ թէ կենդանի , չի գրտ-  
 նոճիր , միայն խառնես նէ , հոտ հանել զի-  
 տէ :

Պաղ կենդանիներուն մէջ՝ կրիայի ( ցիխաբլուն ,  
 պաղիի կի՛ թօսպաղիի ) նման է . որ գլուխը քա-  
 շած՝ ձեռքը ոտքը կ՛ծկտած կը կենայ իր տնա-  
 կին մէջ : քալելու ըլլայ նէ , տեղաց շարժիլը  
 տեսնաս՝ մարդուն սիրտը կընեղանայ , այնչափ  
 ծանտը խըմըլտանմիշ կըլլայ՝ որ վրան չես կըր-  
 նար նայիլ , կառնես կը քալես : Թէ մպէլ մար-  
 դը խղճէ թ մը խաւրելու ըլլաս նէ , կրիային  
 քալուածքը անձդ պիտի առնես : Կրիան կըռ-  
 նրկի վի պառկի նէ , վայն՝ ի վրան կուգայ ին-  
 քիր զինքը շտկելու . շատն ալ անանկ կըմնայ ,  
 ինչո՞ւն մէկը գայ խեր ընէ ու զինքը դարձը-  
 նէ . թէ մպէլն ալ ասանկ չէ՞ մի . պառկինէ , ել-  
 լալիք չունի . դուն գլխուն վրայ կայնիս պի-  
 տոր՝ որ հէմ ձայն տաս , հէմ ոտք հանես :  
 Ո՛չ պառկած ատենը աղօթք գիտէ , ո՛չ ելած  
 ատեն . ինչո՞ւն որ երեսը խաչ մը հանել տաս  
 նէ , քեզ խաչ կը հանէ : ( Մեր ծերերուն ա-

ապիւր մեր օրերը ստամպօլ կրքանեցնեն կոր օ  
 ոչ եկեսցէ ոչ մեկեօցէ, այլ պառկեսցի շնորհ  
 կեսցի, մինչև արևն ծագեսցի: ) Տանր է քար,  
 և դժուարաբառնալի՝ աւաղ, կրսէ իմաստու  
 նը: Բայց կարծեմ թէ թէմպէլներուն ծան  
 րութիւն անոնցմէ պակաս չէ. որ ոչ իրենք ղի  
 բենք կրրնան տանել. և ոչ ուրիշը ղիրենք կրք  
 նայ քաշել: Եւս առաւել ւիժ բնաւ չի կրրնար  
 համբերել. որովհետև անգործութիւն ծայրէ  
 'ի ծայր դէմ է իր ամենաբարի բնութիւնը, որ  
 անաբանից ըսածին պէս՝ գերամաքուր ներ  
 գործութի ըլլալով՝ միշտ է գործունեայ ան  
 ճառելի գործողութի քա 'ի ներքս, և սքան  
 չելի գործողութի նախախնամութի առ ար  
 տաքս. ուստի շաբաթն որ սահմանեց՝ մար  
 դու հանգստեան համար՝ որպէս ղի յիշենք իր  
 հանգչիւր վեցօրուան Յքիս պտեղծագործուէ,  
 չիկարծեն մարդիկ՝ թէ անկից էտև կի՛ առաջ  
 անգործ կեցած է ինքը, ասոր համար ըսաց  
 որդին ւայ. \* հայր իմ մինչև ցայժմ գործէ, և  
 ես գործեմ, նաև 'ի շաբաթու: Գրախտէն  
 էւել հանգիստ տեղ ու հանգչելու տեղ չէր  
 կրրնար ըլլալ մեզի Յքիս վրայ. հոնալ հրա  
 մայեր էր ւիժ աղամայ՝ որ դատարկ չի կենայ,  
 հապա՝ գործէ և պահէ զգրախտը. քի պար  
 տիղպանութի ընէ, ու շէն պահէ ւայ տնկած  
 պախճան ու պօստանը: Ետքը որ մարդը ա  
 նարժան եղաւ հոն կենալու, ու գուրս վառն  
 տեցաւ նէ, պէտք եղաւ որ իր քրտնքովը աշ  
 խատի, ու հացը ճարէ. \* քրտամբ երեսաց  
 քոց կերիցես զհաց քո. ծն. ք. 19: Ուստի  
 առաքեալը կրսէ. \* որ ոչն կամիցի գործել, և  
 կերիցէ մի. ք. Բէս. ք. 10:  
 ք. Ուրեմն դուն ո՛վ ծոյլ՝ որ անգործ կենալ  
 կու

կուզես, աշխատիլ չես ուզեր, անարժան ես  
 ապրելու, ու ապրելիք դռնալու: Երկինք և  
 երկիր քեզի համար կաշխատին կոր դիշեր ցո-  
 րեկ. որ անոնք դադրէին նէ, դուն մէկ թա-  
 քիքէ ապրելիք չունէիր. արեգակը՝ լուսինը և  
 այլ աստեղք քեզ աշխատելու և հանդէսելու  
 ատեն կըցցնեն ըն հրամանին այ. \* որ արարեր  
 զտիւ՛ գործոյ, և զգիշեր՝ ի հանդիստ քնոյ ॥ .  
 Բոլոր Ֆքիս բարիքը կըհասցնեն ամմէն եղա-  
 նակին կեօրէ: Իմ կենդանիք և բոյսք քեզ կե-  
 րակուր կըսպառաստեն զիրենք: Քեզի նման  
 մարդիկ, և քեզնէ էւել քիպարներ՝ թագաւո-  
 րէն սկսած՝ անդադար կաշխատին կըմտմտան,  
 Ֆքիս բարիքը կըհոգան կըճարեն կըդիզեն,  
 որ դուն ալ մէկ տեղ աշխատիս մէկ բանի մը՝  
 ու իրենց հետ վայլես ամմէն բարիքը: Այս-  
 չափ վաճառականք, արհեստաւորք, գործա-  
 ւորք, այգեգործք, հողագործք, ձկնորսք,  
 մէյմէկ բանի ետևէ են՝ որ հէմ իրենք վաստը-  
 կին, հէմ մարդիկ իրենց պիտոյքը դռնան. ի-  
 բարու պէտք եղած բանը չիճարեն նէ, իրենք  
 ալ իրենց պէտք եղած բանը չեն գտնար. ու-  
 րիշը հոգալով՝ զիրենք կըհոգան. որով Ֆքս  
 ալ շէն կըմնայ: դու ի՛նչ բանի եարար ես ո՛վ  
 ծոյլ, երբոր ո՛չ քեզի և ո՛չ ուրիշի եարամիշ կըլ-  
 լաս. եարամազ ես նէ, քեզ բանտը դնեն՝ խալը-  
 սին. հոն ալ հաց կուզես. չի տան նէ, հախ է.

անօթի ծարաւ մեռնիս, մուստահախ է:

Այսչափ մենծ մենծ օրինակներէն ու վկանե-  
 րէն չես առնէր նէ, պարէ էն պղտիկ կենդա-  
 նիններէն մենծ օրինակ առ. մի՛ ծուլանար. գնա՛  
 կարգա՛ սողոմոնին խրատը. \* Երթ առ մըջիւնն  
 ո՛վ վատ (կըսէ). Երթ առ մեղուն, և օւսիք  
 զգործս նր ॥ . ևն:

Է. Ըսածներէս կը հասկընաս որ ամօթ բան է  
 ծուլութիւնը . անունը պիլէ չեքաշուհիր, հիջ մէ-  
 կը չուզեր վրան առնել . մէկին թէմպէլ ըսուի-  
 նէ, հերիք վատանունութի է . անոր խօյին է  
 հովարտան, դատարկաշրջիկը, իրմէն ձանձրը-  
 ցած ցածը . գրոց լեզու աւալ լա կըսենք թէմ-  
 պէին, որ գէշ անուն է : Եթէ որ պղտիկ բա-  
 նի մէջ վատ ըլլալը գէշ է, հապա մեծ բանի  
 մէջ որչափ վատ թար է : Եւ քանզի հոգի ա-  
 ուաւել է քան զմարմին, և հոգևորն քան ըզ-  
 մարմնաւորն, հոգևոր թէմպէլուէն վատ թար  
 բան չի կրնար ըլլալ . ատելի և դարշելի է յաչս  
 անձ թող թէ մարդկան . ուստի անիծից տակը  
 կը ձգէ երեմիա մարգարէն զհոգևոր ծոյլը .  
 \* Անիծեալ լիցի՝ որ գործիցէ զգործ մն հեղ-  
 դութիւն ॥ . երեմ . խԸ . 10 : հապա հիջ չի գոր-  
 ծօղը :

Չն՞ս վախնար որ աս անէծքին տակը չիյնաս՝  
 դուն որ հոգևոր խայրէթ չունիս, հոգևորիդ  
 պաղ ես . աղօթք ընելը քեզ բեռ կը համարիս,  
 աղօթքէն խալըսիլը՝ մեծ բեռ մը վրայէդ ձգած  
 կըսեպես . ժամ երթալու իւշէնմիշ կը լլաս,  
 պատարագ մը ամբողջ տեսնաս նէ կիրակի օրը՝  
 պարտքէս խալըսեցայ կըսես . ուրիշ օր պատա-  
 րագ տեսնալու պարտք չունիմ կըսես . առա-  
 քինուի վաստը կելու հոգ չես տանիր . հոգևոր  
 կերակրէն անօթի կըմնաս՝ քի՛ս սք հաղորդու-  
 թէ . կենդանի ջուրը խմելէն ետ կը կենաս՝ քի՛  
 ի լսելոյ զբանն ան կի՛մ զբարոյ : Ետքը կելլաս  
 կըզանկըտիս, թէ արքայուն ճամբան դժար  
 է . քիջ մը հոգիդ զօրացնէիր նէ հոգևոր բա-  
 ներով, ուժ կառնէիր, առաջ կերթայիր . շը-  
 նորհքները բանեցնելով՝ աւելի շնորհք կառ-  
 նէիր . և այնչափ կզօրանայիր՝ որ լեռները աշ-  
 միշ

միշ կը լայիր • խալէները՝ հիսարները կանց-  
նէիր • \* ամ իմով անցից ընդ պարիսպս ॥ • սաշ •  
Ժէ • 30 :

Դ • Չէս նայիր՝ ան կարիճ ծառայքը ի՞նչ աշ-  
խատանք քաշեցին արքայուէ համար • ընտոր  
կրցան ընելու՝ քեզի անկարելի երևցած բա-  
ները • \* յամի կարող եմ՝ այնու , որ զօրացոյցն  
զիս ॥ • Գիլ • Դ • 13 : Առաքեալները նայէ , մար-  
տիրոսները նայէ , հայրապետները , վարդա-  
պետները , ճգնաւորները , կուսանքները , հին  
և նոր օրէնքին ամ սքերը • ինչո՞ւն մանտր  
տղաք՝ մանչ ըլլայ աղջիկ ըլլայ՝ ինչէ՞ր ըրին  
ինչէ՞ր չըրին ան ծառայուէը համար :

Մէյմալ քու անոր նայէ • պարէ անոր նայէ  
կըսեմ , որ բոլոր կեանքը աշխատանքով ու  
չարքաշուծենով անցուց քեզի համար , քըր-  
տինք թափեց քեզի համար , և խաչին վր բոլոր  
արոււնը թափեաց՝ կենէ քեզի համար • դուն  
անոր սիրուն ի՞նչ ըլլած ունիս : ամօթ է • ա-  
մօթ : Թէ որ աս օրինակներէս ալ չես խախտ  
նէ , ուրեմն ամօթ կըսեպես քնի աշկերտ ըլ-  
լալ • վախցիր որ ինքն ալ քեզ ամօթ չընէ բո-  
լոր Տքիս առջև • \* զի որ ամօթ համարեսցի  
զիս և զքանս իմ , զնա և որդի մարդոյ յամօթ  
արասցէ , յորժամ դայցէ փառօք իւրովք և  
հօր և հրեշտակաց սքց ॥ • Կէ • Թ • 26 : Հիմա՛  
խըպնէ ըրածէդ ալ , չըրածէդ ալ , որ ետքը  
չըխախտիս :

Է • Ի՞նչ ընեմ՝ կըսես : Ատ ալ ըսելու խօսք է  
մի • մարդ չէս մի , մարդկային գովելի գործք  
ըրէ • մարդու ընկած՝ բանականի վայելուչ բան  
ըրէ : քրիստոնեայ չէս մի , քնի էտեհն զնա ,  
քալէ , մի կայնիր • քն ցորեկը կաշխատէր , գի-  
շերն՝ ի բուն աղօթք կընէր քեզի համար • քե-

զի իղին , ցորեկը մարմնոյդ համար աշխատէ ,  
 առտու իրկուն՝ հոգիդ մի մոռնար , դիշերն ալ  
 հանդիստ պառկէ : Քահանայ ես նէ , \* զպաշ-  
 տանքս կատարեալ կալ . լեր մշակ առանց ա-  
 մօթոյ ॥ , ամ սրբութիւն և առաքինի իմաստութիւն :  
**Աշխարհական ես նէ** , աշխրբիս բան կայ ընե-  
 լու , տուն տեղ հոգալու՝ ինչպէս որ պարտքը  
 ճիտէ առեր ես . ամ ձեռք զարկ քու բանիդ ,  
 ամ առաջ տար . աղայ ես նէ , աղայի գործք  
 ըրէ . խղճեթեար ես նէ , խղճեթէդ ետ մի կե-  
 նար . պաղիբեան ես , քու մասլահատիդ խելք  
 տուր . լաֆ ընելու՝ խաղալու էտուէ մի ինկնար .  
 խանութպան ես . բանուր ես , ըռէնջպէր ես ,  
 բանիդ գործիդ մուխայէթ ելիր . փճախօսու-  
 թեան , ցնդի փնդի խօսակցութե , ուրիշի ը-  
 րածին չըրածին քննողութե , տէվէթին ու-  
 մուրնեբուն , ճքիս կառավարութեան , քե-  
 ղի պէտք չեղած բաներուն ատեն մ'անցներ .  
 և օրէ օր աւելի վարպետ ըլլաս քու բանիդ  
 մէջ . աշկերտ ես նէ , սորվելու բանիդ տուր  
 խելքդ միտքդ . հիմա է ատենը մարդկութիւն  
 սորվելու , կարդալ գրել՝ գիտուի սորվելու ,  
 գէնահատ մարիֆէթ սորվելու . մենծնաս նէ՝  
 կարողուիդ կրպղտինայ . չի սորվածդ չես կր-  
 նար ան ատեն ամբ բերել . կերիս կուլաս՝ փիւշ-  
 ման կըլլաս , եաղըս կըսես , ճահիլուես ատեն  
 աս բաներուն խըյմէթը չգիտցայ . բայց ի՞նչ  
 օգուտ , եղաւ ըլլալիքը . ոմ ըրաւ , դուն քե-  
 ղի ըրիր . քէնտի տիւշէն աղլամաղ՝ կըսես . ամ  
 մա վախեմ որ դուն շատ պիտի լաս :  
**Ը . Տնեցոց ինչ ըսեմ** , թէ որ թէմպէլ գրու-  
 նըւի միջերնին նէ . չե՞ն մի տեսնար կամ չեն  
 լսեր , թէ ի՞նչ կըբաշեն չարշին գացողները ,  
 առվըտանց ինչուկ իրկուն աշխատանք , քըր-  
 տինք ,

տինք , հոգ , որ մէկ քանի բարա վաստըկին ,  
 տունը այ տուած բարին բերեն տէրի . հապա  
 որ իրենք եարաւմ չընեն տունը հոգալու , ա  
 փերնէն եկածը ընելու , պօշ բաներու հետ ըլ  
 լան՝ ասոր անոր տունը քալելու , բամբասանք  
 ընելու , մէկ զմէկ գլխէ հանելու՝ նոր իճատ  
 ներով՝ նոր մասրաՓներով , իրար հետ խօսք  
 խօրաթայ փէյտահ ընեն՝ իրենց գլուխներուն  
 գլխացաւ հասցընելով . հիչ իտարէի չինային ,  
 հիչ Փայտամը չընելէն ետե՝ տայմա դժգոհ  
 ու խըռխըռ ըլլան իրենց էրիկներուն , լեզու  
 նին երկնցնեն , զանոնք մեղք խօթեն , մենծ  
 մենծ բաներ ու մմիշ ընեն իրենց կարողութէն  
 ու չափէն՝ ի վեր , պօշ բաներու համար զա  
 նոնք ծանար իարժի տակ ձգեն , որ անոնք ալ  
 տակէն չրկրնալով ելլալ՝ արդար վաստակը չի  
 նային , անիրաւ վաստըկի էտեւէ ինկնան , ա  
 սոնք ծանր մեղք չե՞ն մի , կերած հացերնին  
 հարամ չե՞ մի :

Ասոր ներհակ , ( ինչպէս որ աս ալ շատ կը  
 գըտնուի , ) կնիկը իշկիւզար , գիշեր ցորեկ աչ  
 քի լոյս թափելով , ձեռքը ոտքը հոգնեցնե  
 լով՝ հէլաք ըլլայ՝ որ տունը պահէ . իսկ թէմ  
 պէլ էրիկը մէխանաները ու խահվէխանէները  
 օրնիբուն պրտըտի , կի՞ տանը մէկ քեօշէն մին  
 տէր չիւրիւթմիշ ընէ , ուտէ խմէ շնդուկի , կըն  
 կանը ձառքը նայի , ուղածն որ չըլլայ նէ՝ ձառք  
 ալ վերցընէ , քիւֆիւր , շամաթայ , կոիւ . ա  
 սոր ի՛նչպէս չի սրդողի ւծ : Ասոնք աչքով  
 կըտեսնանք կոր . ամմա ի՛նչ դեղ պիտի ընենք .  
 շատին շատ ճամբայ բունցինք , չեղաւ . հի  
 բոկրատէսին կանոններն ալ բանեցուցինք . որ  
 կըսէ . \* 'ի յետին հիւանդութիս յետին դար  
 մանք զգուշութի՞ք քաջալաւք ॥ և թէ՛ \* տալի՛

ինչ և սովորութիւն, և ժամանակի, և երկրի,  
 և հասակի ॥ Բայց շահ մը չհոտեսանք. զերէ  
 անբժշկելի անդամալուծութիւն է աս սոյ թէմ  
 պէլութիւնը. դժոխքի քիւթիւկ պէտք է նէ,  
 ասանկները անանկ բանի կուգան, ուրիշ բա  
 նի չենիգար:

Ասոնցմէ վար չեն մնար պազի պաղի աղքատ  
 եօլու մարդիկ, որ կէնճ կարիճ են, աչո՛ւր  
 նին՝ ձառվընին՝ սովընին տեղը, ամմա ծուլու  
 թիւր զիրենք ծերացուցեր է, կուրցեր են հոգ  
 ւով, թուլցած են հոգւով և մարմնով, ճար  
 ճարակ չունինք կրօնն անճրկածները, կը նըս  
 տին կը մուրան: Աճապ է՛նչ պատասխան պի  
 տի տան ան՝ սէֆիլ աղքատներուն հախը ուտել  
 նուն համար. դատաստանին օրը ելլայ խեղճ  
 կոյրը, կաղը, կամ ուրիշ կերպ սախատը ու  
 հի՛ւանդը՝ ըսէ, թէ էֆէնտիմ իմ հախս կերան  
 աս առողջ մարդիկը՝ որ ինձի գալու ողորմու  
 թիւր ասոնք կը յափշտակելին ծուլութենով ու  
 կեղծաւորութենով: Ան ատեն ինչ կըրնայ ը  
 սել անիրաւ մուրացկանը. կը պապանձի, ու  
 ձառքը ոտքը կապուած՝ ի խաւարն արտաքին  
 կը խրկուի: Թէ որ չուղեր աս խաղէպիս հան,  
 դիպիլ նէ, թո՛ղ հիմակուրնէ ձեռքը ոտքը ար  
 ձըկէ, բանի գործի էտէէ ըլլայ՝ որ իր քրտըն.  
 քովը հաց ուտէ. խզմէթ չիկայ՝ չըսուիլը, ու  
 զօղը կը գտնայ. միայն թէ քիչ մը աշխատանք  
 յանձն առնէ, քիչ մը դժարութիւն նեղութիւն  
 քաշել ուղինայ. իր քէֆը՝ իր կամքը՝ իր խուլը  
 մէկ դի դնէ. ասանկ որ ընէ նէ, անձ անոր խըղ  
 մէթը ու խըսմէթը միատեղ կուտայ. որ մար  
 դը տեսեր ես՝ որ մէկին քովը սրտանց աշխա  
 տի, ու անօթի մնայ. և՛ ս առաւել անձ իր ծա  
 րայքը անօթի չի թողուր:

Աս ըսածներս որ հախ կըճանջնան ամմէնքը .  
 Թող ամմէնքն ալ իրենց վր զարձընեն հոգևոր  
 մտքով , ու իրենց հոգևոր թէմպէլուէն խրպ-  
 նին . Թէ որ մարմնաւոր ծուլութիւր այսչափ  
 դարշելի և անտանելի է նէ , քանի՞ աւելի հո-  
 գևորը : Ամմէնուն աչքին առջևը դնեմ ամմէ-  
 նուն ըրածը , ( էն առաջ իմ ըրածս ) որ ամ-  
 մէն մարդ իր վր զատաստան կտրէ :

Թ . Քեզ ասեմ ո՛վ պատուական քահանայ անյ ,  
 որ անվ բարի անուն ունիս , և շատ արդիւնք  
 ալ ունիս ժողովրդեան մէջ . ծուլութիւն ի՞նչ ը-  
 սել է՝ չես գիտեր , ատեն ալ չունիս ծուլա-  
 նալու . խոստովանանքի , հիւանդի , և ամմէն  
 թիւրլիւ հոգևոր խրդմէթի էտէ էս խայրէ-  
 թով , ամմա չեմ գիտեր՝ բու հոգւոյդ խայ-  
 րէթն ալ կըքշես , Թէ չէ : Չըլլայ թէ առաքե-  
 լոյն յանդիմանութիւր քեզի ալ յարմար դայ .

\* Ար ուսուցանես զընկերն . զանձն քո ոչ ու-  
 սուցանես . որ խրատես զայլս՝ ( պահել զպա-  
 տուհիրանս ) , զանձն քո ոչ խրատես . որ գար-  
 շիս ՚ի մեհենաց , զսեղանս կողոպտես ॥ . Լէն :  
 Դուն կարդացող ես , ասչափով շատ բան կը-  
 հասկընաս , աս ալ շատ է քեզի . հերիք է որ  
 յիշես միշտ քնի մն քո ըսածը . \* Չի՞նչ օգտի-  
 ցի մարդ , թէ զ՞ս ամ շահեսցի , և զանձն իւր  
 տուժեսցէ ॥ . Եսաբ . ԺԳ . 26 : Կրթութիւն մը  
 մտնաս , աղէկ կընես , որ աս բանս աղէկ հաս-  
 կընաս : Հապա թէ անանկ քահանայ ալ գրու-  
 նուի , որ իր դրսի խղմէթին ալ անհոգ ըլլայ՝  
 որ է փրկութի հոգւոց , անոր ի՞նչ ըսեմ . ա-  
 ռաջնորդին ատեանը անիկակ ճամբան կըբե-  
 րէ . նա՞ֆիլէ էս անոր էտէ է չինկնամ , դուք  
 ալ մի ինկնաք ժողովուրդք . Թէ որ առաջ-  
 նորդը չի կտրենայ շտկել նէ , դուք ծռելէն

անդին բան չէք կրնար ընել . անոր աղէկը դուք  
 ձեզ շտկելը նայեցէք , ուրիշի մի նայիք , և՛ս  
 տուաւել քահանայից մի խառնըվիք . քսի հրա-  
 մանն ալ աս չէ՞ մի : \* Յաթոռն մովսէսի նըս-  
 տան դպիրքն և փարիսեցիք . զամ ինչ՞ զոր ա-  
 սիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք . բայց ըստ  
 դործոցն նոցա մի առնէք ॥ . Տափ . իգ . 2 : Ու-  
 րեմն ձեզի դանք , տեսնանք՝ թէ դուք ի՞նչ պի-  
 տի ընէք :

Ժ . Քեզի կրսեմ ո՞վ ազնուական իշխան՝ կամ  
 անու՛անի պարզիկեան , և ամ վերի թախըմ  
 ( էլա՛ հիսապը ) , որ այսչափ մասլահատի ար-  
 ես . մենծերու հետ կրտեսնու՛իս , մենծ մեծ  
 քաներ կրտեսնաս , դժար բաներու մէջ կրմտ-  
 նաս կելլաս . շատ վաստակ կրնես , շատ ալ  
 զէն կրքաշես . աշխատանքդ մենծ , ումուրդ  
 մենծ . ամ կարողու թի տայ քեզի . ինչպէս որ  
 տու՛եր է ալ , որ կրնաս կոր աշխատիլ . ամմա  
 ի՞նչ ընեմ որ՝ կեանքդ կրիճացնես կոր նաֆի-  
 լէ բաներու , անցաւոր բաներու , ապրանքի  
 ու ապրուստի խաթեր համար՝ շատ չես ա-  
 պրիր , էօմրդ կրհատցունես . քիչ մալ քեզի՛  
 եկուր . քանի՞ մէկ մարմինդ հողաս , հողուդ  
 անհող ըլլաս . քանի՞ մէկ էտէ ինկնաս այն  
 բանին՝ որ հոս պիտի թողուս , ու չիմտուես  
 զայն բանը՝ որ հետդ անդին պիտի տանիս ,  
 ես ալէկ՝ ես դէշ : Բիճալի հետ տեսնու՛իլը  
 քեզի փառք կրսեպես . ան հետ տեսնու՛իլ ա-  
 ղօթքի ու պատարադի մէջ անկից աւելի չէ՞ մի .  
 Եօխսա անկից շատ աւելի շահով չէ՞ մի : Աի  
 քեար կրվնտուես՝ ճէվահիր , մարգրիտ , և ու-  
 րիշ ըռզակ . ինչո՞ւ չես նախանձիր այն վաճա-  
 ռականին՝ որ ինչ որ ունէր չունէր ծախեց , ու  
 մէկ պատուական անդին մարգրիտ մը գնեց ,

որ է արքայութիւն: Ինչո՞ւ չես նմանիր այն խելացի մարդուն, որ խաղնա մը գտաւ նէ մէկ չիֆտլիկի մէջ, չիֆտլիկը ծախու առաւ՝ որ խաղնային տիրը ըլլայ. քի ինչո՞ւ սք եկեղեցնայ խորհուրդները քեզ չես մօտեցներ, որ անոնց մով կըլլաս տիր արքայութիւն: Ինչո՞ւ ըստակ եւեցնելու հազար ճամբան կըմտմտաս. էւել լորդ ստակդ ալ պօշ չես թողուր, ուրիշի բանեցնել կուտաս. ու այ տուած խելքը և շունորհքը ոչ դուն կրբանեցնես՝ որ էւելնայ, և ոչ ուրիշներուն կըմասնակցես, որ անոնց ալ քեզ ալ շահ ըլլայ. հապա քանքարաթաքոյց ծառայի պէս կըթաղես այ տուած քանքարը, որ ծուլութիւն անհող կեանք անցնես. խապար չես որ օր կուգայ՝ մալին տիրը տծ քեզ առջևը կըկանչէ. ի՞նչ շահեցար՝ ի՞նչ չիշահեցար, կըհարցընէ. անպատասխան մնաս նէ, դժոխքին բանտը ա՛յքդ առ:

Ինչո՞ւ հիմակուրնէ քեզ բարեկամ ու ճանչուոր չես վաստրկիր արքայութիւն մէջ, որ աս Ծքէս քեզ վռնտեննէ մեռնելուդ օրը, արքայութիւն մէջ քեզ տուն տեղ տուօղ ըլլայ. քի ինչո՞ւ սքերը քեզ բարեխօս չես ըներ, ինչո՞ւ աղքատները չես մեծարեր, և անոնց ձառքով արքայութիւնը ձառք չես ձգեր: Ինչո՞ւ աշխրբիս բեռը վրադ առեր՝ տակը կըճզմվես. ինչո՞ւ Ծքիս փշերուն մէջ կըխողդուիս, ու կըխեղդես այ ցանած բարի խրատները. տահա աղէկ չէ՞ որ քիչ բեռով հանդիստ քալես, առանց փուշի՝ բարիք քողես: Հապա դուն ալ միշտ յիշէ քսի ըսածը. \* Չինչ օգուտ է մարդոյ, եթէ զ՞ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ ॥:

ԺԹ . Քեզի կրսեմ խանութպան և բանւոր ,  
 և ամ միջակ թախրմ ( էվսաա հիսապր ) , որ  
 արև չի ցաթած չարշին կերթաս , արևը մարը  
 մտած՝ տունդ կրդառնաս . բոլոր օրը կաշխա-  
 տիս ձառքով ոտքով՝ լեզունով . աչքի լուս կը-  
 թափես բան բանելու . գլուխ կը ճաթեցնես  
 առուարի համար , որ տուն տեղ պահես , պա-  
 տառ մը հաց ուտես՝ ու կերցնես . հապա ամ  
 որ քեզ հարցընէ , թէ Ծքի համար որ ասչափ  
 նեղուի քաշեցիր , ինձի համար ի՞նչ ըրիր . ի՞նչ  
 պիտի ըսես . մարմնաւոր կենաց համար ասչափ  
 յոգնեցար , հոգւոյդ համար հոգ մը ունեցա՞ր ,  
 ըսէնէ , կրնա՞ մի ըսել , տէր հոգիս հոգալու  
 ատեն չունէի . ինչպէս հովարտա տղաք որ սօ-  
 խախը բոլոր օրը խաղան՝ վարպետ չերթան ,  
 կրնան մի ըսել թէ ատեն չունէինք կարդա-  
 լու կի՞ բանելու . անոնց խաղալէն պէթէր է  
 Ծքիս ամիէն բանը դործը՝ ան ծառայուէ առ-  
 ջւը . առաջ ասոր մուխայէթ ըլլասնէ , մէկալն  
 ալ ամ կը յաջողէ . քիչ աշխատանքով մենձ պէ-  
 ղէքէթ կունենաս . \* խնդրեցէք նախ զարքայ-  
 ութիւն ան և զարդարութի նորա . և այդ ա-  
 մենայն յաւելցի՛ ձեզ ॥ . Ժաբ . Դ . 34 :

Քիչ մընալ ան հետ առուտուր պաշլայէ , տես  
 ի՞նչ կը վաստըկիս . քիչ մընալ ան բանը բանէ՛ ,  
 տես ի՞նչ վարձք կառնես : Հայվան չես , սալթ  
 աս Ծքիս համար ստեղծած չես . բանական  
 ես , քիչ մալ խելք բանեցուր . քրիստոնեայ ես ,  
 քիչ մալ քրիստոնէուէ գործք ցցուր . չէ նէ ,  
 ետքը դէշին դէշն է . աչքդ բաց , և աղէկ հաս-  
 կըցիր դուն ալ քնի ըսածը . \* Չի՞նչ օգուտ է  
 մարդոյ ॥ . ևն :

ԺՐ . Քեզի կրսեմ՝ մշակ , ծառայ , խայրխճի ,  
 պալլխճի , ըռէնջպէր , աղքատ , տնանկ , մու-  
 րաց .

բայկան, և իմ վարի թախըմ (էթնա հիսա  
 ւը) . դուն որ հողի վրայ, ջրի վրայ, ուրիշի  
 դուռը, ուրիշի խզմէթին. ինքեր գլխուդ կամ  
 քու շահուդ, քունդ կըկտրես, հանգիստ չու  
 նիս, գիշեր ցորեկ կըչարչկու՛նիս մէկ ապրուս  
 տի համար, ան ալ կըգտնաս՝ չես գտնար, նա  
 չար կապրիս, կեանքս կեանք չէ կըսես . կը  
 խղճամ քու վրադ . ձառքէս գարնէ, քեզ առ  
 նեղուէն կըխալըսէի . վէ լաքին ատիկա աիրս  
 չէ . ափըս ուրիշ բան կայ՝ առաքելական և  
 իծային խաղնայ . \* արծաթ և ոսկի ոչ ունիմ,  
 բայց զոր ունիմս՝ դայս տայ քեզ ॥ . Գործ . դ . 6 :  
 Ո՛ր բանը՝ ըսես նէ . գիտցիր որ \* ո՛չ հացի՛ն  
 միայն կեցցէ մարդ, այլ՝ իմ բանի՛ն, որ ելա  
 նէ՝ ի բերանոյ իյ ॥ . Ժառ . դ . 4 : Եկու՛ր իյ  
 խօսքը մտիկ ըրէ . քիչ մը մարմնաւոր աշխա  
 տանքդ պակսեցու՛ր, անոր տեղը քիչ մը հոգ  
 և որ աշխատուի էւելցու՛ր . աշխատանքը փո  
 խեղն ալ մէկ մխիթարանք մընէ . և իրաւ որ  
 կըմխիթարուիս հոգւով և մարմնով :

Օրը՝ տաս տասու՛ներկու սահաթ կաշխատիս  
 նէ մարմնով, մէկ սահաթ մալ իյ բաժին հա  
 նէ . ասոր կէս սահաթը ժամը աղօթքի ան  
 ցու՛ր, ուսաթցիր աղէկ մը, Յքիսամմէն տէր  
 տը մոռցիր, իյ առջև բաց սիրտդ՝ որ ամմէն  
 տէրտիդ տէրման ըլլայ . մէկալ կէս սահաթին  
 ալ՝ մէկ չէյրէկը առտըվանց, մէկ չէյրէկը և  
 րիկուան՝ տունը ուսաթցիր հոգևորապէս .  
 աղօթքով ու բարի խորհուրդներով ( որ դատ  
 տետրակով քեղի փէշկէշ ըրի, ) էյէնմիշ եղիր :  
 Աս որ ընես նէ, նախ սիրտդ և խղճմտանքդ  
 հանգիստ կըլլայ, որ անկից մենծ ուսաթուի  
 չի կրնար ըլլալ Յքիս վր . երկդ՝ իծ ալ հետդ  
 կըլլայ, ամմէն բանիդ յաջողութի կուտայ :

Երդ՝

Երբ՝ ամմէն զործքդ 'ի փառս ւնյ կըլլայ, և  
այնչափ վարձուց արժանի:

Չէնէ, ինչ շահ՝ շատ աշխատիլ, ու քիչ վաս-  
տըկիլ. մարմնաւոր կեանքդ ճորով գտնալ,  
հոգւոյդ կեանքը կորսնցնել: Հիչ չե՞ս մի մըտ-  
մտար, մարմնաւոր տիրոջդ ծառայուէր հա-  
մար ասչափ կաշխատիս նէ, անձ ալ հիչ ծա-  
ռայուի չունդեր մի քեզնէ՝ որ է ւոր հոգւոյդ  
և մարմնոյդ: Կրճնակդ կրմաշի բեռ տանե-  
լէն, ձառքդ աշխատանքէն, ոտքդ աստին ան-  
դին վաղելէն. շահը ինչ. մէկ քանի բարայ:  
Ես ւնյ պատուիրանաց թեթև բեռը բառ-  
նաս, ամմէն զգայարանքդ լը ւնյ բանեցնես,  
խելքդ միտքդ քու հոգևոր շահուդ էտեէ ըլ-  
լայ նէ, ինչ կըվաստըկիս՝ դիտես. երկնաւոր  
թագաւորուի, անանց և անվախճան մեծու-  
թի, փառք և պատիւ և հանգիստ աննման,  
մանաւանդ թէ աննման: Ասոնք ամմէն օր  
շատէ քչէ մոմտաս նէ, ուրիշ կեանք կունե-  
նաս. քի կրկին կեանք, աստ երջանիկ, անդ ե-  
րանելի: Հապա քեզի ալ հարկաւոր է յիշել  
ամմէն իժիր քսի ըսածը. \* Չի՞նչ օգուտ է  
մարդոյ || ևն:

ԺԳ. Աս ըսածներէս թող իրենց հիսսէ հանեն  
տուն նստողներն ալ, որ աւելի ատեն ունին և  
խօլայութի հոգևորի. միայն աղօթքի չեմ ը-  
սեր՝ որ ասկից պակսիլ իրենց մենձ պակա-  
սութի է, հապա ամմէն բարեգործութեան,  
խոնարհութե, համբերութե, սիրոյ. ևն: Չը-  
սեն թէ տան խզմէթն ալ շատ է. աղէկ է շատ  
ըլլալը, որ պօշ ատեն չգտնան թէմպէլութի  
ընելու, բամբասանք ընելու, իրարու հետ  
ինկնալու, էւելորդ տիւզէնի և վնասակար դա-  
տարկութե զիրենք տալու, հապա հարկաւոր  
խզմէթ

խղմէթներով ու բան բանելով օրը անցնեն 'ի փառս ւայ . և աս բաներուս արալըխը՝ արայ արայ հանգիստ տան հողւոյ և մարմնոյ : Աւստ բաներնուն ատեն կը գտնան . ես մէկ քանի թաքիքէ ինչպէս չեն գտնար՝ որ մտուճնին վեր վերցնեն , սրտերնին ւայ տան , իրենց նիէ թը նորոգեն , բաներնին գործերնին 'ի փառս ւայ ընծայեն կարճ աղօթքով մը . անկից ու ժխնդրեն , միսթարանք խնդրեն , որ կարենան տանիլ Յքիս ամմէն նեղուէց և դժուարուէց ու թշուառութեց :

Աս չեն ըներ , ու կը գառնան կը գանկըտին կը տժգոհան . շատ անգամ մեռնելնին ալ կուղեն . ինչո՞ւ . զերէ անբանօրէն կաշխատին , նիէթսիդ կը բանին . նէֆէս մը չեն առներ 'ի հողւոյն սքյ . ուստի կը յոգնին հողւով և մարմնով , ու կը սկսին ինկնալ 'ի հիւանդուի , կմ' 'ի ծուլուի հոգևոր և մարմնաւոր . այնպիսի տէրէճէ՛ որ կը լայ աստ մը անբժշկելի ըստ հողւոյ և ըստ մարմնոյ . ասոր համար պազին մերաքը կը լայ , պազին նախըս կը լայ . մէկը էֆբեարը , մէկալը խօսք չի հասկըցօղ . մէկը յուսը կը տրած , մէկալը բանէ գործէ կտրուած : Ա՞՞ չի ցցնէ՛ որ դուն աս տէրէճէն գաս . հապա եղեր ժիր և կտրիճ ողւով ու հողւով . որով կը զօրանաս նաև մարմնով : Զօրացիր և քաջ լեր :

Ժդ . Հապա առջի և ետքի դեղը ծուլութե՞ փոյթն է և եռանդը . Կոյի , քի խայրէթ , ջանք , կտրճուի մը սրտի՛ որ կը սուճի արիութի . Յօրէն՝ որդ մը սրտին մէջ , որ կուտէ զմարդը՝ չի թողուր թոյլ ու պարապ կենալ : և ետանդ՝ քի ներսի եռալ մը , ներսէն տաքութի մը , ներսի ճրագ մը և կրակ մը , որ 'ի հողևորս կը սուլի ջեր .

ջերմեռանդութիւն, ԿՄ յօժարութիւն մը՝ ի ծառայութեան անջամբ, \* ի փոյթ մի վեհերօտք. հոգևով եռացէք, ան ծառայեցէք ॥ հոռ. ժԻ. 11:

Հատ անդամ դուն ալքու վրադ փորձած կըլլաս. մէկ բանի մը որ սիրտ չունենաս՝ իւշէն միշ կըլլաս թէ՛ մարմնաւոր թէ՛ հոգևոր խզմէ թի. այնչափ որ կարծես թէ խուռչինի պէս ծանար ես, իլիկներդ կտրած, տեղացդ չես կրնար շարժիլ. ան արաւըխը մէկ կրակ մը ըլլայ դրսէն, ես մենծ վախ մը, ես մենծ բարի խապար մը, ներսդ ալ կրակ է վառուներ, դուն քեզի ես եկեր՝ ոտք ես ելեր, ինչպէս հաճիճցեր՝ ուժովցեր՝ այն բանը առաջ տարեր ես. ամմէն բանին մէջ ասանկ ընես նէ՛ ան վախովը կի՛ սիրովը, մենծ մենծ բաներ կըտես նաս. և սովորութի կըլլայ քեզի խայրէթը, իսկ ծուլութիւր կըջնջուի:

Աս խայրէթով, աս եռանդով, աս կրակով՝ Ծքիս մէջ մարմնաւորապէս այնչափ մեծամեծ գործքեր ըրին երևելի թագաւորներ, զօրապետներ, զօրականներ, իշխաններ, պաղիւկեաններ. վարպետներ, ծառաներ, մենծ ու չզղտիկ. և հոգևորապէս սքանչելի գործքեր ըրին ան ծառայութե մեջ՝ իրենց բնութէն ու կարողութէն ի վեր՝ առաքեալներ, մարդարէներ, մարտիրոսներ, ճգնաւորներ, կուսանքներ, վարդապետներ, և այլ ան սքք յեկեղեցական և յԾական կարգէ: Դուն ինչո՞ւ ետ մնաս, դուն ինչո՞ւ ատ փառքէն զրկուիս. աշխատէ՛ աշխատէ՛ սիրելի (հոգիդ սիրես) քիչ մը ատեն, որ յաւիտեան վայլես հանգիստը ու աշխատանացդ վարձքը: ուստի առաքեալն այն վերի խօսքին ետեւէն կըսէ. \* յուսով խրն.

դացէք ॥ հոռ. ժԻ. 12:

ԺԷ.

ԺԵ. Եւ այս ըլլայ ետքի ռիչէթա՝ ծուլութի մարաղին դէմ. Կի միտք առնես զբաբառ Վառ փակին՝ Յաբառ Վասփակը . որ է ըսել՝ աշխատանքին շահը կի վարձքը, հոգևոր և մարմնաւոր. \* քանզի ակ՝ կալութի վարձուցն հատուցման՝ ընդարձակէ զողիսն՝ ի դործս բարուէ ॥, կըսէ սք կիւրեղ եկմացի: Գիտես թէ անձ քեզի ինչ վարձք պիտի տայ արքայութե մէջ . աս տեղը քաշած կտոր մի աշխատանքիդ փոխարէն . չէ՛ թէ մէկ տարւան խզմէթիդ՝ հարուր, երկու հարուր դն՝ աս Յքիս անանեղուն ծառայողներուն պէս . չէ՛ թէ մէկ քանի քեսէ ըստակ՝ մենձ խըզմէթ տեսնողներուն պէս . չէ՛ թէ մէկ չէլէնկ մը, կամ խաֆտան մը՝ ճէնկի մէջ կտրձութիւն ընողներուն պէս . հասլա ամմէն մէկ նէֆէս առնելուդ՝ ի փառս անյ, ամմէն մէկ ոտքի քալուածքին՝ անյ ծառայութե մէջ, մեծամեծ վարձք և յաւիտենական փառք . իսկ եթէ երևելի առաքինութի մալ ընես, զորօրինակ կամքդ կտարես, թշնամիիդ ներես, հելանդի ծառայես, հոգիներուն համար յոգնիս, որբերուն ու աղքատներուն հայրըլլաս, մենձ խաչի մը սիրով համբերես, վն ան նախատինք քաշես, ևս առաւելնք հաւատքի համար հալածանք ու տանջանք կրես, փառաւոր փառաւոր պսակներ կան քեզի պատրաստած . որում արժանի ընէ իս ալ քեզ ալ վարձատրօղն բողորից ամենաբարի անրն և ամենառատ թաղաւորն մեր երկնաւոր :

Այս անձ ըսածներովս չի շարժի ծոյլը նէ, երես դրսի մարմնաւոր բժշկի պէտք է կանչել՝ որ քիչ մը դեղ ընէ, ու արեան թանձրութիւր մաքրէ . չէ՛ նէ՝ ատանկ թուլութիւր դէշ նշան է : Հիբոկրատէս բժշկին առածները կրտեսնամ

որ աւելի թէմպէնքուն դէմ գրուած է . ինչ  
 պէս ան՝ որ կրսէ . \* Թուլութիք ինքնածինք  
 գուշակեն զհիւանդութիս ॥ : Էտեէն տաճա  
 ղուլու կրգրէ . \* Արոց ցաւազնի մասն ինչ  
 մարմնոյ , և բազմօք ոչ զգան ցաւոցն , այնպիս  
 եացն խելք հիւանդացեալ են ॥ : Ասանկ չե՛ն  
 մի թէմպէնքը : Դարձել իրենց կըյարմարի  
 աս առածը . \* որ ՚ի հիւանդուէ բարւոք ու  
 տէ , և ոչինչ աճումն առնու մարմնոյն , չար  
 է ॥ . թէմպէլ մարդն ալ՝ որ իր ըրած հոգևոր  
 գործքէն խեր չի տեսնար , գէշ նշան է : Մէ  
 կալ ըսածն ալ՝ բուն թէմպէնքուն վր աւել  
 լի ստոյգ է . \* Գէրք յոյժ քնութե՛ արա  
 դամաս լինին առաւել քան զվտիտս ॥ : Զար  
 մանալի է աս խօսքն ալ . \* Յորում հիւանդուէ  
 քունն աշխատ առնէ , մահառիթ է ( հիւան  
 դուին այն ) . ապա եթէ քունն օգտէ , ո՛չ ( է )  
 մահառիթ ॥ : Հասկըցար՝ ո՛վ ծոյլ . քրնէն նե  
 ղուի քաշես նէ , մեռնելու նշան է կրսէ կոր  
 դրսի բժիշկը . օգուտ գտնաս նէ , աղէկ նշան  
 է կրսէ : Ես ալ բեզի կըհարցընեմ . ատ քու  
 հոգևորապէս քուն ըլլալէդ՝ քի թէպէլուէդ՝  
 հոգիիդ նեղուի՞ կիմասս , թէ օգուտ . խղճմը  
 տանքիդ հանգստուի՞ կըզգաս , թէ տանջանք  
 գիտես եա . անոր կեօրէ գլխուդ ճարը տես :  
 Եկուր բեզի աղէկ բան մը սորվեցնեմ՝ երկնա  
 ւոր բժշկէն առած . բարի գործք ընելու ան  
 հոգ մի ըլլար , արթուն կեցիր , որ ուզածէդ  
 էւել հանգիստ գտնաս , ու անմահ մնաս . չար  
 գործքին երեսն ալ մի նայիր , մի հասկընար՝  
 մի գիտնար , սանքի քուն եղած ես՝ չես իմա  
 նար . չարին արթուն եղածին պէս՝ չէ թէ մեռ  
 նելու նշան է . հապա հոգևոր մահը հասեր  
 է . յորմէ պահեսցէ տը զերկիւղածս իւր :

ԳԼ



Գ Լ Թ :

Ախար ագահութիւն . և դեղ նորա չափա-որութիւն և  
աղքատութիւն հոգաոյ :

Թ . Դասուելը՝ որ և կըսուի արծաթսիրու-  
թիւն , ռամկօրէն թամաս , հիւանդութի մը նէ  
անօթութե սրտի , որ չգիտէր կշտանալ . \* որ  
ոչ երբէք ասէ շատ ॥ : Կրնանք ըսել չտեսուի ,  
աչքիծակութի , աճ կեօզլիւլիւք՝ ըստկի կող-  
մանէ , անդահութի և անգոհութի . բայց ա-  
ռաքեալը աղէկ անուն մը կուտայ՝ կռապաշ-  
տութի , քի փութ փէրէզութի . զերէ ինչպէս  
որ կռապաշտները զճշմարիտ անձ թողեր էին ,  
ու անյ տեղ արարածները կըպաշտէին , մանա-  
ւանդ փայտէ , քարէ , պղնձէ , արծթէ , ոսկիէ  
շինած արձանները . ասանկ ալ արծաթասէր  
ագահը զանձ միտքը չի բերէր՝ թէ անիկակ է  
զինքը ստեղծող ու պահող , հապա բոլոր յոյսը  
կդնէ ըստկի վր , ու զայն կըպաշտէ սրտանց ,  
զայն սիրելով՝ ու սիրով էտէ քնկնալով՝ ամ-  
մէն բանէն՝ ի վեր , կարծէ թէ ստակն է զինքը  
պահող ու կերակրող . զիշեր ցորեկ ուրիշ բան  
չի մտաւար , բայց միայն ստակ շատցնելու  
ճամբաները՝ հախ նէ հախ . ուրիշ հոգ չունի ,  
բայց միայն աս՝ որ չըլլայ թէ ստակը պակսի  
կի՞ կորսուի չըլլուն չըլլունի մէջ կըդնէ , բաւիք  
բաւիքի վրայ՝ կըպաք կըպաքի վրայ՝ ստակը  
սնակի մէջ կըդնէ , սիրտն ալ նոյն սընտրկին  
մէջ կըկըպէ կպահէ . \* զի ուր դանձն ձեր է ,

անդ և սիրտք ձեր եղիցին ॥ • ամմա գողերէն վախ ունի , կրակէ վախ ունի , կարելի ըլլայ նէ՝ գետինն ալ կըթաղէ իր սիրականը ողջ ողջ • սըխ սըխ եօխլամիշ կընէ ան տեղը , չըլլայ թէ մարդ իմանայ ու վերցնէ • հանդիստ քուն չի կրնար ըլլալ , հիսապ ու մամտուք ունի ստկի • ունեցածին չի խնդար , չունեցածին կըցաւի • հանդիստ հաց չուտէր • շատը՝ իր վրձ գլուխը պիւէ չի հոգար , չըլլայ թէ ստակը պակսի տէյի • նոյն պատճառով պաղին իր ընտանիքն ալ աղէկ չինայիր , խեղճ ողորմելի կէչինմիշ կըլլայ՝ ինքն ալ իրեններն ալ • իսկ աղքատներու ոլոր մուր տալու՝ սիրտն ալ ձեռքն ալ կըդողդղայ • մէկն որ իր ստկին դպչելու ըլլայ նէ , ոչ բարեկամի խաթըր կընայի , ոչ սիրականը կըսեպէ • զերէ ստակն է իրեն մէկ հատիկ սիրականը • ան է իրեն փորը , ան է իրեն անձը • ինքը անոր ծառան է , քեօլէն է , եսիրն է • արծաթադին ծառայ յաւիտեան : Ասանկ ըլլալով՝ կու պաշտներուն հետ մէկ տեղ կըլլայ ագահին դատաստանն ալ՝ դատապարտութիւն ալ՝ ի դըժոխս , զերէ արարածը պաշտեց , և ոչ զարարիչն , որ է օրհնեալ յաւիտեանս :

Թ • Ասոր դեղը ի՞նչ է • ինծի հարցընես նէ , դեղ չիկայ • ինչու որ՝ մէկ հիւանդուի մը մարդուն սիրտը փակցելէն ետե՝ իհարկէ զմարդը կըմեռցընէ • որովհետեւ սիրտն է սկիզբն կենդանութեան • անիկակ իանգարուածին պէս՝ կեանքն ալ կաւրի կերթայ : Կրնա՞ս ագահին սիրտը հանել տեղացը , ու նոր սիրտ մը տեղը դնել նէ , խօսք չունիմ • չէ՛ նէ , քանի որ ան սիրտը անոր փորը կայ նէ , մեռած է հոգևով : Ասոր համար ագահը չուզեր որ բնաւ ագահութե՛ դէմ քարոզ տրուի , խրատ խօսուի • նմա

նմանապէս ողորմութեւն վրայ , աղքատսիրուն  
կամ աղքատութեան վրայ . զերէ իրեն սրտին  
կըդպչի , քի ստկին :

Մէկ հատիկ դեղ կրնայ ըլսել , որ բոլոր ստա-  
կը դողցունի , կամ խաղայով մը կորսունի , որ  
մէյտանը կուռք չի մնայ իրեն պաշտելու . վէ  
լաքին աս ալ վախնալու բան է , որ ստակը կոր-  
սընածին պէս իրեն կեանքնալ կորսընի . զերէ  
իր սիրտը ստկին հետ կապունած ըլլալով ըստը-  
կին հեան ալ սիրտը կրփրթի կըվերնայ , նոյն  
ատեն ան ցաւէն պէտք է որ սատկի . ասանկ  
շատ լսած ենք , տեսած ալ ենք , որ ստակ  
կորսնցնելով ազահները իրենք զիրենք կախեր  
են , ջուրը նետեր զիրենք խղղուներ են , բարձր  
տեղաց վար ձգեր մեռերեն , տամլայի հանդի-  
պեր դացեր են :

Գ . Մէկ նոր ու աղէկ դեղ մը մտմտացի ես ,  
ամմա բանը ընեն է . զերէ էզան խիտ սուղ  
կրնասի մեղի : Ազահին ստակ տայինք էւելօք՝  
իր ունեցածէն տասը խաթ աւելի , պէլքիմ  
սիրտը լենար հանդարտէր , հերիք է ըսեր :  
Ամմա գիտեմ որ տասը խաթը կուլ կուտայ՝  
ու ընհ չըսեր . եկուն հարուր խաթ աւելի  
տանք , ան ալ չըլար՝ քիչ է պիտի ըսէ . հա-  
զար խաթ աւելի տանք . ան ալ պիտի չիբաւէ .  
անյատակ ծով մընէ սիրտը՝ լենալիք կշտանալիք  
չունի . բոլոր թագաւորական խաղնան տանք  
իրեն , անով ալ չըլար , պիւթիւն Ֆքիս ստա-  
կը կուզէ . դժոխքին օրինակը՝ որ բոլոր Ֆքս  
կուլ տալ կուզէ : Կարելի ըլլար տէ՛ սատանան  
ասոր բոլոր Ֆքիս տէվլէթը տար ( ինչպս քնի  
խօսք տուաւ չարը՝ իրեն երկրպագութի ընէ  
տէյի ) . ի՛նչ կըսես , աճապ կըկըշտանար մի .  
քաւ լիցի . առած չառած՝ սատանային ալ ըստը-

կին ալ երկրպագութիւն կրնէր, ամմա հերիք է՝ չէր կրնար ըսել, տաճա աւելին ո՛ր է կը սէր. \* զի ըսա յորդել ստացունածոց՝ յաճախէ ազահութիւն ॥ . յակոբ մծբնայ հայրապետին վճիռն է :

Ուրեմն արծաթասէր ազահը պաստրմիշ ըրաւ այն անօթութե հիւանդութիւն, որ մէկը որչափ բան ուտէ՝ կենէ կուղէ ուտել, ու կըրնայ ուտել . ինչու որ՝ ( հասարակ խօսքին կեօրէ ) սիրտը որդ կայ թունաւոր, որ ամիկն կերածը ջուր կըկտրէ, նորանց կուղէ . իսկ ազահը կերած ստկին համը չառած՝ էտեկն ուրիշ ստկի անօթութիւն կըբաշէ . մէկ տօպրակ մընէ պօղազը՝ որ երկու դին ալ ծակ . դուն վերէն լեցուր, անիկակ վարէն պարպէ . յաւելտեան լենայիք չունի :

Աս անգահ ազահութիւն խիստ աղէկ կըհասկըցուի իրեն անունովը, երբոր հէմ դրաբառ հէմ Ծաբառ մեկնես նէ . ագահ, սանքի՝ աճ, ահ, ցի հէմ անօթի, հէմ ախ ընօղ . թամամ անգահ ուտողին պէս, որ կերածը չինայիր, իր անօթուիւն իրեն տերա է եղեր . կուտէ՝ ու անօթի եմ կըսէ, կըփրխրի պէհիւղիւր կըլայ, ու կենէ ախ կընէ ուտելու : Աճ պահէ ասանկ հիւանդուէ . թէ որ մարմնաւոր անյագուիւր՝ որ անգահութի կըսուի, ասանկ գէշ բան է նէ, հապա ի՛նչ պիտի ըսենք հողեւոր անյագութեը՝ որ է ազահութի :

Դ . Դուն բարի և առաքինի ընթերցող՝ կրնաս ինծի ըսել . փառք ան, ոչ շատ ստակ ունիմ, և ոչ ազահուի : Ես ալ կըսեմ բեզի . ան տայ որ ետքինը չունենաս . առջինը ունեցեր ես՝ չես ունեցեր՝ մէկ հիսապ : Կուղեմ ըսել, թէ աղբատ կայ՝ որ ազահութի ունի . մեծատուն կայ՝

կայ՝ որ ազահուածի չունի: Այնչափ երևելի հարուստ մարդիկ եկած կան Տքը՝ որ աչուրնին ըստկի վր չէր, յոյսերնին ինձ էր. անանկ ունէին ստակը, ոնի թէ չունէին. ինչպէս արահամ, իսահակ, յակոբ, յովսէփ, յոբ, և ուրիշ շատ սք թագաւորներ ու իշխաններ. ուստի մի դատեր ամմէն հարուստը թէ ազահէ, կի՛ ազահուածենով ստակ է դիզեր. կըրնայ ըլլար որ իր արդար վաստակն է, ինչ յաջողութիւն է. ասոր նշանը ան է, որ երբեմն ճախորդութիւնալ քաշէ նէ, շատ չի արամիր. ճառքը բաց է աղքատաց. ամմէնուն իր աղէկութիւր կըրդպչի. հէմ կըվայլէ, հէմ կըվայլեցնէ. ինձ օրհներ է դինքը, և օրհնէ. ասանկներնալ պէտք են՝ աղքատներուն մարմնաւոր ապրուստին համար. ինչպէս որ աղքատներնալ պէտք են՝ մեծատանց հողեւոր ապրուստին համար: Ասոր ներհակ՝ օրթա պապէթ կի՛ աղքատ մարդիկ կըրգտնուին, որ աչուրնին ծակ է, ամմէն բանի վր կըրդողդրլան. այնչափ հոգ ու մամրտութ կըրնեն մէկ երկու բարայի, մէկ երկու դուռուշի, մէկ երկու քէսէի վրայ, որչափ որ կընէ ազահ մեծատունը՝ հարուր քէսէի կի՛ հազար քէսէի վր. և այսպէս հաւսար եղաւ երկուքին ազահուինալ. զերէ շատ ունենալու քիչ ունենալու վրայ չէ ազահուածի, հապա ազահ սիրտ ունենալու վր. ինչպէս որ ողորմութի տալնալ՝ շատի քչի վր չէ, հապա ամմէն մարդու իր հալին կեօրէ:

Ասանկ է նէ, դուն որ փառք կուտաս ինչ շատ ստակ չունիմ տէյի, հախ ունիս աս կողմանէ որ՝ ըստկի շատութիւր ազահուինալ կըրշատցընէ, և շատ անկարգութեց ու մեղաց սէպէալ կըրնայ ըլլալ: Միայն նայի՛ որ աղքատ ես նէ

մարմնով, աղքատ ալ ըլլաս հոգւով. Կ՞ սիրտդ  
 մէկ մանղըրի չի փակչի. և մեծատունն որ ար-  
 քայուի դժար կը մտնայ նէ, աս է պատճառը  
 որ սիրտը ստիկի փակած կըլլայ. ատ սիրտը  
 չըլլալէն էտե՛ ան ալ խօլայ կըմտնայ արքայու-  
 թի: Ամա ո՛ր գտնամ ըսես՝ հէ՛մ մեծատուն,  
 հէ՛մ աղքատ հոգւով. իրաւ որ քիչ կայ. ամմա  
 կայ. թո՛ղ ամմէն մեծատուն իր գլխուն ճարը  
 տեսնայ՝ որ ասանկ քիչ գտնու՛ելու հարուստ  
 ներուն սըրայէն ըլլայ. Կ՞ ըլլայ մեծատուն  
 նաև հաւատով, ըլլայ աղքատ հոգւով. ինք  
 ստակը ունենայ, ստակը զինքը չունենայ. ըս-  
 տակը իրեն ծառայեցնէ, ինքը ստիկին ծառայ  
 չըլլայ:

Ե. Ուրեմն առջի դեղը ազահութե՛ է աղքա-  
 տութի հոգւոյ. Կ՞ թէ շատ ստակ ունենաս՝  
 թէ քիչ, նայէ՛ որ սրտովդ զան չի պաշտես,  
 հապա ան քեզ պաշտէ, քու պիտոյդ հոգայ:  
 Եւ որովհետև մարդուս պիտոյքը քիչ բանով  
 կըհոգացուի, ուստի երկրորդ դեղն է՝ չափա-  
 ւորութի, որ է խանահատ. Կ՞ քիչ բանով շա-  
 տանալ, գոհ ըլլալ, շատ բանի աչք չի տնկել.  
 աչքը լեցուն ըլլալ, աչքածակ չըլլալ: Աս չա-  
 փաւորութիս անանկ հարկաւոր բանը մը նէ,  
 որ ասոր ներհակը՝ չափը անցնելը՝ աշխարքս  
 աս հալս հասուց, ինչ որ մեր օրերը տեսանք  
 նէ. թէ որ չափաւորութիւն տիրէ Յքիս նէ,  
 Յքիս առջի խաղաղութիւր և հանգստութիւր  
 տեղը կուգայ. նմանապէս ամմէն տուն աս չա-  
 փաւորութենով, կըլլայ խաղաղ և հանգիստ.  
 ապա թէ ոչ՝ դժոխք կըլլայ, որ \* ոչ երբէք ա-  
 սէ շատ ||:

Երդ դեղ ազահութե՛ դէմ՝ է մտմտալ անոր  
 պատիժը՝ որ աս Յքիս մէջնալ շատին գլուխը  
 կու-

կուգայ . Թող անդին ըլլալիքը : Սողոմոն ի մաստուունը զազաճն կընմանցնէ տղրկի , ցի սիւ լիւկի . որ փակած տեղը ինչ արուն դանայ նէ՛ կըծծէ , աղէկ՝ դէշ , մանաւանդ դէշ արունը . ու կշտացայ չըսէր . այնչափ որ չի փրցնես նէ՛ փակած տեղաց ելլալ չուզեր : Բայց ետքը ինչ կըլլայ , այն բոլոր ծծածը եւ ինքիրով կըփրս խէ , եւ կըփրսխեցնեն . չէ նէ , մախասլամիշ կընեն կըսատկեցնեն զինքը՝ որ փսխելը ու սատ կիլը մէկ կըլլայ : Ասոր նման չէ՞ մի ազաճն ալ , որ ուրիշներուն արունը կըծծէ՛ Տախ նէ Տախ , մանաւանդ նէ՛Տախը . ձառքէն դայ նէ , մէկ ըս տակ մը վաստակ չի թուուր ուրիշի . ուրիշե րուն միւշտերին կկտրէ , որ բոլորը իրեն դայ . բայց ետքը կամ Տիւանդ կըլլայ , ու ինքիրովն կըփսխէ իր ստակը դեղի ու Տէքիմի Տամար , կի՛ փորձանքի մը կուգայ՝ զինքը կըփսխեցնեն . չէ նէ՛ յայտնի է ըլլալիքը մահուան օրն՝ որ զինքը միջքէն կըկտրեն , ցի ինչպէս կըմեկնէ սք լուսաւորիչը , Տողին մարմնէն կըբաժնեն , և զմասն նի՛ զՏողին լէ անհաւատս կըղնեն ՚ի դժոխս , մարմինն ալ Տողին տակը . իսկ ստա կը կըմնայ՝ որուն որ կըմնայ :

Տաճա շատ պէթ ու պէթէր բաներու կընանք քեզ նմանցնելով ազաճ . բայց դուն աղէկ կընես՝ որ քեզ չինմանիս ասկից ետև , քեզ բո լորովին փոխես . Տանէ՛ երեսէդ՝ մանաւանդ թէ սրտէդ՝ ատ անշնորհք քիսվէթը ազաճու թեան , որ բոլոր ճքիս մասխարանն ես եղեր՝ ճառիս պէթնամ . Փիլան մարդը թամահքեար է կըսեն նէ քու ետևէդ , դուն որ իմ բարե կամս ես՝ ես քու տեղդ կըխալնիմ կոր . աս կից մենծ նախատինք չըլլար քեզի , թէ որ Տաս կընաս նէ :

Է. Ամմա դուն չես իմանար, ու չես ուզեր իմանալ, զիտեմ. պէսպէս պատճառներ ալ կը դանաս՝ վէսիլէով քու թամասիդ կուռքը պաշտելու : Ինչ ընեմ կրեսես մարդկան ըսածը, ես իմ բանս նայիմ. ստակ շատցընելը՝ պօշխարճ չընելը՝ մեղք չէ, իշկիւզարուի է, աչքաբացութի է, մէկ : Մէյմալ՝ զակըններս խեղճ չեմ ուզեր ձգել, անոնց ուղուրին կաշխատիմ : Մէյմընալ՝ օք է, եօխսուլութի կրնայ ըլլալ, քէսատութի, հիւանդութի, և հազար կերպ փորձանք. հիմա քանի որ Փրոսանտը ձառքս է նէ, վատրկիմ՝ պահեմ ստակս, որ ճանօթու ըլլայ : Չորրորդ՝ հոգիիսալ բաժին էլենայ, որ մեռնելէս էտե ժառանգներս հողիս հոգան :

Է. Առջինին պատասխանը. Ստակ շատցընելը՝ ստակը պահելու համար ըլլայնէ, եւ խաղնատարութի է, եւ պէքճիութի, եւ համալութիւն. ստակը շատցընել պիտի ըլլայ՝ շաքան տեսնալու համար, իրեն անձին պիտոյքը հոգալ, տունը տեղը հոգալ, օքիս մէջ պիտւական և բարի յիշատակ բան մը թողուլ, աւսոր անոր խեր ընել. մանաւանդ աղբըտնէրուն, և իր հոգւոյն. երբոր ասոնք չի կաննէ, թամաս է, կուսպաշտութի է. ղերէ ստակը բանի մը չի ծառայէ նէ, անոր պօշ կենալը՝ չէ թէ միայն պօշ է, հապա անգործ կեցած կուռք մը կը լայ՝ որ քու սրտիդ երկրպագութիը կուղէ. չէ նէ՝ պօշ կենալու տեղը տահա աղէկ է թաղաւորին խաղնան մտնայ, կիմ գետնի տակ միայ մատէն. երու սրբան՝ որ ատենով աշխարքիս պէտք կը լայ : Ինչպէս մէկը իր տունը հացով պէքսիմտով լեցնէ նէ, զահրէի նիէթով խըթըխ ատեն, պիտանի կը լայ. ինքնալ խեւացի

լացի կըսու՛նի . ամժա անանկ թողու որ՝ լեցուն  
 տեսնայ տունը , ու իր աչքը լեցուն ըլլայ տէյի ,  
 Տիչ բանի չի բերէ , ո՛չ ինք ուտէ , ո՛չ ուրիշի  
 կերցընէ , խենդութի է , ու աղքտներուն հա-  
 խը կտրել է : Ես չեմ ըսեր թէ պօշ խարճ ը-  
 նես , կի՛ տանըդ հացը սօխախին շներուն ձը-  
 դես , հապա պէտք եղած տեղը բանեցուր . է-  
 ւելորդ պահելու էտէ մի իյնար . ո՛չ մսխող  
 ո՛չ նէքէս եղիր . չափով վայլէ՛ , ու առատա-  
 ձեան եղիր . ու քու կրօնը կէդ ալ մէկ քանի  
 մարդ աղէկութի տեսնայ . ան առեն դուն ալ  
 աստուծմէ աղէկութի կըտեսնաս . չէ նէ՛ անձ  
 դչարսն չարաւ կորուսանէ :

Ը . Երկրորդին պատասխանը . Չաւկրներդ  
 խեղճ ձգել չես ուզեր նէ , հիմակու՛րնէ ալ ղե-  
 բնք չի խնտայնես . հիմա որ քու ձեռքովդ  
 անոնց աղէկուի չես ըներ նէ , ետքը ձառքէդ  
 ելած ստակը անոնց խեր ջներ . հիմա որ սըր-  
 տերնին էրած է քու թամահէդ , մեռնելէդ է-  
 տե անօթի ծարաւ մարդու պէս ըսակիդ վի՛  
 կըթափին , կուտեն կըխմեն՝ կըմըսխեն կըփս-  
 խեն . մէկ քանի օրվան մէջ ան անիծած ըս-  
 տակը կըլնցնեն , ու սէֆիլ մնալուն պէս քեզ  
 կանիծեն , որ ղիրենք առաջուց մարդ չըրիր ,  
 ետքը քու ըսակովդ էրեցան ու պիտի էրին :

Սուտ չէ ան խօսքը՝ որ ստամպօլու մէջ կըբա-  
 նի խելացի մարդկանց բերանը . զաւակդ աղէկ  
 ըլլայ նէ , անոր ստակ պէտքը չէ . զաւակդ  
 գէշ ըլլայ նէ , անոր ստակ պէտքը չէ : Հապա  
 քեզի ի՛նչ ըսեմ , որ՝ դուն որ թամահով խեղճ  
 կեանք կանցնես կոր՝ խղճալի հողւով՝ խղճա-  
 լի մարմնով , ի՛նչպէս հաւտամ՝ թէ զաւկրներդ  
 քեզնէ էւել կըսիրես . ո՛վ որ իրեն անձին չօ-  
 ղորմիր , ուրիշի ողորմելու պէս չէ : Եկու՛ր ին-  
 տի՛

տի՛ դուն քեզ ողորմի՛, ատ թամասէդ վա՛զ եկուր . զաւկըներուդ ալ ողորմիլ կուզես նէ , կենէ ատ թամասէդ վա՛զ եկուր . չէ նէ , ատ կուռքն որ կրպաշտես՝ զաւակդ ալ կըսորվի պաշտել . որովհետև հայրենի կըրօնքը մարդուս սիրտը խիստ կըտպաւորվի , անկից վազ չուզեր գալ , ետքը դուն ալ զաւակդ ալ դժոխքին մէջ մէկզմէկ կանիծէք . դուն անոր կըսես՝ ինձի կորստեան սէպէպ դուն եղար տէյի , ան ալ քեզի պիտի ըսէ : Հա՛պա հիմակո՛ւրնէ քարի օրինակ եղիր զաւկիդ առատաձեռնուք և աղքատուք հողւոյ՝ ու խանահաթով . որ դուն ալ արժանի ըլլաս արքայութե՛ ան ալ . \* երա նի աղքատաց հողւով , զի նոցա է արքայուի երկնից . երանի՛ ողորմածաց , զի նք ողորմուի դոցեն . վայ՛ ձեզ մեծատանց ॥ . ևն :

Թ . Երրորդին պատասխանը . Թերեհաւատութի է ատ , անհաւատութի ալ կըրնամ ըսել , որ աւետարանին խօսքին չես հաւտար , թէ \* մի՛ հոգայք վասն վաղո՛ւին , շատ է աւուրն չար իւր . հայեցարուք յազուաւս , ՚ի շուշանն . ॥ ևն : Այն անձն որ քեզ ինչո՛ւան ասօրս պահէց նէ , ասկից ետքն ալ կրպահէ , ան որ քեզ յոչնչէ ստեղծեցնէ , զինքը քեզի պարտական ըրաւ պահելու պահպանելու , միայն թէ յոյսդ անոր դնես , անկից խնդրես քու ապրուստդ . ան քեզ ճամբայ կըցցնէ , քան գործ կըբանայ որ վաստըկիս , քեզ ալ պահես՝ տունդ ալ :

Աշխատէ՛ , պօշ մի՛ կենար . զի \* որ ոչն աշխատի , և կերիցէ մի՛ . քրտամբք երեսաց քոց կէրիցես զհաց քո ॥ . ծուլերուն դէմ ինչ որ խօսեցայ նէ , լսեցիր . ամմա քեզի պէս ազահնէրուն ալ ըսելիք շատ : Հի՛ւանդ ըլլամ նէ , ըստակ

տակ պէտք է կրեսս . յայ եկած հիւանդուիը մի մտմտար, անոր ճարը ան կըհողայ՝ թէ որ հաւատք ունիս նէ . բայց քեզի ո՞վ է ըսեր՝ որ թամասէդ հիւանդ ըլլաս, ինչպիս որ կըլլաս . ինչու որ հիչ ուհաթի չես նայիր, կըքրտնիս, կը պաղիս, քուն չունիս . ինչ է՝ թէ մէկ քանի բարայ էւելի պահես . խենդ է ան մարդն՝ որ ստակ ժողվելու համար կըհիւանդանայ, և կըհիւանդանայ՝ որ հէքիմին տայ ժողված ըստակը . խելք ունեցողը կերթայ տեղ մը սէֆայ կընէ պարկեշտօրէն, հավայ կըփոխէ, ստակը իր ողջութեը առողջութեը կըխարճէ . անով հիւանդուէ ալ իրխալըսի, իր ստակն ալ հէքիմի տալու տեղը՝ ինքը կուտէ : Տեսա՞ր որ ազա հուլթիը՝ հէմ հողւոյ հէմ մարմնոյ զեն կուտայ, հէմ այ՝ հէմ մարդու ճամբէն դուրս է : Ճամբէ դուրս չելլասնէ, ճամբով ստակ պահել ալ կայ, ան ալ կըսորվիս, հարկաւոր եղածը կըպահես, մսխողութի ու սէֆիութի չես ըներ, ամիկն բանին ետքը կմտածես, պոյիդ կեօրէ լաթ կըձեես, եօրդանիդ կեօրէ ոտքդ կերկնցնես . խոհեմուիը ամիկն բանը կըսորվեցնէ . իսկ ազահուլթիը խոհեմուլթէ դուրս կըբալէ :

Ժ . Ետքի բանին պատասխան տալ պէտքը չէ . ատոր որ դուն չես հաւտար, իս ինչպէս պիտի հաւտացընես . հողինդ կուղես հողալ, հիւմակուճընէ հողա, մահուանդ օրը մի՛ ձգեր, և՛ ս առաւել մահուանդ ետե մի՛ ձգեր . հիւմ մէկ խուռուշ մը տաս հողւոյդ համար, ետքը հարուր խուռուշ ձգես նէ, առջինը աւելի ընդունելի է այ՝ քան թէ ետքինը . ուամկաց առակը դիտես, այսօրոճան հաւը վաղուճան խաղէն աղէկ է, կըսեն . հապա ո՞րչափ աւելի աղէկ

դէկ է այսօրոճան խաղը վաղոճան հաւէն . ու  
 բեմն դուն հիմա հարուրը տուր ձեռքովդ տէ ,  
 ետքը մէկ խուռուշ մընալ քեզի համար տոճող  
 կըլայ . ան խէ՛ դուն մէկ բարայ մը տալու  
 ըլլաս նէ աղբրտի , սրտէդ ան կանցնի . ժա  
 մուց մը տալու ըլլաս , սիրտդ տեղացը կըխը  
 թի . ու պօլ պօլ խօսք կուտաս՝ թէ ետքը հոգ  
 ւոյս շատ բան պիտի ձգեմ : Այդէկ կըսես՝ պի  
 տի ձգեմ . ձգած բանը ի՞նչ բանի ետրար է .  
 ան ատեն դուն ստակ չես թողուր հոգւոյդ .  
 հապա ուզես չուղես՝ ստակը ճքիս մէջ կըթռ  
 դուս կերթաս . չէ թէ կամօք կըթողուս , հա  
 պա չես կրնար հետդ տանիլ , անոր համար՝  
 պէտք է որ թողուս . ու կըպարծենաս՝ թէ  
 այսչափ ստակ թողուցի . զո՞վ կըխաբես կոր .  
 \* մի խաբիք , ան ոչ արհամարհի ॥ : Անտեն  
 կըհաւտամ որ հոգւոյդ համար ստակ պիտի  
 թողուս , թէ որ հիմակոճընէ թողուս նէ . նախ  
 քու ձեռքովդ բաժնես խել մը՝ ողջութեանդ  
 ատեն . երկդ՝ քու ձառքովդ կտակ գրես կամ  
 գրել տաս , ու ձառք դնես՝ մէօհիւր կոխես ,  
 ու Ֆիլան տեղաց սաղ ստակը՝ կ՛մ սնակիդ մէջ  
 եղած այսչափ ստակը հոգւոյդ համար ըլլայ ,  
 անանկ որ կտակիդ մէջ մերասխօրներուդ որ  
 բայ բաժին կընես ամէն բանրդ նէ , մէկ մէ  
 րասխօր մընալ հոգիս է տէյի՛ գրել տաս , և  
 պարտաւորես որ քու հոգւոյդ բաժինը ամ  
 մէնէն առաջ ելայ : Ասոնցմէ ամմէնէն վեր իս  
 պաթ հոգիդ հոգայու ան ըլլայ որ՝ ազահու  
 ախտէն և ամմէն մեղքերէդ վաղ գաս ողջու  
 թեանդ . կուռքերդ դուն քու ձառքովդ կու  
 րես փճացնես , ու զաւկըններուդ կուապաշու  
 թէ տեղիք չիթողուս :

ժն . Թէ որ աս ըսածներս քեզի հերիք չեն նէ  
 ա

ազահունէ վազ դալու, ետքի դեղը քեզի հաս-  
կըցընեմ՝ որ սք դիրքը իշարեթ կընէ, երբեմն  
քէսկին շէրպէթի պէս խմելու բան սալըխ տա-  
լով, երբեմն հապի նման կուլ տալու բան՝ որ  
լեղուծիը չիմնաս, Ֆայտան տեսնաս: Առջի  
սոյն է այն ահաւոր խօսքերը՝ որով կրվախցը-  
նէ ազահ մեծատունները, թէ տահա խօլայ  
է հալաթի կամ տէվէյի՝ ասեխին ծակէն անց-  
նիլ, քան թէ ձեզի արքայուն դունէն մտնալ:  
քեզի կըսեմ կըսէ՝ ո՛վ անմիտ, որ մալիդ մէ-  
լալիդ ես յոյսդ դրեր, աս զիշեր հոգիդ առ-  
նող հրեշտակը գայ նէ, ատ ժողլած բաներդ  
որո՞ւ պիտի ըլլայ: Խորակաճաշ մեծատունը  
յիշէ՛ կըսէ, որ աղքատ զազարին փշրանք մը  
չէրիտար. ետքը ինքնալ մէկ կաթիլ ջուր չե  
գտաւ դժոխքին կրակին մէջ, ու լսեց աբրա-  
համէն, թէ դուն քու մխիթարանքդ Տքի վթ  
գտար, զազարոս Տքին մէջ նեղուծենով ապ-  
րեցաւ. հիմա ատենն է՝ որ զազարոս մխիթա-  
րու՛ի, դուն պապակիս յաւիտեան: Ասոր նը-  
ման շատ վայեր կուտայ սք դիրքը մեծատուն  
ներուն, ց՛ ազահներուն:

Մէկ սոյ մալ խրատ կայ՝ որ սք դիրքը մեր միտ-  
քը կըխօթէ խորունկ խօսքերով, թէ Տքիս  
ամի՛ն բանը անցաւոր է. մերկ ենք եկեր աս  
Տքս, ու մերկ պիտոր ելլանք ասկից. երանի՛  
անոր՝ որ քանի որդ է նէ՝ ասկից անդին խաղ-  
նէ կըխաւրէ, աս տեղը եղած մալը եւս կըփրա-  
տի, եւս կըկորսընի, եւս կը գողցընի. ձեր խաղ-  
նան երկինքը դիզեցէք՝ կըսէ, ուր ո՛չ կիւվէն  
կուտէ, ո՛չ գողը կրվերցընէ:

Ժք. Գիտենս, ի՞նչ է՝ որ զմարդիկ կըխաբէ.  
աս տեղի բաները աչքով կերևնան, ուստի  
մարդուն աչքը կըբաշեն. անտեղայ բաները  
տես,

տեսնալու՝ հոգւոյն աչքը պէտք է . ասոր հա-  
մար՝ որուն որ հոգւոյն աչքը կոյր է նէ, աս  
Յքիս բանին ձեռք կրղարնէ . իսկ որուն որ  
հոգւոյն աչքը բաց է նէ, անդիի Յքին բանին  
ձեռք կրղարնէ . ետքը պէլլի կըլլայ՝ թէ ո՞վ  
խաբոճեր է, ո՞վ չէ խաբոճեր :

Եկուր մի խաբոճի որ ո՞վ ազահ եղբայր . եկուր  
քեզի հասկըցընեմ սրտիդ մէջ ի՞նչ մարաղ կայ,  
որ դուն չես հասկընար կոր . անոր համար  
ըստկի էտէ կինկնաս : Ա՞՞՞ քու սիրտդ մենձ  
է ստեղծեր՝ որ հիչ մէկ անցաւոր ու չափաւոր  
բանով մը չի լեցուի, ինչու՞ն որ չգտնայ ա-  
նանց և անչափ բարին . ուստի ամիկն մարդուն  
սիրտը մէկ անյագ փափաք մը կայ էն աղէկ և  
էն մենձ բանը ձեռք ձգելու, ի՞նչ զմձ գտնա-  
լու : Եւ որովհետեւ անձ մարմնաւոր աչքով չի-  
տեսնուի, անխելք մարդիկ կարծեն թէ Յքիս  
մէջ ի՞նչ որ աչքին աղէկ կերևնայ նէ, անկից  
աղէկ բան չըլլար . ուստի ան բանը անբանօրէն  
ափ ձգել կուզեն . ու գտնան նէ, բոլոր սըր-  
տանց կրպաշտեն՝ որ կըլլայ կռապաշտուի :  
Կան որ ստակը կրպաշտեն, ուստի արծաթսի-  
րուիք կռապաշտուի է ըսինք՝ առաքելոյն  
խօսքովը : Կան որ ուտել խմելը կրպաշտեն .  
\* որոց անձ որովայնն է ||, կրսէ նոյն առաքեա-  
լը : Կան որ զմարմինը կրպաշտեն . ուստի կը-  
սուին մարմնապաշտք : Հատն ալ իրենց կամ-  
քը կրպաշտեն . ուստի կըսուին կամապաշտք .  
և առհասարակ են կռապաշտք :

Եկուր կըսեմ կոր քեզի՝ ատ բանը խելքէդ հա-  
նէ, թէ աս Յքիս մէջ սրտիդ ուզածը պիտի  
գտնաս . ատ ըլլալու բան չէ . սէլտայ է, խա-  
րա սէվտայ : Մարդս սոսկ մարմին չէ՝ որ մարմ-  
նաւոր բաներով կշտանայ անբան հայվաննե-  
րու

բու պէս . բանական կենդանի է՝ որ լը պատ-  
կերի ւնյ ստեղծած է . իր նախատիպը՝ քի զան-  
կրփնտուէ , անոր հասնիլ կրփափաբի՝ կրսէ  
յովհան իմաստասէրը՝ ամմէն փիլիսոփանէ-  
բուն ու անծաբաններուն վճռոյն կեօրէ . անոր  
որ հասնի՝ անիկակ որ դտնայ նէ , ան ատեն  
կրհանդէի , ան ատեն կրկշտանայ , կրվայէ ու  
կրղմայի յաւիտեան . աս է դաւիթ մարդա-  
րէին ըսածնալ . \* յագեցայց յերևիլ փառաց  
բոց ॥ . սաղ . ԺԿ . 15 :

ԺԿ . Ինչ բանով կրնանք հասնիլ այն փառաց՝  
ըսես նէ . հողևոր ազահուլթենով ու անդա-  
հուլթենով . լը , \* երանի՛ որ քաղցեալ և ծա-  
րաւի իցեն արդարուէ , զի նոքա յագեսցին ॥ .  
Տափ . Ե . 6 : Հապա ազահուլթիդ դարձուր  
հողևորին . գիշեր ցորեկ փափաբէ՛ արդարուէ  
և արքայուէն ւնյ . հերիք մըսեր հողևոր շա-  
հուդ , միշտ ջանա՛ վաստրկիլ , միշտ ջանա՛ վաս-  
տակդ էւելցնել , հողևոր խաղնադ շատցուր  
ու շատցուր ամ տեսակօք առաքինուլթեց և  
բարեգործուլթեց . որոնց ամմէն մէկը մէյմէկ  
պապէթ ճէվահիր են , մարգրիտ , ոսկի և ար-  
ծալթ . մէկ խօսքով՝ արդար և ճմարիտ խաղ-  
նայ . \* այսոքիկ են դանձք արդարուլթէ ॥ , է-  
սայի մարդարէին ըսածին պէս . առաբեալն ալ  
կրսէ . \* շահավաճառ մեծ՝ անպաշտուլթին է՝  
բաւականուլթէ հանդերձ ॥ . Լն : Աս խրատ-  
ներս ծոցդ պահէ՛ իբրև նուսխա մը , որ չէ թէ  
միայն ազահուլթէ ախտին դեղ կրլլան . հապա  
նաև մնացած երկու ախտից , որոնց վրայ հի-  
մա պիտի խօսինք :



Գ Լ Ժ :

Ախար որհրամուլուէ և բղջխտհուէ, և ղէ հապիէ  
դէղ նոցա՝ բարեխառնութի :

Թ. Ես երկու մարազը մէկ տեղ բերինք, երկու սոյ հիւանդներն ալ մէկ հիւանդանոցի մէջ դրինք. ինչու որ՝ հէ՛մ երկուքին դեղն ալ մէկ բան է, ի՛նչ բարեխառնութի. հէ՛մ երկուքն ալ մէկ կուռք կը պաշտեն, ի՛նչ մարմինը. ուստի ըսաց առաքեալը. \* որոց անո՛ր որովայնն է, և փառք ամօթն իւրեանց ॥ :

Հասարակօրէն որհրամուլուիք խըլաւուզ կը լայ բղջխտհուութի, ինչպէս որ պօղազը պէս լէմիշ կընէ զփօրը. զերէ զիրացնելով զմարմինը՝ կը գրգռէ զանի ապստամբել ՚ի հոգւոյն. և չիկշտանալով շատակերութի և արբեցութի կը յորդորէ խոզի պէս տղմի մէջ թապալտրկել, և նոյն տղմուտ կերակուրը ուտել. \* Այս է անօրէնութի սողոմայ բեռ բո. ամբարտաւանութի ՚ի յղփութի հացի և յղփութի դինւոյ՝ փափկանայր ॥. Լն. էղէէ. Ժղ. 49 : Ո՛վ կուրութեան որդւոց մօրդկան, ո՛վ անբանութի բանականաց. որք խոտօրելով անո՛ր դրած ճամբէն՝ կինկնան ՚ի խորխորատ կորստեան՝ իբրև անբան անասուն՝ անասնական մեղօք ցանկութեան. \* մարդ ՚ի պատուի էր, և ոչ իմացաւ. հաւասարեաց անասնոց անբանից, և նմանեաց նոցա ॥. սաշ. խղ. 13 : Որհրամուլութիւնը չեղան մի պատճառ. որ պտուղ մը ուտելու պատ

պատճառաւ՝ ընկաւ առջի մարդը իր առաջին պատճառոյն , և նոյն ատեն իմացաւ զմեզս ցանկութեան . մերկացաւ զշնորհս , մերկ մնաց ՚ի հոգւոյն , և բաւորովին մարմին կտրեցաւ բովանդակ մարդկային բնուիս . որով անկաւ ՚ի յետին ապականութի մեղաց և մահու :

Թ . Աճ որ ըրաւ զմարդը ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ , սքանչելի կարգ կանոնալ դրաւ՝ անապական պահելու և պահպանելու իր հոգին ու մարմինը : Հոգին անով կրպահուի ու կրպահպանուի՝ որով որ կրգոյանայ . Կր անմիջապէս անով որ է բաւորովին հոգի , և անային բաներով , որ են հոգեղէն . Կր շնորհք և առաքելութի : Մարմինն ալ կրպահուի և կրպահպանուի՝ որով որ կրգոյանայ . Կր հոգեղէն բաներով՝ զոր ստեղծեր է ան՝ ՚ի ծնունդ և ՚ի սնունդ մարդոյն և ան կենդանեաց . միայն լծէ չափը դիտանան , ու ճամբէն չելան՝ ինչ որ բնութի պիտոյ դրեր է ան :

Ծնունդ դրեր է ան , որ կենդանւոյն սոյր պահուի . սնունդ դրեր է , որ նոյն կենդանւոյն անհատը պահուի : Աս երկուքն ալ ճամբով գործածելու համար անձ օրհնեց զմարդիկայն բանովը . \* աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր . . . և ան խոտ կամ բանջար , և պտուղ . . . և ան զեռուն՝ որ է կենդանի , ձեզ լիցի ՚ի կերակուր ॥ : Թն . ան . 28 . 29 : և լծ . 3 : Եւ որովհետեւ ծնունդն ալ սնունդն ալ մենծու ծանր աշխատանք կուզէր , ան ամեն ճամբան խօլայցընելէն էտե՝ զգայական ախորժ մը կի՛ համարնալ դրաւ , որ պէտք եղածէն էտ չեքաշուի բնուիը , հապա յօժար սրտով կատարէ . ինչպէս դժար խմելու դեղի մէջ կտոր մը անուշ կըխառնեն վարպետ բժիշկները՝ որ տը-

զաք սիրով առնեն այն դեղը: Չէ նէ, ո՞վ յանձ  
կառնէր այնչափ աշխատիլ հացի ու կերակրի  
համար, երբոր անկից համ մը չառնէր նէ. ո՞վ  
յանձ կառնէր ծամել ու կուլ տալ կերակուրը  
դեզի պէս՝ իրեն սնունդ ըլլայ տէյի, թէ որ  
հետն ալ բերանը ու կոկորդը չանուշնար նէ:  
Ե՛ւս առաւել՝ ո՞վ յանձ կառնէր այնչափ աշ-  
խատանք քաշել, բարայ մասրաՖ ընել, ու  
հարսնիք ընել, անկից էտե կնկան կմ էրկան  
խահրը քաշել, զաւկին ուղրին այնչափ տէրտ  
քաշել՝ թէ ծննդեան՝ թէ սննդեան պատճա-  
ռով, ինչո՞ւն որ հասըլ բերեն ու մարդ ը-  
նեն իրենց զաւակը, եթէ որ աս բանիս մէջն  
ալ զգայական ախորժ մը չըլար նէ:

Գ. Այս ախորժ զգայուն՝ որ լն ինքեան ան-  
տարբեր անունով հեշտութի կըսուի, ցի խօ-  
լայութի մը՝ կամ դիւրուի մը մարմնոյ, ( զերէ  
հեշ ըսելը՝ դիւրի կմ խօլայ ըսել է ) վն պակա-  
սաւորուն ապականել բնութես շատ անգամ  
կըլլայ կոր հեշտախտուի. ցի մարտղ մը՝ սալթ  
ախորժը ուզելու, սոսկ իր քէՖին խօլայուիը  
մնտուելու, միայն իր մարմնիը պաշտելու,  
խօլանմիշըլլալով չափէ՛ի դուրս այն բանին  
վրայ՝ որ միշտ չափաւոր ու բարեխառն պիտի  
ըլլայ. ապա թէ ոչ՝ չափը անցնելուն պէս կմ  
ճամբէն ելածին պէս՝ կըլլայ բարեխառնուն  
տեղը չարախառնուի. որով նյ դրած կանոնն  
ալ կաւրի, շիտակ միտք և ողջ խորհուրդն ալ՝  
որ բանականի կըլլայէր՝ կաւրըլի, և կըլլայ  
ողջախոհութե տեղը՝ պլծախոհուի, աս է ը-  
սելը բղջախոհութիւն: Ինչպէս ուտել խմելն  
ալ՝ երբոր չըլլայ այնչափ՝ որչափ պէտք է  
մարմնոյն սննդեան, հապա չափը անցնէ,  
կըսուի որկրամուլութիւն կամ որկորածէտու-  
թիւն,

Թիւն , և արբեցուծիւն կամ դիւնուլուծիւն : Ասոնք ասանկ ըլլալուն պէս՝ վախճանն ալ կը խանգարի ծննդեան և սննդեան . անանկ որ որկրամուլուծիւր կանցնի՝ ի կարգ անձնասպանուծե , և բղջախոհուծիւր՝ ի կարգ մարդասպանուծե : Չերէ ինչպէս շատակերուծիւր և շատ խումը՝ փոխանակ պահպանելոյ կը պակասեցնէ անհատին կեանքը . ( ուստի որկրամուլք և արբեցողք շատ չեն ապրիր ) . նմանապէս բղջախոհուծիւր շատ կերպով կը փճացընէ տեսակին կեանքը , և ս և անհատին . որու չը գիտնալը տահա աղէկ է՝ քան թէ գիտնալը : Բայց այն է սոսկալին , որ աս մեղքս ընօղը չի կրնար չգիտնալ մեղք ըլլալը . վէ լաքին թանձր տղիտուծք ( որ կը սու՛նի յաղթելի , ուստի և պատժոյ արժանի ) շատը կան որ ծանար մեղքը թեթև քան մը կը սեպեն . ասոր համար մեզի ալ հարկ է՝ այնչափ հասկըցընել , որչափով պէտք է որ հասկընան մեղքին ծանրուծիւնը , և իմանան իրենց մահաբեր հիւանդուծիւնը . և անոր կեօրէ մարազնին բանան վարպետ հէրիմիմը , ու սալելն տո՛ւած դեղը առնեն սիրով . չէ նէ՝ վերջերնին սղորմելի է . որ մարմնասպաշտուծք պիտի ըլլան կերակուր որդանց անմահից դժոխց :

Պ . Որկրամուլուծե վրայ կարճ կը խօսիմ . ինչու որ յայտնի է անոր ներելի՝ պակսուծիւն ալ , մահուչափն ալ : Ներելի կը ըլլայ որկրամուլուծիւր , երբոր քիչ մը է կեկորդ ծախք կը ըլլայ ուտելու խմելու . երբոր խիստ հավէտով և աչքածակուծք մը սուֆրան կընստու՛նի . երբոր կուշտ ըլլալէն էտև՝ միտէն է կեկի կը ծանրանայ . պէօհիւղիւր կը ըլլայ , քիչ մընալ սիրտը կաւրըվի . որ ինքն ալ կերածին փիւշման կը ըլլայ :

Իսկ մահուցափ կը լայ որկրամոլութիւնը, երբոր շատ աւելորդ ծախք ու մսխողութի կը լայ կե-  
 րակրու համար. երբոր խիստ աչքածակութի կը լայ ուտելու՝ սանքի բոլոր սուֆրան լա-  
 փել կուղէ անգահ և չիկշտանալու կերպով. երբոր այնչափ կը ծանրանայ միտէն՝ որ հարկ կը լայ փոխել, կի՛ բնութիւնը կը խանգարի՝ ու հիւանդ կը լայ տէօշէկ կրնկնայ. կի՛ մախսուս կը փրօխէ՝ որ նորանց կարենայ ուտել: Ասոնք են ասըլ որկրամոլութի, որ է գործ հայվանի-  
 ուսկից կը ծնանի բթամտութի, անասնաբա-  
 րոյութի, ծուլութի, դատարկութի, խենե-  
 շութի, պղծութի. ևս և գողութի, յափշտա-  
 կութի. ևն:

Ասկից կուզայ ուրիշ պատուիրանքներն ալ ու-  
 տից տակ առնել. զորօրինակ պահք օրը աւ-  
 բել առանց իխտիզայի, ու եկեղեցնայ թէմ-  
 պէհը բանի տեղ չի դնել. ծաղր ընել պահք և  
 ծով բռնողները. ուրիշներուն ալ զօգ ընել որ  
 պահքերնին աւրեն, կամ էւելորդ ուտեն ու  
 խմեն, զինուֆան, որ անոնց զէֆքը հանեն.  
 և այլ շատ անկարգութիւններ:

Ե. Մահուցափ որկրամոլութեան եղբայրն է  
 արբեցութիւր. որու ներելին քիչ կը լայ, շատ  
 անգամ մահուցափ է: Ո՛վ չգիտեր որ այնչափ  
 դինի խմել՝ որ քիչ մը լեզուն բացուի, սիրտը  
 բացուի, կամ քիչ մը խամը խասէֆէթը մոռ-  
 նայ, առանց մեղացալ կըրնայ ըլլալ. և աս  
 մտքովս կըսէ սք գիրքը. \* տուք արբեցութի  
 արտմեցելոց, և գինի ըմպել ցաւագնոտաց || .  
 առաջ. լւ. 6: Քիչմալ էւել փախընէ նէ՝ որ  
 սկսի լեզուն քիչ մը ծանորնալ, կի՛ ոտքին ու-  
 ժը կտրիլ, (ամմա միշտ խելքը գլուխը, ու սիր-  
 օրը չի խառնուած,) կը լայ ներելի մեղք. ա-  
 սոնք

անք չեն ըսուիր արբեցութի, հապա զունար-  
թանալ 'ի գինւոյ :

Իսկ յատուկ արբեցութիս՝ որ մահուչափ մեղք է, ( ուստի կըսէ առաքեալը . \* մի՛ արբենայք գինւով, յորում զեղխուի է || . էփես . ն . 18 . ) այն տէրէճէ խմելն է՝ որ մարդը կըսկըսի իր մէն դուրս ելլալ, զինքը կորսնցնել, բանականութիը խանգարուիլ, լեզուին եկածը խօսիլ, օրհնել, փախել, քֆրել, պոռալ, սլոռչալ, կամ շփանալ՝ խեղեփնալ խենդուկլանմիշ ըլլալ առասպել խօսքերով ու շախաներով . չկարենալ ոտք ելլալ, ոտքի վրայ դողդոջալ, գլորակիլ, ըրածը չըրածը չգիտնալ, սիրտը խառնուիլ, փսխել, ևն . էն ետքը շնդուկիլ, ու թանձր քնէ էտե ծանտր մահմուրութի քաշել :

Չարաչար արբեցութի կըլլայ, երբոր սովորութի կըլլայ գինուփալը . անանկ որ չի կրնար վաղ գալ . որ է հիւանդութի անբժշկելի, և ախտ դժոխային . ասանկ մարդը իրաւցընէ իր տունը դժոխք կընէ . զինքնալ կէրէ, զուրիշներնալ կէրէ կըլլափէ : Ասանկ հարբեցողները հայվանէն պէթէր են . զերէ բնութք անքան չեն, որ մէկ թիւուիւ գործք ընեն՝ կարգաւորեալ կ՛անկարգ . հապա բանական կենդանի ըլլալով՝ իրենց բանականութիը խանգարելէն էտե՝ ամիէն անբան անասնոյ վարքը կառնեն, իմ ամիէն անկարգութիը կընեն, ( ինչպէս բարկացողներուն համար ըսինք . ) և մանաւանդ հոգևոր և մարմնաւոր ծուլութիւն, անասնամտութի, դիւանկան բարկութի, հայհոյութի, յանդդնութի, մարդասպանութի, բղջախոհութիւն, ևն . և 'ի վախճանի յուսա հատութիւն :

դ. Հապա ի՞նչ ըսենք բղջախոհներուն , որ չէ  
 թէ դինիի հարբեցութի ունին , հապա խեն  
 դուժե , որ խելո՞ւնին ամմէն ի՞ծիր հարբած  
 է անկարգ սիրով և հեշտութե՛ն ախտով . \* վայ  
 որ արբեալը էք , և ո՞չ ՚ի գինւոյ ։ Այս է այս  
 պիղծ ըսածը , ոգի պոռնկութե՛ն , դև պղծու  
 թեան , դիրտ ամենայն գարշութեան մեղաց  
 անուանալ գարշելի , ինքն ալ գարշելի . ասկից  
 մենծ վատանունու՛ն չըլլար՝ որ մէկին անու  
 նը բղջախոհ ըլլայ . ուստի փերտէով պիլէ խօ  
 սին նէ մարդիկ , գէ՛շ անուան կուտան . գէշ  
 մարդ է , գէշ կնիկ է՝ կըսեն , կըլմնցնեն :

Աս անիծեալ արմատէն շատ ճուղեր կելլան՝  
 մէկզմէկէ գարշելի , որ ոչ բերան առնել կը  
 վայլէ , և ո՞չ անկաճ դնել . ո՞չ գրչի բերան  
 դնել . և ո՞չ մտքին քեօշէն տեղիք տալ : Աստի  
 պէտք է դիտնալ , թէ խոստովանանքին մէջ  
 ի՞նչ կայ հարկաւոր յիշելու : Նախ՝ մտքին ան  
 մաքրութիւնը , թէ որ մէկը կամաւորապէս էյ .  
 լէնմիշէ եղեր նէ՝ սրտին յօժարութենովը . ղե  
 րէ թէ որ սիրտը մաքուր է՝ ու խապուլ չընէր  
 նէ , ինչ որ անցնի սոսկ մտքէն , պէտքը չէ  
 խղճահարութենով վախնալ . հապա միտքը ու  
 թիշ բանի տանիլ . ան ատեն հիջ մեղք մը չկայ ,  
 վարձ կայ :

Երկրորդ՝ բերնի անմաքրութիւնը , թէ որ ա  
 ռասպելխօսքեր զուրցեր է նէ . մանաւանդ  
 ինքը բացեր է նէ անանկ պիղծ խօսքերը . լը  
 սօղն ալ ճահիլ է եղեր , ու չգիտցած բանը  
 սորվեր է նէ : Երրորդ՝ անկըճի անմաքրութիւնը ,  
 թէ որ անանկ խօսքեր մօիկ ըրեր է իր կամ  
 քովը . մանաւանդ մախտուս էտէ է ընկեր  
 անկաճադրութի ընելու հետաքրքրութենով :  
 Չորրորդ՝ աչքի անմաքրութիւնը , որ կըսուի՝

յայրատ հայեցուած , թէ որ համարձակ նաջեր է պէտք չեղած բանի , կմ ուրիշ սոյ անձին՝ չար մտքով ու ցանկանալով . զի \* ամենայն՝ որ հայի ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա , անդէն շնացաւ Է նմա ՚ի սրտի իւրում ॥ . Ծառի . Է . 38 : Հինգերորդ՝ շոշափեւեաց անմաքու թիւնը , թէ որ ձառք դպուցեր է չար մտքով ուրիշի կմ իր անձին . թէ որ էլ շախասի ըրեր է անպարկեշտ կերպով , կմ սախընմիշ չէ եղեր ընողէն . և ինչ տէրէճէ անկից իրեն կմ ուրիշին մեղքի սէպէպ է ելեր :

Աս հինգերորդին մէջն է գործքով կատարելը որ և իցէ պիղծ գործք մը . ուստի խոստովանանքին մէջ պիտի ըսուի տեսակը պղծուէ , ու քանի անգամ որ եղեր է նէ : Տեսակները կըսուուին այն սոյ մեղքերը՝ որ մեկմէկէ մասնաւոր կերպով Փարդ ունին աւելի ծանրուէ մեղաց . զորօրինակ են՝ անասնադէտութի , արուճազի . աութի ( որ սողոմական կըսուի ) , սրբապղծութի , կուսապղծութի , շնութի , պտունկուի , զիջութի , ևն :

Է . Գիտեն և ամուսինք իրենց պարտքը հաւատարմութե և պարկեշտութե ու հնազանդութե . որ ասոնցմէ դուրս բան մը ըրեր են նէ , պարտական են խոստովանիլ : Գիտեն և ճահիլները ու կտրիճները իրենց պարտքը , որ ինչպէս սախընմիշ պիտի ըլլան հէմ ուրիշմէն սէպէպ մը չառնելու , հէմ ուրիշի սէպէպ չետալու , սէրպէստ շարժմունքով , աջխմէշտէպ հերարեթներով , և սատանայական հնարքներով : Մէկ խօսքով , ինչ որ բնութիւր կիմնայ՝ ու սիրտը կըվկայէ , թէ աս ըրածս անկարգ է , խպնելու բան է , խղճմտանքի դէմ է , պէտք է որ խոստովանանքին մէջ ըսուի . թող մեղք

Քէն խպնի՝ որ խոստովանանք ըլլալու չխպնի՝  
չէ նէ՝ հոն տեղը խպնօղը, պիտի խպնի բոլոր  
Յքիս առջև՝ դատաստանին օրը:

Աս անօրէն մեղքն ծանրուիլը յայտնի է սոս-  
կալի պատիժներէն՝ որ անձ տո՛ւեր է մարմնա-  
պաշտներուն . ասոր համար չեղաւ մի ջրհեղե-  
ղը . ասոր համար կրակէ անձրև չի թափեցան  
մի սողոմ գոմորի վրայ . ասոր համար չպատ-  
ժընեցան մի անհամար մարդիկ ամիէն ատեն ,  
որ՝ի գրոց և՛ի պատմութեց լսուած է , շատն  
ալ աչքով տեսնուած է :

Ը . Իրաւ որ այ առջև հպարտութիւնը տահա  
մենձ մեղք է . մարդասպանուիլ՝ այ ու մարդ-  
կան առջև ծանր մեղք է . ատելութի և ռիա-  
կալուի և այլ շատ մենձ մեղքեր կան . ամմա  
անձ աւելի յայտնի կրպատժէ զբոլորս հոնի :

Մէյ մը որ աս մեղքիս մեջ կըմտնայ հպար-  
տութիւն ալ՝ արհամարհելով այ հրամանը և  
չնորհքը . կըմտնայ մարդասպանուի , խանգա-  
րումս բնուի և այ դրած կանոնին . ևն : Թող  
որ շատ անգամ հոգի զայ կըլլայ՝ թէ կամա-  
ւոր և թէ ակամայ : կըմտնայ , կի՛ էտեէն կու-  
ղայ պէսպիս անիրաւութի լեղէմ բնկերոջը կի՛  
զաւկրններուն . իր տուննալ աւրել , ուրիշինն  
ալ . սոսկը մեղքի համար մտնել , մեղքով ըս-  
տակ ժողովել . գողուի , արբեցութի , խելածէ-  
տութի . ևն . և վախճանական անողջութիւն ,  
և խպառ յուսահատութի :

Մէյմալ որ որովհետև անբան անասուն կըլ-  
լայ մարդը աս մեղքով , ինչպիս հայվանը խօսք  
չի հասկընար՝ քեօթէկ չուտէ նէ , ասանկալ  
բոլորս հոնի՝ այ տայախին արժանի կըլլայ . եր-  
նեկ որ անով ալ ճամբայ գալու ըլլար :

Մէկ ուրիշ խորունկ պատճառ մալ կայ . անձ  
բո .

Բժշորո՞վին հոգի բլլալով՝ դերագոյ՞ն և գերաջ  
մարուր, անկից ծայրագոյն վարը՝ ծայրէ՛ ի  
ծայր՝ սոսկ մարմինն է անհոգի. և որովհետև  
սո՞՞սկ պատիճ է ըրեր մարդուս՝ տալով բանական  
հոգի՛ ի պատկեր իւր, երբոր մարդը ոտից տակ  
կաննէ իր հոգին, ու բոլորովին մարմին կը-  
կտրի, մարմինը կը պաշտէ նէ, այս բանս այ  
ի՞նչստ դժարը կուգայ. հարկաւ կը պատժէ ըզ-  
մարմնապաշտը, որ իրեն գայ խելաբերի. չէ  
նէ, անդին մնայ պատիժը նէ, անպատմելի է  
յաւիտեան անշէջ կրակը էրիլը:

Թ. Առջափ հասկընալէն էտև աս մարագները՝  
գա՛նք հրմա դելը նայինք: Մէկ հատիկ դեղ  
որկրամոլութե՛ն և արբեցութե՛ն, միանգամայն  
և ըղձախոհութե՛ն՝ բարեխառնութին է: որ է  
ըսել՝ չափաւորութի, բարեկարգութի, և կա-  
նոնաւոր գործածուի՛ զգայական բաղձանաց:  
Չափէն հարկաւոր բան չիկայ ամէն բանին  
մէջ. չափէն էւել բեռ վերցընողը կըսախտի.  
չափէն էւել վազողը կըյոգնի. չափէ՛ ի դուրս  
աշխատողը կըհիճանդանայ. չափէ՛ ի դուրս  
ստկի ետևէ ընկնողը ունեցածէն ալ կըզրկուի.  
չափէն էւել իտրաֆ մասրաֆ ընողը՝ թօփը կը-  
նետէ. ո՛չ ամբռուան տաքը կըբաշուի. ո՛չ  
ձմռան ցուրտը. բարեխառն հավայէն աղէկը  
ջըլլար. ի՛նչպէս է դարունը ու աշունը. ասոր  
նման իմացի՛ր ամէն բանին վրայ՝ որ իրեն չափ  
և խարէր ունի. ուրեմն ուտել խմելն ալ իր չա-  
փէն դուրս պիտի չելլայ, չէ նէ՛ մարմնոյ և  
հոգւոյ միանգամայն դէնը կըդպչի. նմանապէս  
զգայական հեշտուէն ալ կարգը կանոնը կայ,  
ատենը կայ, չափը կայ, օրինաւոր ճամբան  
կայ. որ անկից դուրս եղածին պէս՝ մեղք է  
հոգւոյն. մեղք է մարմնոյն ալ:

Ժ : Աս զգայական ախորժակը՝ որ լինանալու  
 ամեն բանի մէջ կը մտնայ հինգ զգայարանաց  
 խղձեթին կեօրէ, երկու կերպով կըխաբէ ըլ-  
 մարդիկ . մէկը կըսուի կառէ քնուլթե, մէկայը  
 ցանկոտի : Կարիքն է հարկաւոր երեցածը . ցան-  
 կուին է աւելորդ քէֆին ուզածը՝ մանաւանդ  
 արդելած բանը . զորօրինակ՝ Կարիք է կարօ-  
 տուլթի հացի և ջրոյ, պիտանաւորութիւն մէկ  
 խաթ մը հագուստի՝ մեկ պարտրկելու ու տաք-  
 ջընելու . յողնած մարդու քիչ մը հանգչիլ քը-  
 նով . տրտում մարդու քիչ մը մխիթարանք  
 լսել կամ տեսնալ . ևն . աս կարգիս մէջն են  
 նաև բնական անտարբեր գործողուիք մարդ-  
 կան, որ առանց մտտալու բնուէ կըգործեն  
 նման հայլանի . գորօրինակ հազալ, փռնդը-  
 տալ, քերուլիլ, բնուէ աւելորդը դուրս տալ  
 քրանքով, թքով, և այլ ուրիշ ճամբով :

Իսկ ցանկուի է էտեէ ինկնալ պէսպիս ուտել-  
 եաց և ըմպելեաց, խաթ խաթ մեծագին ու  
 փառաւոր հագուստներու, թէմպելուք շատ  
 քնանալու, ղէֆք սէֆայ ճիւմպիւշ ընելու .  
 բաղնիքով և այլ ուրիշ հնարքներով աւելի  
 ուհաթուի մը փնտռել . բանական գործքե-  
 ըր անբանիպէս ընել, և անբանական գոր-  
 ծողուիք՝ բնական և հարկաւոր բանիպէս բա-  
 նեցնել : Ասոնցմով հասկըցիր, թէ մարդուս  
 ապականեալ բնութիւնը՝ իրարու հետ կըխառ-  
 նէ կարիքը և ցանկուիք . և երկուքնալ միա-  
 կերպ հարկաւոր կըսեպէ իր քէֆին համար .  
 որով կըլլայ ամենայն անկարգութիւն և էտէտ-  
 սիզութիւն :

Ասոր ներհակ՝ առաքինուիք կըսորվեցնէ հե-  
 աու կենալ յամենայն ցանկուեց, որք հակա-  
 աակ կելլան բանականուէ . կարիքն ալ անանկ  
 բա-

բանեցնել՝ որ ցանկուածիր անոր մէջ մատ չի  
 խառնէ . ինչու որ՝ երես տանք նէ կարիքին ,  
 ցանկուէ հետ օրթախ կը լլայ : Անոր համար՝  
 երբոր կը տեսնայ առաքինի անձը՝ որ կարիքը  
 աւելի բան ալ կուզէ կոր ցանկուածնով , ան  
 տուն կարիքը պիտի կը կարճեցնէ , և կարելուէ  
 կեօրէ կը կարէ : Այս էր վարպետուի բնական  
 առաքինեաց հին փիլիսոփաներուն մէջ , որ  
 բարեխառնուէ առաքինուածնով կը կրթէին  
 զիրենք , անանկ որ հիջ մէկ կարիքի մը գերի  
 չըլլան , որ ցանկուէ ալ ծառայ չըլլան . հացը  
 ջուրը չափով կը բանեցնէին , որ եւելորդ կե-  
 րակրոյ ախորժակ չի գայ . հին ու մին խապա  
 բանով մը վրանին կը պարտը կէին , որ փափուկ  
 հագուստներ չուզեն . զգայական հեշտուածիր  
 պիտի շատ անգամ չէին բանեցնէր , որ ան-  
 կարգ սովորութիւն չըլլայ , և անկարգ կեր-  
 պով ալ չուզենայ . բոլորովին կորօղն ալ կը  
 դանձէր :

Բայց այս առաքինուիները շատ կերպով ան-  
 կատար էր փիլիսոփայից մէջ , որովհետեւ մէ-  
 ջը կը խառնէին կեղծաւորուի , մարգահաճու-  
 թիւն , երեսպաշտութի , փառասիրութի , ար-  
 ծածասիրութի , անձնասիրութի : անհաստա-  
 տութի , փոփոխամտութի , ևն . ուստի տեղ  
 դար նէ՝ բոլորովին չունը կկտրէին . և զամ  
 չար ցանկուի կը կատարէին գողութիկ մողտուկ .  
 դրսէն մաքրասէր ու սօֆու կերեւնային , ներ-  
 սէն լի՝ էին ամ անմաքրութի և գարշութի՝  
 նման դերեզմանաց բուլոց :

ԺԹ . Իսկ քրիստոնէական օրէնքը կատարեալ  
 կերպով կատարեց ու կը կատարէ աս սքանչե-  
 լի առաքինութիւր բարեխառնուէ՝ ողջ մաքով  
 և սք դիտաւորութի ու հաստատուն դիմաց  
 կու .

կուսուածք . անոր համար կրկոչենք զայս ան-  
 աքինուածիս՝ ողջախոհուածի և ժուժկալուածի  
 և զգաստուածի . և աս է ընելը պօղոս առաքե-  
 լոյն . \* Իսկ որք քնեանքն են , զմարմինս իւր-  
 եանց՝ ի խաչ հանին՝ կարեօքն և ցանկուածքք  
 հանդերձ ॥ . Գաղ . Ե . 24 : Եւ հռիփսիմեանց  
 համար կըսէ շարականը . \* Մերժեցին զկարիս  
 մարմնական կենցաղոյս , զի ծանեան՝ եթէ ե-  
 րազ է և սուտ պաճուածանք . ոչ հեշտացան ՚ի  
 գրգանս փափկուածի ; իմացան՝ եթէ անոտի է  
 անցաւոր մեծուծիս . . . . ժուժկալեալք փոր-  
 ձուածեց և պէսպէս լլկանաց . . . Նախանձելի  
 յօրինեցին զառազաստ կուսուածի . . . Ո՛վ ըզ-  
 գաստուածի իմաստուն կուսանացն , որոց ոչ  
 յաղթեաց հեղգուածի և քուն ॥ . և այլն :

Աս սքանչելի առաքինուածենով՝ այնչափ ըս-  
 քանչելի կուսակիօն հարք և վարդապետք և  
 ճգնաւորք և կուսանք պանին զանդամս երկ-  
 րաւորս , մեռուցին իրենց զգայական ախոր-  
 ժակը . կերակրով կշտանալը կտրեցին , գինի  
 խմելը բնաւ չյիշեցին , բաղնիք հիչ չհտեսան ,  
 և մարմնական հեշտուածի բնաւին ոչ համը և  
 ոչ հոտը առին . հապա ՚ի մարմնի անմարմին  
 հրեշտակի պէս ապրեցան . և այն առաւել ծա-  
 ծուկ առաքինուածք՝ որ կեղծաւորուէ շոշորդ-  
 չունենայ : Անանկ սքերալ եղան աշխարհա-  
 կաններուն մէջ՝ որ գրսէն ըստ օրինաց Յի և  
 հրամանաւն ան կարգո՛ւած էին , բայց ընկեր  
 ընկերոջը հետ խօսքը մէկ ընելով՝ քուր աղքար  
 էին իրարու , որ է ծայրագոյնն ՚ի կարգի ող-  
 ջախոհուածի , և հրաշալի նշան՝ որ իրեք ման-  
 կունքին կրակի մէջ ողջ մնալէն պակաս չէ .  
 յարդը ( Կ՛ սամանը ) կրակին հետ մէկ տեղ  
 կենայ՝ ու չէրի . աղը ջրին հետ մէկ տեղ ըլ-

լայ, ու չի հալի, մենձ հրաշք է : Աս հրաշքիս առջի նշանադորձ վկայն եղաւ ամենամաքուրն մարիամ սբ կոյս անձամին՝ մշտակոյս, մորենին վառեալ՝ որ ոչ այրիւր . և անոր հետեօղ սբ յովսէփ անձահայր՝ կոյս խօսալար կուսին :

ժք . Ասանկ գերազանց օրինակներ որ եղան նէ, մենձ բան է մի՝ որ ասոնցմէ ՚ի վար պապէթ պապէթ բարեխառնութիալ ըլլայ՝ բովանդակ քրիստոնէից մէջ : Առջի պապէթը կուսանքն են . քի մշտնջենաւոր ողջախոհութի պահօղները, որ էւելօք անձահայր ըլլալու մաքով՝ ուխտեր են ան իրենց կուսութիւր, և բոլորովին հրաժարեր են իրենց ազատ կամօքը ոչ միայն յապօրինաւոր, այլև յօրինաւոր հեշտութեց, պահելով աւետարանական խրատը՝ զոր տոճաւ քն անն մեր . \* են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վն արքայութե երկնից . որ կարօղն է տանել, տարցի : Ինչպիս որ քիչ մը առանջալ ըսեր էր . \* ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տոճեալ է . Գաթ . ժթ . 11 . 12 :

Երկրորդ պապէթն են այրիքը, քի որբեվարի ները, որ կը ժուժկալեն յերկրդ պսակէ, մասնաւոր դիտաւորութի մաքուր պահելոյ զիրենք ինչոճան ՚ի մահ :

Երրորդ պապէթն են ամուսնացել՝ ողջախոհները, որ քրիստոնէական պարկեշտութենով՝ կարգով կանոնով կը վարեն իրենց պարտքը իբրև հնազանդութի, որդեճութե վախճանով՝ որ ան դրեր է յաճումս եկեղեցւոյ :

Չորրորդն է պարկեշտութի և զղաստութիւն երիտասարդաց և օրիորդաց, քի կարիճներուն ու ճահիլներուն, որ երկիւղած և անավախ քեաժիւրութենով անարատ կը պահեն զիրենց հո-

հոգին ու մարմինը, զգուշաւոր և պինդ պա-  
 հելով իրենց ամբողջութիւն՝ անգին մարդարտի  
 ու ճէվահիրի պէս, որ մէյտանը չեն ձգեր,  
 հապա խըյմէթի կըպահեն խութիով անտկի  
 մէջ, ան ալ բալլիք բալլիքի վր կըպած, որ  
 ջըլլայ թէ գողցընի՝ ի դժոխային աւազակէն:  
 ԺԴ. Ասոնց ամմէնուն հէմ լէհանուր կանոն  
 կայ դեղոյ նախապահողական, հէմ մասնա-  
 ւոր: Ընդհանուրն է Նախ՝ երկիւնն այ, որ է  
 սկիզբն զգօնուն, և պատճառ ամ զգաստու-  
 թեն. երկիւղ կըսեմ՝ չէ՛ թէ սոսկ վախ մը ծա-  
 աայական, որ կըսոսկայ աստուծակ իբրև ՚ի  
 դատաւորէ, մանաւանդ թէ դժոխքին պատի-  
 ժէն, ( Փարազայ ան ալ աղէկ է առջի բերանը՝  
 մեղքէն հեռացնելու համար ապստամբ մար-  
 մինը, ) հապա աւելի որդիական անձավախուի,  
 որ կըսոսկայ մեղքէն՝ այ սիրուն համար, ու  
 կըզգուշանայ իր սիրական հօրը խաթրին զըպ-  
 չիլ. աս որ ըլլայ նէ՛ էտեէն կուգայ բուն ան-  
 սիրուի՝ ճշմարիտ սէր այ. որով չէ թէ միայն  
 մեղքէն կըփախչինք, հապա առաքինութեանց  
 էտեէ ալ կինկնանք՝ որ այ հաճոյական բան մը  
 ընենք. մանաւանդ մաքրուն հողոյ և մարմ-  
 նոյ, որ խիտ մախպուլ բան է այ առջև՝ իբ-  
 րև նմանութի հրեշտակաց. որոնց նման պիտի  
 ըլլանք երկինքը:

Երկր՝ մտածութիւն ներկայունն այ. որ հէմ  
 երկիւղածութի կըբերէ, հէմ պատկառանք և  
 յարգուի անձավայել. ուստի երբոր կըզգուէ  
 զքեզ մարմինը առ անպարկեշտուի և առ ան-  
 վայելուց խորհուրդ մը՝ խօսք մը կամ գործք  
 մը, դուն քեզի՛ եկուր, ու ըսէ. Ո՛վ անձն իմ՝  
 խելքդ գլուխդ ժողվէ, նայէ՛ թէ որո՞ւ առջև  
 ես կեցեր. ո՛վ կայ քովդ. անձ՝ որ ամմէն տեղ  
 է,

է, իմ քովս ալ է իր անբաւ մեծութիւնս և մեծ վայելչութիւնս, իս իր բուռինս ( ցի աւուճինս ) մէջն է բաներ անձ ամենակալ, և իր փառօք իմ սրբ տիս մէջն ալ նստած է միշտ թագաւորն փառաց՝ ան երկնի և երկրի • իժմէ հեռանար՝ կի՛ իս ձառքէ թողուր նէ, նոյն ատեն ոչինչ կըլլայի • \* նովաւ կեամք, շարժիմք, և եմք ॥ : Ասանկ է նէ, ինչպէս կրնամ ես անոր ամենատես աչքին առջևը անշնորհք բան մը ընել • թէ որ երկրաւոր թագաւորի՝ կամ իշխանի՝ և կամ պայազի մարդու առջև ալ կըխսանիմ ու կըվախնամ էտէպսիզուի մը ընել, հապա ինչպէս ընեմ պիտոր ան առջև : Ասով կըբաշուի բնութիւղ, և ապստամբ մարմինը կըհնազանդի հոգւոյդ, ու խելօք կըկենայ :

Երրորդ՝ կարճառօտ աղօթք մը սրտանց ( թէ մաքով ըլլայ, թէ բերնով, ) որ սլաքական կըսուի, և նեաի պէս ամպերը կըպատուէ, ու երկինքը կելլայ • թող որ արդէն ան ներկայութիւնը գիտնալով՝ սիրտդ ալ երկինք է, ուր նրստեր է անձ • \* արքայութիւնս ան ներքս՝ ի ձեզ է ॥ : Աստի հէմէն սրտովդ ան ոտքը ընկիր փորձութեան ատեն, ու ըսէ • \* Տի՛ փրկեա՛ զիս, զի կորնչիմ աւասիկ ॥ : կի՛մ, \* Մի՛ տանիր զմեզ ի փորձութեան, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ ॥ • կի՛մ, \* Մի՛ թողուր զիս ան թողուլ զքեզ ॥ • կամ սոսկ, \* Յիսուս, Մարիամ ॥ : Աս ըսելէն ի զատ՝ միաքիւ ալ հոգւոր բան մը բեր • զորօրինակ քսի չարչարանաց որ մասը որ կուղես • գեթսէմանի պարտիզին սիլէթը՝ արուն քրտնիլը, աննայի ու կայիափայ տիվանը ելլալը • սիլէ ուտելը • հերովդեսէն ճերմակ հագուստ հագնիլը • ու իրրե խենդ մը մասխարայ ըլլալը • պիղատասէն խամչի ուտելը • զինաւորներէն փշով

փշով պսակուիլը . խաչը կոնակը գողգոթաց  
 երթալը . խաչին վր դամուսիլը . ցաւագին սրբ-  
 տով սբ անձաճնայ վր նայիլը խաչին վրայէն .  
 ևն . ու ըսէ դուն քեզի . իմ արու և ստեղծողս  
 ասանկ բաներ քաշէ տէ , ես ինչպէս հեշտուի  
 փնտռեմ . ան իմ գլուխս է , ես անոր անդամն  
 եմ . հիչ փշով պսակած դիտուն՝ փափկասեր  
 անդամ կրվայլէ մի . յսին ձառքն եմ նէ , ոտքն  
 եմ նէ , կույն եմ կմ սիրտն եմ նէ , որ մասը  
 կուղեմ ըլլալ նէ , խաչի վր պիտի ըլլամ , ու  
 չարչարանք քաշեմ պիտոր . չէ թէ մեղանչաւ  
 կան ու մեղսասէր մարմինս պաշտեմ : Ասոր  
 նման՝ մահը , դատաստանը , դժոխքը , արքայ-  
 ութիլը , և մանաւանդ ասոնց յաւիտենակա-  
 նուիլը , և այլ ուրիշ բարի խորհուրդներ քեզ  
 մեղքէ կրպահեն : Իսկ արքայութե մտածուիլը  
 չէ թէ միայն մեղք դործելէն կը հեռացնէ , հա-  
 պա բարեգործութի ընելու ալ յորդոր կը լայ  
 քեզի : Աստի՛

Չորրորդն՝ և աւելի յորդորողն զմեզ՝ ի բարին  
 ամէն բանին մէջ , մանաւանդ ի յաղթել փոր-  
 ձուլթէ , վարձքը մտմտալն է : Ան թէ դիտ-  
 նային մարդիկ այ առատաձեռնուէ խըյմէթը .  
 խապար ես՝ թէ ան քեզի ինչ վարձք պատրաս-  
 տեր է մարմնաւոր փորձութիւնը յաղթելուդ  
 համար . ինչ մեծամեծ փութք պիտոր տայ քեզ՝  
 պզտիկ մէկ համբերութեդ համար . աչքդ որ  
 պահեցիր մեղքէն , արեդակնէն էւել լուսաւոր  
 պիտի ընէ . անկաճդ որ պահեցիր՝ հրեշտակայ-  
 ին անուշ երգեր լսել պիտի տայ քեզի . լեզուդ  
 որ պահեցիր՝ հրեշտակային լեզունով խօսիլ  
 պիտի տայ քեզի , և հաց հրեշտակաց՝ անձա-  
 ուելի զմայլումս պիտի տայ բերնիդ . ձառքդ  
 որ պահեցիր՝ թագաւորական գաւազան պիտի  
 տայ ,

տայ, և դուրսդ լուսեղէն թագ պիտոր դնէ . սիրտդ և միտքդ որ մաքուր պահեցիր նէ, իր սրտին վրայ քեզ պիտի հանգչեցնէ : Ամէն անգամ որ չար բնուիդ կրղսպես՝ մեղքէն կրփախցես կըզանիս, մէկ պղտիկ ապաշխարանք մը կընես, այ առջև մենծ կորճութի բրածի պէս՝ պսակներ կըվաստըկիս : Ինչու որ՝ եթէ լէ ամենայն դատարկ բանի անճ համար կըպահանջէ նէ արդարութի, հապա լէ ամենայն բարի բանի՝ լնու՝ ի բարութի զկեանքս քո, և պսակէ զքեզ ողորմութի և դթութի . քանզի ըստ ինքեան ողորմիլը կըսիրէ, ամմէնուն բարերարել կուզէ ամենաբարին բնութի . և՛ս առաւել որ մեզնէ մէկ իշարէթ մը տեսնայ՝ իր սիրուն համար համբերելու, ճէնկ ընելու լէդէմ մարմնոյ՝ ճի և սատանայի, որպիսի վարձք, որպիսի պսակ կարծես պիտոր տայ իր քաջ զօրականներուն : Ասոր համար շատ անգամ ինքը մախսուսալ թող կուտայ որ պատերազմ մը ունենանք, փորձուի մը քաշենք, ու համբերենք, որ պօլ պօլ մեզ վարձատրէ : Ուստի մեր անխելքութին է՝ որ ամմէն անգամ կըսենք թէ մեր մեղացը համար սա բանը՝ նա բանը կըքաշենք . հիչ չենք ըսեր՝ թէ վարձքի համար քաշենք : Ան իսէ՝ սքերը որ այսչափ վարձքի պսակի արժանի եղան նէ, անոնք՝ ալ մեզի պէս տկար ու մեղանչական մարմին ունէին . շատն ալ մեզի պէս՝ ու մեզնէ աւելի մեղաւոր էին . ամմա մեղքերնէն ետ կեցան, զղջացան, ու ՚ի փառս այ սիրով համբերեցին անմ նեղուեց, և սիրովն այ վառել պատերազմեցան ու յաղթեցին փորձութեց . և այնպէս անպատմելի վարձուց հասան . մենք ինչո՞ւ անանկ չըլսանք : Հինգերորդն է սըխ սըխ մօտենալ ՚ի խորհուրդ

խոստովանուէն և հարչորդուէն • խոստովանանքը կըմաքրէ զմեզ յանմաքրութեց, սրբութիւն կուտայ մեզ սրբութիւն սրտի • միանգամայն ալ կըզօրացընէ զմեզ անարատ մարմինն և արիւնն տն՝ յաղթել արատաւոր փորձուէց մարմնոյ և արեան, և անարատ պահել զհոգի մեր և ըզմարմին : Ասանկ զօրաւոր դեղ ունենալէն է տու՝ բնաւ ամենեկին չի վախնանք 'ի փորձուէ • միայն թէ բանեցնենք աս մէկ հատիկ կենաց դեղը • չէ նէ՝ սրխ սրխ կըճիւճանդանանք, ու կրնանք ալ մեռնիլ մահուչափ մեղքով մը :

Ասոր վրայ զատ ալ պիտի խօսիմ :

Վեցերորդն է ճնշումն մարմնոյ • որ է նեղել ու չարչրկել զչար մարմինը, որ կուզէ մեր հոգին չարչարել ու սպաննել մեղքով : Աս ճնշումն ( որ կըսուի մեռելութի կմ՝ մահացուցումն, սպանանել զանգամս մարմնոյ, 'ի խաչելանել լէ քսի, ) շատ կերպով կըրնայ ըլլալ • զորօրինակ պահք և ծոմ բռնելով՝ խոհեմ խոստովանասօր խրատովք • խարար հագնելով տակէն • մարմինը ձողկելով խամչիով • քնհատ մնալով • և այլ ամէն բանով որ մեր ապստամբ մարմինը կրնայ ճնշել : Կըլլայ որ հարպիճէ մանար մուշար բաներ ալ ճնշեն զմարմինը • զորօրինակ բազկատարած կենալ, ծունկ չաքիլ, միսը կըամթել, լեղուն խածնել, գլխէն մէկ քանի մաղ փետտել՝ ցաւցընելով • ևն : Մէկ խօսքով, մարմինդ որ տանջես՝ հոգիդ կըհան դստանայ :

Եթմներորդն՝ որ վերջինն է, ու ամէնէն առաջ պէտք է, զգուշութի յառթից փորձութեց • քի չի տալ սէպէպ մարմնաւոր փորձուէ մը մեր կամօք, հապա միշտ հեռու փախչիլ ամէն սէպէպներէն • զերէ աս փորձութիւնս

կրրակ մը նէ, որ անկից փախչիլը՝ անոր յաղ-  
 թել է, և յաղթելը՝ փախչիլն է. կրանկ տեսար.՝  
 փախի՛ր որ չէրես, ու չիտաքնաս պիլէ. աս  
 կրակը՝ աս ջուրս կուզէ որ մարի, քի՛ փախչիլ  
 պէտք է առաջուց: Եւ ահա ամեն մարդուն  
 փախչելիքը երեսն հանդիպած սէպէպներէն՝ է  
 մասնաւոր դեղ ամեն պապէթ ողջախոհնե-  
 րուն համար. որ հիմա կարդուլ հասկըցընեմ  
 պիտոր:

ԺԴ. Քեզի՛ կըտեմ ո՛վ կուսակրօն կրօնաւոր,  
 կամ կուսան հաւատաւոր ( որ մարապետ ալ  
 կըսուի ). կուզե՛ն անարատ պահել ողջախո-  
 հութիդ, փախի՛ր աս սէպէպներէս:

( ւն. ) 'Ի կամապաշտուէ. զերէ կամքդ որ կուտ-  
 րած ըլլայ, և հնազանդ թէ՛ մեծաւորիդ կամ  
 հոգեւոր հօրդ՝ որ ւնյ տեղն է, և թէ ուրիշնե-  
 րու՝ մեծի ու պղտըկի, մարմինդ ալ էր ապրու-  
 տամբ ուժէն կտրած կրմնայ, ու կըլլայ հնա-  
 զանդ հոգւոյդ. չէ՛ նէ, անկարելի բան է՝ ան  
 հնազանդ ըլլալ. ու կատարեալ ողջախոհ ըլ-  
 լալ. այնչափ որ՝ ւնծ պաղի անգամ անհնա-  
 զանդ և հպարտ անձինքներէն երես դարձը-  
 նելով՝ թող կուտայ որ դարշելի մեղաց մէջ  
 ինկնան, որ իրենց չափը դիտնան, ու դառ-  
 նան խոնարհ հնազանդ ըլլան: Ար'ես սը'ես ըրէ  
 այն աղօթքը շարականին. \* Տ՛ուր դօրութեւն  
 հոգւոյս կամաց՝ հնազանդել զկամս մարմ-  
 նոյս ॥:

( Բ. ) 'Ի համարձակուէ. քի՛ մի՛ բացուիր հիւ  
 մէկ կերպով մը. բացու՛ած վարդը անուշ  
 հոտն ալ տեսքն ալ մէկ տեղ կըկորսնցնէ. միշտ  
 խօնջայ մնացի՛ր վարդի պէս, և մաքուր ու  
 պայծառ զամպախի պէս. սէրպէստ մի՛ խօրա-  
 թեր՝ որ՛ւ հետ որ ըլլայ. բարձր ձան մի՛ հա-  
 ներ.

ներ . քահ քահ մի խնտար ճականի պէս . թէք  
 լիֆտիզ մի ըլար շախայ շուխայ ընելու . էլ  
 շախասի չէ , դպչիլ պիլէ չըլայ մէկի մը , կու  
 ղէ նէ աղբարդ ըլլայ՝ քուրդ ըլլայ . մօտ մի  
 նստիր , մի քրսվրտիր . շատ մի տեսնուիր ու  
 ըիշ մարդու հետ՝ որ բեզի խըսըմ ակրապայ  
 չէ . կուղէ նէ սք ու սրբազան անձ ըլլայ . հե  
 տը ընտանութի մօլենենար . մինաւորիկ նստիլ  
 ելլալ չըլլայ . սէր մը չիկապես հետը . չէ նէ՝  
 \* սկսեալ հողուով՝ յետոյ մարմնով վախճա  
 նիս ॥ :

( Դ . ) 'Ի շատխօսուէ . զերէ շատախօս ըլլալը՝  
 համարձակութի կուգայ , կամ համարձակուի  
 կրբերէ . երկան խօսակցութի մի սիրեր . մա  
 նաւանդ ուրիշ սոյ անձին հետ խօսքդ կարճ  
 ըրէ , ու կտրէ . եւայ օձին հետ կարճ խօսէր  
 նէ , եա հիչ չխօսէր նէ , չէր խաբուէր : Եր  
 կան խօրաթելը՝ իրարու մօրուքը համրել կու  
 տայ . ետքը խօսքէն խօսք կըծնանի , անկից ալ  
 չուզած դործքդ կըծնանի . եա՛ երկաթը քարին  
 ես զարկեր , եա քարը երկրթին , ելլալիքը կրակ  
 է : \* 'Ի շատխօսութի ոչ զերծցիս առանց մե  
 ղաց ॥ , կըսէ իմաստունը . առակ . Ժ . 19 : հիչ  
 որ չըլլայ նէ՝ խելացի խօսքերդ կըհատնի , ան  
 խելք բան մալ կըխօսիս . անշնորհք և անլայել  
 խօսք մալ բերնէդ կըփախցընես . աս ալ դիտ  
 ցի՛ր որ՝ ճականի բերան լաթիֆէ ըսուածը՝  
 քու բերանդ քիւֆիւրի նման է : Հագուստի  
 վրայ խօսիլ հարկ չիկայ . զերէ յայտնի բան է՝  
 որ Ծքէ հեռացօղը՝ Ծքի հագուստ պիտի չու  
 նենայ . միայն թէ ինչ որ հագնի նէ , վրան ա  
 դէկ պարտըկած ու պարկեշտ ըլլայ :

( Դ . ) 'Ի նայուածքէ . այն բանն որ քեզի չի  
 նար , կամ քեզի հարկաւոր չէ , մի նայիր , մի  
 տես .

տեսնար . և՛ս առաւել՝ արդիւած բանը . թէ որ եւայ չի նայէր արդեւած ծառին վր , անոր պտուղը սիրան ալ չէր ուզեր ու չէր ուտեր . ու մեր գլուխը այսչափ չարիք չէր կուտեր :  
**Ա**ս խրատս մէկալ պապէթներուն ալ պէտք է . ամմա անոնց ուրիշ ըսելիք թլ կայ :  
**ԺԵ .** Քեզի՛ կըսեմ ո՛վ այրի կի՛ որբելարի մնացածը , որ կամաւորապէս հրաժարեր ես ասկից էտե ճքէ , մէյմալ ճքի անուն չես ուզեր տալ : Թէ որ ստոյգ սրտանց ստոյգ այրի չես , սիրտդ ճքի հետ կապած է նէ , առաքելոյն խրատը գիտես , տահա աղէկ է ( կըսէ ) նորանց կարգու՛իս , քան թէ այրիս՝ քի էրիս հողւով և մարմնով . ապա եթէ ստոյգ այրի ես , նիէթդ ասի հաստատ դրեր ես նէ , ասկից էտե քեզ կրօնաւոր կուսանքի սրբան զիտցիր , ու անոր կետէ պահէ՛ ( Կ ) վերի դրած չորս կանոնը : ( Բ . ) **Ա**րագ գլուխդ պարկեշտութի վայլի , հաղուստիդ միջակ եօլու գունովը՝ ձեռովը , որ էտա իւլվան չի գանու՛ի . մանաւանդ դիտու զարդարանք չըլլայ , դերէ քու մարմնաւոր դըլուխդ չիկայ . հողեւոր դըլուխդ ալ քս անանկ դրսի զարդ չուզէր , հապա քու սրտիդ առաքինութե զարդերը կըսիրէ : ( Դ . ) **Շ**ատ մարդու հետ տեսնու՛իլ չըլլայ , անէ՛ ի տուն քալել չըլլայ . բամբասանք՝ խօսք խօրաթայ բնաւ չըլլայ . քու վրագ հիչ խօսիլ մի տար՝ ո՛չ աղէկ , ո՛չ գէշ : ( Դ . ) **Մ**ինաւորիկ հիչ մէկ էրիկ մարդու հետ մի տեսնու՛իր , լախըրտը մը՛ներ . մինաւորիկ ալ մի՛ նստիր . զաւկըներ ունիս նէ , անոնց հետ նստէ՛ ելի՛ր , անոնք աղէկ կառավարէ՛ . անկից մենձ բարեգործութի քեզի չըլլար . հասուն զաւակ չունիս նէ , քեամիլ կնիկ մը կի՛ մարապետ մը քովիկդ . ա՛ռ . և քու խը-

սրմներէդ մէկը ճարէ՛ որ քու առնելիք տալիքդ  
հողայ . դուն սօխախք մի՛ ինկնար . սէյիրի  
տեղուանք , հարսնիք մարսնիք երթալու հա  
վէս մընէր . քեզ աւելի հոգևորի՛ տուր , որ  
հոգևոր հարսնիքին արժանի ըլլաս . և արքայ  
ութեան մէջ կրկին պսակ առնես՝ կուսանաց  
և ամուսնացելոց հետ :

ԺԿ . Քեզի՛ կըսեմ ո՛վ Տական՝ կարողը՛ած , թէ՛  
երկ , թէ՛ կնիկ , կարգիդ կանոնը և պարտքը  
ճանչցիր , ու անոր կեօրէ շարժէ : Կնկանը  
պարտք է , որ իր դիտաւորին հնազանդ ըլլայ՝  
խոնարհ սրտով և պարկեշտ սիրով : Երկանն  
ալ պարտքն է , որ իր ընկերոջը հետ սիրով  
ըլլայ , առանց երես տալու՝ անուշ ըլլայ , ա  
նոր սիրտը չի կտարէ . \* իբրև տկար անօթոյ ॥  
պատիւ ընէ :

Երկուքիդ միատեղ պարտքն է , ( ւն . ) Սրտանց  
սիրել մէկզմէկ՝ աւելի քան ղեղբար և ղքուր .  
մէկ մէկու վրայ մեռնիլ , մէկ մէկու կանակ կե  
նալ , պաշտպանել , պակսութի մը խօնտուր  
միշ չընել . ուրիշի առջև մէկզմէկ այլալամիշ  
չընել . իրար պակսուեր չնայիլ , իրարու համ  
բերել . մէկզմէկ առանձին խրատել և յորդո  
րել սիրով . սըռերնիդ դուրս չի տալ . գլուխ  
դիտու տալ՝ աշխատիլ՝ տներնիդ աղէկ հողալ .  
և մէյմէկու համար ամմէն իժիր աղօթք ընել ,  
որ միատեղ ապրիք սիրով՝ ՚ի սէրն ւնյ , և միա  
տեղ արքայութի մէջ ալ յաւիտեան կենդանի  
ըլլաք :

( Թ . ) Ինչպէս մէկ սիրտ մէկ հողի էք նէ , ա  
սանկ ալ մէկ մարմին ըլլանիդ աղէկ գիտնաք .  
\* եղիցին երկուքն ՚ի մարմին մի . և այնուհետև  
ոչ են երկու , այլ՝ մարմին մի ॥ . Գորհ . Ժ . 8 :  
դիւրնիդ իրարու ծախուած է . դուն անորն  
ես ,

ես, ան քուկդ է. ձեր մարմնոյն տր չէք. \* զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյն պէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն ॥ . Թ. 4: Աս պարտքս անլուծանելի պիտի պահուի. աս հնազանդութիւն երկու կողմէն ալ կատարեալ պիտի ըլլայ. աս հաւատարմութիւն ինչո՞ւն 'ի մահ պիտի չաւրըլի: Խօսլայ կրօնք մը չէ՝ Յքիս կարգը մտնալը. դժար կրօնք է. Թող առաջուց մամտան, որ ետքը ընկրու եանկրու ջընեն:

( Գ. ) Մէկ մարմին պիտի ըլլաք. ամժա բոլորովին մարմին պիտի չըլլաք. հոգւով տոյ պիտի վարուիք ու կառավարուիք, որ որդիք տոյ կարենաք ըլլալ, դուք ալ՝ ձեր զաւկըներն ալ, Թէ որ անձ կամեցեր է տալ նէ. երկուքդ ալ զգո՞ւշ կեցէք՝ բարեխառնութե՛ն և պարկեշտունե՛ կանոնէն դուրս չելաք, բնութե՛ն օրէնքը չխանդարէք, մաքուր սիրտ և ուղիղ դիտարարուն ունենաք, անբնական և անբանական ճամբաներ չի բռնէք. չէ՛ նէ՛ անձ կըսողողի, զաւկի տեղ ցուցանքներ կըլլան ձեզի՝ մարմնով խոռ, սախատ, և հոգւով զալըմ, անկարգ. որ հախերնէն չէք կրնար դալ, անոնք ձեր հախէն կուզան:

( Դ. ) Չաւկի սեր, գութ, աղէկ կառավարութիւն. սալթ մարմիննին չհոգալ, հասպա աւելի հոգւոյն հոգ տանիլ, և իպրէթ տալ, որ երկիւզած, անձապաշտ, բարի զաւակ ըլլան, Թէրպիւիլի, խայրէթի, կարդալու ու բանի գործի եարար. անանկ որ տեսնողներն ալ փառք տան տոյ, ու կարենան ըսել ձեզի համար և ձեր զաւկըներուն համար, \* սոքա են զաւակ օրհնեալ յոյ ॥ . Էսայ. 49: 9:

( Ե. ) Աշխարհական ենք ըսելով՝ բրիտանիան թիւ

Թիւնը պիտի չիմոռնաք . ամիէն քանը ձեզի ճայիղ մի տեսնաք , լայնո՛ւարձակ ճամբան ձեզի մինասիպ մի սեպէք . հապա \* ամենայն ինչ ձեր պարկեշտութիւնք և լը կարգի ինիցի ॥ . ւ . հր . Ժ . 40 : Քրիստոնէական օրինացմէ դուրս չելլաք . յիշեցէք որ դուք ալ մկրտութիւն ատենը հրաժարեր էք ՚ի սատանայէ և յ՛Յէ և յիմ խաբէութիւնց նոցա . սուտ Յք կըսէք , տեսէք որ ձեզ չիխաբէ իր ստութիւնք . \* ույ օձն խաբեաց զեւայ խորամանկութիւն իւրով ॥ : Մէկ խօսքով , \* եթէ ուտիցէք , եթէ ըմպիցէք , եթէ զինչ և առնիցէք , զիմ ՚ի փառս ւնյ աքասջիք ॥ , կըսէ առաքեալն . ւ . հր . Ժ . 31 : ուրեմն նայեցէք որ ձեր ւնյ ըրածը խօսածը՝ մտմտացածը՝ անանկ ըլլայ , որ միշտ կարենաք ըսել , թէ աս բանս կընեմ՝ կըխօսիմ՝ և կըխորհիմ ՚ի փառս ւնյ . ան ատեն ան ալ ձեզ կօրհնէ և օրհնէ՝ ամենայն հոգևոր և մարմնաւոր օրհնութիւնք :

Ժ . Չեզի՛ կըսեմ ազատներ , նոր Ֆիտան ազապներ՝ կորիճներ՝ ճահիլներ . վայլեցէք ձեր ազատուիր լը ւնյ . քանի որ ատեն ունիք՝ զիտցիք ձեր ազատութիւն խըյմէթը , ատեն կուգայ որ գլխընիդ կըկապուի , ատ ազատուիր շատ պիտոր յիշէք : Բայց չըլլայ թէ պատրուակ չարութիւն ըլլայ ձեզի ատ ձեր ազատութիւնը . չըլլայ թէ բացուին ձեր աչքը ատենէն առաջ . չըլլայ թէ ծառ կենացը մէկ դի թողուք , ու երթաք ուտէք արդիլած ծառէն գիտութեան բարւոյ և չարի . ինչպէս ըրին մեր նախահայրը և նախամայրը իրենց ճահիլութիւն ատենը՝ չարաչար բանեցնելով իրենց ազատութիւնը՝ խորամանկ և օձաբարոյ սատանային խրատով . որով ընկան իրենց թագաւորական ազատու

տուժէ 'ի ծառայութի մարմնոյ մեղաց , և յո-  
ղորմելի եսիրութի հոգւով և մարմնով :

Առաջ եկուր պարկեշտ պատանեակ և կտրիճ  
երիտասարդ , նայի՛ ինչ պիտոր ըսեմ քեզի :  
Կուզես՞ ան և մարդկան հաճոյ ըլլալ նէ , աս  
կանոններս աղէկ պահէ :

( ւն . ) Մենծերուն խօսքը մտել . որով ծնողքի  
օրհնենք կառնես , և այ օրհնութիւնը արժանի  
կըլլաս . \* Պատուէ՛ա՛ դճայր քո և զմայր քո . . .  
զի բարի լինիցի քեզ , և երկայնակեաց լինիցիս  
'ի վերայ երկրին , զոր ամ ամ քո տացէ քեզ ॥ .  
օրհն . Ե . 16 : Ամա դնենք թէ դուն խելացի  
ես փրթեր . մենծերէն էլել է եղեր խելքդ .  
ամ իմաստութի՞դ էլելցնէ . դիտեմ որ տղայ  
չես , տղայութիւնը անցուցիր՝ հիմա աղէկը կը  
ճանչնաս՝ դէշը կըհասկընաս : Անակ է նէ՛  
ուրիշի խրատուն կարօտ չե՛ս մի ըսենք . սողո-  
մոն իմաստունէն շատ չէ խելքդ եա . ինքը հը-  
նազանդուի պահեց միշտ , ու ամիէնուն հնա-  
զանդութի քարոզեց . \* որդի՛ եղեալ եմ և ես  
( կրսէ ) հպատակ հօր իմոյ , և սիրեցե՛լ յաչս  
մօր իմոյ : Լուր որդեակ խրատու հօր քո , և  
մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ . զի պօսակ շնորհաց  
ընկալցիս 'ի գլուխ քո ॥ . Լն : ա-ակ . ւն . 8 . դ .  
3 : Քսի չափ չես կրնար ըլլալ եա . անոր աշ-  
կերտն ես , դոնէ անոր պիտի նմանիս , իրեն  
պէս հնազանդ պիտի ըլլաս . \* և էր նց հնա-  
զանդ ॥ , կրսէ աւետարանը : Հար մար չունիս  
նէ , քեզնէ մենծ եղբար ունիս , քեզնէ վեր  
մարդ ունիս . անոնց խօսքովը քալէ , քո խել-  
քովդ մի շարժիր . չէ նէ՛ սանձարձակ ձիու  
պէս լեռնէն վար կըղլորիս , տիւմէնսիդ նաւու  
պէս ծովը կըկորսուիս :

( ք . ) Քեամիլութի սիրել , քեամիլներու հետ  
տես

տեսնուիլ . Ճահիլներէն հովարտաներէն հե-  
 ոու կայնիլ : Նայէ ի՛նչ բարի անուն և իճԹի-  
 պար ունին քեանիլները , ի՛նչ գէշ անուն ու-  
 նին ճահիլները . դուն որ վար կը զարնես առ-  
 սրղները՝ ըստրղները , կերուխում սիրօղները ,  
 խումարպաղները , ի՛նչ բան ունիս անոնց հետ .  
 Թէմիզ հագուստով ինչո՛ւ քեօմիւրլիւխ մըտ-  
 նաս . Թէմիզքեան բղիբ հողւով և մարմնով ,  
 որ երեսդ ալ ճերմակ ըլլայ այ ու մարդկան  
 առջև :

( Դ . ) Բերանդ մաքուր պահել . ո՛չ քիւժիւր ,  
 ո՛չ առասպել խօսք , և ո՛չ անշնորհք շախայ :  
 Ինչպիս մաքուր հայլին մէկ շնչով մը տունուխ-  
 լանմիշ կըլլայ , որ մէջը բան չէրկնար , եա-  
 երեսդ աղտոտ կրցցնէ . ասանկ ալ մէկ անմա-  
 քուր խօսքով մը՝ սրտի սրբութիւն կաւրրվի՝  
 խօսողի՛ն ալ՝ լսողի՛ն ալ : Նոյն օրինակով ջանա՛  
 մաքուր պահել օւջքդ ալ . պէտք չեղած բանը  
 չի տեսնաս . չէ նէ՛ կրգէճիրոտիս կրմեանիս .  
 \* Ել մահ լը պատուհանս ձեր . և եմուտ յեր  
 կիր ձեր ॥ . Երե՛ծ . Թ . 21 : Յօք երանելին իրկար-  
 ճութէ պէրի աս կանոնս նիէԹով կը պահէր .  
 ուստի կրօէ . \* Ուխտ եդի ընդ աչս իմ , և ոչ  
 հայեցաւ ՚ի կոյս ॥ . Եր . Լն . 1 : և՛ս առաւել  
 անպարկեշտ անձանց վրայ մի նայիր :

( Դ . ) Դատարկ չի կենալ . սատանան որ քեզ  
 պարապ դռնայ նէ , առջի գործքը կըլլայ քեզ  
 ձգել ՚ի փորձութի մարմնոյ : Բանիդ գործիդ ,  
 զէնահատիդ՝ քեօրիդ , կարդալուդ՝ աղօթ-  
 քիդ , խզմէԹիդ էակէ ըլլաս նէ , ո՛չ դուն ա-  
 տեն կունենաս մեղք մը միտքդ բերելու , և  
 ո՛չ սատանան կրնայ քովդ մօտենալու : Ինչպիս  
 մէկ մարդ մը զքաղմունքի մէջ ըլլայ՝ ուրիշնե-  
 բուն հետ մասլահատ մը տեսնալով , դուն ան

ատեն անոր քովը չես ուզեր ու չես ալ կրնար  
մտանալ, բան ունի տէյի. հասա պարապ ա-  
տենը կրօնատուես՝ որ ուզածիդ պէս հետը կե-  
րիւշմիշ ըլլաս. սատանան ալ քեզի ասանկ կը-  
նէ. պարապ ատենը՝ քովդ կուգայ, զբաղ-  
մունքիդ ատենը մէկ դի կըկենայ:

ԺԸ. Մնաց որ ճահիլ ու քեամիլ խելահաս աղ-  
ջիկներուն ալ մէկ քանի կանոն պէտք է՝ վերի  
ըսածներէս ՚ի զատ. ամմա աղէկ կը լայ որ ա-  
նոնց ըսելիքս՝ իրենց մօրը զուրցնմ: Թող աչ-  
ուրնին բանան մօրերը՝ որ իրենց զակրնե-  
րուն աչքը չիբացուի. չէ նէ՝ ետքը շատ փուշ-  
ման կը լան, ու շատ մենծ համար պիտի տան  
այ: Այ դէշ մօրը, որ իր զակակը իրեն կը-  
նմանցընէ. վայ կուգայ աղէկ մօրը զլուսն ալ  
որ իրեն զակակը իրեն չինմանցնէր, երբոր  
կըրնար նմանցունել. առջինը կըդատապարտ  
ուի իրեն կրկին չարութենովը՝ որ ուրիշի ալ  
պատճառ եղաւ չար ըլլալու. երկրորդն ալ  
կըդատափետուի իրեն անհոգութեւր. հիմա մեր  
խօսքը ասանկ աղէկ մօր վրայ է՝ թէ ինչպէս  
հոգ պիտի տանի իր աղջիկ զակակը մեծցնե-  
լու ատեն:

Պըզտըկուց պարկեշտ պահելու է. կամքը կոտ-  
րելու է. աղօթքի, կարդալու, բան բանելու,  
թերպիէով շարժելու, խղճի ընելու սովորեցը-  
նելու է. պէտքը չէ թողուլ՝ որ ոչ իր առջեւ  
և ոչ ուրիշի առջև համարձակ կերպով խօրա-  
թէ, կամ շատխօսութի ընէ. անպարկեշտ կմ  
անվայել կերպ մը չունենայ՝ նատելու ելլալու  
պառկելու ատեն. վրայ գլուխը կոկ ըլլայ,  
ոչ փաշատած և ոչ խեղեփցած. երեսէն ալ  
ամօթխածութի կաթէ, հիճապը ու խպնիլը  
սիրէ պարկեշտ աղջիկներուն պէս: Ինչպէս ա-  
րիւ-

ընտրատելին իմաստուն աղջիկը՝ երբոր լսեց խելացի հօրմէն աս վարպետ հարցմունքս, թէ ասչափ գուներուն մէջ որ ըռէնկը կըսիրես, աս խելացի ու վարպետ պատասխանը տուաւ. ան ըռէնկը կըսիրեմ կըսէ, որ խափնկոտ աղջկան երեսը կըտեսնուի:

Դարձեալ պիտի նայի մարը՝ որ զուկին խելքը բացուցելէն էտե՛ օյունճախ բաներու ետեւէ չիյնայ, նոր իճատներ չիճարտարէ, հայլի առջև շատ չի կենայ, մանչիկներու հետ չի խաղայ. մինաւորիկ չի կենայ մէկ տեղ մը ո՛չ մանչու հետ, և ո՛չ աղջկան մը հետ. չէ նէ՛ սատանան անոնց մէջ կըմտնայ՝ միանձի կըլլայ՝ մանտր մուտր առուտուր ընելու: Քիչ մը մենծնալէն ետե՛ օտար մարդու չերևնայ, չի տեսնայ. դուռը չիկայնի, դռնէն դուրս հիչ չելլայ առանց մօրը. փէնչէրէն շատ չի նստի. խալապալքի տեղը հիչ չնստի. չէ նէ՛ ամմէնէն մէյմէկ հիսսէ կառնէ չարութեան, ինչու որ՝ աղջիկներու բնուիը հէ՛մ հետաքրքիր է, հէ՛մ զախտ ընօղ ամմէն տեսած ու լսած բանը:

Հապա ի՛նչ ըսեմ ան մարերուն, որ իրենց անմեղ զաւկըներուն արունը կըմտնան. անոնց առջև ամմէն բանը բաց կըխօրաթեն. սէտք չեղած բաները անոնց կըհարցընեն՝ որ աչու՛րնին բացուի, կըսորվեցնեն ու կըցցնեն չգիտցած բաներնին. աչըխ սէյիրներու տեղու՛անք կըտանին. առասպել խաղեր կանչել կուտան, կամ թող կուտան. և՛ն: դէշ մայր չէ՛ն մի ըսու՛նիր ասոնք վայի ու անէ՛ծքի արժանի: Երանի՛ այն ծնողաց՝ որ անձապաշտութե՛ և երկիւղածութե՛ կըմեծցընեն իրենց զաւկըները. որով հէ՛մ այ՝ հէ՛մ մարդկանց առջև գովելի կըլան իրենք ալ իրենց զաւակներն ալ:

Հա.

Հապա թէ ծնողքը աշխատին իրենց զաւկը  
 ներուն աղէկ ըլլալուն՝ հողևոր և մարմնաւոր  
 կողմանէ, ու զաւկրները աղէկ չելան նէ,  
 ծնողք իրենց վարձքը չեն կորսնցնէր, էւելօք  
 կառնեն. զաւկրներն ալ իրենց պատիժը չեն  
 անցունէր, չէ՛ թէ միայն անդին ( որ է սոս-  
 կալի, ) հապա աս աշխարքիսմէջն ալ ( որ վախ-  
 նալու բան է ). ինչպէս որ շատը աչքով տե-  
 սանք, ու կրտեսնանք կոր: Խելք ունին նէ  
 ուրիշ զաւակները, ասանկներուն օրինակէն՝  
 աւելի խելք կրրնան սորվիլ. անանկ որ՝ ինչպիս  
 աղէկներէն աղէկ օրինակ կայ առնելու, գէ-  
 շերէն ալ սախընմիշ ըլլալով հեռանան պիտոր,  
 ու ուրիշին պակսութենով ու պատիժով՝ ի-  
 րենք խրատոճին պիտոր. չէ նէ՛ ետքը իրենք  
 ալ ւնյ բարկութէր կրհանդիպին. և ան ատեն  
 ւնյ ձառքէն չեն կրնար զիրենք խալսել իրենց  
 սք ծնողքն ալ. ամմէն մարդ իր գլխուն ճարը  
 պիտի տեսնայ. որ չըլլայ թէ իր ծնողքը վեր՝  
 ինքը վար ըլլայ. կ՞ի իր զաւակը վեր՝ ինքը վար  
 ինկնայ, ինչպէս որ շատին կրհանդիպի երկու  
 կերպն ալ:



Գ Լ. Ժ Ա:

Հասարակաց համ ԲազմութենէրԳործական ցաւս՝ որք  
 աւելի գեղոյ հարօփին շորհացն ւնյ:

Օրմանք մը եկաւ ինծի ինքիրմէս՝ աս բա-  
 ներս գրելու ատեն. ատ ի՞նչ է ըսի, ես դեղ  
 կենաց կուղէի շարագրել ւնվ ընդդէմ ամե-  
 նայն

նայն հողևոր ցաւոց և մահաբեր հիւանդու-  
 թեանց՝ իբրև հողևոր բժշկարան մը • հիմա  
 ի՞նչ եղաւ • օխտը մահուչափ ցաւերը ձառք  
 առեր կերթամ կոր • ուրիշ ցաւ չիկայ մի դե-  
 ղի կարօտ • ( կարծեմ թէ կարդացողներուն  
 մտքէն ալ պիտի անցնի աս բանս : ) Մէյմալ  
 նայիմ որ՝ բիւր և անհամար ախտեր կան, որ  
 ո՛չ ախտերի խանութ և ո՛չ եղածի՛ կրնայ ա-  
 սոնց դեղ հասցընել : Հէլէ սկսիմ ըսի՝ մէկ  
 քանիին էղան դրել • տեսնամ որ՝ նոյն դեղե-  
 րը պէտք կըլլան կոր ամմէն ցաւու, ինչ դեղ  
 որ կայ տրուած աստուծով : օխտը մահուչափին  
 դէմ • մէյեր ( աղէկ մը նայիմ որ ) ցաւերն ալ  
 ան օխտէն դուրս չեն • քի ինչպիս ամենայն մեղք  
 ծնունդ են եօթնադուխ վիշապին, այսպէս  
 ալ անոնց հակառակ եղած առաքինուիները՝  
 ամմէն կերպ մեղքին հախէն կուգան :

Ուստի ամենեին էւելորդ երևցաւ ինծի՝ ալ  
 ուրիշ մեղքեր մէջ բերել, և մէկիկ մէկիկ դեղ  
 գրել • է՛նէ՛ կրկնարանութի կըլլար, ինծի ալ  
 կարդացողին ալ զլիսացաւութիւն կըբերէր :  
 Միայն թէ որովհետև փորձը կըցըցնէ որ պա-  
 ղի պաղի անիմանալի ցաւեր կան բաղմութե  
 մէջ, որ ամմէնքը Ֆարդին չեն երթար՝ թէ  
 ծանօտ բաներ են, և՛ ս առաւել՝ թէ ո՛ր մեղ-  
 քին ծնողքն են կի՛մ ձագերն են, և կամ սոսկ  
 մարդկային պակասութիւն մը կըսեպեն՝ իբրև  
 տկարութի ներելի, ամմա՛ իրենց վրայ ներելի,  
 ուրիշի վրայ աններելի, ասանկ ցաւերուն մէկ  
 քանին հարկաւոր կերևնայ հոս յիշել, որ ա-  
 նոնցմով՝ անոնց նմաններն ալ հասկըցուին :

ii • Առաջին՝ երևելի և աներևոյթ ցաւ մը նէ  
 հասարակաց՝ Անթաթուրի, կի՛մ անհոգութի կենաց  
 հոգոյն : Չեմ գիտեր՝ ի՞նչպիս կըլլայ որ մարմ-  
 նա

նաւոր կենաց կողմանէ ամմէն բանի խելք կը  
 թափենք . իսկ հողեորին ապուշ կըմանք .  
 կամ հայվանի պէս թէ վէքէլի կեանք մը կանց  
 նենք , կամ բոլոր բանականութիւնս միշտ Յքի  
 բաներուն կըծախենք , որ առեն պիլէ չիմար  
 թող թէ գլուխ չարն ու բարին հողւոյն մտա  
 ծելու : Հետն ալ անհողութի մը տիրած , որ  
 ամմէն մարդ անտոյթ կերենայ կոր իր կատա  
 րածին վր . կեանքերնին անցնել կընային՝ սանկ  
 նանկ . բայց կեանքը անցնելէն էտե՛ կեանք  
 մի կուգայ , թէ մահ , անի հողալ չիկայ՝ զերէ  
 մտմտալ չիկայ : Արդ յայտ է՝ թէ այս ախտ  
 է բուն իսկ ծուլութի ըսածնիս . ուստի անոր  
 դեղերը նայէ՛ . ետքը զանցառութե՛ մեղքի վր  
 ըսելիքս ալ կը տեսնաս :

Հիմակուց հիմա ես ասոր կըցաւիմ որ՝ անմը  
 տածութիւր , որ է կամ անբանութի կի՛ խելա  
 դարութի և կի՛ քնածութի , անանկ թագա  
 ւորեր է շատին գլխուն վր՝ որ մտածողը խենդ  
 կըսեպեն . հողւոյն հող ընողը խղճահար կը  
 համարին . հողեոր խրատ խօսողը՝ տղի խելքէն  
 վեր չեն դներ . հողեոր բանը՝ պօշ առեն ու  
 նեցողի պարտք կըկարծեն , կի՛ բան չունեցող  
 մարդու գործ է կըսեն : Ան իսէ՛ աս է ասը  
 մարդու բան ու գործքը , և առջի և վերջի  
 հարկաւոր գործքը . \* վախճան բանիս՝ զիմ  
 ինչ լուր . յիս երկիր և զպատուիրանս նորս  
 պահեա . վս զի այս է ամենայն մարդ . ( կամ ,  
 զի այս է մարդն ամենեկին : ) Չի զիմ արա  
 րածս ածցէ ան՝ ի դատաստան . յիմի անտես  
 արարելոցն՝ եթէ՛ բարի և եթէ՛ չար ॥ . Ժողով .  
 Ժք . 13 : Աւրեմս իրենց՝ քի Յասիրաց ըրածը  
 բոլոր դարտակ և անպիտան բան է . Քնաս ալ  
 մենծ , որ Յքի մէջ բոլորովին ընկղմելով աւե

լորդ հողօք հականօք ու գիշեր ցորեկ մտնը  
 տուքով՝ հողուով և մարմնով կըրնան կորսը  
 շիւ . ինչպս որ շատն ալ կըկորսընի : Մի՛ այս  
 պէս սիրելիք՝ մի . հապա \* զվերինն խորհե  
 ցարուք . մի՛ զայս՝ որ յերկրի աստ է ॥ . հողոս .

Գ . 2 :

Կապելու խենդեր ալ կան միջերնիս . է՛ն առաջ  
 լեզունին պէտք է կապել, որ անհոգութիւնին  
 առաջ տանելու համար՝ եւ խօսքով եւ գործ  
 քով կըսեն . մենք հիմակուց հիմա մեր աս աչ  
 խարքը նայինք, քէ՛Քէրնիս զէ՛Քբերնիս նայ  
 ինք, ետքը ինչ կուզէ՛ նէ՛ ըլլայ . ի՛նչ պէտք  
 է ըլլալիքը մտմտալ, ի՛նչ որ պիտի ըլլայ՝ պի  
 տոր ըլլայ : Ատանկ է մի . եա ո՛վ անխելք՝ ատ  
 խելքը ուսկե՛ց սորվեցար որ մարմնաւորին ետ  
 քը միշտ առաջուց կըմտմտաս . ինչո՛ւ ամբռ  
 վընէ ձմերվան զահրէ կտեսնաս . ինչո՛ւ իրիկ  
 ո՛ւնն ուտելիքդ՝ առտրվանց կամ կէս օր կը  
 պատրաստես . ինչո՛ւ այսօր կըվաստըկիս նաև  
 վաղո՛ւնն համար . բան մի՛ գներ՝ բան մի՛ ե  
 փեր, ու չունեցա՛ծդ կեր . աս չըլլար նէ, պա  
 րէ ասօրո՛ւնն վաստակդ հատցո՛ւր, վաղը ի՛նչ  
 կուզէ՛ նէ՛ ըլլայ : Աս անհոգութիս ընէիր նէ,  
 պէլքիմ կըրնայիր վաղո՛ւնն ապրուստն ալ վա  
 ղը վաստըկիլ ու անպիլ . բայց աս կենացս մեջն  
 որ հողուոյդ վաստակը չընես նէ, անդիի կեան  
 քը վաստակ չիկայ . ձեռքդ լեցուն մեռնիս նէ  
 քարի դործքով, յաւիտեան հարուստ կըլլաս .  
 ձեռքդ պարասլ երթաս նէ, յաւիտեան զիւյ  
 իւրօ կըլլաս . ասոր ճարը հիմակո՛ւննէ տես  
 նելու չէ՛ մի . ասանկ մենձ բանի անհոգութի  
 ո՛ւր տեղ կըսըլմի . դուն որ քեզ չի հոգաս նէ,  
 ուրիշ մը քու տեղդ հոգացող կայ մի . չիկայ .  
 հասա ի՛նչ խենդութի է՛ ի՛նչ թմրածուի է,

որ աս անցաւոր Յքիս համար ամմէն հոգ ու մտմտուք կրնես էւելօք, իսկ անանց և յաւիտենական Յքին համար՝ կամ բնաւ չես հոգար, կի՛ խիստ քիչ կը հոգաս :

Թ. Երկրորդ ցաւը՝ որ առջինին հետ ցաւելու բան է, ճշմանաւ զմահ, շեռնելու պէս ապրիլ: Ասկից է մարդկանց ամմէն կերպ անկարգուելը և այս է սատանային հնարքը՝ որ ինչպիս եւայի առջև զամժ սուտ հանել ուղեց, ու անոր ըսպառնալիքը՝ քի մահը յիշելը հեռացուց. որ աստուծոյ հեռացընէ զանի, \* ոչ եթէ մահու մեռանիցիք ॥ ըսելով. ասանկ ալ մեզ կը խաբէ ճարտար կերպով. մեռնիլ կայ ամմա կըսէ, ոչ եթէ այսօր կի՛ վաղը մեռանիցիս. աս մօտ տարիներս մահը քեզնէ հեռու է. տարիքը շատնայ, ատենդ լըմնայ, բանդ դործդ կատարուի. ետքը ետքը՝ մեռեր ես չես մեռեր հոգ մը՛ներ. հիմա հանգիստդ նայէ, մարմնոյ կեանքը ներկայ է՝ ատոր նայէ, հոգոյդ ալ ատեն կուգայ որ կընայիս: Ասանկ խաբուներ են՝ ի սատանայէ շատ մարդիկ. ետքը անդին աչուճընին բացուներ է՝ ճանաչել զբարի և զչար, դուն հիմա բարին ճանչցիր՝ մահդ մտմտալով, որ ետքի չարը չտեսնաս: Չերկնցնեմ. այլ միայն մէկ նոր բան մը կարդացողներուն միտքը ձգեմ, որ կարծեմ թէ քիչ մը արթընցընէ զիրենք, որով և ամմէն օր պատրաստ ըլլան մեռնելու, չէ՛ նէ՛ անպատրաստ գացողին բանը գէշ է:

Ըսելիքս է՝ կարճութիւն մարդկային կենաց՝ մարդկանց սովորական կարծիքէն շատ կարճ: Ասոր փորձը ամմէն մարդ չի կըրնար հասկընալ, երբոր տեղեկութի չունի Յքէս՝ թէ որքաղաք, որ գեղ, օրը քանի՛ մարդ կը մեռնի.

և մեռնողները քանի՞ տարուան են իրարու վրայ . կէ՛նճ շատ կըմեռնի՛ թէ ծեր . կէնճին մէջ աւելի կէ՛նճ , թէ աւելի տարեց : Ստոյգը այս է՝ անհամար փորձերով հաստատուած . որ միշտ պղտիկ հասակով մեռնողը շատ է ու խիստ շատ՝ քան զմեծահասակը : Անանկ որ հետաքրքիր հեղինակին մէկը ասանկ տէֆտէր մը կուտայ ընդհանրապէս :

Աշխրբիս մէջ եղած բոլոր մարդկանց չորրորդ փայը , քի չէյրէկը . մէկ տարւան չեղած կըմեռնի կոր . անոնց մէջն ալ տասը ամսական մեռնողէն շատ է հինգ ամսրվան մեռնողը . ասկից շատ է երկու իրեք ամսրւան , կամ նորածին եղածը :

Բոլոր մարդկանց՝ իրեք փային մէկը կըմեռնի կոր քսան կամ քսանհինգ տարին հասած չի հասած :

Բոլոր մարդկանց կէսը տղակուց կըմեռնի կոր՝ ութը տարի ու մէկ ամիս եղած չեղած .

Բոլոր մարդկանց կէսէն շատ էւելը՝ քի երկու անգամ երրորդ փայը ( ինչպէս վեցը՝ ըննին քովը , ) կըմեռնի կոր երսուներճինը տարին չի լըմնցուցած :

Բոլոր մարդկանց՝ իրեք անգամ չորրորդ փայը ( ինչպէս վեցը՝ ութին քովը , ) կըմեռնի կոր իտսուեն կի՛ յիսուն ու մէկ տարին չի հասած :

Օխտանասուեն կամ եօթանասուեն տարւան մարդ քանի՞ կայ աշխարքս նէ , ասկից իմացի՛ր որ՝ տասը տղոց միջէն որ մէկ օրը ծներ են զանազան տեղ՝ մէկ հատը միայն ատ տարիքը հասնի նէ , շատ քան է : Ութսուն տարեկան եղողը՝ երսուեն մարդկան մէջ մէկ հատը չըլար . ըննսուեն տարին հասնող՝ իրեք հարուր մարդկան մէջ մէկ մարդ մը կըլայ չըլար . իսկ հարուր

բուր տարեկան ապրող ( կրսէ՛ ասոնք դրողը , )  
տասու՛նէրիւ հազար մարդու մէջ մէկը միայն  
կրգըտնու՛ի : Բայց ես ատոր չեմ վարմանար .  
հապա շաշմիշ ըլլալու բան է որ մենք զմեզ  
աս մէկ հատիկ ապրողէն էւել կրբունենք . ու  
ասանկ կըխաբու՛նինք չարաչար :

Աս մէկ հիսապ մընէ ըսել ու անցնիլ չըլլայ .  
դուն ալ գիտցածիդ կեօրէ հիսապի նստէ , կը-  
տեսնաս որ՛ կենէ խելքէդ վեր է եղեր մահ-  
ու՛ն տէ՛ֆտերը . ամմա տահա աղէկ կըլլայ  
որ աւետարանական հիսապը բունես բու վրադ .  
\* արթո՛ւն կացէք , զի յորո՛ւմ ժամու ոչ կար-  
ծիցէք՛ դայ որդի մարդոյ ॥ : Աս բանս չի մտմը-  
տալէն է՛ որ մարդիկ անմահաբար և անճաբար  
կուզեն վարու՛իլ . ամմէնէն վեր ըլլալ , ամմէ-  
նէն հարուստ . համարձակ կրգործեն զչարը .  
հոգ չեն տանիր բարեգործու՛ն , և պատրաս-  
տուլթէ աս աշխրբէս անդին երթալու :

Չըսես թէ մահը չիշեւը մեղք չէ , մէկ անհո-  
գուլթի մընէ . ատ ալ ինչո՛ւ հոգւոյն ցաւե-  
րուն մէջ դրիր :

Ասանկ ցաւ մընէ՛ որ ես ալ չեմ գիտեր , թէ  
ո՛ւր տեղաւորեմ . դուն մտքիդ մէջ տեղաւորէ՛ ,  
ես խայիլ եմ : Մեղք չէ՛ կրսես . հապա ինչո՛ւ  
չես ըսեր՛ թէ կամ նշան է , և կամ պատճառ  
է մեղաց . ինչպէս ոտք չելլալը՛ գիշեր ցորեկ  
նստիլը կամ պառկիլը անշարժ , հի՛ւանդուլթի  
չէ՛ նէ , սախտու՛ն նշան է՛ անդամալուծուլթի  
կամ ետքի ծերու՛ն , որ մահու՛ն դուռը մտ-  
տեցեր է : Իշտահ չունենալ կերակրոյ , կամ  
մէտէ չունենալ ուտելու , միտէի աւերուլթի  
կուգայ . հիջ չուտես նէ , մահը քեզ կուտէ :  
Գ . Երրորդ ցաւը՛ անու՛նով մօտ առջի ցաւին ,  
գործքով այլանդակ՛ է դանդաղութի ( ցի էհմա .

լուծի կի՛ ետք ձգելը անհոգաբար) այն բանը՝ որ մեզ պարտական ըրեր ենք կատարելու . որ սոսկ ծուլութի՛ չէ, հապա անիրաւութիւն և անզգամութիւն: Շատ ճուղ ունի աս քեօքը չորնայլու ծառը, որ շատին սիրտը տնկուած է . ես մէկ քանի տալը ձառքով շոշափել տամ քեզի: Փորձով կրտեսնաս դրեթէ ամմէն օր ասոր անոր վրայ, ( երանի՛ թէ քու վրադ ալ չիտեսնայիր, ) որ շատը իրենց ծառաներուն, մշակներուն, բանուորներուն, սըւոր նըւոր տալիք ստակը՝ որ արդար առնելիքնին է, ո՛ր չափ կուշացընեն . ինչու՛ն անոնց հոգին չի հանեն նէ, չեն տար: Շատն ալ կայ՝ որ ստիկ պարտք ընելու չեն վախնար . յիօխ կառնեն ( տուօղ ըլլայ նէ, ) շահով ալ ստակ առնելու խայլ կը լլան, բանի մը մէջ կը լսօթուին՝ որ ուրիշ ստիկով միայն կրնան դլուխ հանել . ասանկ քանին որչափ որ սրտանց ետեէ կինկ նան՝ ու աղաչանքով պաղատանքով, մանաւանդ թէ հնարքով մը ստակը վրանին կանցնեն, այնչափ ալ ետքը անփոյթ կը լլան պարտքերնին տալու, վճարելու պէս չեն . ատենն է եկեր, վատէն է հասեր, տուօղն ալ աւելի կարօտ է ըստիկ քան թէ առնօղը . բայց ո՛չ ստակ կայ, և ո՛չ անշահ շահը: Դնենք թէ ըստիկ շահ ուզողին մուստահախ է աս պատիժը . ետ խօսք տուօղին ու չիվճարողին ի՛նչ պատիժ պէտք է . երբոր նեղը կինկնայ նէ՛ տուած շահը դլխուն հետ մէկ կը սեպէ . դլխէն կը կտրէ . շահ առնելու խղճմտանքը՝ որ դիմացինին կինկնար, ինք կը սկըսի յիշել անխղճմտանքը . որ ասաջուց յիշէր նէ, բանը ասանկ չէր ըլլար: Ասով խեղճ որբեվարիներ, տիւշկիւն մեծատուններ, աղքատներ՝ ունեցածնին չունեցածնին

նին կորսնցնելով ուրիշ վրայ, ասուվախով՝  
 հազար անէծքով ու բամբասանքով՝ իրենց  
 հոգւոյն ու մարմնոյն որ քէտէր կուտան նէ,  
 ի՞նչ կարծես՝ ի՞նչ պատիժ պահած կայ բուն  
 մեղքին տիրոջը, որ է հատուցմունք չընօղը:  
 Հապա որ իրենք ալ ըրածնին կրդանան կոր,  
 իրենք ալ ուրիշմէն չեն կրնար կոր ստակնին  
 փրցընել, չեն ըսեր՝ թէ մեզի ալ մուստահախ  
 է քաշածնիս. հապա հախ կըսեպեն չիտալը  
 իրենց տալիքն ալ՝ որչափ որ կըրնային տալ շա-  
 տէ քչէ, անխղճմտանք կուտեն կըխմեն, կը-  
 հագո՛ւին կըսըգո՛ւին. սէյիբի՝ սէֆայի՝ իւրվա-  
 նի ետևէ կըլլան. ու չեն ըսեր՝ թէ մէկ մէկ  
 կտոր մեզնէ կտրենք, ու հալխին հախը տանք:  
 Ես չեմ ըսեր, դուն քեզնէ տես թէ մէկ մեղ-  
 քէն քանի՞ մեղք կելլայ. հսկայ ծնողքէն հսկայ  
 դաւակներ կըլլան՝ ահաբեի և գարշելի:

Ո՛ր թողունք սիրոյ դէմ եղած դանդաղու-  
 թիւնները ( վերինէն զատ՝ որ սիրոյ տեղը ա-  
 տելու թիւր կըտնկէ. ) քիչ մարդ կայ որ կարե-  
 նաս խզմէթ մը յանձնել, աղաչել որ սա բանս  
 ընէ կի՛ ըսէ՛ առանց ստկէ ելլալու ( զերէ անոր  
 դպչիլ չըլլար, ) առանց վնաս մը քաշելու.  
 միայն բերնով կի՛ օտքով պիտոր աշխատի եղ-  
 քօրը սիրուն համար. հարուրին մէկը չես տես-  
 ներ գործունեայ եղբայրասէր: Իրաւ խել մը  
 կան՝ որ խօսքով պօլ պօլ կըխոստանան, գըլ-  
 խուս վրայ կըսեն. գործքով՝ ընելիք չունին.  
 \* Երթամ ար, և ոչ չոքաւ ॥: Հատ աղէկ էր  
 որ խօսք չի տային. մէյ մը որ խօսք տալը՝ պար-  
 տականուէ մէջ կըբերէ, ուստի խոստմունքը  
 չկատարելը՝ անիրաւուէ տէֆտէրը գրած է.  
 մէյմալ որ՝ դիմացինը խօսք չիտար նէ, աղա-  
 չօղը կամ յանձնօղը անկից յոյսը կը կտրէր,

ուրիշի կերթար, կամ անձամբ իր գլխուն ճա-  
րը կը տեսնար. չեղաւ նէ, իրեն զրկանք ե-  
ղաւ :

Հայա հոգևոր դանդաղութի ըլլայ նէ՝ հար-  
կաւոր ատեն հոգի խալըսելու բանին մէջ. ինչ-  
պէս քահանայ մը որ խոստովանանքի և այլ  
խորհուրդները մատակարարելու չի հասնելով  
դանդաղանօք՝ զուրիշի հոգին ալ կը դատա-  
պարտէ, զիրենն ալ. ամմա պատճառ ունի ե-  
ղեր. ես ալ կը հասկընամ պատճառը ի՞նչ է,  
պատճառանքը ի՞նչ է : Աշխարհականն ալ որ  
տեղին կեօրէ կըրնար մէկ օգնութիւն մը ճար  
մը ընել եղբօրը հոգւոյն, մանաւանդ իր ըն-  
տանեացը, ու անհոգութենով զանց կառնէ,  
այ պատասխան պիտոր տայ :

Դ. Չորրորդ ցաւն է անիրաւունի խարդախու-  
ղորն որ կուզէի անդամազննութիւն աղէկ մը  
պրպտել, ամմա վարպետորդիքը չարչըին ճամ-  
բան փոխեցին՝ դռները դարձուցին՝ որ քահա-  
նայ մարդ չիմտնայ ներսը ի՞նչ կը ըլլայ ի՞նչ չըլ-  
լար. կուզէի ամմէն էսնաՖէն ամմէն գէնահա-  
թէն էն վարպետը գտնալ, առաջ դովելի վար-  
պետութիւնին հասկընալ՝ որ խելքի մարիՖէթի  
բան է, որ անոր կեօրէ Յքի պէտք եղած զիրք  
մը հանեմ՝ ուրիշ տեղաց ալ վրան աղէկ բա-  
ներ եւեցընելով. ետքը իրենց անիրաւ վար-  
պետութիւն ալ հասկընալ՝ որ սատանային խել-  
քէն փոխ առած է, ու անոր կեօրէ Յքիս ա-  
ւելի պէտք եղած բարոյական մը գրել՝ որ հիւ  
մէկ բարոյական մը ան քեօշէները չէ քալեր :  
Երբոր աս չեղաւ նէ, ես կաղաչեմ որ իրենք  
չարչըցիք մէկ բարոյական մը շինեն՝ որ մենք  
ալ բան սորվինք. ինչպէս որ պազին կէս իրաւ  
կէս սուտ կըսէ՝ թէ թող վարդապետները մե-  
զի

զի աշկերտ ըլլան առուտրի կողմանէ : Աճ պա-  
 ճէ որ եկեղեցականը Յականուծի չիսորվի .  
 բայց ամ տայ որ Յականը եկեղեցնայ ու ան  
 պատուիրանքը չիմոռնայ . ինչպէս որ շատը  
 մոռցածի պէս կրվարուի կոր . բայց ատանկ  
 խարդախուծի ընելով՝ առաջ իր հոգւոյն ա-  
 նիրաւուծի կրնէ , ետքը ուրիշին մարմնոյն կմ  
 ըստկին : Չերկնցնեմ յայտնի բանը . երկու  
 խօսքին մէջ խելացին ամմէն ուղածը կրդանայ :  
 Անիրաւուծի անպակաս կըլլայ կոր Յքիս վի  
 ամմէն կողմը ամմէն կողմանէ . ուստի իրա-  
 ւամբք ալ ամ ծանտր ծանտր պատիժները պա-  
 կաս չնեն . բայց բուն իրաւունքը պիտի ցրցը-  
 նէ բոլոր Յքիս առջևը դատաստանին օրը .  
 ( չորս վերջինքը քիչ մը քաղէ մէկը նէ՝ աղէկ  
 կրնէ : )

Մնաց որ սովորական անիրաւուծի կմ զրկանք  
 կմնէ հախ բանը՝ հէմ գիտնալով հէմ չգիտ-  
 նալով կրնեն կոր մարդիկ : Գիտնալով կրնեն  
 կոր շատը չարշք բազարին մէջ . չափէն եւել  
 գին դնելով , սուտ չափով ու սուտ կշառքով  
 աչք խաբելով , գէշը աղէկի տեղ խաբարովիշ  
 ընելով , ուրիշին աղէկ բանը վար դարնելով՝  
 կմ անոր առուտուրը կտրելով , և այլ անհա-  
 մար կերպով խարդախելով , խամին ընելով ,  
 գողնալով , հարամ հէլալ չինայելով , սուտ  
 խօսելով , սուտ երդու՛րննալով , աղքատներուն  
 սիրտը երելով , մենծի պղտրկի տունը քանդե-  
 լով՝ մենծ կմ պղտրիկ բանով մը . և զայս ամե-  
 նայն հախ սեպելով . զերէ ուրիշ կերպ չի դառ-  
 նար՝ կրսեն ըսողները՝ հիմակո՛ւան առուտու-  
 րը . ասանկ չնենք նէ՝ չենք ապրիր . ուրիշը  
 ընէ՝ դուն չնես նէ , բացը կըմնաս :

Եւ հէյ անիրաւներ , ասանկ անիրաւ ճամբով

ուրիշը դժոխք երթայ նէ՝ դուք ալ խայի՞լ էք երթալու . ատ թողունք հիմա . ( հէմէն ամ մէնքը դժոխք պիտի երթան կըսեն . ասով կը կարծեն թէ՛ իրենք կըփրկուին : ) Ասանկ անիրաւ ճամբով արդեօք աղէկ կապրի՞ք կոր : աղէկ ճամբա գտեր էք ձեր բանը դարձնելու նէ , ինչո՞ւ առաջ չէք երթար . ինչո՞ւ կըզան կըտիք՝ թէ ամմէն բան ախտի կերթայ կոր տէյի . ինչո՞ւ առջի ատեններու կընախանծիք ան կընէք : Ուրեմն իրաւունք քանի՛ կար նէ , առուտուրն ալ աղէկ է եղեր . անիրաւութիւն քանի՛ մտաւ նէ՛ դէշ եղաւ . ասկից է որ ( ինչպէս դուք ալ բերնով կըլկայէք ) պէթ պէրէքէթ չիմաց առուտրի և ամմէն բանի . նեղը մնացեր են ամմէնքն ալ՝ տօլասներով տիւպարէներով կըկարծեն թէ աս ծակըս դոցեն պիտոր . ան իսէ աւելի մենծ ծակեր կըբացուի որ կարկըտանք չի բռներ : Ուրեմն աս ճամբան չելլար . մէյմալ արդարուն ճամբան մտմտացէ՛ք : \* Սիրտ առն խորհեսցի՛ զիրաւունս , զի յայ ուղղեսցին զնացք նի ॥ . ( առակ . ԺԵ . 29 : և ԺԴ . 9 : )

Չգիտնալով անիրաւութի՛ կընեն կոր ամմէն մարդ , որ իրենց տէրտը կընային , իրենց մէրամը առաջ տանիլ կուզեն , ուրիշին տէրտը նայիլ չիկայ , ուրիշին հալէն հասկընալ չիկայ . զերէ եղբայրսիրուն առուտուր չիկայ , \* սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ॥ , բոլոր Ծքս անձնասիրութի՛ է կտրեր . ուստի առանց խղճմտանքի իրենց օգուտը կընային՝ ուրիշի մնաստմն ալ . ուրիշի նեղութի՛ կուտան՝ իրենց հանգստեանը համար . սիրտ կսկիծ ըլլալ չեն գիտեր , ես կըքաշեմ կոր՝ թող ան ալ քաշէ ըսելով՝ առաջ կըքաշեն իրենց բանը , ուրիշէնը

նը ետ կըձգեն . կուզեն որ իրենց ամիէն բա-  
նը լուման ըլլայ , պակաս բան մը չըլլայ . ամմա  
ասանկ ըլլալու պատճառով . ուրիշ ինչ կըլ-  
լայ ինչ չըլլար , հողերնին պիլէ չէ : Ասոնց  
ինչ ըսելու է . եղբայրսիրութիւն կըսեն՝ մէկ  
բան մը կայ . մէյ մը համտե՛ս ըրէք , այդ ամե-  
նայն անհամ ցաւերը կըլիարատին :

Ե . Հինգերորդ ցաւն է Տժգոհանք ճգոհանք ամ-  
մէն մարդու իր վիճակէն , իր քաշածէն . զոր  
փորձի՛ կըտեսնաս քու վրադ ալ . հի՛ւանդ ես  
նէ՛ մէկ թիւռլիւ , առողջ ես նէ՛ հազար թիւռ-  
լիւ . աղքատ ես կամ ծառայ ես նէ՛ թարզ մը ,  
հարուստ ես կամ ազայ ես նէ՛ ուրիշ կերպ .  
տունը ասանկ , դուրսը անանկ : Զարմանալին  
աս է՝ որ ամիէն մարդ կըկարծէ թէ իր տէրտը  
ամիէնէն եւել է . սանքի մարտիրոսներուն մօ-  
տեցեր է , ճգնաւորները լմնուցեր է . խրատ  
տալ ուզենաս համբերութե՛ նէ , անոնք քեզ  
կըխրատեն . եկո՛ւր մէյ մը քաշէ՛ քաշածնիս տէ ,  
ան ատեն տեսնամ ինչ կըզուրցես . չէս դիտեր  
չէս հասկընար , ընտո՛ր հասկըցընեմ : Ատանկ  
չէ՛ , կըսխալիս սիրելի . զերէ դուն քու տէրտդ  
միայն դիտես , ես շատին տէրտը դիտնալու  
ու միսիթարելու պարտական եմ . որովհետեւ  
հողևոր բժիշկ դրեր է իս Խորը : Ըսածներուդ  
ստուե՛ր մէյ մը անկից հասկըցիր որ քեզի պէս-  
ները միաբերան քեզի պէս կըխօսին , թէ մեր  
քաշածին նմանը չիկայ . անանկ է նէ՛ ամիէնքդ  
սուտ կըխօսիք . որովհետեւ ամիէնքն ալ զի-  
րենք միայն խեղճ կըկարծեն . ան իսէ ամիէնքն  
ալ անանկ են՝ մէկ մէկէ եւել պակաս : Մէկ իս .  
պաթ մը նալ կայ որ՝ որ հասկըցօղը կըհասկը-  
նայ հողևոր կառավարուէ մէջ . ց՛ անոնք որ  
ճշմարիտ խեղճ են Ծօրէն , ու ծանր խաչ ու-  
նին

նին նէ , մանաւանդ անպարտական խաչ՝ Կ՛ ա-  
 ռանց իրենց խապահատի . և ծածուկ խաչ՝ որ  
 Կ՛յ յայտնի է անոր ծանրութիւնը , ասանկնե-  
 րը շատ չեն ճշգոհար . Կ՛յ կամքը աս է կրսեն ,  
 Կ՛ծ մեզ կրսիրէ եղեր կրսեն : Եւ իրաւցընէ ա-  
 նանկ է . \* զի զոր սիրէ Կ՛որ՝ խրատէ , տանջէ  
 զամենայն որդի՝ զոր Կ՛ուսի ॥ . ասոր վր՛ համ-  
 բերութեան ճառին մէջ աւելի ըսելիքներ ու-  
 նիմ :

Հիմա այն պատմեմ որ , զաղի մարդկանց՝ որ  
 դժար խօսք կը հասկընան՝ փորձելու համար  
 ըսած ունիմ . տժգոհանքէդ շահ մը տեսած  
 ունին . նեղանալով դժարելով՝ գէշ խօսք հա-  
 նելով բերնէդ , տէրտիդ տէրման ելեր է . աղ-  
 քատութիդ անցեր է մի . զէնկինցեր ես . հի-  
 լանդութիւնդ անցեր է , առողջացեր ե՛ս մի .  
 բանիդ դործիդ ձախորդութիը յաջողութե՛ն  
 դարձեր է մի : Հիչ մէկէն չեմ լսեր , թէ պէլի՛  
 այո՛ . հապա ամիկնէն ալ ներհակը լսեր եմ .  
 չէ՛ չէ՛ կրսեն , տահա պէլթեր է եղեր : Անանկ  
 է նէ , համբերենք որ՝ համ մը բերենք լեղի  
 խաչին . չէ՛ նէ՛ անհամբերութիը աւելի կը դառ-  
 նացընէ . աջակողմեան ու ձախակողմեան ա-  
 լազակին օրինակը մի՛ մոռնար :

Հապա հիչ խօսք չը հասկըցողին ի՛նչ կը մնայ  
 ասել . տէ՛ գնա՛ աւելի տժգոհա՛ , աւելի գան-  
 կատ ըրէ , որ էւելօք ծանտրնայ կամ շատնայ  
 խաչդ : Արջը որչափ աւելի վեր կընետէ տու-  
 զախին թօխմախը նէ ( կրսեն , ) այնչափ աւելի  
 ուժով կինջնայ թօխմախը իր գլխուն . ինչո՛ւն  
 որ սէրսէմէնմիշ կը լլայ , կինկնայ կը իրովի .  
 ու կըրոնուի . ասանկ է ասանկներուն ըլլա-  
 լիքն ալ :

Աղբրոներուն բանը իրաւ որ դժար է , մա-  
 նա-

նաւանդ տիւշկիւն աղքատ է նէ, կամ աղքատ  
 ու հիւանդ, և այլ շատ կերպ տալլը պուտախ  
 լը խաչեր ալ հետը: Կրցաւիմ ու կրցաւակցիմ  
 իրենց մարմնաւոր խեղճութիւն վրայ. բայց ա  
 ւելի կրցաւիմ որ իրենց խրյաթը չեն դիտեր,  
 որ ինչ մօտիկ են, արքայութիւն ժառանգ են,  
 երանելի են, թէ որ սիրով տանին նէ. երա  
 նի աղքատաց կրսէ աւետարանը ( ամմա հոգ  
 ւով ). երանի մեծատանց չըսէր, ինչպէս որ  
 տժգոհ աղքատները կրզուրցեն. հապա վայ  
 կուտայ. ուրեմն աւելի խղճալի են հարուստ  
 ները՝ քան աղքատները. և երանելի են իմ նե  
 ղութի քաշօղները՝ քան փախօղները:

Պ. Անցերորդ ցաւն է՝ Աստուծոյ խրատը և պա  
 փիժը վրանիս շտանել, գիտցածնէս վաղ չի գալ,  
 աւելի վատթարանալ: Որ մարդը տեսերենք  
 որ՝ իր գլխուն եկած պատիճը հասկընայ ու  
 զգաստանայ. բերնով ամմէնքս օրթայէն կը  
 զուրցենք հիմակոճան ատենին համար, մեղ  
 քերնիս է, պատիժնիս կրգտնանք կոր. կան  
 որ իրենց անձին վրայ ալ կրխոստովանին՝ կե  
 նէ բերնով, աս բանս իմ մեղքիս համար է.  
 բայց հասարակօրէն խօսքին մէջը կամ հպար  
 տութի մը կայ, որ իր վրայ խօսելով՝ դիմացի  
 նին վրայ կիմանայ, ուրիշի վրան ալ կուզէ իմա  
 ցընել, զինքը մէջ խօթելով՝ բան գիտցօղ կու  
 զէ երևցնել. և կիմ կեղծաւորութիւն մը կայ,  
 կուզէ որ դիմացինը ըսէ՝ թէ ատանկ չէ. դուն  
 ինչ մեղք ունիս ատ բանիդ մէջ: Իսպաթը ան  
 է՝ որ ասանկներուն կրնաս նէ ըսէ, իրաւ հրա  
 մանքդ ալ յանցաւոր ես, մեղքիդ համար աս  
 բանը գլխուդ եկաւ, աս բանս իմ քեզի խրատ  
 ու դեղ տէյի տոճաւ: Ասոր ներհակ՝ ամմէնքս  
 ուրիշի ինկնալը կիմ ձախորդութիւնը լսենք նէ,  
 մէ

մէկէն 'ի մէկ վճիռ կրկտրենք նախ մեր մտացը  
մէջ, ետքը բերնէ ալ պազի հեղ կըթռցընենք,  
[Թէ պատիճը դտաւ . ւնծ արդար է :

\* Որդիք մարդկան մինչև յերբ էք խստա-  
սիրտք . ընդէր սիրէք զնանրուի, և խնդրէք  
զստուի ॥ : Խստասրտուիք չէ՞ մի՛ որ քանի պա-  
տիժ շատցաւ Տքիս վրայ նէ, ապաշխարելու  
տեղը՝ ամմէն մարդ 'ի չարէ 'ի չարագոյն կեր-  
թայ կոր . նանրասիրուիք չէ՞ մի՛ որ ւնյ խրա-  
տը պօշը կանցնեն, ընդունայն և մարմնաւոր  
բաներու էտեէ ինկնալով՝ լեցուն բանը չեն  
հողար, ցի՛ զհողին . և ստախնդրուի չէ՞ մի՛ որ  
իրենց վր չեն առներ ւնյ խրատը, ուրիշի վրայ  
կըձգեն . \* ես ասացի 'ի զարմանալ իմում, [Թէ  
ամենայն մարդ սուտ է ॥ . զերէ ամմէնքս մե-  
ղաւոր ենք, ու ամմէն մարդ զինքը անմեղա-  
դիր կընէ՝ դո՛նէ ինքնիրեն :

է . Եօթներորդ ցաւն է՝ Մարդիւմ ճշ խրապը  
հփէլ չընէլ, չուղել ալ լսել խրատ եղբօրմէն,  
իսկ եղբայրական յանդիմանուիք կի՛ աղդա-  
րարուիք՝ [Թշնամուիք սեպել : Այ խրատը  
մտիկ չընօղը մարդու խրատին մի անկաճ պի-  
տոր դնէ . ( ան իսէ վախնար պիտոր՝ որ եղբօ-  
րը խրատը մերժելով՝ աստուծոմէ չի մերժուի : )  
Քահանային խրատը շիտակ չի հասկըցօղը,  
կի՛ խօսքը չի բռնօղը՝ հաղար վէսիլէ գտնալով,  
եղբօր խրատը ի՛նչպէս ընդունի : Ամմէնքս սո-  
ղոմոն իմաստուն ենք եղեր, ամմէնքս վարդա-  
պետ՝ ցի՛ վարպետ, աշկերտ չիկայ . ամմէնքս  
արդար, մեղաւոր չիկայ . մեղք կայ, մեղաւոր  
ո՛վ կայ : Ուստի ես ալ ըսեր եմ շատ անգամ՝  
բան հասկըցողներուն, ես մեղաւոր կըլինա-  
ուեմ, չեմ դտնար . որ տն իմոյ խօսքը կատա-  
րեմ, \* ոչ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղա-  
ւորս .

ւորս . զի ոչ է պիտոյ բժիշկ կարողաց , այլ՝  
Տիւանդաց ॥ . Տիւանդ չիկայ նէ՝ գեղը ի՞նչ բա-  
նի պէտք է . զինքը մեղաւոր ճանցող չիկայ  
նէ , ես ի՞նչ երեսով վարդապետ ապաշխա-  
բուծե՛ք ըլլամ . ուրեմն յովհաննէս մկրտչին ալ  
չեմ կրնար հետեւիլ՝ որ մեղաւորներուն կըքա-  
րողեր . նոր մկրտի՞չ մը ըլլամ՝ արդարներու  
քարողիչ : Ո՛ր արդար . ոչ ոք է արդար . այլ  
ամենայն ոք արդարացուցիչ անձին . ամմէն  
մարդ զինքը անմեղադիր կընէ կոր՝ ի՞նչ խրատ  
որ տաս . անոր համար խոստովանանք ու ա-  
պաշխարանք ընելու ատեն ալ ճշմարիտ զղջու-  
մը կը պակսի , ճշմարիտ ցաւ մեղաց վրայ չե-  
րկնար , որով ճշմարիտ դարձ ալ չըլլար : Ինքն  
ի՛ծ ողորմի իր Յքին , ու ամմէնուս ճշմարիտ  
դարձ տայ :

Թ . Ութերորդ ցաւն է , Աշխարհս գեշ է եղեր  
բաւել՝ էնչը բարե աշէ՛ չըլլաւ . չարէն բարի հա-  
նելու տեղը՝ որ անմանութի է , բարիէն ալ  
չար հանել՝ որ է սատանայի նմանութի : Խե-  
լացին ու անխելքը . քեամիլը ու ճահիլը , ծերն  
ու տղան , աշխարքս աւրեր է կըսեն . չեն ը-  
սեր՝ թէ մենք ենք աւրեր , կի՞նայինք որ մենք  
չաւրենք ու չաւրըվինք : Ո՛վ խելացի նոր հաս-  
կըցար , թէ Յքս գեշ է եղեր . հազար ութ հա-  
րիւր տարի առաջ առաքեալը ըսած էր , \* աշ-  
խարհ ՚ի չարի կայ ॥ . անկից հազար տարի ա-  
ռաջ ալ անանկ կըխօսէր սողոմոն իմաստու-  
նը : Է՛յ ի՞նչ ընենք . աշխրքէս դ՛ուրս փախչինք .  
հապա ի՞նչ փակեր ենք Յքիս փէշը : Նորանց  
մը ստեղծէ ի՛ծ աս Յքս . ան շինած աշխարքը  
չէ՛ աւրըված , ու չաւրըվիր . պատուական էր  
ու պատուական է ամենայն բարիքովը . մար-  
դուս շինած Յքը՝ աւրելու Յք է , ինչպէս որ  
աւ-

աւրբվեր է՝ ու տահա աւրբվի պիտոր • ինչո՞ւն  
 որ ան նորոգէ ետքի օրը • աղէկները վեր առ  
 նու երկինքը, անպիտանները աւլէ երկրիս ծո  
 ցը դնէ ու գոցէ : Ասանկ է նէ՝ բարոյական  
 Յքն է գէշ եղեր • զերէ բարոյականը աղէկ  
 չերթար կոր : Ասոր աղէկութիւր գէշուին ալ  
 հավան չէ կեցեր, իծմէն քեզմէն և այլ ամե  
 նայն անհատ մարդիկներէն կը կախու՞ի, ես  
 աղէկ ըլլամնէ, ասկից աղէկ Յք չըլլար ինծի  
 համար • դուն աղէկ ըլլաս, ես գէշ ըլլամնէ,  
 Յք քեզի աղէկ է, ինծի կըլայ ինչ որ կըլայ  
 նէ : Կարճ խօսքով • բոլոր բան մը իրեն մա  
 սերովն է բոլոր • մասունքը աղէկ են նէ՝ ա  
 ղէկ բոլոր է • գէշ են նէ, գէշ բոլոր է • իսկ  
 քու աշխարք ըսածդ անանկ բոլոր մը նէ՝ որ  
 աղէկ մաս ալ ունի, գէշ ալ • դուն աղէկէն ա  
 ղէկը եղիր :

Չըսես թէ՝ աղէկ մարդ ալ կայ մի Յքս • կայ  
 ու կայ • չըլար նէ՝ Յքս կրկործանէր • ինչպէս  
 կործանեց անձ սողոմ գոմորը՝ երբոր տասը  
 արդար չի գտնուեցաւ հոն նէ : Ամմա քիչ կայ  
 եղեր արդար կ՞ աղէկ քրիստոնէ մարդ • չե՞ս  
 գիտեր՝ որ \* բազումք են կոչեցեալք • և սա  
 կաւք են ընտրեալք ॥ : Գիտես որ աղէկ բանը  
 քիչ կրգտնուի • սօխախը ու լեռները քարեր  
 շատ, որ ոտքի տակ տեղ ունին • ամմա պատ  
 ունական քար կ՞ ճեվահիր խիստ քիչ, որ գլխու  
 վրայ ու ձեռքի վրայ տեղ ունի • դուն նայէ որ  
 աս քչիկներուն մէկը ըլլաս, ու պինտ պատ  
 ունականը ըլլաս : Աս ալ կայ որ ճեվահիրճի ալ  
 քիչ աշխրքիս վրայ, քի վարպետ քար ճանչ  
 ցող • շատը գէշին աղէկ է տէյի կրխաբուին,  
 պազին ալ սոյ քարը չեն ճանչնար՝ տեսածնուն  
 պէս վար կը զարնեն • կուզեմ ըսել՝ թէ Յքիս  
 մէջն

մէջն ալ սոյ սոյ մարդիկ կան, որ աղէկ ճանչ-  
ցողը աղէկն ալ կը հասկընայ. ան ալ մարդկո-  
րէն. է՛ն աղէկը անձ դիտէ. դուն քեզի բարի  
օրինակ տուող կայ նէ, ան նայէ, ինչպէս որ  
կայ. չար օրինակին մի նայիր, հասկա նայէ որ  
բարի օրինակ տաս՝ ինչպէս որ պարտական ես:  
\* Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի  
մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բա-  
րիս. և փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յեր-  
կինս է ॥:

Թ. Իններորդ ցաւն է՝ « Բ հասարակն անունովը  
գործքէն պահել: Աս բանս շատ ջուր կը վերցը-  
նէ՝ ըսելու տեղն եկաւ. քի շատ արցունք թա-  
փելու, որ աս ցաւին դեղ ըլլայ: Աճ իր ան-  
հուն ողորմութիւն զիս սք հաւատք կոչեր է,  
ուղղափառ հաւատք, ճշմարիտ և ուղիղ հա-  
ւատք՝ զոր ինքն անձ յայտներ է հին և նոր  
կտակարանօք մի միայն սք կաթողիկէ և առա-  
քելական եկեղեցւոյ. ալ ի՛նչ կը մնայ, արքայ-  
ութեան որդի եմ, ժառանգ անձ և ժառանգա-  
կից քսի. վասն զի քրիստոնէ կը ստիճիմ ու եմ  
ճշմարտապէս: Կեցիր հէլէ, կամաց եկուր.  
Ճշմարիտ քրիստոնէ ես նէ, կատարել քրիստո-  
նէութի շնորհք ալ կայ վրադ՝ թէ չէ. ատ մտմտա-  
լու բան է. \* Այն անձ, որ ասէ ցիս անձ անձ, մտցէ  
յարքայութի երկնից, այլ որ արասցէ զկամս  
հօր իմոյ: Եթէ կամիս մտանել ՚ի կեանս, պա-  
հեա՛ զպատուիրանս: հաւատք առանց գոր-  
ծոց մեռեալ են: դու հաւատու ունիս, և դեք  
հաւատան և սարսեն ॥: Անհաւատն ալ իր խել  
քովը հաւատք մը նէ գտեր, անոր կեօրէ յոյս  
մը նալ կուտայ իրեն. բայց դիտենք որ հա-  
ւատքը փուճ ըլլալէն էտե՛ յոյսն ալ փճա-  
ցած է. իմ հաւատքս որ փուճ չէ, հասկա ես  
փճաց.

փճացնեմ նէ դործքով, յոյսս ո՛ր կըմնայ :  
 Մէսէլա չաթալանաբ . քրիստոնեայ եմ կը-  
 սես կոր , հասկըցանք . առիկակ քրիստոնէա-  
 կան վարդապետութիւն առջի՛ համարնէ . չգիտ-  
 նայիր նէ՛ տղոց առջև ամօթ կըլլայիր . հիմա  
 նայինք որ այ առջև ամաչես պիտոր : Քրիս-  
 տոնէ եմ կըսես ճշմարտապէս . խօսքդ մի նայ-  
 իմ , դործքդ մի նայիմ , հաւատքդ կենդանի  
 ըլլար նէ , բարի դործքով կըշարժէիր . աս որ  
 չի կայ նէ՛ կամ պակաս է նէ , հաւատքդ ալ  
 հոգիդ ալ՝ կամ մեռած է կի՛ հիւանդ : Սատա-  
 նան քեզնէ շատ աղէկ դիտէ ամմէն հաւատքի  
 մասունքները . բայց ինքն է դլուխ ամենայն  
 անհաւատից և հերետիկոսաց . զի դիտէ և ոչ  
 առնէ . շիտակը կըտեսնայ պայծառ , դէպ ՚ի  
 ծուռը կերթայ ընդ խաւար . մտքով կըհաւ-  
 տայ , և ոչ սրտով . խօսքով իբրար կընէ , դործ-  
 քով ինքեար կընէ . ջըլայ թէ ասոր նման ըլ-  
 լայ քու հաւատքդ ալ՝ քրիստոնէութիդ ալ :  
 Չըլլայ թէ ջըսուելու բանն ալ լսես . \* լաւ  
 էր նոցա , թէ չէր բնաւ իսկ ծանուցեալ դար-  
 դարութիւն ճանապարհն . քան թէ ծանեան և  
 յետս կացին ՚ի սք պատուիրանէն . կամ թէ՛  
 \* լաւ էր նմա թէ չէր բնաւ ծնել մարդն այն լ ,  
 թող թէ վերածնեալ մկրտութիւն սք աւազա-  
 նին : Այ՛ զի եւելօք սոսկալի դատապարտուե-  
 տակը կինկնայ . այնչափ Փարզ ունի քրիստո-  
 նէին տանջանքը անհաւատէն՝ ինչպէս տասը  
 մէկէն էւել է , հարուրը տասէն , հազարը հա-  
 րուրէն . սանքի ուրիշ նոր դժոխք մը ըլլար  
 դժոխքէն չարաչար , ուրիշ մալ անկից աւելի  
 չարագոյն , ըստ չափու չարութիւն դատապար-  
 տած անձին :

Հատ քրիստոնէ կայ հիմա անուսով . դործքը  
 ան-

անհաւատէն պէ՛ծէր . հիմա ասոր ի՛նչ ըսենք ,  
 քրիստոսի՛ աշակերտ , քա՛ն լիցի , հապա՛ սուտ  
 քսի , ի՛նչ նեռին կի՛մ սատանայի . քսի՛ աշակերտը  
 աւետարանը կը քարոզէ գործքով , նախ առնէ  
 և ապա ուսուցանէ . իսկ գործքով կի՛մ խօսքով  
 անհաւատութի սերմանօղը՝ որոմնացան դև է  
 յայտնի : Թէ որ վարպետ պատկերահան մը  
 կարողանար քաշել մէկ կատարեալ քրիստոնէի  
 պատկերք մը , ու անոր դիմաց հանէր անար-  
 ժան քրիստոնէին պատկերքը , ան ատեն կի-  
 մանայինք որ՝ աւելի մօտ է մարդուս կապիկը ,  
 քան թէ անուկով քրիստոնէն՝ գործքով քրիս-  
 տոնէի :

Ճշմարիտ և կատարեալ քրիստոնեայ՝ ես՝ թէ  
 չէ , քսի՛ վրայ նայէ՛ , քո՛ վրադ նայէ . նայէ՛  
 կըսեմ՝ վարքդ կեանքդ ի՛նչ նմանութի ունի  
 անոր հետ : Քսի՛ անոր մեր՝ որդին ի՛նչ կըսուի  
 պատկեր հօր իւրոյ երկնաւորի , ի՛նչ բուն և իս-  
 կական նմանութի նի՛ իբրև հարազատ որդի .  
 դուն ալ քսի՛ պատկեր և նմանութիւն պիտի  
 ըլլաս , ինչպէս որ անուն առեր ես վրադ՝ ի՛նչ  
 որդիութե և եղբայրակցութեան քսի՛ , չէ՛ նէ՛  
 չունիս մասն ընդ քսի՛ , և ոչ բաժին ժառան-  
 գութե հօրն երկնաւորի :

Ժ . Տասներորդ ցաւը ( որ առջինին եղբայրն  
 է , բայց թապիէթը տարբեր , ) յանդուգն վստա-  
 հուի՛ , կի՛մ սուս ապահովութի գի՛րութե : կան որ  
 իրենց կենացը աջը ասեակը չեն նայիր . ոչ ար-  
 քայութե թաքօր լեռը ելլալը կը մտմտան , ոչ  
 դժոխքին խորխորատն որ աչքի առջևն է՝ կը-  
 նային . ու լռութայ կերթան ամեղցփեղ կամ  
 անկարդ և կամ թոյլ վարքով . ըսես թէ մէյ  
 մը չորս դի՛դ նայէ՛ , քեզ ժողվածէ՛ . անձ որո-  
 մած է կըսեն . մեղաւոր ենք ալ նէ , անձ ա-

պաշխարուծի է դըրեր . բայց այս ըսողը՝ ապաշխարուծի ըսող չէ . խօսք մը նէ՛ կըսէ . գործք չիկայ . յայտնի է որ ասանկին խեր չիկայ , կորուստը աչքը առածի պէս է . յանդուզը՝ յուսահատ մարդու հետ տէնկ կուգայ :

Գանք որ ասըլ բարեպաշտներուն մէջ աս ցաւը կիզլի սըլծմայի պէս տիրած է , չեմ ըսեր մահացու հիւանդուծի պէս մեռցընող , բայց կատարեալ տուողըլծի մենծ արգելք . սա է սուտ ապահովուծիւն մը իր վրայ՝ թէ ինքը հէլհէլպէթ որդի փրկուծի է . խօսքին տեղը գայ նէ , ամիկնքս անաբան կըլլանք , վկայուծիւններով կըհաստատենք՝ թէ ոչ ոք կրնայ իր վրայ ապահովանալ . \* սչ գիտէք որոյ հողւոյ էք || , ըսաց արն մեր , և առաքեալն՝ \* ահիւ և դողուք զանձանց փրկուի գործեցէք || . մանաւանդ որ իրեն համար ալ վախնալով կըխօսէր սքն պօղոս . \* գուցէ որ այլոցն քարոզեցի , ես ինքն անպիտան գտանիցիմ || . և այլն : ասոնք աղէկ գիտենք . բայց գործքով անանկ վարք մը անանկ կերպ մը կըցըցնենք որ՝ սանքի մենք սէնկի կամ Փէրմանը և կամ պէրաթը սոյէն ենք . թագաւորական անձինք ենք , արքայուծիը մեզի համար է ձառքով դրածի պէս :

Թէ որ սք հաւատքիս կեօրէ բարի գործք ունենայի նէ , ան ատեն պէլքիմ ես ալ ատ խելքին վրայ կըլլայի . և իրաւ որ պէտք էր մեզի մենծ յոյս ունենալ հաւատքին ուժովը . ու միշտ պիտի ունենանք յոյս՝ բայց չէ՛ թէ մեր վրայ , հապա ան շնորհացը և ողորմուծեանը վրայ . քի թէ ան որ ինձի յաւիտենական արքայուծի տալու խօսք տուաւ , չի խաբեր իս .

հա

Տաւատարիմ է նոր . ասոր ո՞վ կըտարակուսի :  
 Բայց իմ տարակոյսս ան է՛ իմ վրաս ալ , քու  
 վրադ ալ ո՞վ սիրելի ընթերցող , արդեօք մենք  
 ալ Տաւատարիմ ենք առ ան . զան չենք կրնար  
 խաբել , աս գիտեմ , բայց չըլլայ թէ մենք ըզ-  
 մեզ խաբենք սուտ ապահովութիւն մեր փրկուէ  
 վրայ : չըլլայ թէ մեր մէկ քանի մանտր մունտր  
 բարեգործութիւն վրայ կիւլէնմիշ ըլլալով , մէկ  
 քանի յայտնի չարագործներէն աղէկ մեզ տես-  
 նալով , մէկ քանի թէվէքէլի խօսողներուն բեր-  
 նէն մեր վրէ դալասանք լսելով , և այլ ասոր  
 նման հազար կերպ ինքնասիրութիւն հովերով  
 ելքէննիս բանանք երթանք , ու ետքը խայե-  
 խը պաթըրմիշ ընենք : Բայց ես կըզնեմ , թէ  
 դուն հիմա կատարեալ սք ես . կըրնան վաղ-  
 ունան համար խօսք տալ ինծի՝ թէ սք պիտի  
 մնաս . ճշմարիտ սքերը կրկնայեն՝ որ ատ ըլ-  
 լալու բան չէ . \* որ համարիցի հաստատուն  
 կալ , զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի ॥ . ըսաց ա-  
 ոաքեալը . քիչ մը նարեկ քաղես նէ , շատ բան  
 կըհասկընաս աս մեր ցաւալի և զգուշալի վի-  
 ճակին վրայ , տես որ չըլլաս՝ \* այսօր մաքուր  
 հողեկիր , վաղի՛ մոլի իելադար ॥ . հանպա ա-  
 ղէկ քննէ՛ քեզ , ու անոր կեօրէ ընելիքդ գիտ-  
 ցիր՝ հաւատով , յուսով , սիրով , և ամակն  
 կերպ բարի գործքով :

Ժն . Մեռասաներորդ ցաւն է , Մենծ Բանը  
 պարտեալ Բանի «եղ դնել , պարտեալ Բանը Ռնծ Բանի «եղ  
 դնել : Աս մէկ ծով մը նէ՛ որ աշխարհիս ամակն  
 անկարգութիւն դիրաը մէջը կմտնայ , ու աչքի  
 բան չերևնար : Մէկ քանի օրինակ բերենք :  
 Ատուծմէ մենծ կայ մի . իկայ . անկից չենք  
 վախնար , մարդէ կրվախնանք , հայվանէ , ծո-  
 վէ , հովէ , վայլակէ , կայծակէ : Ստեղծուա-

Ծոց մէջ՝ սոսկ մարմինն անհոգի էն վարի բանն է, էն պղտի բանն է. զերէ սոսկ մարմնոցմէ վեր է զգայունը, շնչաւորը. ասանցմէ վեր է բանաւոր հոգին, և անկից վեր է պարզ իմանալի հոգեզէնը, քի հրեշտակը՝ ին որում աւելի անձանման. արդ մարդս իր հոգւոյն խըյմէթը բնաւ չիզիտնալով՝ սոսկ մարմինը և մարմնաւոր բանը բանի տեղ կըդնէ կոր: Անցաւոր փուճ բանը ամի ձգելու համար՝ անանց կենաց անհուն դանձը կորսընցընէ կոր. մէկ ստկի կըծախէ հոգին ալ արքայութիւն ալ:

Գանք ուրիշ բանի վրայ. քանի մարդ կայ որ ճանչնայ իմաստնոյն կեօրէ, թէ \* լաւ է անուն բարի քան զմեծուի բաղում, և քան զարծաթ և զոսկի շնորհք բարիք ॥ ( առակ. իբ. 1 : ) և ին իմաստուն վարդապետաց՝ թէ \* լաւ է կոյր աջօք՝ քան կոյր մտօք ॥ Ո՞վ կըհասկընայ. թէ օրէնքն ան \* պատուական է քան զոսկի և քան զականս պատուականս ॥ թէ \* լաւ է այր իմաստուն քան զհղօր ॥ իմաստութիւնը քան զճարտարութիւն ձառքի և ոտքի. դիտնականութիւնը վեր է քան զամիլէն արհեստ. դպրոց մը կանգնելը մենձ է՝ քան զհաղար տուն շինելը. տուն ան կանգնելը աւելի մեծագործութի է քան զամիլէն Յքի վրայ եղած մենձ մենձ բաները. ասոր նման տրամաբանէ զանազան բաներու վրայ, որ հասկընաս թէ շատ քան կընեն մարդիկ որ՝ տղայական խաղալիկ է. և քիչ քան կընեն՝ որ մարդու վայել քան ըլլայ. զերէ տղի պէս կըատեն սովորաբար՝ որ իր օյուն

ճախները Յքի հետ չի փոխեր:

Պղտիկ բանի մը վրայ որչափ նիղայ կըլլայ, որչափ մեղք, ներսը դուրսը. արայ տեղը որչափ մենձ ու հարկաւոր բաներ չեն նայուիր,

հո-

հողի պիլէ զայ կըլայ . իսկ սէրը արդէն զայ եղած է , որ ասանկ բաներ իճատ եղեր են : Ս'անտը մուստը շատ օրինակ միտքդ կինկնայ ասով . բայց չըլայ թէ կենէ մենժ բաները մոռնաս :

Դարձեալ՝ մենժ բան չէ՞ մի մարդու անունը աւրել , ևս առաւել մարդ սպաննել . մենժ անկարգութի չէ՞ մի քիւֆիւրպազը ըլլալ , ևս առաւել հայհոյիչ անուանն ւնյ . ասոր նման հասկըցիր խոշոր խոշոր մեղքերը . արդ չն՞ս գիտեր՝ որչափ մարդիկ կան որ ասոնցմէ չեն զգուշանար . կերթան չոր պաք բռնելը՝ ծով բռնելը կըլինտունն . ասոնք պակաս տեսնան մէկին վրայ նէ՞ դայթակղին . իրենք իրենց ըրածէն չեն դայթակղիր . զմժղուկս քամեն , և զուղտս կլանեն : Ամմա ասոնք խապա մարդիկ կրնեն եղեր . չէ՞ սուլթանըմ , էն բարակներնալ աւելի խապայութի ունին ւնյ առջև :

Կան որ անմեղ սք կրկարծեն զիրենք , մանտը մուստը խղճմտանքին քեօշէները կըվնտունն , ու շատ անգամ պօշ տեղ խոստովանահարներուն գլուխը կըցաւցընեն . զերէ չեն կրնար որոշել , թէ ուրիշ բան է ւմ՝ ոգւով զգուշանալ նաև 'ի պղտիկ մեղքերէն՝ որ պարտքերնիս է . ( ապա թէ ոչ՝ \* որ արհամարհէ զվոքրն , փոքր փոքր կործանեսցի ॥ . ) և ուրիշ բան է՝ չնչին բանը , անտարբեր բանը՝ խղճահարութի մեղքի սըրան անցընել . աս երկրորդիս ետևէ ինկնալով՝ չէ՞ թէ միայն առջինին մեջ կինկնան , հապա ան չեն նայիր՝ որ ուրիշ անտանելի պակսութիներ ունին . զորօրինակ կամակորութի մի բտես , որսակալութի մի բտես , նախանձին էն էլան սի կուղես , դատողութի ու բամբասանքին էն սուլթուլուն մի կուղես . ևն : ա-

տոնք պէտք է աղէկ փնտռուել ու վաճուել ։  
 Հէլէ սովորական է եղեր ամիկնուս՝ ուրիշին  
 մենձ աշխատանքը, մենձ վարպետուիը, մենձ  
 գիտութիը, մենձ բարեգործութիը, պղտիկ  
 բանի տեղ դնել անցնիլ . իսկ մեր անձին ամ-  
 մէն մէկ բրած աշխատանքը կի՛մ աղէկութիւնը՝  
 որչափ պղտիկ ըլլայ, մենձ բանի տեղ դնել  
 ու առնել անցնիլ . ուրիշին գովեստը դժա-  
 րաւ կամ ձանձրալի կերպով լսել, անձին գո-  
 վութիը անձամբ ալ երկնցնել . զոր պէտք էր  
 կարճել . Կ՛օրթայէն կտրել ։

Ժք . Երկուտասաներորդ ցա՛ն է՝ ընդհանուր  
 բարին աղէկ գիտնալէն ՚ի մասնաւորն չարա-  
 չար սխալիլ . Կ՛ չէ՛ թէ բարին գիտնալով՝ ըզ-  
 չարն գործել ( որ ուրիշ տէրտ է, ) կի՛մ թէ ընդ-  
 հանրապէս ճանչնալ զբարին, բայց ՚ի գործա-  
 դրուէ՛ որ է միշտ մասնաւոր՝ աղէկը չի կտրե-  
 նալ ընել, ( որ աս ալ ուրիշ գլխու ցաւ մը նէ, )  
 մանաւանդ ՚ի պակասութի խոհեմութեան . )  
 հապա որովհետև ամիկնքս կըճանաչենք ընդ-  
 հանրապէս՝ թէ բարին պէտք է ընել, չարը  
 պէտքը չէ ընել, աս պայծառ ճանաչումը մե-  
 ղի սերմայէմը եղեր է՝ որ անով կըկուրնանք՝  
 մրտուրնիս կըգնենք թէ հէլպէթտէն կեան-  
 քերնիս ալ մտքերնուս կեօրէ է . ո՛վ կուզէ դէշ  
 ըլլալ . ուրեմն ամիկնքս աղէկ ենք՝ ըսելու պէս  
 բան մը նէ . հի՛ւանդ ըլլալը աղէկ բան չէ, և  
 սակայն շատ մարդ կայ հի՛ւանդ : Աս մարտը  
 պաղի մարդու վրայ շատ կերենայ . մանաւանդ  
 անոր վրայ՝ որ շատ վարդապետելը կըսիրէ,  
 ամիկնուոն պակասութի կըռնէ . և անով ատեն  
 չիգտնար իր պակասութի շուկելու : Շատ վար-  
 պետ կըգտնուի որ աղէկ վարդապետել զիտէ  
 իր արհեստին վրայ . ըսես թէ մէկ բան մը ը-  
 սա .

տածիդ կեօրէ չի շինես . չի կրնար . ըսել  
սորվեր է՝ ընելը չէ սորվեր : Ե՛ւս առաւել  
բարոյական արհեստի մէջ շատ մեղադրելու  
բան է աս սխալմունքս . ետքը մարդուն՝ \* բը-  
ժիշկ բժշկեա՛ զանձն քո ॥ , կրսեն . անձ տայ որ  
մենք անանկ ամօթ չի կրինք :

ԺԴ . Երեքտասաներորդ ցաւն է՝ Խօսք Վէ կա-  
նչեալ , քի չուղել հասկընալ՝ կամ ՚ի կամակո-  
րութէ . և կամ ՚ի կոպտութէ . աս հերիք չէ ,  
դիմացինին խօսքը փոխել , անոր բանին ծու-  
ծը փճացնել . շինայիլ ինչ աղոճոր կիմ հարկա-  
ւոր քեօշէ կայ լսած խօսքին մէջ , այլ ինքը  
ուրիշ ճօթէ մը բռնել , թէ անմտածութի և  
թէ հպարտութի . վեր ՚ի վերոյ հասկընալուն  
պէս՝ պատասխան տալու արտորալ . ( դո՛նէ  
քիչ մը քաղաքավարուն զիրք կարգար . ) մէկին  
տասը խօսիլ . չուղենալ սորվելու կարօտ երե-  
նալ , հապա ուղենալ զինքը աւելի դիտցող  
ցցնել , իբրև կատարել ծախել զինքը , անկա-  
տարութի մը վրան խօստուրմիշ չընել , բրած  
պակսուիը պարտրկել , ջատագովել . ևն :

Աս խօսք չի հասկընալէն կելլայ ինչ որ կելլայ  
նէ . մանաւանդ ինքնագլխութի մը , որ ամիկն  
մարդ իր խելքովը ուղենայ երթալ . և որով-  
հետև մարդս սխալական է՝ իր խելքով միայն  
դացողը պէտք է որ աւելի սխալի . բայց ու-  
րիշներուն տանըմիշ ըլլայ ու անկաճ դնէ նէ ,  
մէկ կողմանէ շատին խելքը աւելի կըլլայ քան  
զմէկինը . \* լաւ ևս տեսաննն աչք՝ քան ակն ॥ .  
մէկալ կողմանէ ալ անձ կըյաջողէ անոնց բանը՝  
որ իրենց խելքը վար կըդնեն , ու ուրիշին խել-  
քին կըհնազանդին . ուստի վտանգաւոր է այն  
վարպետ խօսքը՝ թէ ամիկն մարդու խելքը ծա-  
խու է դրոճեր չարչըն նէ , ամիկն մարդ իր

խելքն է դներ : Ասկից է որ մեր ատենի դարը՝  
 ամիկն կողմանէ ինքնադլսուի կը պաշտէ կոր .  
 ոչ պղտիկը մենծին խօսքը կը մռէ , ոչ մենծը  
 պղտրկին խօսքը կուզէ հասկընալ : Աս սք եփ  
 րեմին ըսածը անցուց . \* թէ 'ի դառամաց որ  
 իցէ , հանդերձ գոռոզու թք հրամայէ . իսկ ե  
 թէ մանուկ , լքէմ կայ ॥ . հիմա պղտիկը մեն  
 ծէն եւեւ դոռող , դէրէ անոր վր խոռողան  
 միշ կը լայ . մենծը պղտրկէն եւեւ դէմ կայնող ,  
 չէ կրսէ , կրկենայ : Պղտիկը կըսէ , թէ հիմա  
 Տքս բարկըցաւ ( ան իսէ՛ փր թիլը մօտ է ) . առ  
 ջինները ախմախ էին՝ հիմակունճան ճամբանե  
 րէն պէխապար . ( քիչց իրաւ , շատը անիրաւ՝  
 աս խօսքին ալ ) : Մենծն ալ իր տարիքը կը  
 նայի , խոհեմու թիւր կը չափէ ( կամ խոհեմա  
 բար , կիմ անխոհեմաբար ) . ես այսչափ տար  
 ուան մարդ ըլլամ , ամիկն բանի փորձ ըլլամ ,  
 ու հիմա իրիկունն տղոց խելքին մի հաւնիմ ,  
 խօսքին մի նայիմ :

Ասոր մէջը պէտք է գտնալ : Կարգ և կանոն  
 մարդկու թէ և անձապաշտու թէ ան է , որ հա  
 սարակորէն պղտիկը մենծին խօսքը մռէ , կնի  
 կը երկանը . զաւակը ծնողացը , աշկերտը վար  
 պէտին . բայց տեղը կուզայ՝ որ ներհակն ալ  
 պէտք կը լայ . ինչնիս ատեն եղաւ որ անձ հրա  
 մայեց արբահամու որ սառային իր խաթու  
 նին խօսքը մռէ , մովսէս մարդարէն՝ որ ան  
 կողմանէ բոլոր ազգին իէլի կառավար էր , իր  
 աներոջը յոթորին խրատը մտիկ ըրաւ , ու կա  
 ռավարուէ կերպը քիչ մը փոխեց կի՛ զարդա  
 րեց : Յս ստեղծող անի և իմաստու թի յաւի  
 տենական՝ հնազանդ եղաւ իր ստեղծուճածոց .  
 և իրեն համար ըսաց , \* որդի մարդոյ ոչ եկն  
 պաշտօն առնուլ , այլ՝ պաշտել . և՛ ես եմ 'ի  
 մի .

միջի ձերում իբրև սպասաւոր ॥ . ու մեզ ալ  
ասանկ խրատ տաճաւ . \* մեծն 'ի ձէնջ եղիցի  
ձեր ծառայ ॥ :

ԺԴ . Չորեքտասաներորդ ( աս ալ ըսեմ , ու  
լմնցնեմ . ) ցաւ մը նալ կայ որ դրողին կըղալ  
չի . փոյթ չէ . ես ինձի ընկածը զուրցեմ , կար  
դացողն ալ իրենն ընկածը նայի : ( չէ նէ՛ հին  
դեասասաներորդ մընալ պէտք էր եւելցընել ,  
թէ ինչպիս գէշ ցաւ է՝ իր պարտքը չի մըտմը  
տալ , ուրիշին պարտքը մտմտալ : ) Ինձի կըղալ չի  
կըսեմ , ըստ որում քահանայ կմ՝ վարդապետ ,  
որ է հողևոր հովիւ՛ , հողևոր բժիշկ , հո  
դևոր դատաւոր , և մանաւանդ՝ հայր հողևոր :  
Ասանկ է նէ՛ դժար բան է քահանայ ըլլալը .  
ըլլողը դիտէ , ու պէտք է որ դիտնայ . իմ բանս  
ատոր վրայ չէ , հապա ժողովրդեան տէրտին  
վրայ՝ որ քահանային ամմէն իբրամ ընել կու  
ղեն , բայց էն գլխաւոր իբրամը շատ անգամ  
կըպակտի . \* պատուճեա՛ զհայր քո և զմայր ॥  
ըսելը՝ հասկընալու չէ՛ թէ աղէկ կերցուր խըմ  
ցուր , հապա քեզի դուրս ճանչցիր , անոր կեօ  
րէ պատկառանք և հնազանդուի ցրցուր . և՛ ս  
առաւել քահանայի՝ որ քնի տեղն է . \* որ ձեզ  
լսէ , ինձ լսէ ॥ :

Հաւատացէք ինձ ո՛վ անձաւոր հաւատացելէք  
'ի քս , որ առջի և վերջի անկարգութիւր մեր  
ատենին ասկից է՝ որ քահանայք ան և առաջ  
նորդք ժողովրդեան՝ ժողովուրդին առջևը Ե  
րենց առջի պատիւը չունին . իրենք մի կորսն  
ցուցին՝ թէ ուրիշները կորսնցնել տուին , հի  
մա ան մի նայիր , հապա բուն տէրտը նայէ՛  
որ ցաւալի բան է մեզի ալ ձեզի ալ : Առաջ  
ան վէբիլ է տէյի կըպատուէին զքահանան՝ թէ  
իմաստունը թէ տղէտը . հիմա կամ խելացի  
կար-

կարդացող, կամ բանի եկող մարդ է տէ՛ր  
կուղեն պատու՛նել. իրենց կամքին կեօրէ շար-  
ժօղը կըզովեն, իրենց խելքին դէմ եկածը  
մարդու տեղ ալ չեն դներ. հեղուկ ու միա-  
միտ է նէ, ուղածնուն պէս խուլանմիշ կըլ-  
լան. ան ալ ետքը կելլան վար կըզարնեն՝ թէ  
կակուղ է, բարեմիտ է. բաճանային քիչ մը  
աչքաբացութի՛ն ու քէսկինութի՛ն ալ պէտք է՝  
կըսեն, որ ետրամաղները ճանչնայ հախէն դայ.  
( միայն թէ իրենց չիդպչի. ) թէ որ կտրուկ է  
նէ, քովը չեն մօտենար, քովերնին ալ չեն հան-  
դիպցրներ. քիչ մը անաչառ խստութի՛ն ընելու  
ըլլայ, վայն ՚ի վրան կըբերեն բամբասելով.  
միջակ ալ ըլլայ բնութիւնը և վարմունքը՝ որ  
դիտնայ տեղւոյն կեօրէ անուշութի՛ն, տեղին  
կեօրէ ահաւորութի՛ն ցցնել, ՚ի հարկէ ամմէն  
մարդու ետրամիշ չըլլար. որուն որ դպչելու  
ըլլայնէ՝ քարկոծո՛ւի պիտոր: Մենծերուն հո-  
դին վաստկելու ըլլայ նէ, կըբամբասու՛ն թէ  
աղքերաներուն չերթար. ամմէնուն հասնիլ ու-  
ղենայ նէ, աս ի՛նչ շատ տներ կելլայ կըմտնայ  
կըսեն. ի՛նչ որ ընէ մարդկօրէն կըչափեն, այ  
նիէ՛թին չեն տանիր:

Ամմէն բանէն էւել ( որ մէկ բանը ըտեմ, ) քա-  
հանան շատը կըփնտռեն կուղեն կըօիրեն կը-  
պատու՛նեն ոչ այնչափ իրենց հողւոյն շահուն  
համար, որչափ Տային օդտի համար, որ իրենց  
բանը լմնցնէ, իրենց հիւճանդը նայի, զիրենք  
միսի՛թարէ՛, իրենց տէրտը անոր դիտուն փաթ-  
թեն, իրենց կարօտուէրը հասնի, իրենց խօսք  
չի հասկըցուցածներուն խօսք հասկըցրնէ, ի-  
րենց կողմը ըլլայ՝ ու անանկ միաբանէ կըու-  
ւօղները. տավան իրենց կողմը կտրէ. նաև ի-  
րենց ստակը փրցնէ, իրենց ստակ դանայ.

տաճա ի՛նչ մնաց, իրենց տղին աղջիկ դոնայ,  
 իրենց աղջկան փեսայ դոնայ:

Յայտնի է որ խոհեմ քահանայք ասանկ բաներէն հեռու կրկենան. բայց պաղին կըլայ որ կըխաբո՛ւն, էն խելացին ալ պաղն հեղ կըսըխալի. չի կարենալով չէ՛ քսել շատ աղաւանքին ու թախանձանքին, ձեռաց տակէն կամ խորհուրդ մը կուտայ, կամ ծածուկ միջնորդութի մը կընէ, խօսք առնելով որ ամենեկին սը՛ռ մնայ. բայց ետքը սըռը կըթափի. ղերէ բանը անոնց ուղածին պէս չեղածին պէս, անձ պահէ չար լեղուններէն. ի՛նչ բաներ չեն քսեր այն քահանային էտեէն ու երեսէն. իրենք պատճառ կըլան՝ ու իրենք կըգանկրտին:

Հապա ի՛նչ քսեմ տալայ նիզա կարելու կողմանէ. հողին կըքաղեն քահանային՝ աղաւելով, թէ վասն այ սա տալանիս կարէ. ի՛նչ որ կարես՝ խայիլ ենք կըսեն, երդում պատառ խօսք տալով. և որովհետեւ դատաստանը մէկ կողմը կըտրէ՝ սըն որ ըստ ինքեան իրաւ կըդատուի ( առանց նայելու մենձ ու պղտիկ. ) ՚ի հարկէ մէկ կողմը վաստրկի, մէկալ կողմը կըկորսնցնէ կամ զբոլորը կի՛ դմաք տալային. կրնայ ըլլալ որ երկուքուալ կորսնցնեն՝ իրենց զանազան անիրաւութիւր համար, բայց չըլլար որ երկուքն ալ վաստրկին. ( ղի ներհականք միանգամայն կարեն ստիլ, բայց ոչ կարեն ճշմարտիլ. ) ասկից կըհետեի որ կորսնցնող կողմը կըլայ տժգոհ դատաստանէն, և ծայրադոյն թշնամի կըգառնայ իր հողևոր դատաւորին ալ. կըսկրսի անկից էտե չար խօսիլ անոր վրայ, ու ասդին անդին անուներ քաշքըշել. կան որ աս պատճառով ամմէն քահանաները ափ կառնեն, կարգաւորներն ալ անկարդե

եղան կրսեն, անոնց քովն ալ խղճմտանք իրաւունք չիմնաց, ւնյ համար բան չեն տեսնար. Լն. ան խէ՛ իր կողմը վաստրկած ըլլար նէ, արդար և սք տէյի կըպաշտէր զայն քահանան.

բայց չեմ գիտեր՝ ուրիշներու ի՞նչ կրսէր :

Դիպուած մը պատմեմ, որ աչքովս տեսայ՝ անկըճովս լսեցի. ու շատ հիսսէ առի : Խեղճ մարդ մը եկաւ քահանայի մը աղաչեց՝ որ իր դատաստանը կտրէ. ամմա կրսէ՛ ւնյ համար կտրես, կաղաչեմ : 'ի հարկէ՛ ըսաց քահանան. իմ պարտքս ալ ան է : Խեղճ մարդը նորանց ըսաւ. ամմա արդարը կտրես : Քահանան խընտաց՝ օրդողելու տեղ. աղէկ կրսէ, տեսնանք ի՞նչ բան է : Դարձաւ ան մարդը վրայ բերաւ. ամմա ուղածինս պէս կտրես : Ան ատեն չեխը կերաւ, գլուխը կախեց գնաց : Աս խեղճը խելքի կողմանէ խեղճ կերեկնար ըսենք նէ, հապա ի՞նչ ըսենք ուրիշներուն՝ որ առ հասարակ աս մտքով աս խելքով կուգան ու կերթան. բայց մըտուհնին ասանկ միամտաբար չեն յայտնէր. հապա դործքով յայտնի կընեն՝ ( երբոր ուղածնին չըլլար նէ, ) թէ իրենց ուղածին կեօրէ պիտի ըլլայ եղեր դատաստանը :

Ասոնցմով չեմ ուղեր ըսել՝ թէ քահանաները հիչ պակասութի չունին, կի՛ բնաւ չեն սխալիր. հապա կուղեմ ըսել՝ թէ քահանային աղէկ ըրածին ալ չհաւնիլը քու խելքիդ դէմ ըլլալուն համար՝ մենձ անիրաւուի է, և անարգանք եկեղեցւոյ և ւնյ : Քահանան պակսուի ալ ունենայ նէ, աշխարհականը իբրև բարի զաւակ պիտոր գոցէ պարտրկէ. ինչպէս սեմ և յաբէթ պարտրկեցին իրենց հօրընոյայ խայտառակուիը, ու մենձ մենձ օրհնեքներ առին

ու վայելցին ալ . չէ նէ՝ քամայ կամ քանանու պէս իր հայրը խախտ ընող չար զաւակը՝ ՚ի հարկէ անոր անէծքը կառնէ ու կըժառանդէ չարաչար :

Կտրուկ բանմալ լեցի քահանայի մը բերնէն , բայց չեմ դիտեր՝ դիմացինը աղէկ հասկըցաւ , թէ չէ : Դիմացինը դանկատ ըրաւ ըրաւ առաջ խելմը քահանայիցմէ , թէ մէջերնին անկարգը պակաս չէ . սանկ են ու նանկ են : Քահանան տեսաւ որ սուտը իրաւը մէկ տեղ խառնելով կըխօսի կոր ան մարդը , ու միտքը դրեր է՝ թէ բոլոր ըսածը իրաւ է , դարձաւ ասոր աս սաստիկ պատասխանը տո՛ւաւ . դրնենք թէ կըսէ պարոն՝ հիմակո՛ւան քահանաներուն շատը անկարգ են եղեր . պատճառը գիտե՛ս ի՛նչ է կըսէ . դերէ հիմակո՛ւան եկեղեցականները հիմակո՛ւան ճականներէն ծընած են . առջի բարեպաշտ քրիստոնէներէն չեն ծնած : Հասկըցողը խորունկ բան կիմանայ ասկից . բայց ես ատանկ խորունկու թենէն վաղ եկայ . պտուղ ելլալու խօսքը նայինք . պօղոս առաքելոյն խօսքը բռնէ՛ ու դնա՛ , չե՛ս սխալ լիր . \* Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց , և հպատակ կացէք նոյն , զի նոքա տքնին վն ոգւոց ձերոց . որպէս թէ համարս տալոց իցեն լը ձեր . զի խնդուք արասցեն զայն , և մի՛ յոգւոց հանելով . զի այն ոչ յօգուտ ձեր է ॥ . աղէկ մը չես հասկընար նէ , ատենով մեկ նուի թղթոցը կարդա՛ , որ աղէկ հասկընաս . բայց կարծեմ թէ աս բանիս մէջ խրթին բան չիկայ , միայն թէ հասկընալ ուղէ մէկը :

ԺԵ . Ինչո՞ւն հիմա ըսածներէս աս գլխուս մէջ՝ կըհասկընայ կարդացողը , թէ բազմաթե՛ մէջ եղած ցաւերը՝ կան որ հպարտութեան , նա .

նախանձի, ծուլութի, և այլ դիտաւոր մեղաց  
 արմատ կի՛մ ծնունդ բլլալով, նոյն սովորական  
 հիւանդութի դուրս չեն, ու դեղերն ալ անոնց  
 կեօրէ կը լլան: Բայց կան որ ուրիշ ցեղ հիւան-  
 դութի կերևնան, որ բժիշկները պիլէ կը տա-  
 րակուսին՝ թէ ո՞ր ցաւին տակը պէտք է դնել,  
 ու դեղ պատրաստել. և կի՛մ մեր բանը չէ՛ կը-  
 սեն, ետ կը քաշուին. ճէրահի բան է, ըսող  
 կայ. դեղ չպլլար՝ բնութի պակասուի է, ըսող  
 ալ կայ: Կուզեմ ըսել, թէ աս ցեղ ցաւերը  
 հոգևորապէս՝ կաղութի, կուրութի, և այլ  
 ասոնց նման բաներ կը լմանին: արդ ո՞ր բժիշկ  
 կայ՝ որ կաղի, կուրի, ձեռնատի, և այլ ուրիշ  
 սակաւի դեղ տայ. մէյէր հրաշագործ բժիշկ  
 բլլայ կողմայի դամիանոսի պէս. կի՛մ պետրոս  
 առաքելուն պէս ըսէ՛ տաճարի դրան քով նըս-  
 տող մուրացկան ՚ի ծնէ կաղին, ( որ ողորմուի  
 կուղէր իրմէն. ) \* Արծաթ և ոսկի ոչ ունիմ,  
 բայց զոր ունիմս ( զնորհս սքանչելեաց՝ ) զայս  
 տաց բեղ. յանուն յսի քսի արի և դնա՛ ॥ Ինչ  
 պէս որ նոյն ատեն՝ ոտք ելաւ, վաղել սկսաւ:  
 Մէկը ըսէ՛ թէ ուրեմն մեր բանը հրաշքի  
 մնաց. մի ատանկ մեղ յուսահատցըներ. ցա-  
 ւերնիս ըսիր, խօսք չունինք. բանը դեղը դրո-  
 նալն է. տուած դեղերդ աղէկ ամմա, մենք  
 ուրիշ զօրաւոր բան մը կուղենք. մանաւանդ  
 որ մենք տահա շատ տերտ ունինք՝ որ հրա-  
 մանքդ ալ չուղեցիր երեսնիս զարնել, կամ  
 ճքին առջև չար օրինակ չերևցնել. ասոնց  
 ամմէնուն մէկ լճհանուր և շահաւոր դեղ մը  
 ունիս նէ, ան սորվեցուր մեղի:

Աստուած շնորհս քայ՝ ըսեմ նէ, տեղն է. զերէ  
 չեմ ըսեր իբրև պարապ խօսք մը, կի՛մ նեղա-  
 նալով ( ինչպիս սովորութի եղեր է ռամիօրէն

ըսել, ) այլ իբրև օրհնութի և մաղթանք . ան  
այ շնորհքը և ողորմութիւնը խնդրելու է մու-  
րացկանի պէս ամօէն մարդ՝ իբրև մէկ հատիկ  
դեղ լէդէմ ամ երևելի և աներևոյթ ցաւոց  
հոգւոյն , և ամ լէհանուր և մասնաւոր հիւան-  
դուէց հոգւոյն : Բայց խնդրենք սրտանց ա-  
ղաչելով, խնդրենք հաւատքով, որ կարենանք  
առնել :

Ընորհչը ինչ է նէ՝ հասկընալը բեղի դժար է ,  
թէ որ չունիս նէ . ունիս նէ ալ՝ գործքով ա-  
ւելի կըհասկընաս՝ քան մտքով : Բայց մենք  
դժար հասկընալիքը անծաբաններուն թողլով՝  
աստեղս պէտք եղածին չափ հասկըցընենք :  
Ընորհքն է պարզև այ՝ ճապա տո՛ւած մեզի  
մեր բնական կարողութի՛ն վեր , ոնչ զի կարե-  
նանք գերբնական միջոցով գերբնական վախ-  
ճաննիս հասնել, քի շնորհքով՝ ի վառս արքայ-  
ութի : Ուրեմն անծ որ բեղ ստեղծեց ու կըպա-  
հէ , իրաւ մենծ պարզև է . բայց որ քրիստո-  
նեայ բրաւ ու սք խորհրդոց արժանի բրաւ՝  
աս տահա մենծ է , զերէ շնորհք է . մեծագոյն  
շնորհք է՝ որ ուրիշ շնորհքներ ալ չիպակսեցը-  
նէ . և ամենամեծ շնորհք՝ որ շնորհաց մէջ սլա-  
հէ , ու իր արքայութիւնը հասցընէ :

Տեսար որ՝ շնորհք կայ , շնորհք ալ կայ . դուն  
հէմէն խնդրէ աստուծմէ բեղի պէտք եղած  
շնորհքները . և կուտայ առատապէս , և ոչ  
նախատէ . միայն թէ քու կողմանէդ արգելք  
չի դնես շնորհաց , տո՛ւած շնորհքը քու անշը-  
նորհք վարքովդ չի կորսնցնես . դրսի շնորհք-  
ներու հավէս ջընես , ինչպիս հրաշք տեսնալու  
կի՛բնելու , մարդարէ և առաքեալ կի՛ վարդա-  
պետ ըլլալու , հապա ներսի սրբարար և հա-  
ճոյարար և փրկարար ըտո՛ւած շնորհքները  
խնդ .

խնդրես . ինչպէս են եօթնարիւեան շնորհք սք  
 հոգւոյն , և ամ քրիստոնէական առաքինու-  
 թիւնք . որք կրմաքրեն զհոգին յարատոյ մե-  
 ղաց , կմ որ նոյն է կառողջացուցանեն հոգ-  
 ւոյն հիւանդուիները . և կըլուսաւորեն զհո-  
 գին պայծառութիւն յիմային լուսոյն , կամ որ  
 նոյն է՝ կրհաստատեն յառողջուէ հոգևորա-  
 պէս . և կրմիւաւորեն լէ ար , կմ որ նոյն է՝ ան-  
 մահական կենաց ճաշակը կուտան աս տեղս ,  
 ու կհասցընեն ՚ի կեանսն յաւիտենից : Ասոնք  
 տաճա աղէկ կըհասկընաս էտեի դըլուխներուն  
 մէջ :



Գ Լ Ժ Բ :

Փորձոաի՛ք՝ առ հասարակ և Տաննատր . և գլխատր  
 դէդք նոցա :

**Ի**նչո՛ւան հիմա խօսեցանք մեր երևելի հո-  
 գևոր ցաւերուն ու եարաներուն վրայ , թէ  
 ինչ է դեղը աս ու ան հիւանդութիւնք . հիմա  
 պէտք է խօսիլ նաև աներևոյթ սէպէպներուն  
 վրայ՝ որ փորձութիւն կըսուին , որոնք որ կրնան  
 զմեզ հիւանդացնել կմ վիրաւորել . ինչպէս որ  
 բժշկականութիւնը պէտք է որ խօսի նաև այն  
 փորձանքաւոր բաներու վրայ՝ որ առաջուց  
 կեօղէթլէմիշ ընել պէտք է , չըլլայ թէ մար-  
 դուս առողջութիւն և կենացը քէտէր մը բե-  
 րեն , զորօրինակ է քրասակար օդը , խոտը ,  
 ջուրը , կերակուրը , շատ յողնիլը , քրտնիլը ,  
 պաղիլը . անհոգ շարժիլը , ցաթկելը , վտան-  
 դա-

գաւոր խաղը • որովք կըլլայ սախառութի : Իսկ պատերազմականը՝ որ իր կենաց խըյմէթը գիտէ, աւելի պէտք է զգուշանալ վտանգներէն ու փորձանքներէն ճէնկի մէջ, ուր աչքին առջևն է կորուստ կենաց :

Այսու նմանութեամբ կըսուի ՚ի գիրս յորայ • \* փորձութի է, կի՛ պատերազմ է կեանք մարդոյ ՚ի վերայ երկրի ॥ • ան ալ մէկ թիւուիւ փորձուի չէ, մէկ պատերազմ մը չէ • անդադար և անհամար փորձուի • ներքին և արտաքին պատերազմ • բայց \* երանի՛ որ համբերիցէ փորձանաց • զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց : Եւ ոչ ոք պսակի, եթէ ոչ լըօրինին մարտիցէ • նոքա՛ զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութի ॥ : Նայէ՛ որ յաղթես, չիյաղթուիս, յաղթողը՛ վարձք ունի, յաղթուողը՛ կըպատժուի ալ : Զօրացիր և քաջ լեր՛ կըսէ բեզի սք գերբը • մի՛ վախեր ՚ի փորձուեց, մի՛ փախչիր ՚ի պատերազմէ • նայէ՛ ՚ի զօրագլուխն մեր յս՛ որ յաղթեաց մերով բընութք մեր փորձողին սատանայի • և զօրացոյց զմեզ՛ յաղթել ամենայն սատանայական պատերազմաց • ետ և զզէնս և զսպառազինութիւն անվանելի՛ վանել զամենայն զօրութիւնս թշնամոյն :

Ուրեմն փորձուի ըսելով՛ կիմանանք հոս տեղս այն բանը, որ մեզ կըզրզուէ կի՛ տավէթ կընէ մեղք մտնալու • տեղիք տուիք նէ փորձուե, յաղթուեցանք • տեղիք չտուիք նէ, յաղթեցինք վաստրկեցանք : Բանը ան է՛ որ թշնամինիս աղէկ ճանչնանք, որ մէկ չէ, իրեք է • Յք, մարմին, և սատանայ : Սովորաբար ամ մէնուն ըրածին ալ՛ սատանայի փորձութի կըսենք • զերէ՛ ինչպէս ան է՛ առաջին պատճառ

ամենայն բարեաց՝ ուր որ երկրորդ պատճառն  
ներու ձեռքով ալ մեզի աղէկուէ կրնէ , ասոր  
ներհակ սատանան՝ որ թարգմանի հակառակ ,  
պատճառ կըսեպո՛ւն Վամենայն չարեաց՝ որ մե-  
զի կըհանդիպի , միայն թէ Եքն ալ քի մարդի-  
կը , ու մեր մարմինը՝ սատանայի գործիք կըլ-  
լան :

Փորձութեց սոյը կամ համրանքը չըլար մէջ  
բերել , հապա որչափ մեղք կըրնայ ըլլալ նէ ,  
այնչափ ալ փորձուի կայ . և ամմէն մէկ մեղ-  
քին շատ թիւուիւ փորձութիւր կըրնայ ըլլալ .  
և իւրաքանչիւր փորձուէ ալ՝ հէմ մասնաւոր  
դեղը կայ , հէմ ընդհանուր :

Այն դեղերն որ՝ ամմէն մէկ գլխաւոր մեղաց  
դէմ դրեցինք նէ , փորձութեցն ալ դեղն են :  
Մնաց որ հիմա մէկ քանի դեղեր կան ասըլ  
փորձութեանց դէմ պատրաստած երկնաւոր  
բժշկէն . անոնք որ բանեցնես նէ , փորձուէն  
խալըսելով՝ մեղքէն ալ խալըսած կըլլաս . զոր-  
օրինակ , \* Արթուէն կացէք , և յաղօթա կա-  
ցէք , զի մի՛ մտանիցէք ՚ի փորձութի : Որ համ-  
բերեսցէ իսպառ , նա՛ կեցցէ : Քաջալերեցա-  
րուք , ես եմ , մի՛ երկնչիք ॥ : Ասով իմացիր որ  
փորձութեանց գլխաւոր դեղերն են աս չորս  
բանս . Արթնութի . Աղօթք . Համբերուի .  
Ապաւինութի առ իծ . հիմա ասոնց բանեց  
նելը սորվինք :

### ԱՌ ԱԶԻՆ ԴԵՂ:

#### Արննութի :

Ի . Արթնութիէն է այրիս ըլլալ՝ քուն կոխելու  
ատենը , խելըր դուխը կենալ , կամ շուտով  
խե .

խելաբերիլ, մանաւանդ սրելէթ ատեն՝ ու ճէն կի մէջ . ընելիքը ըսելիքը գիտնալ . բարեկամը թշնամին ճանչնալ . մէկ բանէն չի շփոթիլ, տակն ու վրայ չըլլալ, ճարը դեղը փնտռել, գտնալ, ու բանեցնել :

Հապա արթուն եղիր նախ և առաջ՝ որ էն առջի փորձութիւնը հպարտութիւն հախէն դաս : Հպարտութեան փորձութիւն կրնայ դալ մեզի դրսընանց, երբոր մարդիկ մեզ կրգովեն երեսներնուս կի՛ ետենուս . մեզ կրպատուեն, մարդու տեղ կրղնեն, ըրածնուս՝ ըսածնուս կրհաւնին, ա՛ֆէրիմ կրսեն : Թէ որ մենք արթուն չի կենանք, հապա թմրինք ու խօշւանմիշ ըլլանք աս բաներէս, այնչափ որ մենք ալ մեր պակսութիւնը մոռնանք, պղտիկ աղէկութիւննիս՝ մենձ մը սեպենք, ուռենանք, ուրիշներուն վրայ պէօպիւռլէնմիշ ըլլանք, ուրիշները վար զարնենք մտքով կի՛ խօսքով, ընկանք ՚ի փորձուի մեձ՝ հպարտուե՛ տուղտիւր, վերք առինք սատանային ճէնկին մէջ :

Հապա թէ արթուն կենանք, կամ շուտ մը արթնանք, խելութիւնս զլուխնիս ժողվենք, որ այն գովեստով չի խարուիք, մենք մեր չափը ճանչնանք, մեր թավուրը չփոխենք, մեր առջի խոնարհ կացքը բռնենք, ու միայն ուրախանանք այ փառացը վրայ՝ թէ որ որ մեր ձեռքովն ալ աղէկ բան մը ըրեր է նէ, ըսելով սրտով՝ \* մի՛ մեզ տէր, մի՛ մեզ, այլ անուանքում տուր զիառս ॥, ան ատեն մենք փորձութեան ալ յաղթեցինք, սատանային ալ հախէն եկանք, ու իր ամբարտաւան գլուխը ջախջախեցինք ան :

Նմանապէս փորձուի կրնայ ըլլալ մեզի ներսընանց ու դրսընանց՝ բաներնուս յաջողութիւն

Թիւնը . բտակի շատուծիր , աղու՛որուծիր ,  
 աղէկ ձայնը , ձեռքի ոտքի յարմարուծիր , մա-  
 նաւանդ խելացուծիր , կարդացողուիր , հո-  
 դեւորուիր , ջերմեռանդ աղօթքը արցունքով ,  
 ճգնուիր , պահքը , և ամ հոգեւոր և մարմնա-  
 ւոր բարեգործուծի . զերէ հպարտուէ փոր-  
 ձուծիր միշտ աղէկ թաւլայի մէջ կրբուսնի ,  
 աղէկ ծաղիկը՝ աղէկ պտուղը կուզէ փճացնել :  
 Բայց խոնարհ սիրտը՝ որ միշտ արթուն է ինք-  
 նաճանաչուծք , աս բաներէս չառնէր . զիմյն  
 ւայ կուտայ , և զկայսերն կայսեր . ամիէն աղէկ  
 բանին արը զիմ զրճանչնայ , ամիէն պակտու-  
 թիւնը իր անձին կուտայ , որով սատանային  
 սիրտը խոցերով կըլըցուի :

բ . Ասոր նման յայտնի է՝ որ ուրիշի աղէկու-  
 թիւնն ալ մեզի փորձուծի կրնայ ըլլալ նա-  
 խանձելու . բայց եղբայրսիրուծի ունենանք  
 նէ , արթնուծիր մեզի եարտրմ կրնէ , բնաւ  
 չենք յաղթուծիր ատ չնչին փորձուծենէ , այլ  
 միշտ կը յաղթենք : Ուրիշի առաջ երթալը մե-  
 զի զեն չունի , շահ կրնայ ըլլալ . անանկ է նէ  
 խարէզ մը կի՛մ ատելուծի մը կայ սրտերնիս՝ որ  
 մեր եղբօրը բարւոյն կըդժարինք կոր . սէր որ  
 ունենայինք , կուրախանայինք՝ սանքի մեզի է  
 եղած այն բարիքը . և այսպիս արթուն մտքով  
 սէրն որ դէմ հանենք նախանձուն , մենք նա-  
 խանձելի կըլլանք սատանային . որ չի կրնար  
 մեր աղէկուծիր ուզել , հապա միշտ մեր դէ-  
 շուծիր կուզէ :

գ . Բարկուծի ինկնալու փորձուծին ալ՝ մեր  
 հաղ չըրած բաներն են , ինչ բան կուզէ ըլ-  
 լայ , հովը սաստիկ է նէ , հաղ չենք ըներ . շատ  
 տաքը՝ պաղը , շամաթան . չը՛ծ փը՛ծը պիլէ .  
 մարդկանց շարժմունքը , խօսքը , գործքը . որ  
 խա-

խալէմի չի դար • ևս առաւել՝ ցաւը , հիւանջ  
 դուրթիւր • քնհատուրթիւր , անօթուրթիւր , ծա-  
 բաւը , աղքատուրթիւր , քէսատուրթիւր , և ամ-  
 մէն բան՝ որ մեզի քէտէր կուտայ , կի՛ նեղուի  
 կուտայ , կի՛ մեր խելքին և մերաքին դէմ կու-  
 դայ : Է՛յ ասոնց ո՛ր մէկին սրդողելու է , ինչ-  
 պէս կըսրդողին անխելք ու անկիրթ մարդիկ •  
 անոր աղէկը՝ խելք բանեցո՛ւր արթուն մտօք ,  
 ան բանն որ քու ձառքդ չէ , ես՝ աստուծո՛ւն  
 ես՝ ուրիշներէն կուդայ , քու սրդողելուդ չի  
 սրդողելուն չինայիր • Յք քու խելքովդ չի կա-  
 ռավարուի , գիտես • անանկ է նէ սովորուի  
 ըրէ՛ ամմէն բանին լան սրտով նայիլ • Յքիս  
 կառավարը կայ՝ ըսէ՛ • ինքն որ կըհամբերէ  
 կոր՝ չի սրդողիր , ես ինչո՛ւ տակնուվրայ ըլ-  
 լամ՝ որ աիէս բան չիգար • աս միտքը որ ու-  
 նենաս , միշտ արթուն կրկենաս , հիջ մէկ բա-  
 նի չես սրդողիր , ես՝ կըխնաս , ես՝ կըհամ-  
 բերես • միշտ կըյաղթես թապիէթիդ , մազ-  
 ըմ թապիէթ կունենաս • ան ատեն սատա-  
 նային տուղախը կրկտարի , ինքն ալ բարկուէն  
 կըճաթի • դուն վասարկով կելլաս :

Դ • Ծուլուրթե՛ փորձուի՛ր կամ ներսէն է մեր  
 թոյլ բնութէն՝ որ արթնուի չունի , կի՛ դրսէն  
 է չար օրինակներէն՝ որ մեր արթնութիւր կը-  
 թուլցընեն • ուրեմն դուն զարթի՛ր քու թմրու-  
 թենէդ՝ միշտ քու վրայ արթուն եղիր • ուրիշ-  
 ներուն մի՛ նայիր՝ որոնց թէմպելութե՛ր դուն  
 ալ չես հաւնիր • դուն քեզ խայրէթ տաս նէ  
 քիջ մը , նոյն ատեն ան ալ ուժ կուտայ , ա-  
 ռաջ կըտանիս հոգևոր և մարմնաւոր դործքդ •  
 անով սատանան խախք կըլլայ : Դուն որ ծու-  
 լութե՛ հանդիլ ուզես նէ , սատանան կըհանգ-  
 չեցնես • դուն որ աշխատիս նէ , սատանային

Մենձ զաճմէթ կուտաս . աշխատցո՛ւր անիրաւը՝  
որ քեզ չաշխատցրնէ :

Ե . Ազաճուլթէ փորձուլթիը կրնայ դալ՝ Յքիս  
մալը տեսնալէն , ուրիշներուն մենձուլիը նայել-  
լէն , և աչքի եկած բանը ուզելէն . արթնցիր ,  
հոգւո՛յդ աչքը բաց որ քեզ մարմնոյ աչքդ գո-  
ցել կուտայ Յքիս անցաւոր բաներուն . զերէ  
մէյ մը երկինք նայիս նէ , հոն է աչք տնկելու  
հարստուլթիը՝ անհուն և անանց . իսկ երկրիս  
նայիս նէ , հողէ ելած աչք խաբօղ բաներ են՝  
չափաւոր և անցաւոր : Անանկ է նէ , դուն  
քեզի ըսէ՛ , ասոնք բոլոր վաստրկիմ ալ , ետքը  
պիտոր թողում . հապա ի՛նչ աշխատիմ պա-  
րապ տեղը համալուլթի ընելու այն բանին՝ որ  
ես ասրը պիտի չըլլամ . քիչ մը ատեն էյրէլթի  
բանեցնելու բան ունենամ , հերիք է . նայիմ  
որ անդին խազնայ դիզեմ , ու անտեղը յաւի-  
տեան վայլեմ : Ասոր կըլսէ նէ սատանան ,  
ձառքը գլխուն կըզարնէ , քովէդ կըփախչի ,  
ինչու որ՝ աւրեցիր իրեն մենձ տօլապը , քի ար-  
ծալթսիրուլիը , որով շատ առուտուր կընէր ,  
անհամար հոգիներ կըվաստրկէր , շատ մեղքեր  
անկից կըհանէր . քեզ չիկրցաւ վաստրկիլ ,  
մենձ բան կորսնցուցած կըսեպէ . ան՝ որ  
կորսնցնէ նէ , դուն գիտցիր որ մենձ վաստակ  
ըրած ես :

Դ . Արկրամոլուլթ և արբեցուլթէ փորձուլթիը՝  
որ ներսէն դայ նէ , արթնն եղիր ու հասկը-  
ցիր , որ փափկուլթէ և քէֆի դեն է դրդօղը .  
գրսէն ըլլայ նէ՝ իմացիր որ հին օձն է փորձի-  
լը , որ եւայի անուշ և աղո՛ւոր ցըցուց արդե-  
լած ծառը . և նոյն սադայէլն է՝ որ դքս փոր-  
ձելու եկաւ նէ , էն առաջ հացէն սկսաւ խօսք  
բանալ : Իսկ եթէ կերուխում սիրօղ այախ-

տաշները ըլլան նէ , զանոնք մէյ մէկ սատանայ  
գիտցիր , որ քեզ կուզեն դիտէ հանել . ու ճու-  
ղապ տուր ամմէնուն քսի հետ , թէ \* ոչ հա-  
ցիւ կեցցէ մարդ , այլ ամենայն բանիւ որ ե-  
լանէ 'ի բերանոյ ւնյ . ես կերակուր ունիմ ու-  
տել , զոր դուքն ոչ գիտէք ॥ : Եւ յիշէ քսի խոս-  
տացածը . \* զի ուտիցէք և ըմպիցէք ընդ իս 'ի  
սեղանոյ հօրն իմոյ յարքայութեն ւնյ ॥ : և ա-  
ռաքելոյն ըսածը . \* ոչ է արքայութին ւնյ կե-  
րակուր և ըմպելի . այլ խաղաղութի և խնդութի  
'ի հոգին սք ॥ : այն է մէջլիս մը՝ ուր ամմէն բա-  
րիք առջևնիս կը դրուի , և յաւիտեան չի պակ-  
սիր . հոն տեղն է յաւիտենական 'ցնծում և  
ուրախութի անպատմելի . հոն է յագենալ յե-  
րևիլ փառացն ւնյ , և ըմպել զուղիս փափ-  
կութե : Ես խեղ եմ՝ որ անանկ մէջլիսէն  
զրկուիմ՝ աս տեղը եւելորդ կերակուրներու  
ետեէ ընկնալով , ու հարբեցութե եսիր ըլ-  
լալով . \* քանզի արբեցողք զարքայութին ւնյ  
ոչ ժառանգեն ॥ : իմ ւորս չըսաւ մի , \* զգոյշ  
լերուք , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շը-  
ւայտութի և արբեցութի և հոգովք Յակա-  
նօք . և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր  
օրն այն . այսուհետև արթուն կացէք և ա-  
ղութս արարէք , զի արժանի լինիջիք զերծանիլ  
յայնմ ւնի , և կալ առաջի որդւոյ մարդոյ ॥ :

Ասանկ զօրաւոր սիլահ փուսատով սատանայ  
ին գլուխը կը կտրես , և բոլոր դիւանց օռտուն  
տաղըթմիշ կընես , ու կառնես զպսակն կե-  
նաց :

Է . Նմանապէս բըջախոհութի փորձութիւր՝  
կամ ներսէն կուգայ 'ի թուլամորթ բնուէ , 'ի  
պարապորդութե , 'ի հեշտասիրութե , արեան  
եռացմանէն , և զգայարանաց անզուսպութեն .

և կմ դրսէն , ցմ ըստըզներուն առարգութէն , որ երբեմն չար օրինակ . և երբեմն չար խրատ կուտան քեզի : Ներսէն է նէ թշնամին՝ ցմ մարմինդ , գիտցիր որ անոր խօսքը մէկ է սատանային հետ . ուստի արթուն եղիր՝ որ քեզ չխամզէ սատանային ձեռքը , որ գայ դողտուկ քու ճէվահիր պարկեշտուիդ գողնայ . հապա դուն աճապարէ՛ բռնէ՛ տնէ եղած գողը . ու հախէն եկուր . ցմ ճնշէ՛ զմարմինդ , աշխատցուր , անօթի ծարաւ պահէ , որ մէյմալ եւէ լորդ փափկութե և հեշտուե ետեէ չինկնայ . որով սատանան ալ ծակէ՛ ՚ի ծակ կրփախցի մկանս պէս : Ապա թէ դրսէն է , գիտցիր որ ան ալ սատանային արքանեակն է , որ ելեր է որսալու քու հոգիդ հրեղէն նետերով . թեւաւորէ՛ թռչնոյ պէս թեւօք աղօթից , ու փախիր , ինչպէս փախաւ զովտ ՚ի սողոմայ և ՚ի գոմորայ հրեշտակաց ձեռքովը . ան առեն պօշը կելլայ սատանային ամ հնարքը . անիկա խախք կրլլայ նյ և հրեշտակաց առջև , և դուն կրփառաւորիս . անի կերթայ գերդեսացւոց խողբը կրմտնայ , ցմ աղմասէր և դարչելի մարդկանց սիրտը , և անոնցմով կրնկղմի ՚ի խորանդնդոց . իսկ դու հրեշտակակերպ կրվերանաս յերկինս , և կրլաս դասակից հրեշտակաց :

Տեսար , արթնութիւն ի՞նչպէս մենծ բան է , որ զփորձութիւն ՚ի բարձրութի մեր կրդարձընէ . փորձ ընելով մեզ ամմէն բանի՛ բարին ընտրել կուտայ , չարը մերժել . մանաւանդ թէ չարէն բարի կրհանէ . և մեզի կրթութի և թալիմ կրտորվեցնէ հոգևոր պատերազմին մէջ . յաղթել կուտայ ամմէն մեղաց , և հասնիլ անանց պսակաց :

Աղէկ աղէկ ամմա , կրսես , վարպետութիւր  
 ամմէն սահաթ արթուն կենալն է . մենք տկար  
 ենք , հողեղէն ենք , չենք դիմանար , կըթոււ-  
 նանք . ի՞նչ ընենք , ի՞նչպէս ընենք : Աս իրաւ  
 է , ես ալ գիտեմ . ամ մեզնէ աղէկը գիտէ .  
 ուստի պիտի հասկընաս՝ որ մինաւորիկ մեր  
 արթնութիւր հերիք չէ , հետը օգնական պէտք  
 է աղօթքը՝ որ ան օգնութիւր մեզի հասնի . Ըմ ,  
 \* Համբարձի դաչա իմ՝ի լերինս , ուստի եկես  
 ցէ ինձ օգնուի : Օգնութի ինձ՝ի անէ եկես  
 ցէ , որ արար զերկինս և զերկիր ॥ : Ուրեմն  
 դանք հիմա աղօթքի :

## Ե Ր Կ Ր Ո Ր Դ Դ Ե Ղ :

Աղօթք :

Ա . Դ ղ թ ք ն է աղաչանք առ ամ : Ուստի նախ  
 պիտի դիտնաս , թէ որո՞ւ կաղաչես կոր , քի ան-  
 ասոր համար կըսուի աղօթքն՝ \* վերացումն  
 մտաց առ ամ ॥ : և երկրորդ՝ ի՞նչ պիտի աղա-  
 չես . քի անանկ բան՝ որ քեզի հարկաւոր է , և  
 ան պատշաճ է՝ որ քեզի տայ . ասոր համար  
 կըսուի աղօթքը , \* հայցուած պատշաճաւ  
 րաց յայ ॥ : Ապա թէ՛ խելքդ վրադ չըլայ , որ  
 խապար չըլաս՝ թէ ի՞նչ կըխօսիս , ի՞նչ խըն-  
 դիրք կընես . կի՞ թէ հարկաւոր եղած բանք  
 թողուս , ու պօշ բաներ խնդրես նէ , աղօթքդ  
 աղօթք չեղաւ . ուստի ամ չի լսեր :

Առջինին համար կրսէ առաքեալն . \* կացից  
 յաղօթս հոգևով , կացից յաղօթս և մտօք ॥ :  
 Եւ երկրորդին համար ըսաց ան մեր . \* խընդ-  
 րեցէք նախ զարքայութիւն ան և զարդարուի  
 նորա . և այն ամենայն յաւելցի ձեզ ॥ : Ատնք  
 որ

որ աղէկ հասկընաս , ու անոր կեօրէ աղօթք  
ընել սորվիս նէ , փորձութեան ատենը աւել  
լի կիմնաս աղօթքին հէմ հարկաւորութիւնը ,  
հէմ օգտակարութիւր :

Է . Սք հարք՝ սք յակոբ մծբնայ հայրապետին  
հետ՝ աղօթքը կընմանցնեն զէնքի , ցի սիլահ  
փուսատի : Ջերէ ինչպէս որ պատերազմ  
մոնօղը՝ ղերխը ըլլայ , սիլահ փուսատն ալ  
տեղը նէ , համարձակ կըրնայ դէմ կենալ թշնա  
միին , անոր աչքը կըվախցընէ , հախէն ալ կու  
դայ . ասանկ ալ մենք զմեզ աղօթքով զինենք ,  
ու սք խաչը պայրախիպէս՝ կամ քէսկին թրի  
պէս ձեռու՛րնիս առնենք , սատանային աչքը  
կըվախցընենք ու հախէն կուդանք :

Ճէնկի մէջ եղօղ մարդը սիլահ փուսատն 'ի  
զատ՝ սիրտ ալ պիտի ունենայ , աս ալ հերիք  
չէ՛ իրեն սիրտ տո՛ւօղ ալ պիտի ըլլայ : Ինքը սիրտ  
պիտի ունենայ , ցի սրտոտ պիտի ըլլայ , որ  
թօփի թիւֆէնկի ձայնէն չառնէ , թշնամիսե  
րուն բազմութէն կիմ էօրփէն իւրքմիշ չըլլայ :  
Իրեն սիրտ տո՛ւօղ ալ պիտի ըլլայ երկու կեր  
պով . մէյ մը՝ թէ մի վախնար , ես քովդ կեցեր  
եմ՝ որ քու սէրասկէրդ եմ , կամ քու կտրիճ  
եօլտաշդ եմ . ինչո՛ւն ես չի մեռնիմ , դուն  
չես մեռնիր . նայէ՛ մեր կողմին ասկէրը թշնա  
միներէն շատուոր է ու զօրաւոր , անանկ որ  
մէկը տասին դէմ կըդնէ , հարուրը հաղարին  
հախէն կուդայ : մէյմալ , թէ քե՛զ տեսնամ ,  
կտրիճ եղիր , մէկ երկու սահաթ է աշխա  
տանքդ , ետեկն յաղթութիւր մեր ձեռքը կիլ  
նայ , թշնամիները կըջարդենք , անոնց մալը  
մերն է . ասկից 'ի զատ՝ թագաւորէն ալ փէշ  
կէշ պիտոր ելլայ , չէ՛ թէ սալթ մէկ չէլէնկ մը ,  
սօրղուճ մը , մէկ քանի ղուռուշ մը , հապա  
շատ

շատ քէսէ ստակ , ու մենձ մենձ մանսուպ-  
ներ . ևն :

Ասոր նման հողեւոր պատերազմին մէջն ալ ,  
աղօթքը սալթ սիլահ փուսատու թիւն չըներ  
մեզի , հապա մեզ սրտոտ կընէ , ու խաթ խաթ  
սիրտ կուտայ : Սրտոտ կընէ անով , որ փոր-  
ձուէ ատեն՝ աղօթքի խայրէթ ընելնուս պէս՝  
սրտերնիս ու ժ մը կառնէ , թէ սատանան մեր  
վրայ չի կրնար զօրանալ . սատանային ծածուկ  
հնարքները ու տուղախները՝ որ առաջ մեր աչ-  
քը կը վախցընէին , աղօթքով յայտնի կերևնան  
մեզ՝ թէ փուճուճ քաներ են . մենք չուզե-  
նանք նէ , մեզ չի կրնար ո՛չ պատրել և ո՛չ պար-  
տել , քի՛ ո՛չ խաբել կրնայ , և ո՛չ յաղթել :

Սիրտ ալ կուտայ մեզի աղօթքը , մէյ մը՝ աչու՛ր-  
նիս բանալով , ու հասկըցընելով՝ թէ մենք մի-  
նաւորիկ չենք ճէնկի մէջ , հապա \* բանակք  
հրեշտակաց օն շուրջ են զերկիւղածովք նր ॥ .  
ինչնիս որ զգալի աչքով ալ տեսաւ եղիսէ մար-  
դարէին աշկերտը . հէմ՝ զօրապետնիս ալ ինքն  
քս է առիւծ՝ ի տանէ դաւթի , թագաւոր փա-  
ռաց՝ օր երկնի և երկրի , որ անկարելի է թէ  
յաղթուի , պէտք է որ միշտ յաղթէ . ուստի  
կըսէ պօղոս . \* հայեցարձք ՚ի զօրագլուխն հա-  
ւատոց , և ՚ի կատարիչն յս ॥ . ևն : Մէյմալ՝ առ-  
ջևնիս դնելով յաղթութե՛ վարձքը . որ փոր-  
ձութե՛ յաղթենք նէ , երկնային պսակ պիտի  
առնենք . որ անդին ճէվահիրներով ու մար-  
դրբիաներով է շինած , զոր պիտի դնէ մեր դը-  
լուխը երկնաւոր թագաւորն . որ մէկ դիէն  
սէյիը կընէ մեր ճէնկը , մէկ դիէն ալ սիրտ կու-  
տայ մեզի , չէ՛ թէ սոսկ դրսէն յորդորելով .  
ու ըսելով , \* զօրացիր և քաջ լեր , որ յաղթէ՛  
տաց նմա զպսակն կենաց ॥ , հապա ներսէն մեր  
սիր-

սիրտը զօրացնելով . և կամքերնիս ուժովցնէ,  
լով ու հաստատելով 'ի բարին . ինչպէս որ ը-  
բաւ ամենայն մարտիրոսաց , ճգնաւորաց , և  
ամենայն առաքիներաց :

Գ . Մարտիրոսաց բանը յայտնի է . ուստի կը-  
սէ շարականը . \* 'ի վերնական զօրուէ քում-  
մէ պատերազմեալք յաղթեցին թշնամոյն : Որ  
ետուր զօրութի մարդասէր քոց ճգնաւորացն՝  
յաղթել չարին լճիմամարտութե : Տնծուի է  
այսօր հրեշտակաց և մարդկան , զի զխրոխտա-  
ցեալ զթշնամին վանեալ խորտակեցին սուրբ  
վկայքն , և եղեն յաղթօղբ 'ի պատերազմի :  
Մարմնով և արեամբ մարտեան լճէմ զինու .  
վիրաւորեալք 'ի մարմնի՝ վիրաւորեցին 'ի մահ  
զբելիար , և ստացան պարծանք յաւիտենա-  
կան : Երանաւէտեալք 'ի հոգեղէն զոճարթ-  
նոցն , և բարբեանելք 'ի դասուց մարմնաւորաց  
սբ վկայքն , անեղին աջովն պսակելք եղեն || :  
Ճգնաւորներուն բանն ալ յայտնի է . ուստի  
կըսէ շարականը՝ մեր սբ հայր անտոն աբբային  
համար . \* Նախասկիզբն միանձանց երանելի  
սբ հայր անտոնիոս՝ վերնական յուսոյն ակն  
ունելով՝ զերկրաւորս արհամարհեաց , և զին-  
ւորեցաւ քեզ քս յս հարցն մերոց : Մենա-  
մարտեալ լճէմ չարին բազմահար վիշապին՝  
ժուժկալեալ համբերեաց ազգի ազգի վշտաց՝  
քարավէժ կոչկոճման : Յանապատի բնակե-  
լով՝ աղօթանուէր թեօքն հալածեաց զբազ-  
մութի լէզէոն զօրացն . և քաջալերեալ յոր-  
դորեաց զմիանձունսն ամենայն || . ևն : Վարքն  
որ կարդաս՝ աս բաներս աղէկ կըհասկընաս ,  
թէ ինչպէս քս երևցաւ սբ անտոնի հոգևոր  
ճէնկին ատեն , ուժ տուաւ , գովեց , և իրեն  
փառք սեպեց անոր յաղթութիւր :

Եւ մեծին թէողոսի թագաւորին համար կըսէ շարականը . \* Որ քոյին սք աղօթիւքդ վանեցեր զթշնամին , կոխելով զսատանայ՝ ընդ երկնայինսն դասեցար ॥ : Ա՛ ալ աղէկ կըհաս կընաս՝ երբոր լիակատար վարք սքցը կարդաս նէ , որ անվ մօտերս պիտի հանենք :

Դ . Դաւիթ մարգարէն օրինակ ըլլայ ամեն պապէթ սքց տեղը : Ի՞նչ կարծես , դաւիթն որ պզտըկուց պէրի բնուք ուժով էր . այնչափ որ առիւծները արջերը կըպատուէր , որ ատեն որ դողիաթի դէմ ելաւ նէ՝ սալթ ի՞ր ուժովը բան տեսաւ կըսես . քաւ լիցի . տեսաւ որ՝ թշնամին հսկայ մը նէ , իր պոյին պօսին՝ ուժին բազկին՝ զըրխին սիլահին է կիւժէնմիշ եղեր . ինքը ան վրայ յոյսը դրաւ սրտանց աղօթքով , ու հաւատքով դէմ ելաւ առանց զըրխի ու սիլահի . ինչպէս որ ըսաց ալ գողիաթին . \* դու դաս՝ ի վերայ իմ սրով և գեղարդեամբ , և ես դամ՝ ի վերայ քո անուամբ ան զօրութեանց ॥ : Ա՛խ կտրիճ խօսք՝ կտրիճ մարդոյ , որ ան ա նունովը ճէնկ կըմտնայ , ի հարկէ պէտք է որ յաղթէ . ինչպէս որ յաղթեց . մէկ սափանով մը լեռան պէս մարդը պառկըցուց , ու անոր թրովը անոր գլուխը կտրեց . և անանկ բան ըրաւ՝ որ բոլոր իէլացոց օռտուն չէր կըցէր ու չէր կրնար ընել :

Հապա որ անմարմին գողիաթին՝ քո սատանային դէմ ամեն իժիր ճէնկ կընէր նէ դաւիթ մարգարէն , ի՞նչ սիլահ կըբանեցնէր . աղօթք . զըրխն ալ աղօթք , թուրն ալ աղօթք , խալխանն ալ աղօթք , սափանն ալ աղօթք . հող և որ զըրխեր կըխնդրէր յայ աղօթքով , հող և որ սիլահներ կըխնդրէր աղօթքով , և անանկ կըյաղթէր : Մէկ անգամ թուլցաւ աղօթքէն , իոր ձուէ

ձուէն ատենն առ անձ չիդիմեց , անով չարաչար  
ընկաւ հէմ 'ի շնուէն՝ հէմ 'ի մարդասպանուէն .  
ետքն ալ կենէ աղօթքով կանգնեցաւ , զօրա-  
ցաւ , յաղթեց սատանայի , և արժանի եղաւ  
երկնաւոր պսակաց :

Ասոնք ամիկնքը տեղն 'ի տեղ դրած կըդտնաս  
իր աղօթագրքին մէջ . որ է սաղմոսը , պէսսիս  
խորհրդաւոր խօսքերով . և նոյն սաղմոսն է  
ամիկն աղօթագրքէն եւել զօրաւոր սիլահ ընդ-  
դէմ ամ փորձուածեց : Անկից մէկ քանի բան  
մը միտքդ ձգեմ . որ ինչպէս կանոնադրուխնե-  
րուն մէջ կերգենք՝ իբրև գլխաւոր պէյիտ միշտ  
բանեցնես փորձուած ատենները . \* Դատեա՛  
ւոր զայնոսիկ՝ ոյք դատեն զիս ( քի փորձուիք ,  
կամ ՚Յ , մարմին , ու սատանայ ) . մարտիր ընդ-  
այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս : Առ զգէն և  
զասպար քո , և արի յօգնել ինձ . հան զսուր  
քո լէդէմ հալածչաց իմոց . արդէլ զնս . և ա-  
սա՛ դու ցանձն իմ , թէ փրկուածի քո ես եմ :  
Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խնդրեն զանձն  
իմ . դարձցին յետս և ամաչեսցեն՝ ոյք խոր-  
հէին ինձ չար : Եղիցին նոքա ուր փոշի առաջի  
հողմոյ , և հրեշտակ ան նեղեսցէ զնս : Եղի-  
ցին ճանապարհք նոցա 'ի խաւար , և 'ի գայ-  
թակղուծի . և հրեշտակ ան հալածեսցէ ըզ-  
նոսա : 'ի նանիր թաքուցին ինձ որոգայթ յա-  
պականութեան իւրեանց . և 'ի նանիր նախա-  
տեցին զանձն իմ ॥ :

Դարձել , \* 'ի քեզ ւոր յուսացայ , մի ամաչե-  
ցից յաւիտեան . յարդարութե քում փրկեա՛ ,  
և ապրեցո՛ զիս : Խոնարհեցո՛ առ իս զունկն  
քո . և կեցո՛ զիս : Լէր իմ ան ապաւէն , և տե-  
ղի ամուր կեցուցանել զիս . զի հաստատութի  
իմ , և ապաւէն իմ դու ես ॥ . ևն :

Դար

Գարձե՛լ, \* Սիրեցից զքեզ Ի՞նչ զօրութի իմ ,  
 Ի՞նչ հաստատիչ իմ , ապաւէն իմ և փրկիչ իմ :  
 Ա՞ճ օգնական իմ , և ես յուսամ 'ի նա . ապաւէն  
 իմ , եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է :  
 Օրհնելով կարգացից առ Ի՞նչ , և 'ի թշնամեաց իմոց  
 ապրեցայց ॥ . և ն : Գարձե՛լ . \* Զգեցուցեր ինձ  
 զօրութիւն 'ի պատերազմի , զյարուցեալսն 'ի վերայ իմ՝ ներքոյ իմ  
 առարեր ॥ , և ն :

Ե . Փորձութիւնները ճէնկի նմանցուցինք նէ ,  
 տեսանք որ աղօթքն ալ սիլահի և իմտատի նման է  
 եղեր : Ապա թէ Յքիս փորձութիւնները՝ ծովու տալը  
 այն նմանցընենք նէ , աղօթքն ալ անոր կեօրէ՛ խալըսելու և իլիման հասնելու  
 մէկ հատիկ սէպէպ զիտնաս պիտոր . անանկ որ՝  
 դուն ալ թէ որ առաքելոց պէս ձայն տաս քսի՛  
 աղաղակելով սրտանց՝ նեղուէդ ու փորձութե՛դ  
 առնել , \* Ի՞նչ փրկեա՛ զմեզ , զի կորնչիմք ,  
 ॥ , քս ալ իսկոյն կելլայ նոյն հրաշքը կրկատարէ ,  
 ինչ որ տիրերեայ ծովուն վրայ ըրաւ . որ \* յարուցեալ  
 սաստեաց հողմոյն և ծովուն , դադարեա՛ կարկեաց ,  
 և եղև լաղաղութի մեծ ॥ : Կամ երբոր կըտեսնաս  
 քեզ պետրոս առաքելոյն պէս , որ աւելի սէրպէստութիւնով  
 քեզ մէկ փորձութե՛ մէջ ձգեր ես , կի՛ թէ կամօքն  
 ան մէկ նեղութե՛ մը մէջ ընկնալէդ ետև՝ դուն քեզ  
 կարճատութե՛ և նեղսրտութե՛ տարակուսանքի ու  
 յուսահատութե՛ մէջ ընկած կըզիտնաս կոր ,  
 աղաղակէ՛ առ յս . \* տէր փրկեա՛ զիս ॥ :  
 Ան ալ նոյն սահալքը ձառքը կերկնցնէ , կըբռնէ ,  
 ու կըխալըսէ քեզ՝ ըսելով . \* թերեհաւատ  
 լէ՛ր երկմտեցեր ॥ : Այսու նմանութե՛ սրխ  
 սրխ բանեցո՛ւր փորձութե՛ առնել այն խօսքերը  
 շարականին . \* Ծով մեղաց իմոց զիս

ալեկոծէ . որ ես նաւապետ բարի , շնորհեա՛  
ինձ նաւահանգիստ՝ հայր ամենակալ : Խորք  
պատրանաց զիս կորուսանեն . այլ դու նաւա  
պետ բարի շնորհեա՛ ինձ նաւահանգիստ հայր  
ամենակալ : Մերձ եմ յընկղմիլ՝ օգնեա՛ ինձ նա  
ւապետ բարի , քանզի ծանրացան ՚ի վերայ իմ  
բեռինք մեղաց : Ա՞՞ծ յօգնել ինձ փութա՛ , քան  
զի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս .  
այլ դու նաւապետ լեր և ինձ ձեռնտու : Փրը  
կեա՛ ՚ի վտանգէ զնաւաբեկս ՚ի յալեաց ծռ  
վուս . քանզի կորնչիմ ՚ի մեղաց անօրէնութե՛ն  
իմոյ : Չիս՝ որ ՚ի նաւի ՚ճի ալեկոծեն մեղք իմ ,  
նաւահանգիստ ապաշխարութե՛ն շնորհեա՛ ինձ  
բազումողորմ , և կեցո՛ : Կեցո՛ զիս անձ , զի  
հասին ջուրք յանձն իմ . ընկլայ ես ՚ի խորս  
անդնդոց , ուր ոչ դոյ ինձ հանգիստ . նաւա  
հանգիստ ապաշխարութե՛ն շնորհեա՛ ինձ բա  
զումողորմ , և կեցո՛ : Նաւապետ բարեգու՛թ՝  
առ քեզ ապաւինիմ , տուր ինձ ձեռն՝ որպէս  
երբեմն պետրոսի ՚ի վերայ ալեացն , որ ծփիմս  
ալեկոծեալ յանցանօք մեղաց , և կեցո՛ ॥ : Եւ  
առ սք անձաճինն ըն տաղասացին . \* Աշխարհս  
է ծով , և ես ծփիմ . ալեկոծեալ ես ընկղմիմ .  
ինձ ձեռքն տուր՝ հանն ՚ի ծովէս , զի մի անյոյս  
կորնչիմ կոյս ॥ :

զ . Փորձութիները նման են նաև դիշերուճան  
մթուն , որ ատեն որսի կելլան գազանները՝ քի  
մարմինը ու սատանան . ուստի դուն ալ պէտք  
է որ լոյս խնդրես յայ աղօթքով . զերէ ինչպիս  
գազանը լուսէն կը վախնայ , ասանկ ալ խաւա  
րասէր թշնամին ՚ի լուսոյ աղօթից . մի վախ  
նար , լոյս խնդրէ , խաւարը կը փախչի . \* Լոյս  
տուր ատէր ( բո՛ւ ) աչաց իմոց , զի մի երբէք  
ննջեցից ՚ի մահ . մի ասացէ թշնամին , թէ

յաղթեցի նմա . կի՛մ նեղիչք իմ ցնծասցեն՝ թէ  
 ես սասանեցայ . ես յողորմութիս քո Ի՛նր յու-  
 սացայ , և ցնծացաւ սիրտ իմ՝ ի փրկուէ քում .  
 օրհնեցից զԻ՛նր զբարեբարդ իմ : Ի՛ քէն է տէր  
 աղբիւր կենաց , և լուսով երեսաց քոց տեսա-  
 նեմք զլոյս . ծագեա՛ զողորմութիս քո՝ ոյք ճա-  
 նաչեն զքեզ Ի՛նր . զարդարութիս քո՝ ոյք ուղիղ  
 են սրտիւք ॥ :

Կըլլայ որ՝ Յ , մարմին , ու սատանայ՝ միտքդ  
 կրխաւարցընեն , կամքդ կրկուրցընեն , որ իրենց  
 փորած դուբը ինկնաս . կամ Ի՛նր շիտակ ճամբան  
 թողուս , ու դժօխային մուլար ճամբան եր-  
 թաս . ուստի երբոր կրտեսնաս քեզ պղտորած  
 ու շփոթած հոգւոյն աջօք , հէմէն աղաղակէ  
 աւետարանին կուրին պէս . \* որդի՛ դաւթի ու-  
 ղորմեա՛ ինձ . բա՛բբունի , զի բացայց ॥ :

Տահա ի՛նչ ըսեմ . շատ բանի կըմանին փոր-  
 ձութիւնբը . անոր կեօրէ դուն ալ յարմար ա-  
 ղօթքներ ձեռք առ՝ սաղմոսէն , շարականէն ,  
 ժամադրքէն , նարեկէն . Լէն : Իսկ մեղքն որ՝  
 փորձութենէն կըրնայ ըլլալ , կամ մահ է հոգ-  
 ւոյդ , և կի՛մ հիւանդուի , անոր կեօրէ ալ դեղ  
 կենաց կուղէ . ուստի մեղք մը ընկածիդ պէս՝  
 շուտով առողջարար դեղ խնդրէ երկնաւոր  
 բժշկէն հաւատքով՝ եղեկիայ թի՛րին պէս . մա-  
 նաւանդ թէ տահա չընկած՝ քանի որ փորձու-  
 թիւնը քեզ մեղք կուղէ ձգել , նախապահօղ  
 դեղ խնդրէ՛ այսպիսի աղօթքներով : \* Յոյս և  
 յարութի ազգի մարդկան քս Ի՛նձ՝ զհիւանդուի  
 հոգւոյ իմոյ կենդանացո՛ . որպէս երբեմն զեղե-  
 կիայն : Չչարչարանս և զմահ յանձն առեր կեն-  
 դանատու ամենեցուն . զհիւանդութիւն հոգ-  
 ւոյ իմոյ առողջացո՛ . որպէս երբեմն զեղե-  
 կիայն ॥ : Լէն :

է. Գանք որ՝ եթէ կուզես որ ան աղօթքդ լսէ  
 փորձութեան ատենը . պէտք է որ ուրիշ ատեն  
 ալ աղօթքիդ մուխայէթ ըլլաս . զերէ ինչպէս  
 որ մէկ բարեկամի մը հետ շատ տեսնուած  
 ես , նեղութեանդ ատենը անոր կրնաս հա-  
 մարձակ սիրտդ բանալ , ու տէրտիդ տէրման  
 խնդրել . ամմա ուրիշ ատեն որ հետը տես .  
 նուրիշ չես ուզեր , ճորով բարե կուտաս կանց-  
 նիս , ոչ դուն երես կունենաս նեղութեանդ  
 ատեն զանի աղաչելու , և ոչ անիկակ պարտը-  
 կան կըլլայ երեսդ նայելու . հապա կըրնայ ը-  
 սել , թէ ուրիշ ատեն ուր էիր , չէիր երևնար ,  
 հիշխաթըս չէիր հարցըներ՝ տէ . հիմա՞ կու-  
 դաս . դնա՞ , որոնց հետն որ սըխ սըխ կըտես .  
 նուրիշ նէ , անոնց փէշը փակիր : Ասոր կետի  
 չափէ՛ ան հետ ըրած բարեկամութիդ ու տես-  
 նութիդ աղօթքի ատեն , և ասկից ետև՝ ջերմե-  
 ուանդ եզիր ու աղօթասէր :

Իրաւ որ ան որոմութեանը չափ չիկայ , անյի-  
 շաչար և անոխակալ ամր է , որ ատեն դառնանք  
 աղաչենք նէ՛ երես չի դարձըներ . հապա կըսէ ,  
 \* դարձարո՞ք առ իս , և ես դառնամ առ  
 ձեզ ॥ : Ալ լաքին ան ալ իրաւ է՝ որ հէմ ամօթ  
 մեծ է , հէմ վախնալու բան է , որ մէկը ուրիշ  
 ատեն անփոյթ ըլլայ զան յիշել ու աղօթքով  
 զինքը պատուել . ետքը դայ՝ սալթ նեղ ատե-  
 նը առ ան աղաղակէ , որ շատ անգամ բերնով  
 կըլլայ , և ոչ սրտով . զերէ սրտանց աղօթք  
 ընելու ալ շնորհք պէտք է . իսկ անփոյթ ե-  
 ղօղը դժար է թէ ատ շնորհքը գտնայ : Աս  
 անհոգուիը՝ որ բան մը չեն սեպեր ճահիչնե-  
 րը , ու պաղ կկենան աստուծմէ , շատի կընստի  
 իրենց՝ աս Յքս ալ՝ անդիի Յքն ալ . ասոր ներ-  
 հակ՝ որոնք՝ որ հոգևորի և աղօթքի կըհե-  
 տեին ,

տևին , հէ՛մ ասդին կառնեն արքայու թէ՛ն չէ՛շ  
 նին՝ իրենց սրտին մեջ , հէ՛մ անդին պիտոր  
 վայլեն յաւիտեան մայ թագաւորութիւնը : Ո՛ր  
 թողունք որ՝ ինչպէս մէկը որ թագաւորի հետ  
 հիջ տեսնուած ու խօսած չէ , առջևը ելլալու  
 ըլլայ նէ , շաշըմիշ կրնէ վախէն , ու չի կրնար  
 համը առնել այն ուրախութեան՝ որ կառնեն  
 թագաւորին քովինները . ասանկ ալ ո՛վ որ հի-  
 մակուհինէ մայ հետ տեսնուելու ալըշմիշ չէ ե-  
 ղած , ի՞նչ սրտով և ի՞նչ երեսով անդին մայ  
 առջև պիտի ելլայ . իսկ արքայութիւն մանալ  
 բնաւ յոյս չունենար . զերէ գիտէ որ ինքը  
 երկնաւոր թագաւորին հետը նստելու ելլելու  
 մարդ չէ : Հա՛մա ո՛վ սիրելի՛ հիմակուց սորվէ՛  
 մայ հետ խօսել աղօթքով , որ յաւիտեան մայ  
 խօսակից ըլլաս երկինքը բերան՝ ի բերան . հի-  
 մակուց մայ առջև հանէ անուշ անուշ կերա-  
 կուրներ՝ ցի աղօթքներ , որ ինքն ալ քեզ իր  
 սուֆրան նստեցնէ , և յաւիտեան ուրախա-  
 ցընէ :

Գիտեմ որ պաղ մարդիկը պէսպէս վէսիլներ  
 կրգտնան աղօթքէն ետ կենալու . ատեն չու-  
 նինք կըսեն . սրխլէթ բան դործ ունինք . Ծիս  
 տաղտաղան կայ վրանիս . ասոնց ճուղապ տալ  
 պէտքը չէ , զերէ իրենց հոգին իրենց պէտք է  
 նէ՛ պէտք է որ ամմէն բանէն առաջ հոգևոր  
 հոգերնին հոգան . շատ ըլլայ իրենց՝ ինչ որ  
 ծուլուէ դէմ դեղ գրեցինք . թո՛ղ երթան կա-  
 տարեն , ճամբայ կուգան :

Ը . Բարեպաշտներն ալ՝ որ աղօթասէր կուզեն  
 ըլլալ , մէկ քանի սէպէպներ կամ գանկատներ  
 ունին . անոնց ճուղապին տեղն է հոս տեղս :

Սովորաբար կըսեն :

( մ ) . Ի՞նչ ընենք , աղօթք կուզենք ընել սրբ-  
 ր 2 տանց՝

տանց՝ ամմա, չար սատանան մեզ հանգիստ չի  
 թողուր . մտ՛ւրնիս հաղար տեղ կերթայ . ան-  
 շահ բաներ ալ՝ որ ուրիշ ատեն մտքերնիս չէր  
 իզար, աղօթքի ատեն գլուխնիս կը թափին :  
 (բ .) Մտքերնիս ժողվըտենք ալ, փորձու թի-  
 մալ չունենանք նէ, կեահ քուն կուգայ, կեահ  
 մէկ ծանրութի մը՝ որ բերաննիս չի բացուիր .  
 հիչ որ չէ նէ, եա՛ տղոց ձան կը լայ, եա՛ ոտից  
 ձան մը կուգայ, մէկը սանկ, մէկը նանկ պատ-  
 ճառ կը լայ՝ որ ուզածնուսպէս աղօթք չենք  
 կրնար ընել :

(գ .) Հիչ մէկ մահանայ ալ չըլլայ, պաղի տար  
 պայ մարդուն սիրտը կարծես թէ կը քարանայ,  
 հիչ համ չառներ աղօթքէն . անոր համար տա-  
 հա աղէկ կերևնայ աղօթք չընելը՝ քան թէ ա-  
 նանկ աղօթքի նստիլը :

Թ . Պատասխանի առջինին : Իրաւ է, սատա-  
 նան այնչափ հակառակ է մեր աղօթքին, որ  
 ձառքէն դար նէ՝ բնաւ չէր թողուր մեզ հայր  
 մեր մը ըսելու, Խր ի՞ճ, կամ յս մարիամ մը ը-  
 սելու . ատ ըսել տու՛օղը հողին սքէ . \* ոչ ոք  
 կարէ Խր ասել զյս, եթէ ոչ հողումն սքիլ :  
 Ուստի ժամս որ կերթաս նէ, գիտցիր որ սա-  
 տանան քեզնէ առաջ դրան քով կը սպասէ, որ  
 հետդ մտնայ ժամուն մէջն ալ, ու քեզ փորձէ,  
 ճար ընէ՝ որ աղօթքդ պօշ ելլայ . ինչու որ  
 աղօթքդ ընդունելի ըլլայ նէ, իր բանը չա-  
 մուռ է . աղէկ աղօթք ընօղը՝ շնորհք կառնէ,  
 անոր կեօրէ գործքն ալ բարի կը լայ . սատա-  
 նային բան չիմար : Ասանկ է նէ, դուն ալ ա-  
 ղօթքին խըյմէթը գիտցիր, աղէկ աղօթք ընե-  
 լու ճարը փնտուէ : Առջի ճարը ան է՝ որ ժամ  
 գացածիդ պէս, կամ աղօթքի նստածիդ պէս,  
 պինտ առաջ խնդրէ աստուծմէ՝ որ քեզ աղօթ-  
 քի

քի շնորհք տայ . որ իրեն հաճոյական պաշտօն մատուցանես . անկից ետև միտքդ քեզ ժողովէ , ու մտքովդ դուն քեզի ըսէ՛ . Որո՞ւ առջև եմ եկեր , որո՞ւ դիմացը կայներ եմ , կամ նըստեր եմ , ո՞ւմ հետ պիտի խօսիմ . այ հետ , որ է թաղաւոր թաղաւորաց և ար արանց՝ բնակեալ ՚ի լոյս անմատոյց , միանդամայն իմ մէկ հատիկ ստեղծօղս ու սիրական հայրս . և անոր կեօրէ խոնարհութենով ու պատկառանքով սկսէ աղօթքդ ընել :

Ամա սկսեր է սատանան բան խառնել , միաքրդ ասդին անդին տարտղնել , նայէ՛ որ քեզնէ սէպէպ մը չըլլայ՝ չորս դին նայելովդ , կիմ մէկ բանի մը սերտդ վերցուցած ըլլալով , կիթ դրսի բաներու տալմիշ ըլլալովդ . ասանկ բաները մէկ դի ձգէ , հիմա ուրիշ բան ունիմ՝ ըսէ , որ անկից մենձ՝ ու անկից հարկաւոր բան չի կրնար ըլլալ . ասանկ աղօթքդ առաջ տար : Թող անկից ետև սատանան ի՞նչ կուզէ նէ՛ միտքդ բերէ . կուզէ նէ՛ դժոխքին ամմէն դարշելի բաները առջևդ թափէ . բնաւ հոգդ չըլլայ : Խօսքս հեռու չըսեմ , ինչպէս սօխախին շները հաչեն նէ՛ քու հարկաւոր բանիդ արալըխը , իրաւ որ գլխացաւութիւն կուտան՝ ամմա անոր համար դուն քու բանդ դործդ չես թողուր . ասանկ ալ սատանան շանպէս կըհաչէ եղեր , քեզի՞ ինչ , դուն համբերէ՛ , աղօթքդ նայէ . պէտքը չէ որ հետը ինկնաս՝ մեղաներ ըսելով , խապուլ չեմ ըներ ըսելով , դուրսդ շարժելով . հապա հիչ բանի մը տեղ մի սեպեր . ասանկ համբերութենով ճէնկլի աղօթքդ ըմցնես նէ , շատ Փայտալը կելլաս : Չերէ սուրբ վարդապետաց ըսածին պէս՝ աղօթքը ճգնութի է , և պատերազմ սատանայի հետ .

հետ . համբերեցիր նէ , յաղթեցիր . ձանձրացար նէ , յաղթուեցար . մի վախնար՝ թող սատանան միտքդ ցրուէ , միայն թէ դուն ժողվեցտելու անհոգ մի ըլլար . թող ան աւրէ մէկ դիաց . դուն շինելը նայէ մէկալ դիաց . ասանկ կատարենք բոլոր աղօթքը նէ , կտրիճ ճէնկճի կըլլանք . նա կըյաղթուի , մենք կըյաղթենք . անիկակ կըկորսընցընէ , մենք կըվաստըկինք . հապա որ ան կըտեսնայ մեր աշխատանքը նէ , մասնաւոր օգնութիւն կըհասցընէ . ատեն ալ կըլլայ որ՝ կատարել աղօթքի շնորհք կուտայ : Ասով կըհասկընաս որ՝ աղօթքին հետ համբերութի ալ պէտք է . և համբերուի է դործ կատարեալ ունեցօղը . որու վրայ վարը կըլսօսինք :

Ժ . Պատասխանի երկրորդին : Ատ ալ իրաւ է , որ մենք մարմին տկար ըլլալով՝ հոգևոր դործքի ատեն կըթուլանանք . և սակայն կայ տկարութի բնական , և կայ ծուլական : Բնական տկարուէ՝ բնական դեղեր պիտի ընենք . զորօրինակ աղօթքնիս հոգնած դադրած ատենի չի ձգենք , որ չենք կրնար առաջ տանիլ . կերած խմած՝ քունը գլուխնիս աղօթքի չի նըստինք , հապա՝ արթուն ատեննիս . էն աղէկ ատեննիս . ամօթ չէ՞ մի՛ որ աղէկ սահաթնիս փուճ մուճ բաներու ու լաճի ծախենք տէ , անպիտան ատեննիս աղօթքի պահենք :

Իսկ ծուլական տկարուէ դեղը՝ ծեծ ու փէտն է , չէին է՝ չըխըշն է , խաթըր չըսեպել մարմնոյդ . հապա ըսել , պրէ անզգամ մարմին՝ քուզէՓքդ սէՓադ դիտցար ընել , կերար խմեցիր , պառկեցար ելար . սա ըրիր՝ նա ըրիր , ու չի յոգնեցար . հիմա ան հետ տեսնուելու իւշէն մի՞շ կըլլաս կոր . ելիր , աղօթքդ սկսէ . չէ նէ՛ քե .

քեզի ո՛չ կերակուր կայ , և ո՛չ քուն . ո՛չ աս ,  
ո՛չ ան . քու կամքդ օրն 'ի բուն կըլլայ կոր ,  
հողիին կամքը՝ որ է ան կամքը՝ ետ պիտի մնայ :  
Աս կերպովս դուն քեզ չեխես ու վախցընես  
նէ , ո՛չ քուն կըմնայ , ո՛չ ծանրութիւն :

Իսկ ուրիշ մահանաները՝ որ դրսէն են , քեզի  
վնաս մը չեն կրնար տալ . սատանային փորձու-  
թիւներէն մենձ չեն եա . շատ շատ՝ ասանկ բա-  
ներն ալ մէյ մէկ սատանայի փորձութի սեպէ ,  
ու մրտիկ մըներ . ձառքէդ եկածին չափ լուռք  
և համբերութի աղօթքդ ըրէ . մի՛ վախնար ,  
վարձքդ աւելի կըլլայ :

Ամա իխտիզա ըրաւ տէ , մէկը քեզ աղօթքէդ  
վեր հանեց , կամ կտրէկցուկ ընել տուաւ , մի՛  
վախնար . սիրոյ դորձք սեպէ , սիրով կատա-  
րէ , ու ետքը կենէ աղօթքդ առանջ տար . դուն  
քեզնէ մի՛ կտրեր պօշ բանի համար . ուրիշի  
համար կըլլայ նէ , մի՛ տրտմիր , մի՛ տժգոհար ,  
քեզի մեղք չիկայ , վարձք կայ : հիչ որ չէ նէ ,  
համբերուի կըշահիս , որ աղօթքէն վար չէ :

Դրսի մահանաներուն համար՝ աղօթքին թոյլ  
եղօղը , պօշ բանի համար աղօթքի ատեն տակն  
ու վրայ եղօղը , և ամէն ծոյլ աղօթքի նստօ-  
ղը՝ թող մտմտայ , ու խպնի , թէ անհաւատ-  
ները ի՛նչ կերպով կընեն իրենց սովորական ա-  
ղօթքը . անխ թէ անոնք ի՛նչպէս կընեն նէ  
դրսըւանց , անանկ ըլլար մեր աղօթքը ներ-  
սըւանց . ասով շատ բան կըհասկընաս , ու  
կըխպնիս քու թէմպէլութենէդ , ու իբրամսրդ  
հաճաթսրդ աղօթք ընելէդ : Ամա ի՛նչ պէտք  
է քեզի դրսի օրինակը . ներսի օրինակ շատ  
բարեպաշտ աղօթասէր ուղենաս տեսնալ նէ՝  
պակաս չէ . բայց աւելի դուն քու ձորդ և թա-  
ղաւորդ՝ քու երկնաւոր վարդապետդ նայէ ,

անոր ըրածը միտքդ բեր . որ բոլոր ցորեկը  
 յոգնելէն ետև՝ բոլոր դիշերնէրը աղօթքով  
 կանցընէր քեզի համար : Եւ ետքի սրխլէթին՝  
 գեթսեմանի պարտեզը մէկ դիէն արուն քրտ-  
 նելով հոգեվարուի կըքաշէր , ու մէկալ դիէն  
 յօժար սրտով աղօթք կընէր . ( աս է ըսելը ա-  
 ւետարանին . ) \* և էր ՚ի տաղնապի , և մտա-  
 դիւրութիւն և ս կայր յաղօթս ॥ : Ամէն աղօթ-  
 քիդ ատենը աս բանս յիշէ , ու խպնելէդ ե-  
 ըսող վար առ . ան ատեն խոնարհութենով  
 վրայ կելլաս ամենայն փորձութեց :

ԺԿ . Պատասխանի երրորդին : Եւ ինչ կու-  
 ղէիր . վարպետութիւնը ատանկ ատեն աղօթք  
 ընելն է , որ չէ թէ դուն ուսնաթնաս , հապա  
 ւած . աղօթքէդ համ առնելը քու ձեռքդ չէ ,  
 այ մասնաւոր պարզ են է . դուն ատանկ պար-  
 զևի արժանի՛ ես մի , որ սքերը հազիւ արժա-  
 նի են եղեր . որ դործքիդ նայելով՝ ասանկ  
 փէշկէշի քեզ լայելի կըտեսնաս , թէ որ քեզ  
 մեղաւոր կըճանչնաս , կամ թէ իրաւցընէ ար-  
 դար պիլէ ըլլաս՝ ամմա խոնարհութի ունիս նէ ,  
 սրտիդ քարանայուն մի զարմանար . հապա ը-  
 սէ . ինձի մուստահաի է ասկից աւելին , որ  
 ւած բնաւ երեսս չինայի , դերէ ես ալ ատենով  
 իր երեսը չինայեցայ , իրմէն երես դարձուցի .  
 ինձի հերիք է՝ որ մաքսաւոր եղբորս պէս սրը  
 տիս կուրծքը զարնեմ , ու այ առջև դլուխս  
 ծռած կայնիմ , իր ողորմութե դուռը չալեմ .  
 ինձի մենծ փառք է որ իմ ստեղծողիս առջև  
 մէկ երկու խօսք մը խօսիմ , ու խեղճութիւն իմ  
 խեղճ հայս առջևը դնեմ , տէրտս բանամ ,  
 ոտքը ինկնամ , աղաչեմ . թող չի լսէ իմ աղօթ-  
 քիս , հերիք է որ աղօթքս կըլսէ :

Ասանկ խոնարհ մտքով ու սրտով՝ քու պար-  
 ալ .

տրկանութիւնք ըրէ, ինչ աղօթք գիտես՝ ըրէ,  
 ան ատեն անհ հէմ աղօթքդ կըլտէ, հէմ ա-  
 ղօթքիդ կըլտէ. և երբոր կուզէ՝ կուտայ քե-  
 ղի կատարեալ աղօթքին շնորհքը, որ ոչ լե-  
 ղուով կըպատմուի, և ոչ գրչով կըդրուի,  
 հապա այ ձեռքովը մարդուն սրտին մէջ կը-  
 գրուի: Ինչպէս հասկըցընեմ քեզի, չեմ գի-  
 տեր. խնդրէ յայ, և ոչ ՚ի մարդոյ.\* որ խընդ-  
 րէ, առնու ॥:

Կատարեալ աղօթք կըսեմ նէ՛, արցունք թա-  
 փելը մի՛ հասկընար. ան ալ աղէկ է, ամմա  
 մենծ քան մը մի՛ սեպեր, մանաւանդ երբոր  
 հպարտութի՛ ալ կիմնաս հետը: կակուղ սիրտ  
 մարդիկ խօլայ կուլան. կտրիճ թապիէթները  
 թէվէքելի չեն լար, թէ՛ աղօթքին մէջ, թէ ա-  
 ղօթքէ դուրս: Կատարեալ աղօթք ըսածս՝  
 խորին խոնարհութիւն կըսկըսի, որով պէտք  
 է մեզ բոլորովին ոչինչ ու ողորմելի ճանչնալ,  
 և այ բարձրութիւն ու մեծվայելութիւնը խո-  
 րունկ կերպով ըմբռնել. ուսկից խորին պատ-  
 կառանք կուգայ, անկից ծայրագոյն կարօտ  
 և սէր առ անհ կեւելնայ. ան ատեն մարդը ա-  
 ղօթքէն չիկշտանար. քանի՛ կերթայ՝ մէկ ան-  
 պատմելի համ մը կառնէ, որ արքայութեան  
 համտեսի պէս քան մը նէ. զ՞ք կըմոռնայ,  
 զինքն ալ կըմոռնայ, ամմէն քան իր աչքին ոչ-  
 ինչ կերևնայ, միայն ան կըմայլի՝ կըմխիթա-  
 րուի, անկից չի կրնար զատուիլ. ինչ գործք  
 ընէ նէ, այ համը բերանը կըմնայ, երբ կըլայ  
 որ աղօթքս ընեմ կըսէ. և այն տէրէճէ կըլայ  
 պաղի սքերուն, որ բոլոր հողուով առ ան վե-  
 րանալով՝ մարմնով պիլէ ոտուրնին գետնէն կը-  
 կըտրի. ասոր կըսենք յափշտակուի, որ առանց  
 հրաշքի չըլար:

Ասանկ աղօթքի ճամբայ կրբանայ մտածակա-  
նը . ուստի դուն ալ ամմէն օր մէյմէկ կտոր  
մտածական ըրէ . որով կամաց կամաց առաջ  
կուգաս , և 'ի մարդկանէ հրեշտակ կըլաս .  
զերէ ասըլ աղօթքնալ հրեշտակային գործք  
է :

## Ե Ր Ր Ո Ր Դ Դ Ե Ղ :

### Համբերութի :

իս . Փորձուէ հետ որչափ հարկաւոր կապ ու-  
նի համբերութիւնը նէ , մտիկ ըրէ յակոբոս  
առաքելոյն ըսածին . \* Ամենայն ուրախութե  
արժանի համարիջիք եղբարք , յորժամ 'ի պէս-  
պէս փորձութեց 'ի մէջ անկանիցիք , գիտաս-  
ջիք , զի հանդէս ձերոց հաւատոցն յօրինեալ  
գործէ զհամբերուի . իսկ համբերուին գործ  
կատարեալ ունիցի . զի իցէք ողջանդամք և  
կատարեալք , և ոչ իւիք նո՛ւաղեալք : Երա-  
նեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց . զի ե-  
ւթէ ընտիր ևս գտանիցի , առցէ զպսակն կե-  
նաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ॥ :

Ուրիշ տեղ ալ որ սք գիրքը համբերութեան  
վրայ այնչափ մեծամեծ գովեստներ կրխօսի  
նէ , իմացիր որ փորձութե ատենը կիմացո՛ւի .  
զերէ փորձուի մը չունենանք նէ ներսէն կամ  
դրսէն , ի՞նչ բանի պիտի համբերենք , և համ-  
բերութիւնիս ի՞նչ վարձք պիտի ունենայ : Ու-  
րեմն յակոբոսին մտքովը հասկրցիր պօղոսին  
ըսածն ալ . \* Պիտոյ է ձեզ համբերութի , զի  
զկամս մոյ արարեալ հասջիք աւետեացն ॥ : Աս-  
չէ՞ մի քսի ըսածն ալ . \* համբերութի ձերով  
ստաս .

ստասջիք զոգիս ձեր : Ար համբերեսցէ խապառ,  
նա կեցցէ ॥ :

Աւրեմն աղէկ է արթնութիւն , հարկաւոր է ա-  
ղօթքը . ամմա համբերութիւն ալ պիտո՛ւաւոր  
է , անանկ որ՝ առանց անոր չենք կրնար կա-  
տարեալ ըլլալ , չենք կրնար հոգիներս շահիլ ,  
չենք կրնար մեզ ապրեցնել : Միշտ պէտք է  
համբերութիւնը՝ որ կարենանք ի՞նչ կամքը կա-  
տարել . բայց աւելի պէտք է փորձութեան ա-  
տենը . սիլահը միշտ պէտք է ղինուորին . ամ-  
մա աւելի պէտք է ճէնկին ատենը :

բ . Ստանային մենձ հնարքը ան է՝ որ համ-  
բերուն ճէնկին մէջ մեզ աւելի պզտիկ բանով  
վար կրձգէ , մենձ բաներու համբերելու թող  
կուտայ . կուզեմ ըսել թէ շատ անգամ կը համ-  
բերենք ծանօտ հիւանդութեան , մենձ քէտե-  
րի մը , հալածանքի , կն . տեղն ալ կուգայ որ  
պզտիկ փորձութեան մը , թեթև խօսքի մը ,  
մէկ ծուռ նայո՛ւածքի մը՝ չենք կրնար համբե-  
րել , կընեղանանք , կը հինանանք : Ինչէ՛ն է :  
Պատճառը աս է՝ որ մէկ կողմանէ սատանան  
վաստակ ընելու ճամբան ասով է գտեր , որ  
ամմէն օրո՛ւան՝ ամմէն սահաթո՛ւան գործքեր-  
նուս մէջ անհամբեր ըլլանք . մեզի բան չերև-  
ցած մատտէներէն ինքը էփէյի քեար կընէ .  
քչի խանահաթ կընէ , միայն թէ սըխ սըխ ըլ-  
լայ . ( հրէաներուն առուտրին պէս , որ մանտր  
մուտր բաներով կը հարստանան : ) Մէկալ  
կողմանէ ալ՝ մենձ բաները ինքիբմէ կը յորդո-  
րեն մեզ՝ որ համբերելով վարձք առնենք , կմ  
խղճմտանքի կրձգեն մեզ ի՞նչ վախովը . դժոխ-  
քին վախով , մարդկանց առջև խախք չըլլալու  
խայրէթն ալ կըմտնայ , մեր Փայտան ալ մտմը  
տալը վրայ կուգայ . ասոնցմով ձայներնիս կը-  
բա-

քաշենք, ակուայ ակուայի վրայ կրդնենք կը-  
 համբերենք. իսկ պղտիկ բաներուն հաճաթ-  
 սրղ կըլանք՝ կիյնանք, կամ մեր քիպիրութեը  
 չենք կրնար կերցնել՝ անանկ պղտի բանի մը  
 հախէն չիգալ, ծածուկ հպարտութենով քի-  
 նախնդիր կըլանք, զերէ մենծ հպարտութիւնը  
 աւելի պղտի բանին մէջ յայտնի կըլայ, և ան-  
 համբերութիւնը աւելի պղտի բանի մէջ զինքը  
 կըյայտնէ. ասոր ներհակ՝ պղտի բաներու համ-  
 բերենք նէ, մենծ համբերութիւն և մենծ խո-  
 նարհութիւն կըրցցենք, ու կըսորվինք ալ:  
 Տղան վարպետի տուն կմ խանութը նստիլ չի  
 սորվի նէ, ( որ իրեն կեօրէ մենծ բան է առջի  
 բերանը. ) ետքը չի կրնար առտըւանց ինչուկ  
 իրիկուն ան տեղը տըտիկ ընել, բան սորվիլ,  
 մարդը ըլլալ. թէ որ այբուբեն սորվելու գլուխ  
 չիդնէ նէ, ո՛չ քերականութի և ո՛չ ուրիշ ուս-  
 մունք կըրնայ սորվիլ, թէ որ ձեռքը խօլայ  
 բաներու ալըշտորմիշ չընէ նէ, չի կրնար ետքը  
 արհեստի ար ըլլալ: Հապա դուն ի՞նչնայ կու-  
 ղես որ համբերող ըլլաս մենծ մենծ փորձանք-  
 ներու, երբոր մանտր մունտր բաներու չես  
 ուզեր համբերել:

Գ. Լսեր եմ պաղի խելացիներէն ( եանի կարճ  
 խելքով մարդիքներէն, ) թէ համբերուին ալ  
 առաքինութիւն է մի. մարդը նեղ ինկնայնէ,  
 ուզէ չուզէ պիտի համբերէ. իր ափը չէ. ատ  
 ի՞նչ վարձք պիտոր ունենայ: Անանկ է եա  
 ( կըսեն լսողներն ալ: ) Հապա ի՞նչ ընենք մէ-  
 կալ խօսքն ալ՝ որ բոլոր Յքիս բերանը կըպը-  
 տըտի. \* համբերուիր կեանք է. \* որ քսի խօս-  
 քէն առած է. \* որ համբերեսցէ իսպառ, նա  
 կեցցէ: Աս բանիս թէմէլէն ճուղապ կուղես  
 նէ, գիտցիր որ համբերուիր մեր ուղած բա-  
 նին

նին վրայ չէ, մեր չուղած բանին վրայ է: Մեր չուղած բանն ալ կամ մեր ձառքն է՝ որ կրնանք գիմաւորել, կամ մեր ձառքը չէ. զորօրինակ՝ Քրիստոնեայ մը ինծի շամար զարնէ նէ, կըրնամ ես ալ անոր բան մը ընել կամ ըսել. այլազգի մը զարնէ նէ, վախէս ձան չեմ կրնար հանել: Հիմա որուն համբերելը աւելի վարձք ունի:

Իրաւ որ՝ առջինին համբերելը տահա մենձ է՝ քան թէ ետքինին. վէ լաքին ետքինն ալ աւելի մարդուն սիրտը կերէ քան զառջինը. ինչու որ՝ առջինին կըրնամ համբերել, կրնամ չի համբերել. ձեռքս ազատութի մը կայ. համբերեմ նէ, լան սրտով կըհամբերեմ, այ սիրոյն համար կըներեմ, որ անոխակալ և անյիշաչար ըլլամ, որ է անձանման ըլլալ. իսկ երկրորդին համբերելը մարդուն կիւճը կուգայ. զերէ հէլ հէլլակթ համբերելու է, ազատութիւնն չիկայ ձառքս. ուստի հետը նեղսրտութիւնն մը կայ: Մէկ խօսքով ըսեմ. առջի համբերութիւնը համով է, զերէ կամաւոր է. երկրորդը լեղի է, զերէ ահամայ է. ես որ ահաման կամաւոր դարձընեմ նէ՝ սուրբ հարց խրատին կեօրէ, վարձքս կրկին և կրկին կըլլայ. մէկ կողմանէ մը առջինէն եւել կըլլայ. զերէ ասըլ համբերութիւնը ասանկ բանի վրայ է, որ զուտ համբերութենով քաշենք անմխիթար. սանքի սալթ լեղին (յի էօտը) ու քացախը խմենք քնի հետ խաչի վրայ. ուրիշ համ չառնենք:

Գիտե՛ս, երբ կրկօրսու՛ի վարձքերնիս. երբ որ ներսէն խըրսլանմիշ ըլլանք, սրտանց քֆրել ուղենք, Ֆռսանտ մը վնտուենք՝ որ դիմացինին հախէն դանք, ատիկա համբերութի չեղաւ, հասլա սրտմտութիւնն՝ բարկութիւն և ուսա

խակալուծի : Հապա թէ ըսենք մտքով • տէր  
քո սիրուդ համար՝ և քեզի նմանելու համար՝  
կրներեմ իմ թշնամիս • դրսէն որ չեմ կրնար  
հախէն դալ , սրտովս ալ չեմ ուզեր հախէն  
դալ • \* հայր թող դոցա , զի ոչ դիտեն՝ զի՞նչ  
դործեն ॥ • իշտէ եղաւ կատարեալ համբերուի՝

կատարեալ վարձուց արժանի :

իք • Ասոր նման չափէ՛ ամիէն կերպ փորձուեց  
ու նեղուծեց վրայ • ինչպէս է՝ հիւանդուծի ,  
ցաւ , աղքատուծի , կարօտուծի , հալածանք ,  
բամբասանք , և ի՞նչ և իցէ փորձանք : Ապա  
թէ ոչ՝ ասոնք որ համբերուծե՛ նիւթ չի սե-  
պենք նէ , ալ ի՞նչ կրմնայ մեղի համբերելու • և  
այս իսկ է մենծ խաբէուծի անհամբեր մարդ-  
կան , որ իրենց քէֆին կեօրէ բան կուզեն՝ որ  
կարենան համբերել • և մահանա դնելով ամ-  
մէն բանի՝ հիչ մէկ բանի չեն համբերեր :

Գլուխնին ցաւի նէ , աս ի՞նչ բան է՝ մարդ չի  
կրնար համբերել կրսեն • ուրիշ տեղս ցաւէր  
նէ՝ սիրով կը համբերէի • անիսէ՛ աչու՛րնին ցա-  
ւի նէ , կենէ անանկ կրսեն , անկաճ՛նին ցաւի ,  
անանկ • ակռանին ցաւի , նմանակ • փորու ցաւ  
քաշեն , ոտքի ցաւ քաշեն , տահա ի՞նչ որ գլուխ-  
նին դայ , աս քաշելու բան չէ , ուրիշ տէրս  
ըլլայ՝ քաշէինք կրսեն : Հիւանդը իր հիւան-  
դուծէն կը դանկրտի • աղքատմը իր աղքատու-  
ծէն • առողջը՝ իր կամքին դէմ եկած բանե-  
րէն , կի՛ իր ընտանեաց մեռնելէն • հարուստը  
իր կամբը չի կատարուելէն , կի՛ իր բանին ճա-  
խորդուծի մը ըլլալէն • մէկը կրսէ՛ թէ ուրի-  
շին խօսքին կը համբերէի՝ ամմա աս մարդուս  
խօսքին չեմ դիմանար • մէկալը կրսէ՛ թէ քե-  
ծէկ ուտէի տահա աղէկ էր • բան թէ ասանկ  
խօսք լսէի • ևն :

Ասոնց հիչ մէկը համբերութիւն խրոյմէթը չեն  
 դիտեր : ասոնք մալ առնող պաղիրկեան չեն ,  
 մեղք է մալին՝ որ ասանկներուն առջև հա-  
 նես . առուտուր ընելու կամք չունին , նափի-  
 լէ պապէթ պապէթ բաները վար առնել կու-  
 տան : Այ խանութը՝ մալին աղէկը դէշը չի  
 հարցունիր . զերէ դէշը չիկայ . ամմէնն ալ ա-  
 ղէկ են , մէկզմէկէ աղէկ . աս է Փարղը՝ որ  
 դուն աղէկը դէշը չես ճանչնար . \* զբարին չար՝  
 կրտես , և զչարն՝ բարի ॥ : Իսկ ամ մենաբա-  
 րին կրնարէ ու կուտայ քեզի՝ որն որ քեզի հա-  
 մար տահա աղէկ է . ուրիշին ալ կուտայ՝ որն  
 որ անոր աւելի աղէկ է . թող ամմէն մարդ սի-  
 րով ու խոնարհութենով առնէ . ան ատեն ա-  
 ղէկութին ալ կըհասկընայ :

Ե . Ուրեմն բովանդակ վարպետութիւն համբե-  
 րութեան աս է՝ որ զլիւրնիս եկած բանը՝ ա-  
 տուծմէ եկած դիտանք . ոչ մարդու , ոչ ճքի ,  
 և ոչ սատանայի բան է ըսենք . ամմա անոնց  
 ձառքով կըլլայ եղեր . անոնք սոսկ դործիք  
 մընեն , իսկ գործողը՝ քի վարպետ բան բանողը  
 ամ է , չըպուխը չէ՛ քեզ զարնողը , հապա չը-  
 պուխը վերցընողը . քարը քեզ չէր հասնէր , թէ  
 որ քար նետող չըլլար նէ . դուն ինչու քարին  
 կըսըրդողիս . ( ինչպէս շները զքարը կըխաճ-  
 նեն . ) նետողին կրնաս նէ՝ սրդողէ , բայց գի-  
 տես որ՝ ան չըլլար սրդողիլ . զերէ հախ ունի՝  
 ինչ որ ընէ նէ . քարը տեղը դնելը աղէկ դիտէ՝  
 միւլայիճիներէն շատ վարպետ : Տեղ կայ որ՝  
 բան կայ որ , յօժար կամքով ամ մանկ կու-  
 ղէ՝ ու ընել կուտայ . տեղ կայ՝ բան ալ կայ որ՝  
 թոյլտունկան կամօք ան բանը թող կուտայ .  
 երկուքն ալ մեր աղէկութիւն համար , որ կամ  
 մեղքէն հեռանանք , կի՛ առաքինութիւն ճամ-

բուն մէջ առաջ երթանք: Խենդ է ան հիւ-  
ւանդն՝ որ դեղի վրայ կըսրդողի, փուստանե-  
րուն կըբարկանայ, հէքիմին՝ ճերահին պիտի  
սրդողէր. ամմա ան ալ յետին խելագարութի  
է՛ իրեն աղէկութի ընօզներուն չարանալ:

Յոր երանելին չըսաց (ինչպէս գեղեցիկ կը-  
մտածեն սք վարդապետք,) (Թէ մոր ետ, և սա-  
տանայ էառ, հապա՝ \* մոր ետ, և մոր էառ ॥:  
Դաւիթ իր հալածման ատենը՝ սեմէի անզգամ  
մարդուն թուքումուրը ու քար նետելը տեսաւ  
նէ, ինչ ըսաւ. \* Թող անիծանէ այնպէս. զի  
մոր ասաց նմա անիծանել զդաւիթ ॥: Մարդու  
համբերեցի՝ չըսէր, հապա՝ \* Համբերելով  
համբերի մն ॥: Մեզի ալ անանկ խրատ կու-  
տայ. \* քաջալերեաց, զօրասցի սիրտ քո, և  
համբեր մն ॥: Ո՛ւր թողունք որ՝ զանօրէնու-  
թիւնս մեր՝ մեք մեզեն դիտեմք. ուստի պէտք  
է որ համբերենք. ինչպէս որ մեր բերնէն գը-  
րած է. \* բարկութե մն համբերից, զի մե-  
զայ նմա ॥:

Պ. Ըսածներէս պիտի հասկընաս՝ հետեւեալ  
մէկ բանի հարկաւոր դիտելիքը: Առջինն է.  
Այ անբաւ իմաստութիը ու մենծ ողորմուին  
է, որ չարէն բարի կըհանէ, այն բանն որ մե-  
զի զէն պիտի տար, անկից Ֆայտայ կըհանէ,  
Թէ որ համբերենք նէ. լեզի բաները մեզի կա-  
նուչընէ համբերութե առաքինութենովը.  
մեր մեզացը համար քաշելիքնիս՝ մեզի վարձքի  
սէպէպ կընէ համբերութենով. ասանկ պիտ-  
ուական բան է համբերութիը:

Երկրէն է. Ամէն քաշածնիս՝ մեզաց պատիժ  
է, ըսենք նէ. կըսխալինք. հապա շատ բանն  
ալ մեզի խրատ է. տահա շատն ալ մեզի վարձք  
ու պսակ ըլլայ տէյի կուտայ մն. և այն նիէ-  
թով

Թով քաշենք նէ , հէմ սիրով կըտանինք , հէմ վարձքերնիս աւելի կըլլայ : Առաքեալներուն , մարգարէներուն , մարտիրոսներուն , ճգնաւորներուն , հայրապետներուն , և ամիէն սքեւրուն քաշածը նայէ . անով աղէկ կըհասկընաս որ ամ իր սիրելեացը աւելի համբերուէ նիւթ կուտայ՝ որ վարձքերնին շատ ըլլայ . \* զի զոր սիրէ մոր , խրատէ . տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի . 'ի խրատու համբերուէ կայք . իբրև յորդիս մատուցեալ է 'ի ձեզ ամ . որ որդի է , զոր ոչ խրատիցէ հայր ॥ :

Երրորդն է . Համբերութե նիւթը՝ քի համբերելու բանը , կուզէ կամաւոր ըլլայ՝ կուզէ ակամայ ըլլայ , համբերութիւնը պէտք է որ կամաւոր ըլլայ . չէ նէ՝ առաքինուի չըլլար : Համբերութիւնը համ պիտի բերէ անհամ բանի : Կամաւոր ըսելը՝ յօժարութիւն և սէր պիտի ցըցնէ . ինչպէս մեր փրկիչը մեզի համար կամաւորապէս յանձն էառ զամենայն նեղութի , զչարչարանս , և զմահ խաչի . ու իրեն փառք կուցեց զխաչը : Ինքն որ ճոխաբար յօժարութե քաշեց՝ ինչ որ քաշեց մեզի համար , մեզ սիրելէն՝ սիրով քաշեց նէ , պէտք է որ մենք ալ սիրով քաշենք իր սիրուն համար . ու ըսենք պօղոսի հետ . \* այլ ինձ քաւ լիցի պարծել , բայց միայն 'ի խաչն ան մերոյ յի բժի , որով ինձ Յի 'ի խաչ ելեալ է , և ես Յի ॥ :

Ուստի փուճ է և սուտ է անոնց համբերութիւնը , որ բան մը քաշելու ըլլան նէ՝ նեղսրտութէն ու խրրսէն իրենց բերնէն կըհանեն աս խօսքս . \* Համբերութիւն ॥ . անանկ որ գլուխ շարժելով՝ բովիններուն ալ կըհասկըցընեն , թէ համբերութի կըսենք կոր՝ համբերել չկարենալուս . համբերութիւն ըսելով՝

սրտերնուս անհամբերութիւնը կուղենք իմաց  
նել . զերէ սրտերնիս անուշ չէ , դառնացած  
է : Համբերութիւնը՝ համբերութիւնը չքսեր .  
հիշ ձան չի հաներ . հապա ներսէն փառք կու  
տայ ւայ , որ մարդ չիմանար . և \* հայրն երկնա  
ւոր՝ որ տեսանէ 'ի ծածուկ , հատուցանէ նմա  
յայտնապս ॥ : Ասով կիմանաս որ համբերութիւն  
եզբայրն է լուութի . համբերողը լուռ կըլայ ,  
լուութի սիրողն ալ համբերող կըլայ . ասոր  
ներհակ՝ անհամբերը լեզուն չի կրնար բռնել ,  
լեզուն չի բռնողն ալ անհամբերութիւն կրնէ .  
և ամենայն չարեաց պատճառ կըլայ :

Չորրորդն է . Համբերութիւնը անկատար ե  
ղածին պէս՝ բանի չի գար . ինչպէս մէկը ճամ  
բայ ելլայ , ու ետ դառնայ , ուղած տեղը չի  
հասնիր . առուտրի մտնողը՝ ուղաշմիշ չըլլայ ,  
բան չի վաստակիր : Անկատար համբերութիւն  
կըսուի , երբոր մէկը ըսէ նէ , աս բանի՞ մէկ  
համբերեմ քեզի , կի՞ աս նեղութեա . ինչպէս  
որ ըրաւ յորայ կրնիկը , ու կուզէր իր երկանս  
ալ ընել տալ : Իսկ կատարեալ համբերութիւնը  
ան է , որ սկզբնէ ինչո՛ւան կատարածը մէկ  
բանը սիրով կըբաշէ , ձան չի հաներ . աս է  
ըսելը , \* որ համբերեսցէ իսպառ ॥ : Չեմ ը  
սեր՝ թէ հիշ սրտին նեղութիւնն չիգայ , հապա  
նոյն սրտին նեղութիւնը՝ 'ի փառս ւայ փէշկէշ ը  
նէ . որ է բուն համբերութիւնը ըսածնիս : Կա  
տարեալ համբերութեւ երկայնատուի կըսենք .  
երկայնատուութիւն է կատարելութիւ համբերու  
թեան . ինչպէս անհամբերութեան կամ ան  
կատար համբերութեւ կարճատուութիւ կըսենք :  
Ամիկն բանին մէջ պէտք է երկայնատուութիւն ,  
բայց ևս առաւել փորձութեւ արալըսը . քիչ  
մը պակաս համբերելով՝ կըյաղթուինք միշտ .  
քիչ

քիչ մալ աւելի համբերէինք նէ , կը յաղթէինք միշտ . փորձէ՛ աս բանս բու վրադ ամմէն փորձութե՛ մէջ . ան ատեն աղէկ կը հասկընաս ըսածս , և յաղթութե՛ պսակը կառնես : Մէկ եղբայր մը մէկ գիշերու՛ան մէջ օխոր պսակ վաստրկեցաւ , քիչ մալ քիչ մալ համբերեմ ըսելով , ինչու՛ան ծերս քնէն արթննայ՝ ու օրհնենքը առնեմ , անանկ երթամ քնանամ : Դուն ասոր ներհակ՝ չէ թէ միայն արդարոց պէս ներելի մեղաց մէջ կինկնաս օրը օխտն անգամ , հապա եօթը մահացու մեղքն ալ կիննաս՝ քիչ մալ աւելի չհամբերելովդ :

Հինգերորդն է . կատարեալ համբերուէ կմ երկայնամտութե՛ մէկ հատիկ վարպետ սորվեցնողն է՝ յիշել այ խոստմունքը և յաւիտենա կան վարձքը : Յակորոս առաքեալը օրինակ կրբերէ մշակը , որ բան մը կը ցանէ նէ՛ ան սահաթը ան օրը բուսնի պտուղը չըսեր , հապա կը համբերէ երկար ատեն , ինչու՛ան որ բուսնելիքը բուսնի՝ որը կածուխ , որը ուշ . ասանկ ալ երկայնամիտ եղիք կըսէ՝ որ ատենով ձեր աշխատանքին վարձքը առնէք աստուծմէ , մէկին տեղը հարիւրապատիկ և հազարապատիկ . ան ատեն կը հասկընաս՝ թէ համբերութիւնը ինչպէս կատարեալ գործք ունի :

**ՉՈՐՐՈՐԴ ԴԵՂ :**

Ապա-ինո-ւ-ի առ ւժ :

Ա . ( 1 ) . Է համբերես՝ թէ՛ երկայնամիտ ըլլաս , սատանան քեզ կըրնայ թուլցնել՝ անճրկելով , թէ չես կրնար դիմանալ ինչու՛ան ետքը . քեզ անանկ փորձու ինքերու մէջ կը ձգեմ որ՝ մատի

վի կըխաղցընեմ , ու կըյուսասհատցընեմ ( կըսէ ) . ամմէն իժիր աչքիդ առջևը կըբերէ մարմնոյդ տկարուին ալ , կամքիդ անհաստատութիւնը , ուրիշ ատեն նիէթիդ վի չի կենալդ . Ինչ խոստմունքն ալ երբ պիտի ըլլայ կըսէ . տասհա դուն շատ պիտի ապրիս , ատեն ունիս քէֆիդ կեօրէ կենալու , ճահիլ ես՝ հէլպէթ քիչ մը ճահիլութի պիտի ընես , ետքը կապաշխարես . դուն ճգնաւոր չես , Ծքս ալ պիտի վայլես . չէ նէ՝ շատ ալ քեզ սըխմես նէ , կըհիւանդանաս . խղճահար ալ կըլլաս . պարտքդ պատարագ մը տեսնել է կիրակի օր , ինչ երկան ժամը նստիս . քարոզք քու ծոցդ է , քարոզիչք քու դիտցածէդ եւել բան պիտի չիզուրցէ . շատ աղօթքը ինչ պէտք է , անձ մարդուն սիրտը կընայի . տասհասոր նման մոլար մտքերով քեզ կամ՝ իյուսասհատութի , կի՛մ ի յանդընութի կուզէ ձգել :

Ասոր մէկ հատիկ դեղը՝ առ անձ ապաւինուին է . որ կըբերէ սրտի արիութի մը , կտրճութի մը . հաստատուն յոյս մը . ու մէկդի կընէ ամմէն վախկոտութիը և անճրկածութիը : Ուստի երբոր սատանան վերի ըսած բաներն որ միտքդ բերելու ըլլայ նէ , դուն մի վախնար , մի շիոթիր , համարձակ ճուղայ տուր : Չեմ մի դիմանար ըսէ . իրաւ է՝ առանց ան հիչ բան չեմ կընար ընել , բայց անվ ամմէն բան կըրնամ ընել . սատանային գլուխն ալ կըկոխեմ , մարմնոյս ալ կըյաղթեմ , Ծքն ալ ոտից տակ կառնեմ : Իմ անոս ըսաց , \* առանց իմ ոչինչ կարէք առնել ॥ . և ինքն դարձել ըսաց \* ետու ձեզ իշխանութի՝ կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիս թշնամւոյն ॥ . դարձել , \* քաջալերեցարձք , զի ես յաղթեցի Ծի ॥ : Եւ պօ

ղոս կրօսէ . \* Ո՛չ եթէ անձամբ բաւական եմք  
խորհել ինչ իբրև 'ի մէնջ , այլ բաւականու-  
թիւն մեր յոյ է ॥ : և դարձեալ կրօսէ . \* յամբ  
կարող եմ՝ այնու , որ զօրացոյցն զիս ॥ : Եւ դա-  
ւիթ . \* Իմ իմով անցից Է պարիսպս : Ինչ լոյս  
իմ և կեանք իմ , ես յուժմէ՞ երկեայց . Ինչ ա-  
պաւէն կենաց իմոց , ես յուժմէ՞ դողացայց .  
Թէ պատրաստեսցի 'ի վրայ իմ պատերազմ ,  
ո՛չ երկիցէ սիրտ իմ . Թէ յարիցէ 'ի վերայ իմ  
ճակատամարտ , սակայն և այսո՛ւիկ 'ի քեզ Ինչ  
յուսացայ : Որ յուսայ 'ի Ինչ , որպէս լեառն  
սիռն՝ նա մի սասանեսցի յաւիտեան ॥ . ևն :  
ասոր նման ամիկն փորձուէ դէմ սք դրոց բա-  
նը հանէ իբրև սուր և վահան . որով զամե-  
նայն նետս մուխս չարին շիջուցանես :

Բ . Սատանան աղէկ զիտէ՝ Թէ մեր ուժը ոչ-  
ինչ է . Թէ որ Ինչ թող տար նէ , բոլոր Ծքը  
մէկէնիմէկ դժոխք կըտանէր . ամա ան ալ ա-  
ղէկ զիտէ՝ Թէ Ինչ մարդասէր է , մարդուս  
կունայ կըկենայ , էն օկարին անանկ ուժ մը  
կուտայ որ՝ բոլոր դժոխքին հախէն կուզայ .  
ինչպէս սք անտոն ճգնաւորին անանկ զօրուի  
տո՛ւաւ որ բովանդակ դժոխքին սատանանե-  
րը առջևը կըդողային : Ասոր համար կըջանայ  
սատանան որ մենք մեր յոյսը Ինչ չի դնենք ,  
աստուծու՛ ուժ չի խնդրենք , մենք մեր հալին  
մնանք , մեր խելքովը մեզ կառավարենք , ան  
ատեն մեր հախէն կուզայ . ապա Թէ տեսնայ  
որ մենք առ Ինչ ապաւիններենք , ու Ինչ կը-  
շարժինք ամիկն բանին մէջ , չի կրնար քովեր-  
նիս դալ մօտենալ : Ասանկ է նէ , դուն ո՞ր  
խելքի կըճառայես որ՝ աստուծու՛ հետու կը-  
կենաս . ինչո՛ւ ամիկն նեղուէդ ատեն առ Ինչ  
չես աղաղակէր . ինչո՛ւ փորձուէ ատեն շաջը

միշ կընես՝ ու յուսահատ կերպով կըթուլնաս .  
 բսէ՛ մարգարէին հետ . \* արդ ընդէ՞ր տրտում  
 ես անձն իմ , կմ' լէ՞ր զիս խռովես . յուսա՛ առ  
 ւած , խոստովանեա՛ նմա . փրկիչ երեսաց իմոց ,  
 ւած է ॥ :

Մեղաւոր եմ նէ , ւած ինծիպէս մեղաւորները  
 կրինտուէ . տկար եմ նէ , ինծի պէս տկարնե-  
 րուն կըհասնի . հիւանդ եմ նէ , մէկ հատիկ  
 ճարտար բժիշկ է , և մէկ հատիկ դեղ կենաց .  
 աղքատ եմ նէ , ասանկ հարուստ թագաւոր  
 ունիմ . ինչ թիւրլիւ տէրտ ու խամ խասէվէթ  
 ունենամ նէ , ասանկ սիրական հայր ունիմ .  
 անիկակ ինծի կունակ ըլլալէն ետև՝ ալ ինչ  
 կուզեմ . միայն ես անկից չի հեռանամ . ան  
 իծմէն չի կրնար հեռանալ . \* զի ւած լէ մեզ է ॥ :  
 Դ . Հանպա քեզ տեսնամ , արե՛ եղեր՝ կտրիճ ե-  
 ղեր . որով չէ թէ միայն մեղք չես ինկնար ,  
 այլև արդարութե՛ ճամբուն մէջ առաջ կեր-  
 թաս : Արիութի՛ն է՝ որ կըյաղթէ ամմէն պա-  
 տերազմի մէջ . և առ ւած ապաւինիլն է՝ որ կու-  
 տայ մեզ զկատարեալ արիութի՛ն : Ասոր վրայ  
 շատ բան կար խօսելու . բայց ես ամմէն բա-  
 նը աս երկու խօսքիս մէջ բովանդակ կիմա-  
 ցո՛ւի կրսեմ . \* Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ  
 ( ըսաց արն մեր ) զամ աւուրս մինչև ՚ի կատա-  
 րած Ծի ॥ : Եւ առաքեալը կրսէ . \* Եթէ ւած ՚ի  
 մեր կոյս է , ո՛վ իցէ մեզ հակառակ ॥ :





Գ Լ Ժ Գ :

Երեւ Նախապահօղ դեղք . սք հաղորդուի . համա  
ւոր ապաշխարուի . և զգուշուի յառեից :

Ինչ որ ինչո՛ւան հիմա խօսեցանք նէ , մենձ  
մասը առողջարար դեղ էր մեր հողւոյն հի  
ւանդուէր . ինչպէս բժիշկ մը հիւանդի բով  
կերթայ նէ , անոր ցաւին պէտք եղած դեղը  
կըզրէ , որ առնէ տէ՛ առողջանայ : Բայց շատ  
անգամ ալ բժիշկը խրատ կուտայ առողջա  
ցած հիւանդին , կի՛ առողջ մարդուն պիլէ՛ որ  
պազի պազի նախապահօղ դեղեր առնէ , որ  
հիւանդուիթիը նորէն վրայ չիգայ , կի՛ բնուիը  
որ լը օրէ տկարանալով՝ նոր հիւանդուիթի մը  
փէյտաս չընէ : Իրաւ որ մեր տո՛ւած դեղի  
րուն մէջն ալ երկու կերպ ալ դեղ կըզանսուէր ,  
հէ՛մ առողջարար՝ հէ՛մ նախապահօղ . բայց  
աս երկրորդ սօյ դեղերէն մէկ քանին խիստ  
հարկաւոր կայ , որ աս տեղս որոշ պիտի դը  
րեմ :

iii . Առաջին նախապահօղ դեղն է մեր հող  
ւոյն՝ մէկ հատիկ դեղ կենաց , անմահարար  
կերակուրն՝ երկնատեղաց մանանայն՝ հրաշա  
փառ խորհուրդ սք հաղորդուիթեան : Քանի  
որ հաւատքով ճաշակես աս կենաց ծառոյն  
պտուղը , կըզօրանաս հողւով , հողւոր ցաւ  
և հիւանդուիթի չես տեսներ . իսկ մահուան  
հոտը պիլէ չես առնէր . ի՛նչ հէ՛մ մահուչափ  
մեղք չես ինկնար , հէ՛մ կամաւոր ներելիներէն  
ալ հեռու կըկենաս :

Չեմ դիտեր , թէ անոնք որ տարին անգամ մը հաղիւ կը ճաշակենն աս զատկական սուրբ դառը , համը կառնեն մի . խըյմէթը դիտենն մի . տարին հինգ վեց անգամ ճաշակօյններուն վր կը տարակուսիմ . տարին մէկ անգամ միայն հրէաբար ճաշակողին ինչ ըսեմ :

Աս յայտնի է՝ որ ինչ բանի չէ սորված մէկը նէ , անոր համը դժար կառնէ , բերնին անհամ կուգայ . պայաղի բանի մը սովորութի է ըրեր ուտելու նէ , անկից շատ համ կառնէ . ասանկ է սովորական հացը ամմէն տեղ . բայց գեղացիներ կան եւրոպայու մէջ , որ մըսըր պուղտայի ուտել սորվերեն ամմէն օր . ուտտի հացէն այնչափ համ չեն առներ , աման փօլէնդա կըսեն՝ քի մըսըր պուղտայիէ հացը : Ապուրի կի՛ խաշած մսի , փիլաւի , կի՛ ուրիշ սովորական բանի մը սորված մարդը՝ առանց անոր չըլար , որ ուրիշին հողը չէ . ասոր նման հասկըցիր ամմէն կերակրու , պտղու , ուտելիքի ու խմելիքի վր : Ասոր նման՝ հեռու օրինակաւ , սք խորհուրդէն հեռու կեցօղը՝ անոր համը չի դիտեր , Յքի ու մարմնոյ բաները իրեն անուշ կուգան . մեղքը պիլէ իրեն կանուշնայ . ինչպէս խողերուն անուշ կուգայ չէ թէ միայն քէջի պույնուղին , հապա ամմէն բան՝ որ ալտեղութեն մէջ թաթղած է : Եւ ներհակաբար՝ սք հաղորդութիը սրիս սրիս ճաշակողին՝ անհամ կուգայ Յքիս բաները . զերէ սք խորհրդէն անանկ համ է առեր անճառելի և անպատմելի , որ անոր նմանը չիկայ . ուր տարին անգամ ճաշակօղը աս համս չի կրնար առնել : Առներ նէ , ՚ի հարկէ սրիս սրիս առնելու ալ ետեւէ կինկնար . զերէ մարդուն սիրտն որ մէկ բանէն հազ կընէ նէ , ամմէն իժիր անոր հաս

հասրէթ կըքաշէ . և ամէն գայ նէ , ամէն օր  
 անկից ուտել կուզէ . աս բանս կըսիրեմ կա-  
 խորժեմ կըսէ . աս ըլլայ տէ՛ ուրիշ բան չըլ-  
 լայ : Հիմա ի՞նչ կըսես՝ որ Ծ մեզի ամէն օր  
 հազըր ըրեր է աս սք սեղանը , աս ամենահամ-  
 մանանաս . աս թագաւորական կերակուրս .  
 ու մենք այսչափ հեռու կըկայնինք . իէլացոց  
 պէս եղիպտոսին սոխը սխաորը կուզենք . աս  
 որպիսի գեղացութի , և որպիսի ապերախ  
 տութի է :

Հայր մերին մէջն որ՝ կըսես , \* զհաց մեր հա-  
 նապազորդ տո՛ւր մեզ այսօր ॥ , միայն մարմ-  
 նաւոր հացին համար մի՛մանար , հապա նաև  
 հոգւոր հացին՝ որ է կրկին , ցի՛ ան բանը , և  
 սք հազորդութի : Հանապազորդեան հողիի  
 հացը աս է . ամէն օր պիտի փախաքիս ճա-  
 շակելու՝ գո՛նէ ըղձական հազորդութի . որով  
 կըզօրանայ և կըգիրանայ հողիդ շնորհօք . չէ  
 նէ , քանի կերթաս կըտկարանաս , կըհիւճան  
 դանաս , ու կըմեռնիս :

Արժանի չես նէ ամէն օր մօտենալու առջի  
 քրիստոնէից պէս , գո՛նէ շաքաթն անգամ կի-  
 ըրակուց կիրակի մօտեցիր ետքի քրիստոնենե-  
 ղուն պէս . ան ալ չըլլայ նէ , պարէ երկու շա-  
 քաթն անգամ , շատ շատ՝ ամիսն անգամ՝ մեր  
 ատենին ջերմեռանդ ըստճաք քրիստոնէ մար-  
 դիքոց պէս : Ասոր որ հազըրութիւն չունիս ,  
 արժանաւորութիւն չունիմ կըսես նէ , երկու  
 ամսըճանը տահա աւելի անպատրաստ և ա-  
 նարժան կըլլաս , վեց ամսըճանը տահա պաղ  
 կըլլաս . իսկ տարեկանին պուզ կըկըտրիս . ան-  
 կից անդինը՝ եկեղեցիէն ալ դուրս կիյնաս ,  
 ան ատեն՝ հիւճանդ չես , մեռած ես :

Իսկ թէ ի՞նչ պատրաստուի պէտք է սք խոր-  
 հուր .

հուրդը առնելու , և թէ որչափ մեծամեծ  
 շնորհքներ կրբերէ , պէտքը չէ հոս երկան բան  
 խօսիլ . ուզողը ուրիշ դրբերու մէջ տեղն 'ի տեղ  
 գրած կը գտնայ . դուն հավէս ըրէ սրխ սրխ  
 մօտենալու՝ հոգևոր հօրդ խրատովը , ան ա-  
 տեն ինքիրմէ կը հասկընաս աս բաները . իմ  
 հարկաւոր խրատս աս ըլլայ ամէնուն . \* Մա-  
 տիք առ ամր , և առէք զլոյս . . . ճաշակեցէք և  
 տեսէք , զի քաղցր է ամր ॥ . սաղ . լԳ . 6 . և 9 :  
 Ամէնքս ալ սք դրիդոր նարեկացիին հետ ( 'ի  
 բանն . 8Գ . ) պաղատինք առ ամր . \* Արդ տուր  
 ,, խոցելոյս 'ի սիրտ և յոգի՝ աղաչեմ գը'թած ,  
 ,, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց .  
 ,, մատի՛ր քաղցրութե՛ք առ ախտացեալս մեղօք .  
 ,, քաւեա՛ 'ի պարտեաց ամենակատար բաւակա-  
 ,, նուն ॥ : Եւ դարձել նոյն նարեկացիին հետ  
 ( 'ի բանն . լԳ . ) ասանկ աղաչենք առ հոգին  
 սք . որ իր շնորհքովը աս կենաց դեղը մեզի  
 անմահարար ըլլայ . \* Եւ քանզի մինդ յերրոր-  
 ,, դու թէդ ( որդին միածին ) պատարագի , և  
 ,, միւսդ ընդունի ( հայրն երկնաւոր ) հաճեալ  
 ,, ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւ-  
 ,, րոյ . իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս ,  
 ,, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուա-  
 ,, կանս ամ պատրաստութե՛ք 'ի վայելումն ճա-  
 ,, շակման երկնաւոր դառինդ , առանց պատ-  
 ,, ժոյ դատապարտութե՛ք ընդունել զայս ան-  
 ,, մահացուցիչ մանանայս կենաց նորոյ փր-  
 ,, կու թե ॥ : Աս բանիս վր կը դրէ սք ներսէս  
 լամբրոնացին 'ի մեկն . պատարագի , թէ՛ \* Զի  
 ,, մեծ երկիւղ է 'ի նա անմաքրանիս մերձենալ ,  
 ,, ըստ որում դրեաց առաքեալ , որ անարժա-  
 ,, նութե՛ք ուտէ՛ դատաստան անձին իւրոյ ճա-  
 ,, շակէ , վէ այսր յետ զսրբութի խնդրելոյ՝ 'ի  
 ,, հոգ

,, հոգւոյն և զայս թախանձէ . զի մի ասէ կէ-  
 ,, նաց դեղս վն անպատրաստութե ինձ պատ-  
 ,, ժոց լինիցն առիթ . այլ զի յանմահէս ան-  
 ,, մահացայց . և անմահանալն անկար է , ե-  
 ,, թէ ոչ նախ առաջին դու զմահու խայթոցս  
 յինէն սրբեսցես ॥ :

Գեղեցիկ կրմիաբանի դեղ կենաց ըլլալը մեղի՝  
 հէմ սք հաղորդուէ , հէմ սք անձամնայ , թէ  
 որ հասկընաս նէ հին գանձարանին ըսածը առ  
 սք կոյսն . \* Սեղան խորհրդոյ անմահարար կէ-  
 ըակրոյ , և դեղ կենաց մեռեալ բնութես ॥ .  
 ասիկակ ետքը կը պահեմ՝ ի վերջին գլուխ գոր-  
 ծոյս . տիրամօր խըյմէթը հոն կը տեսնաս : հի-  
 մա՛ ըսելիքս նայէ :

ք . Երկրորդ նախապահօղ դեղը՝ կամաւոր ա-  
 պաշխարանքն է , որ կը սու՛նի ճնշումն մարմնոյ՝  
 կի՛մ ճգնութի : Սք յովհաննէս մկրտիչ երսուն  
 տարի անապատը ճգնեցաւ նէ , մեղք մի ու-  
 նէր՝ որ ապաշխարէր . քաւ լիցի . հրեշտակ էր  
 ՚ի մարմնի : Բայց սք վարդապետաց ըսածին  
 պէս , ինչպէս թաղէ միւր քանի մի օր պահել  
 կուղես նէ , պէտք է աղցանել առաջուց՝ որ չի  
 հոտի , ասանկ ալ սք մկրտիչը նախապահօղ  
 դեղ ըրաւ իրեն այն ճգնութենով՝ որ մըշտ  
 անմեղ մնայ . ասոր նման հասկըցիր ուրիշ  
 սքերուն ալ ըրած կամաւոր ապաշխարութի-  
 ները :

Խոստովանահարք որ մեղի ապաշխարանք կը  
 դնեն խոստովանանքէն ետե , երկու նիէթ ու-  
 նին՝ որ դուն ալ պիտի գիտնաս . մէյ մը որ գոր-  
 ծած մեղքերնուս դէմ վճարողական պատիժ  
 ըլլայ՝ իբրև առողջարար դեղ հի՛ւանդի : մէյ-  
 մալ որ խրատական զգուշութի ըլլայ՝ իբրև  
 նախապահօղ դեղ . որ անկից ետե չի հի՛ւան-  
 դաւ

դանանք մեղօք : Է՛յ , խելքդ ի՞նչ կրկորէ , մէկ  
քանի կարճ ապաշխարանք որ քեզի կըղնէ խոս-  
տովանահայրդ նէ , մե՛ղքդ մի վճարես անով ,  
[Թէ մեղքէն քեզ պահես :

Առջի ատենները՝ մէկ մահուչափ մեղաց տա-  
րիով ապաշխարանք կըղորուէր . հիմա ի՞նչ ը-  
նեն խոստովանահարերը . հին կանոնով եր-  
թային նէ , պազիին տասը տարի , պազիին  
քսան երսուն , պազիին ալ իտսուն կի՛մ հարուր  
տարի պիտի դնէին . որ ո՛չ կեանք կըբաւէ , և  
ո՛չ ճար կայ կատարելու . ուստի կարելուէ և  
կարողութե՛ն կեօրէ ալ չէ՛ , հապա՛ քու տկա-  
րութե՛դ կեօրէ կըղնեն ապաշխարանքը : Ու-  
րեմն կըմնայ որ դուն քեզնէ մասնաւոր փոյթ  
ցցնես աւելի ապաշխարանք ընելու , կամաւոր  
ճգնուէ ետեւէ ինկնաս . և աս սրտովս կըյու-  
սամ որ իրաւցընէ արժանի կըլլաս [Թողուէ ,  
քաւութե՛ն , և ներողուէ . չէ՛ նէ , անհոգ մնաս  
նէ , ներողութի՛ չէ եա , [Թողութի՛ պիլէ առ-  
նելուդ սիրտս չիվկայեր :

Հապա ի՞նչ ընեմ կըսես . ճգնաւոր մի ըլլա-  
լու է . լեռները ճգնելու է մի . ապաշխարողի  
կեանք անցնելու է մի . ես Յական մարդ եմ՝  
տուն տեղ պիտի պահեմ . Լէ՛ն : Ճգնութիւն  
և ապաշխարութի՛ կըսենք նէ , Յքի մէջ ալ  
կըլլայ , ու աղէկը կըրնայ ըլլալ , և պէտք է  
որ ըլլայ՝ ամմէն մարդու իր վիճակին , տէրէ-  
ճէին , հասակին , և ատենին կեօրէ . զերէ  
քրիստոնէական պարտք է առաքելոյն ըսածը ,  
որ վերը յիշեցինք ու մեկնեցինք . \* Իսկ որք  
քնեանքն են , զմարմինս իւրեանց 'ի խաչ հա-  
նին կարեօքն և ցանկութե՛ք հանդերձ : Եւ  
ինքն պօղոս իրեն համար կըսէ . \* Ճնշեմ ըզ-  
մարմին իմ , և հնազանդեցուցանեմ . զի գու-  
ցէ

ցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան  
 գտանիցիմ ॥ : Եւ դաւիթ կրսէ ամիկնուս հա-  
 մար . \* Վասն քո մեռանիմք զօրհանապազ ॥ .  
 և իղեն համար . \* վաստակեցայ ես ՚ի հեծուհի  
 իմում , լուճացի զսմ գիշեր զմահիճս իմ , և  
 արտասուճօք իմովք զանկողինս իմ թացի . ըզ-  
 մոխիր որպէս հաց կերայ , և զըմպելին իմ ար-  
 տասուճօք խառնեցի ॥ . և ն :

Մենք դաւիթ չենք , մենք պօղոս չենք՝ չը-  
 սուճիր . անոնցմէ եւել մեղաւոր ենք , անոնցմէ  
 եւել պիտի ապաշխարենք . անոնց չափ տաղ-  
 տաղայ չունինք , անոնցմէ աւելի ատեն ու  
 յարմարութի ունինք ճգնութի ընելու . ամմա  
 անոնց ըրած բանը չես կրնար եղեր ընել , մա-  
 նի չէ . անոնց սիրտը ունեցիր տէ , դուն ալ  
 քու հալիդ կեօրէ հազար կերպով կրնաս քե-  
 ղի կամաւոր ապաշխարանք և ճգնուհի դնել :

Մէկ քանի յայտնի բաներ առջևդ դնեմ :  
 Քեզ կրնաս մահացընել՝ կամքդ կոտրելով ու  
 մեռցընելով ամիկն օր շատ բանին մէջ . որ աս-  
 կից աղէկ և անձահաճոյ ապաշխարանք չըլ-  
 լար : Կրնաս լեզուդ բռնել , լուութի պահել .  
 անկաճգրութի չընել՝ հետաքրքրութի չընել .  
 աչքդ շատ բանէ ետ դարձընել . սէյիր ընելու  
 բանէն վազ դալ . ախորժած բանդ չի հոտ-  
 ուրտալ . անուշ սաղ մը կի՛մ ձայն մը՝ որ սիրտդ  
 խիստ կուղէ , մախսուս մտիկ չընել . սիրած  
 բանդ չուտել , եա քիչ ուտել . կամաւորապէս  
 հրաժարիլ պազի սրտիդ սիրած պտուղներէն ,  
 հագուստէն , զարդարանքէն . մէկ տեղդ եռք  
 իմնաս նէ , համբերել՝ չի քերուիլ . ծարւեր ես  
 նէ , քիչ մը ատեն ալ համբերել՝ ջուր չի խմել .  
 խահվէ , դինի , ուսի , և այլ ուրիշ քէֆի բա-  
 ներ՝ երբոր դեղի համար հարկաւոր չէ նէ .  
 մախ

մախսուս կամքդ կտարելու համար՝ համբերել  
չի խմել, որ կըլլայ հոգևոյդ հարկաւոր նախա-  
պահօղ դեղ . տահա ինչ ըսեմ, ինչ որ նիւ-  
թով բռնես նէ, կի՛ ժուժկալես, կի՛ հրաժա-  
րիս, ղգայարանքդ ճնշելու՝ և կամքդ մեռցը-  
նելու համար, ապաշխարանք է՝ ճգնուի է :

Գիտնամ որ խոհեմութի կըշարժիս նէ, ու-  
րիշ երևելի ճգնութիներ ալ սալըխ կուտայի  
քեզի . ինչպէս՝ ներսէն ծածուկ խարար հաղ-  
նիլ, որ կըսուի խարազնաղգեցութի . երկթէ  
դօտի կապել . խամչիով դուն քեզ ծեծել .  
բազկատարած աղօթք ընել . ծունկ չոքած եր-  
կար ատեն կենալ, շատ ծունր կրկնել՝ որ կը-  
սուի ծնրադրութի, և հոռմերէն՝ մէղալի մէ-  
թանիա՝ ցի՛ անձ ապաշխարուի, որ ճգնաւոր-  
ները շատ կընէին . իսկ կէս մէջքով ծռիլ՝ որ  
հիմա հոռմըները կընեն՝ միքրա մէթանիա կը-  
սուի, ցի՛ փոքր ապաշխարութիւն . դարձեալ  
ոտնակացուի, ցի՛ ոտքի վր կանգուն և անշարժ  
կենալ մտածականով՝ երկար ատեն . տքնուի,  
ցի՛ գիշերը խել մը արթուն կենալ՝ աղօթքի հետ  
ըլլալով . դետնախշտութի՝ ցի՛ տէօշէկի վրայ  
չի պառկիլ, հապա գետնի վրայ՝ կի՛ կոշտ բա-  
նի վրայ . կամաւոր պահք և ծոմապահք՝ եկե-

ղեցնայ դրածէն ՚ի զստ . ևն :

Դի՛ձ՛ձ՛ եղբայրսիրուն դործքեր՝ որ վահմէթով  
կի՛ բարայով կըլլան ( ամմէն մարդուն իր կա-  
րողութիւր կեօրէ ) . ինչպիս են ամենայն դործք  
հոգևոր և մարմնաւոր ողորմուն . որոնց մէջ  
որն որ աւելի քու թապիէթիդ զըթ կուգայ  
նէ, այնչափ աւելի կամաւոր և արդիւնաւոր  
ապաշխարանք կըսեպուի : Մարդ կայ որ հի-  
ւանդի քով երթալ չի կրնար, սիրտս չի քաշեր  
կըսէ . երթայ մախսուս ծառայէ, կի՛ իր տունը

պա

պահէ նէ , մենծ բան կրնէ . բանաբ երթալ միսիթարելը մենծ է , ամմա բանտէն հանելը տաճա մենծ . ողորմութի տալը աղէկ է , ամմա ողորմելութիը կրնաս նէ՝ ճամբով մը թեթեւ ցընես կամ վերցընես , տաճա մենծ խէր է . մերկ մարդը հագցընելը՝ մենծ ողորմութի է , ամմա մեղքէն դարձընել , ու հոգիին շնորհք հագցընելէն մենծ ողորմութի չըլար : Ուրիշը խրատելը խէր է . ամմա դուն քեզ խրատես նէ , անկից աւելի խէր չես կրնար ընել :

Աս ըսածներս՝ մանաւանդ քեզի ծանօտ երեւրած ապաշխարանքները՝ սալթ ճգնաւորները չեն ըրած . Յական մարդիկ ալ՝ մենծ ու պղտիկը , թագաւորները պիլէ ըրեր են . սալթ էրիկ մարդիկ չէ , կնիկներ , աղջիկներ ալ՝ իրենց տկար բնութէն էւել բաներ ըրած են : Այս խեմ թէ դուն ասոնք լսելով , կամ սքերուն վարքը կարդալով , չափէ՛ ի դուրս բաներու հալէս ընես . ուստի ետքի ապաշխարանք քեզի աս ըլլայ՝ որ , ինչ որ կրնես նէ՝ խոստովանաս որդ տանըմիշ ըլլաս . անոր խօսքէն դուրս չելլաս : Քեզ արգիլէ պիլէ պաղի կրթութիներէն , հոգևոր բաներէն , կի՞ ուշացընէ հոգևոր ընելէն , հոգ մը՛ներ , միամիտ հնազանդ եղեր . հնազանդութիւն վեր ճգնութի չի կրնար ըլլալ :

Գ . Երրորդ նախապահօղ դեղն է՝ զգուշութի յառթից , քի հեռու կենալ մեղքին սէպէպնէրէն , ու փախչիլ ի կամաւոր փորձութիներէն . \* զի որ դնէ զանձն ի վտանգ , անկցի || , կըսէ գիրն : Գիտնալով՝ փտտած տախտրկի վի՛կու խես նէ , կի՞ ուշուրում տեղը կենաս նէ՛ խաղալու համար , ինկնալուդ ու սախտելուդ վի՛ մի՛ զարմանար , մի՛ սրգողիր . փտտած նաւ մտնաս

մոնաս նէ , խղղըւիլը փորձանք չէ , յանցանք է . դիտես որ զաֆրալը ես , ի՛նչ բան ունիս բարձր տեղո՛ւնք ելլալու , ու վերէն վար նայելու . հէլպէթաէն վար պիտոր ինկնաս . դիտես որ տկար ես՝ վատուժ ես , ինչո՞ւ ծանար բանի ձեռք կըզարնես . որ կամ թեղ կըցաւ ցընես , կմ մէջքդ կըկտարես , կմ աղիքդ վար կըբերես : Երկու հոգւով եղածը՝ թէ որ զինքը թէհլեքէի մէջ դնէ անհոգութենով , ու հոգի զայ ընէ նէ , մարդասպան է . բարկա սիրտ մարդու հետ թէվէքէլի խօսողը , կամ զըթ բան ընողը , անոր քիւֆիւրին ու գէշ խօսքերուն իլհայ է . համարձակ առասպել բաներ խօսողը , կմ առասպել խրյաֆէթով երեցողը , դիմացիներուն մեղք մոնալուն սէպէպ ըլլալով՝ խաթ վէ խաթ ծանր կըմեղանչէ . հովարտա , եօամա , անշնորհք մարդու հետ տեսնո՛ւողը , անանկներուն մէջիսէն չի փախչողը՝ չի փախչելովը կըմեղանչէ , հիչ ուրիշ մեղք ալ չի գործէ պիլէ . թո՛ղ որ բարոյապէս անկարելի է՝ թէ ուրիշ մեղաց մէջ ալ չի պըշտարկի . զի \* որ մերձենայ՝ ի ձիւթ , պղծեսցի || . ո՛վ որ կրակին մը մօտենայ , չերի նէ ալ , կըտաքնայ :

Հապա ի՛նչ պիտի ըսենք անոր՝ որ ինքիր զինքը կրակի մէջ կըխօթէ , սողոմոնին ըսածին պէս , \* ո՞րք ծրարիցէ հուր՝ ի ծոց իւր , և ոչ այրեսցի || : Սողոմոնի պէս իմաստուն չես , որ փորձութե՛ մէջ խօթելով զինքը՝ քի կռապաշտ մարդու աղջիկ առնելով , կռապաշտութեան մէջ ընկաւ : Դաւիթ մարգարէէն սք չես , որ մէկ նայո՛ւածքով մը գլորեցաւ . հապա դուն ի՛նչպէս կըհամարձակիս շատ անգամ նայելու պէտք չեղած տեղը՝ չէ թէ միայն անհոգութե՛ ,

հապա հետաքրքրութիւնք . \* Եմուտ մահ լը պա-  
տուհանս ձեր || , կըսէ մարգարէն . քանի՞ քա-  
նի՞ կտրիճներ զէհրլէնմիշ եղան աչքով , ու  
մահացու մեղքով մեռան . դժոխքը բացուներ  
նէ , ասանկներուն համբանքը չէիր կրնար  
զապտ ընել . չեմ յիշեր զանոնք որ մախտուս  
ետեէ կինկնան մեղաց առիթներուն . զերէ ան  
ատեն փորձուիլն մանալ չըսուի , հապա  
ընկղմիլ և յաղթիլ 'ի փորձութի :

Ճանր փորձուի է մերձաւոր առիթ ունենա-  
լը . ուստի պէտք է փախչելու ճարը տեսնալ .  
ինչպէս մէխանա երթալը անոր՝ որ գիտէ իր  
բնութիւնը , թէ չափէն էւել պիտի խմէ . անանկ  
խաճվէ կի՞ պէռպէռի խանութ էյլէնմիշ ըլլալ՝  
որ մեղքը պակաս չէ . քօմէտիա երթալ՝ ուր որ  
առասպել խաղ կայ . մանաւանդ որ մէկը ա-  
լըշմիշ եղած չէ անանկ սէյիրներու , ու նոր  
բան մը տեսնալով կամ ըսելով՝ իրեն յայտնի  
զէհր պիտի ըլլայ . ասոր նման է մէտտահ  
մտիկ ընելը . եարան եօլտաշի հետ սէյիրի տե-  
ղուանք երթալը . թուղթ խաղալը՝ թավու  
խաղալը բարայով , մանաւանդ անանկ մար-  
դիկներու հետ՝ որ շատ ստկով կրխաղան , կի՞  
քէէ ալ սկսին նէ՝ քանի կերթան կրտաքնան՝  
տավ կըսեն , մէկմէկու տունը կըքանդեն , շատ  
մեղք ալ կըմտնեն : Անանկ տուն երթալ որ գի-  
տէ դացօղը , թէ ան տեղը մարդ կայ իրեն գայ-  
թակղութի տուօղ , կի՞ իրմէն գայթակղութի  
առնօղ . անանկ մարդ պահել իր տունը , կամ  
անանկ միւսաֆիր բերել , որ անկից իրեն կամ  
ընտանեացը թէհրքէ կայ մեղքի , անանկ զէ-  
նահատի կի՞ մասլահատի մէջ մտնալ , որ յայտ-  
նի անարժան դործք կամ անիրաւութի կամ  
խարդախութի պիտի ընէ , կամ ուրիշի քէտէք  
R պիլ

պիտի տայ , կի՛ մ ուրիշի անունը կի՛ տունը պի-  
տի ավրէ . անանկ մէ՛ճլիսի մէ՛ջ նստիլ՝ որ մէկին  
ի՛Փտիրայ կընեն կոր , կի՛ մ բամբասանք , կամ  
հաւատքի՛ եկեղնոյնայ և այ դէ՛մ խօսքեր ու  
գործքեր կըլլան կոր . անանկ մարդու հետ օր  
թախուծիւն ընել՝ որ գիտես թէ անիրաւ և  
անխղճմտանք ճամբաներ պիտի բռնէ . անանկ  
մարդու սրու բանալ՝ որ գիտես թէ չի կրնար  
խօսք պահել , անկից խօսք խօրաթայ ու մեղք  
պիտի ծնանի . անանկ քահանայ ընտրել խոստո-  
վանահայր՝ որ սիրտդ կըվկայէ , թէ իր պարտ-  
քը չի կրնար կատարել իր տգիտուծէր կամ  
թուլութէր կի՛ մ վախկոտութէր համար : Խե-  
լահաս զաւակդ որ Յք մտնալու հավէս ունի՛  
թէ՛ մանչ թէ՛ աղջիկ , ուշացընել կի՛ մ հաճաթ-  
սրզ ըլլալ , կի՛ մ զօռ ընել՝ որ կրօնաւոր կի՛ մ մա-  
րապետ ըլլայ . ասոր ներհակ՝ ան որ կրօնաւո-  
րուէ կի՛ մ մարապետուէ հավէս ունի , շնորհք  
ունի , զօռով Յք խօթել : Տահա ե՛նչ ըսեմ ,  
անհամար մեղաց առիթներ կան , որ պէտք է  
առաջուց սախընմիշ ըլլալ ամենայն կերպով .  
անթիւ՛ փորձութիւններ կրպատահին միշտ , որ  
առջի բերան պէտք է դէ՛մ դնել . չէ՛ նէ , դուն  
ալ մեղք կինկնաս , զուրիշն ալ կըխօթես :

Միայն հեռաւոր առիթներէն զգուշանալը  
մեր ափը չէ . ի՛մ անանկ բաներէն՝ որ ը՛մ ինքեան  
ճամբով բաներ են կի՛ մ զարարսրզ , բայց խա-  
ֆիլ տակէն մեղք մը կելլայ . չկարծած տեղաց  
մը փորձութիւն զուհուր կընէ , որ առաջուց  
չէինք կրնար կրահել ու փախչիլ . ալ կըմնայ  
որ՝ գիտնալէն ետե ճարը դտնանք մեղքէն  
փախչելու . և անդադար աղաչենք զի՛ծ , մա-  
նաւանդ փորձութե՛ նշանները տեսնախուս  
պէս , \* մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն , այլ  
փրը

փրկեա՛ զմեզ 'ի չարէ ॥ : կի՛ թէ , \* փրկի՛ց բո-  
լորից՝ փուլթա՛ զիս փրկել՛ փորձուլթեանց մե-  
զաց ॥ :

Իսկ այն բանն որ՝ յայտնի կրտեսնանք , թէ  
տակէն չարիք մը պիտոր ելլայ , պէտք է որ ա-  
ռաջուց այն բանին մէջ չմտնանք , փախչինք ,  
հեռանանք . ինչպէս որ պարտրկան ենք փախ-  
չիլ 'ի մեղաց՝ իբրև յիժից և 'ի քարբից . չէ նէ ,  
փորձուի՛ր ուզելը՝ մեղքը ուզել է . սէպէպնե-  
րէն չի հեռանալը՝ մեղքի մօտենալ է : Առանկ-  
ներուն համար է սք՝ գրքին ըսածը . \* զի ան-  
անփորձ է չարաց . փորձէ նա և ոչ զոր . այլ  
իւրաքանչիւր ոք փորձի յիւրոց ցանկուլթեցն  
ձգեալ և պատրեալ ॥ : Երանի՛ բարի և ար-  
դար մարդկանց , որոնց համար գրած է՝ թէ  
\* անձ փորձեաց զնոսա , և իբրև ոսկի 'ի բովս  
քննեաց զնոսա ॥ :



Գ Լ Ժ Դ :

Ունակո-ւի , որ է չար համ բարի սովորուի :

Թ . Այն անոր որ՝ մարազի մը ան է եղեր ,  
հիւանդուի՛ր վրան հնցեր է , խալսելիք չու-  
նի , վերջապէս անով պիտի երթայ . երնէկ ա-  
նոր՝ որ առողջ թապիէթ ունի , տէրիէ բանով  
չաւրըլիք . հիւանդուլթի՛ տէօշէկ ի՛նչ ըսել է՝  
չի գիտեր . առողջուէն մենձ բան չիկայ Յքիս  
վրայ՝ կըսէ բոլոր Յք . աս օրինակով ձեէ՛ ու  
չափէ հոգւոյդ վրայ ալ . ես ուրիշ ողջաձե  
պիտի ընեմ :

Այս անոր որ՝ չար բանի մը սորվեր է . երանի  
անոր՝ որ բարի բանի սորված է . ասանկ թա-  
ղիր կբռնես անձ մեղաւորներուն , \* ուսեալքդ  
( կրսէ ) զբարիս , և ոչ զբարիս ॥ : Սորվելը ( որ  
գրոց լեզունով՝ ուսանիլ կըսուի , ) ու սովորել  
ը ( որ նոյն է Տարառ և դրաբառ , ) իրարու  
այնչափ նման են՝ որ շատ անգամ սովորիլը բ-  
սելու տեղը սորվիլ կի՛ սովրիլ կըսենք : Ինչու  
որ՝ ինչպէս մէկը պզտիկուց կարդալ սորվի նէ ,  
իրեն սովորութի կըլայ կարդալը կի՛ սորված  
բանը . իսկ ան որ կարդալ չէ սորվեր պզտի-  
կուց , շատ դժար է թէ մեծուստ սորվի . կար-  
դալ գիտցողն ալ՝ ինչ որ սորվեր է նէ , ան գի-  
տէ , անկից դուրս բան հարցընես նէ՝ չի գիտ-  
նար : Ասոր պէս ալ՝ սովորութիը աղէկի՛ ալ  
գէշի ալ՝ պզտիկուց կըտնկուի մարդուս թա-  
պիէթին մէջ , ու թապիէթ կըլայ . ուստի կը-  
սէ շնորհալին՝ իմաստասիրաց հետ , \* սովո-  
րութին է երկրորդ բնուի ॥ : Ասկից է՝ որ ինչ-  
պէս մէկին բնութիը՝ ցի ստեղծուածը՝ փոխել  
անկարելի է բնապէս ( զոր ստեղծողը միայն  
կրնայ ընել ) . նմանապէս բնութի եղած սո-  
վորութիը փոխել անկարելի է բարոյապէս .  
միայն անձ ամենակարողը կրնայ ընել տալ . ա-  
սոր համար կրսէ մարդարէն վերի խօսքին քո-  
վը . \* եթէ փոխիցէ ինձն զխայտուց իւր , կի՛  
հնդիկն զգոյն մարմնոյ իւրոյ . և դուք ուսա-  
նիցիք գործել զբարիս՝ ուսեալքդ ՚ի չարիս ॥ :  
Թ . Սովորութի եղած բանին նշանը ան է , որ  
այն բանը խօլայութենով ու ուրախութենով  
կրնենք . ինչպէս որ բնական գործողութիները  
խօլայութի կրկատարենք , չենք պիլէ իմար  
ընելնիս . իմալու բան է նէ՝ սէֆայով կըգոր-  
ծենք : Սովորական եղած մեղքին նշանն ալ  
նոյն .

նոյն է . քիմ հէմ խօլայ խօլայ՝ սըխ սըխ կիյնայ  
 մէկը , հէմ աներես լըբուք ու խնտալով կընէ  
 զմեղքը . քիմ , \* անդգամն ծիծաղելով գործէ  
 զչարիս ॥ . անոր իւտօրէ ծանրուին ալ սովորա-  
 կան մեղքին շատ ծանոր է , պատիժն ալ լման :  
 Նմանապէս սովորական եղած բարեգործու-  
 թիւնը հէմ խօլայ կըգործուի , հէմ ուրախ  
 սրտով . անոր կեօրէ ալ նոյ առջև հաճոյական  
 կըլլայ , ու մենծ վարձք կուեննայ :

Միայն բան մը կայ , որ աս սովորական գործ-  
 քը՝ որ ունակութիւն կըկոչեն փիլիսոփայք և  
 անճարանք , երբոր առանց իմնալու կըլլայ նէ ,  
 կենէ աղէկը վարձատրելի՝ չարը պատժելի է ,  
 բայց վարձքն ալ պատիժն ալ անանկ չէ՝ ինչ-  
 պէս է ան ատեն , որ դիտնալով և իմնալով  
 կըլլայ : Օրինակ . մէկին բերանը անէծքի սոր-  
 ված է նէ , անէծք տալովը՝ ամմէն իժիբ մեղք  
 կըգործէ . բայց ան ատենն որ կիմնայ անէծք  
 տալը՝ ու դիտնալով մախսուս կանիծէ նէ , շատ  
 ծանր կըմեղանչէ , բան թէ երբոր ըսածին ուշ  
 չի դներ , սովորոյթ եղած բանի մը պէս բեր-  
 նէն կելլայ : Մէկին բերանն ալ օրհնենք տա-  
 լու սորված է նէ , ամմէն օրհնենքը բարեգոր-  
 ծութիւն է . ամմա դիտնալով ու սրտանց որ  
 օրհնէ նէ , մենծ վարձք ունի . սովորոյթ տէյի  
 առանց իմնալու կօրհնէ նէ , քիչ վարձք ունի :  
 Ասոնցմով կըհասկընաս որ , ունակութե՛ն քիմ  
 չար կիմ բարի սովորուե՛ն գործքը՝ երկու տար-  
 բութի ունի ուրիշ գործքերէն , որ սովո-  
 րութի չեն եղած : Մէյ մը որ՝ ունակութիւր  
 կըծանրցընէ բարի գործքին խըյմէթը . և չար  
 գործքին անարգութիւր : Մէյմալ որ երկու խաթ  
 կըծանրցընէ՝ երբոր նոր ներգործուե՛ն ալ ունի  
 նէ դիտնալով . չէ նէ՝ սոսկ ունակաբար գոր-

ծելով՝ մէկ կողմանէ կը թեթևնայ : Ուստի հարկաւոր է խոստովանանքին մէջ հասկըցընել աս բաներս . մէյ մը՝ թէ սա մեղքս որ դործեցի նէ , ինձի սովորական եղած է , ինչպէս՝ ամիէն շարաթն անգամ մը , իրեք չորս օրն անգամ , օրն անգամ մի , օրը երկու հեղ , շատ տարպա . ևն : Մէյմալ՝ թէ սովորոյթ ըրած մեղքս ալ գիտնալով ըրի , չէ թէ հարբածի պէս առանց ուշադրութե :

Ի . Ասոր ներհակ՝ պէտք է որ խոստովանա հարք և հոգևոր հարք հասկըցընեն բարեպաշտ անձանց , որ իրենց սովորութիւն ըրած բարեգործութիւները՝ ատէթ մը նէ , սովորոյթ է տէյի չընեն . սովորութիւն ընեն , բայց սովորութիւն տէյի չընեն . հապա հասկընալով՝ թէ հարկաւոր է , պարտքս է , և այ հաճոյ է տէյի՝ սրտանց ընեն , և արթնուի ընեն , զորօրինակ դուն սորվեր ես ըսենք առտու իրկուն այս չափ աղօթք ընել , և որչափ խղովթ ունենաս , ատեն կեւեյցնես , ու պարտք եղած աղօթքդ կընես . շատ սիրուն՝ շատ աղէկ բան է աս . սախըն ձեռքէ չի թողուս , չի թուլնաս . միայն նայէ որ սովորական գործքի մը պէս չընես , հապա ամիէն անգամ որ աղօթքի կը նստիս նէ , դուն քեզ արթնցուր , թէ գիտես ինչ կընես կոր . այ հետ պիտի խօսիս . աս որչափ մենձ պատիւ է քեզի , որչափ մենձ տէվէթ . անանկ է նէ , խըյմէթը գիտնամ աղօթքիս . աղքատ մտնամ աղօթքը , հարուստ ելլամ . սևերես կըմտնամ , ճերմակերես ելլամ . պաղ կըմտնամ , տաք ելլամ . մեղաւոր կըմտնամ , արդար ելլամ . զղճումով սկսիմ , կատարեալ սիրով լմնցնեմ : Աս սրտով որ աղօթք նստիս նէ , խօսքերը սոսկ բերնէդ չեն ելլար , սրտէդ կեւլան .

լան • սիրտդ կըբորբոքի , նոր նոր հառաջանքներ , աղօթքներ քու քովէդ կըստեղծես , զոր մարդ չի կրնար սորվեցնել , այլ ինքն հողին սք կըսորվեցնէ :

Ասոր նման ամիէն բարի սովորուիդ՝ որ ունակուածի է եղեր քեզի • նոր ներգործութիւն սրտանց բանեցուր • ինչպէս պատարադ տեսնալդ , պահք բռնելդ , ողորմուէ գործքերդ , համբերելդ , հնազանդիւղ , հեղուծիւնդ , և ամ բարեգործութիդ՝ որ այ շնորհքով սորվերես ընել : Կարճ ըսեմ օրինակով • ինչպէս ուտելը , խմելը , պառկելը , սովորուի է եղած՝ որ ամիէն օր կընենք , ամիս ամիէն անգամ որ կուտենք նէ՝ նոր իշտահով՝ նոր հավէսով մը կուտենք , նոր համ կառնենք , նոր ուժ կառնենք • քանի՛ որ ծարւեր ենք՝ ջուր խմածնուս պէս՝ ծարաւնիս կանցնի , ոահաթուի կիմնանք • քանի՛ որ քուն կըլանք նէ՝ մէկ նոր հաֆիֆութիւն և հանդիստ մը կիմնանք • ասանկ պիտի ըլլայ մեր սովորական աղօթքն ալ , և ամիէն բարի սովորութիւնիս :

Ըսածներէս կիմանաս , թէ որչափ դէշ բան է դէշ սովորուէ մը ետիր ըլլալ , և որչափ աղէկ բան է՝ բարի սովորուէ մը ան ըլլալ , և զբարին բարեպէս կատարել • զերէ ինչպէս չարը միշտ չար է նէ , չի կարծես թէ բարին ալ միշտ բարի կըլլայ • հապա պէտք է որ մենք խայրէթ ընենք , որ բարին բարի ըլլայ : Ասերկու բանս՝ կուզեմ որ աղէկ մտնայ միտքդ , որ կարենաս խոտորիլ՝ ի չարէն , և առնել զբարին • ուստի թէմէլէն հասկըցիր , թէ ինչպէս կրնաս վաղ դալ չար սովորութի , և աղէկ ընել բարի սովորութիդ :

Պ • Չարն որ սովորութի քեզ բնուի է եղեր , և

բաւ որ դժար է մէկէն 'ի մէկ փոխել . յանկարծ  
 ինկնայիր մէկ անսովոր մեղք մը նէ , պէլքիմ  
 խօլայ վի կուզայիր , կըզանէիր , կըվախնայիր ,  
 մէյմալ չէիր ըներ . վէ լաքին սովորական եղա  
 ծը մէկէն 'ի մէկ կտրելը շատ դժարութի ունի .  
 ասոր համար կըսուի . \* ոչ որ յանկարծակի  
 լինի լաւագոյն , կամ յոռեգոյն ॥ : Եւ սակայն  
 ան ալ իրաւ է , որ մարդու ձառքէն բան չի  
 խալըսիր . և թէ \* յորժամ կամին և կարելն  
 'ի միասին իցեն , ոչ ինչ է դժոճարին ॥ : Ուրեմն  
 բանը կամք ընելն է . ուղես նէ , կրնաս ընել :  
 Ասանկ է նէ , ինչո՞ւ փտի չուղես . ուրիշ  
 պատճառ չիկայ , բայց միայն՝ որ կամ չես ճանչ  
 նար չար սովորութեդ չարութիւնը , չարիքը և  
 քսար . կի՞ կըվախնաս դժարութէն՝ որ պիտի  
 քաշես ատ խույէդ վազ գալու տունը :

Չեմ ճանչնար ըսես նէ , խելքի պակսութիւն  
 ունիս , աղօթք քրէ՛ ես ալ կրնեմ՝ որ անքե  
 ղի խելք ու միտք տայ : հապա թէ խելք ունիմ  
 կըսես նէ , ատ ի՞նչ խելք է՝ որ չես հասկը  
 նար , թէ չար սովորութիւնը քեզ ան և մարդ  
 կան առջև ուէզիլ պէթնամ ըրած է ու կրնէ  
 ամմէն իժիր . հոս դժոխքին համը կառնես ,  
 անդին ալ դժոխքը կըթաղուի . զորօրինակ ,  
 քիւֆիւրի սորված ես նէ , ի՞նչ երեսի ջուր  
 ունիս ան ու մարդկանց առջև . հարբեցութե  
 սորված ես նէ , նմանապէս . խումարի սորված  
 ես նէ , նոյնապէս . դէշ ճամբու սորված ես նէ ,  
 տահա պէթէր . թէմպէլուէ սորված ես նէ ,  
 սուտ խօսելու , երդում ընելու , մարդ խաբե  
 լու , գողութե , բարկասրտուէ , ևն , հարցուր  
 թէ ո՞վ կայ քեզ սիրող . դուն ալ գիտես՝ որ  
 ատելի ես ան և հրեշտակաց և մարդկան առ  
 հասարակ . դուն քեզ չես կրնար հաւնիլ , ի՞նչ  
 յոյս

յոյս պիտի ունենաս՝ որ ուրիշք քեզ հաւնի :  
 Ե . Ուրիշի վի՛ օրինակ բերեմ՝ որ քու խաթրող  
 չիմնայ . և ուրիշի վի՛ չափելով՝ աղէկ մը քու  
 չափդ քեզի հասկըցընեմ : Ի՛նչ կըսես . մէկը  
 դողուծե՛ սորված ըլլայ , աս դիէն ան դիէն  
 բաներ վերցնելէն ետե՛ քու տնէդ ալ վերցը-  
 նէ . հաղ մը կընն՛ս ան մարդէն , կի՛ անոր ըրա-  
 ծէն . չէ՛ . կրնամ նէ՛ հախէն ալ կուգամ կը-  
 սես . ինչո՛ւ , զերէ քեզի ալ դպաւ : Մէկն որ  
 ամմէնուն կըբըֆրէ , թո՛ղ քեզ ալ բըֆրէ , նէ՛  
 մանի . չէ՛ կըսես , վրէժինդեր կըլլաս . մէկն որ  
 ուրիշին ըռզին է դպեր , քու ըռզիդ ալ դպչի ,  
 կրնամ մի դիմանալ . չէ՛ . մէկն որ ամմէնուն  
 ձառք կըվերցընէ , քեզ ալ շամար մը զարնէ ,  
 ինչո՛ւ չես կրնար համբերել . եա ամմէն մեղք  
 որ ան դէմ է , ան ի՛նչպէս համբերէ :

Բայց դնենք թէ դողք քեզի զարար չէ տուեր ,  
 ուրիշի կուտայ կոր . խելք ունիս նէ , կենէ չես  
 սիրեր այն մարդը . հիչ գողին աղէկը կըլլայ մե  
 կըսես՝ որ սիրեմ . ասոր նման՝ դինովին ալ ա-  
 ղէկը չըլար , քիւֆիւրպազին ալ աղէկը չըլար .  
 հիչ մէկ գէշին աղէկը չըլար . ուրեմն դունալ  
 չար սովորուե՛ մը կըծառայես նէ , աղէկ մարդ  
 չես , գէշ մարդ ես , հէ՛մ ան հէ՛մ մարդկան առ-  
 ջի : ատանկ է՛ թէ չէ . պատասխան տուր :

Ատանկ է ըսէ՛ , բայց խոնարհ սրտով . որ  
 զղջումի դաս , չէ՛ թէ լրբութենով՝ անդեղջ  
 մնաս . կըլլայ թէ ան մարդուն աղբարը ըլլաս՝  
 \* որ յայ ոչ երկնչէր , և ՚ի մարդկանէ ոչ ամա-  
 չէր ॥ : կըյուսամ որ դուն ատ սրբան չես մը-  
 տեր , ու չես ուզեր մտնալ . վէ լաքին քանի՛  
 որ ատ խույէդ ատ թապիէթէդ ետ չես կենար  
 նէ , կն ետքը՝ ուզես չուզես՝ նոյն սրբային  
 մէջն ես . վախցիր :

Դ. Իրաւ է՝ իրաւ է , ես ալ դիտեմ , ամմա ի՞նչ  
 ընեմ կըսես . ձառքս չէ՛ . ո՞վ կուզէ գէշ մարդ  
 ըլլալ . ո՞վ հաղ կընէ իր թապիէթէն . ամմա  
 չեմ կրնար կոր վազ դալ . անխ ի՞նչ ընեմ . չեմ  
 դիտեր : Ընելիքդ ան է՝ որ ուղենաս խալըօիլ  
 ատ չար սողորուէ . ուղածիդ պէս՝ կըլմնայ  
 բանը : Կուզե՛մ , կըսես : Ուղել կայ , ուղել ալ  
 կայ . \* կամի , և ոչ կամի՝ ծոյնն Ի : Չէ՛ չէ՛ , կը-  
 սէ պաղըօին , ես իրաւցընէ կուզեմ , ամմա չեմ  
 կրնար . գինիի անանկ սորվեր եմ՝ որ մէխա-  
 նային առջևէն անցնելուս ատենը՝ ծնկո՛ւր-  
 ներս կըդողդղայ . ինչո՛ւն ներս չմտնամ՝ չըլ-  
 լար . մէյեր ինկնամ մեռնիմ ան տեղը : Ս՛ու  
 է . հիջ ընկած մեռած ունի՛ս մի . չէ՛ . հապա  
 ուսկի՛ց դիտես ասանկ ըլլալիքը . ատիկա սա-  
 տանային հնարքն է , պօստան խօսխուլուխի  
 պէս սիրող տնկեր է՝ թէ մէխանան չիմտնաս  
 նէ՛ կըմեռնիս : մի վախնար , դուն չես մեռնիր ,  
 քու մօլուկդ կըմեռնի , խույրդ կըմեռնի . սա-  
 տանան կըճաթի ու կըսատկի , ան ատեն դուն  
 կըկենդանանաս , որ հիմա հոգւով մեռած ես :  
 Ասոր նման հասկըցի՛ր ամմէն չար սովորու-  
 թեան վրայ :

Ուրեմն բոլոր բովանդակ վարպետութիւնն է՝  
 դժարուէ չվախնալը . բանը իր բնութիւնը հետ  
 ճէնկէկէշմիշ ըլլալն ու յաղթելն է : Եկուր ին-  
 տի՛ մտի՛կ ըրէ , աս բանիս ճամբան սորվեցնեմ  
 քեզի , որ դժար երեցածը խօլայութիւն կատա-  
 րես , և անվ յաղթող ելլաս ի՞նչէմ չար բնու-  
 թեանդ . միայն թէ խօսքս մըռես , որ ան կող-  
 մանէ քեզի պիտի ըսեմ :

Է . Առջի խօսքս քեզի աս ըլլայ . Հաւանորդ  
 ամբողջ , միտքդ հաստատէ աս ճշմարտու-  
 թիս , թէ անձ ամենակարող է . \* անհնարինքն  
 ՚ի

'ի մարդկանէ՛ Տնարաւորք են ւնյ . զի ոչ տկա-  
 րացի առ յւնյ ամենայն բան ॥ : Հէքիմներուն  
 ձառք քաշած հիւանդը՝ ւնձ մէկ թաքիքէի մէջ  
 աղէկի դարձուցեր է մէկ պղտիկ դեղով մը կմ  
 վէսիլէով մը . երսուն ու ութ տարի հիւանդ  
 պառկած անդամալուծին՝ մէկ խօսք մը ըսաց ,  
 \* արի՛ առ զմահիճս քո , և շրջեաց ॥ . նոյն  
 տանն ոտք ելաւ , կանգնեցաւ , տիփտիրի ե-  
 դաւ՝ լրմնցաւ . եօրդան տէօշէկն ալ ինքիրմէն  
 կոնակը շալկեց՝ կտրճի պէս սկսաւ քալել :  
 Դուն ալ էն առաջ ւնյ դիր յոյսդ , ո՛տքը ըն-  
 կիր , աղաչէ՛ , մի՛ ամաչեր , տէրադ բաց , հի-  
 ւանդ եմ ըսէ՛ էֆէնտիմ . հնցած ու փտուած  
 հիւանդուլթէն ւնր եմ . հիչ մէկ բժիշկ մը իս չի  
 կրնար առողջացնել . միայն դու \* տէր , եթէ  
 կամիս՝ կարող ես զիս բժշկել ॥ : չեմ ըսեր թե-  
 րեհաւատուլթենով , \* եթէ կարող ես ॥ : հապա  
 հաւատքով կըսեմ . \* կամիս ունյ մարդասէր ,  
 և կարես ունյ ամենակարող . հաւատամ տէր ,  
 օգնեա՛ անհաւատուլթես իմում : բժշկեա՛ զիս  
 ւնր , և բժշկեցայց . փրկեա՛ զիս ւնր և փրկե-  
 ցայց . զի փրկուլթի իմ և ապաւինուի իմ դու  
 ես ॥ : Եւ ամիկն օր աս աղոլթքս ըրէ . \* Տէր  
 տէր , տէր ամենակալ , ես եթէ կամիմ և եթէ  
 ոչ՝ դու կեցո՛ զիս . և ես կաւ եմ և տիղմ , զի  
 սիրեմ զմեղս . այլ դու որպէս ամենազօր խա-  
 փանեա՛ զնա , և լոյծ զիս 'ի մոլի մեղաց իմոց :  
 Զի եթէ արդարոյն ողորմիս , ոչ մեծ է . և ե-  
 թէ զսքն կեցուցանես , ոչ են սքանչելիք . զի  
 արժանի ողորմուլթէն են նոքա . այլ 'ի վերայ  
 մեղաւորիս սքանչացո՛ զղթուլթի քո , և յի՛ս  
 ցոյց զանլթիւ ողորմուի քո ւնր . քանզի 'ի քեզ  
 թողեալ է աղքատն , և անկելոյն դու ես օղ-  
 նական ॥ : Եւ առ սք ւնձածինն . \* Փառաւորեա՛

զորդիդ քո 'ի քեզ' անօրէն ինձ հրաշագործել  
քաւուի և ողորմուի : Բարձրասցի պատիւ քո  
ինև , և ցուցցի' փրկութի իմ քե ॥ :

Ը • Երկրորդ խրատս աս ըլլայ • Արի' եղիր ,  
կարիճ' եղիր , դուն քու վրագ հրամէ , դուն  
քեզի հետ իթտասայի մտի'ր • ես կարիճ պիտի  
ըլլամ տէ ( ըսէ' ) , փտտած քէՖիս գերի' մի ըլ-  
լամ , չնչին խույիս հախէն չի կարենամ պիտի  
գալու • հողիս իշխան է և թագաւոր , մարմինս  
անոր չի' կարենամ պիտի ծառայեցնել • հօշուն-  
տութ չար մարմին , թէ որ քու հախէդ չի գամ  
նէ , ինծի ալ մարդ չըսեն : Ով անզգամ թշուա-  
ռական , գիտես քու կամքդ կատարել , գիտես  
քու ինատդ առաջ տանիլ , կըլլայ ատեն որ ոչ  
մենծը ոչ պզտիկը մտիկ կընես , քու խօսքդ կը-  
նես • ես ան կամքը չես գիտեր կատարել • ես  
ալ քեզի ինատ ինչ ըսել է' սորվեցնեմ , ուղածդ  
չընեմ , խօսքդ մտիկ չընեմ • ախսիդ դէմ ախ-  
սի ըլլամ • ինչու'ան որ չար խույեդ վաղ չի  
գաս նէ , քեզ ուհաթ չիթողում • տեսնանք  
ով վրայ կելլէ • դուն սատանայով , թէ ես ան :  
Ասանկ բարի ատելութի մը դուն քեզի դէմ  
կայնէ • տես ինչպէս թէզ կըխալըսիս չար սո-  
վորութիդ • ղերէ կակուղ երթաս քեզի հետ  
նէ , ճամբայ չես իդար • քէսկին երթաս նէ'  
կըվախցընես , ճամբայ կըբերես • \* Որ սիրէ  
զանձն իւր , արձակէ զնա • և որ ատեայ զանձն  
իւր յօիս յայսմիկ , 'ի կեանսն յաւիտենականս  
պահեսցէ զնա ॥ :

Թ • Երրորդ խրատս աս ըլլայ • Մահդ հե-  
ռու մի դներ , մօտ ճանչցիր քեզի • \* Քեզ  
միշտ մերձ ծանիր , քուն մահու եկեալ , քննող  
դատաւոր ॥ : Ես' այսօր ես վաղը հաստատ  
պիտի մեռնիմ ըսէ' • իրաւցընէ ալ ասանկ պի-  
տի

տի ըլլայ՝ որ մէկ այսօր մը կի՛մ մէկ վաղ մը պէ-  
տոր մեռնիս . իտասուն տարի՛ հարուր տարի  
ալ ապրելու ըլլաս՝ անանկ շուտ կանցնի , ինչ-  
պէս անցաւ անցած կեանքդ . թո՛ղ որ \* հա-  
ղար ամ յաչս օն իբրև օր երեկի՛ զի էանց ॥ :  
Ատանկ է նէ ( ըսէ ) , ես ի՛նչպէս չեմ վախնար  
այ դատաստանէն , որ ի՛նչպէս որ կը դոնայ  
զիս , անանկ պիտի դատէ . \* երբ ոչ գիտես՝  
յայնժամ կոչիս , և ըստ դործոց՝ բոց պահան-  
ջիս ॥ . ( կըսէ շնորհալին ) . ուրեմն աս չար սո-  
վորութեան մէջ մեռնիմ նէ , պիտի դատապար-  
տէ զիս իմ օրս ՚ի յաւիտենական հուրն դժա-  
խոց . հապա ես ի՛նչ խելքի կը ծառայեմ , որ  
ետքի թէ՛ հիքէի մէջն եմ իմ մեղքովս , ու չեմ  
վախնար . աս իրիկուն՝ ես աս զի շեր՛ ես վա-  
ղը առարվանց այ տիվանը պիտի ելամ . ասանկ  
սևերես ելամ նէ , հալս ի՛նչ պիտի ըլլայ . պէլ-  
լի եա : հապա հէմէն աս սահաթը իս շտկեմ ,  
որ մէկալ սահաթը իս ամ կանչելու ըլլայ նէ ,  
իր բարկութե՛ր չհանդիպիմ , ողորմութե՛ր ար-  
ժանի ըլլամ :

Ժ . Չորրորդ խրատս ըլլայ . Դժարին դէ-  
մը դիւրինը հանէ . ամմէն դժար բանը՝ առջի  
բերանն է դժար . կտորմը առաջ երթալուն  
պէս անկից դիւրին բան չըլլար . փորձէ՛ , կը-  
հասկընաս : Մէկէն ՚ի մէկ սը եղիր՝ չեմ ըսեր ,  
ոտք ոտք առաջ դնա . այսօր մէկ տրամ մը  
Ֆարիս ընէ թապիէթդ նէ , վաղը երկու կընէ .  
մէկալն օր չորս կըլլայ , մէկալն օր ութը , տա-  
հա մէկալն օր տասնըվեց . ասանկ խօլայ ա-  
ռաջ կերթաս . զերէ ամ կառնես \* շնորհս  
փոխանակ շնորհաց ॥ , և կերթաս \* զօրութե՛  
ի զօրութի ॥ : Օրինակներն ալ առջևդ պակաս  
չեն . քանի՛ մարդ գիտես՝ որ առաջ ճահիլ էր ,  
հար-

Տարբեցող, խումարպագ, ևն . Տիմա ամենեւին վաղ եկած է ան ճամբաներէն . առաջ սատա նայէր նէ , Տիմա հրեշտակ է կրեսս : Մբերուն մէջն ալ հազարներով կան՝ որ առաջ ճամբէ դուրս էին , պէլքիմ քեզնէ ալ դէշ էին . ետքը խելքէ դուրս աղէկ եղան . անոնք ալ քեզի պէս մարդ չէի՛ն մի . ի՛նչպէս Տիմա հրեշտակներու սրբան անցան : Չորացի՛ր , քեզ տեսնամ , որ խախք ընես մարմինդ , սատանան , և Տքը . և երկնային պսակաց արժանի ըլլաս : \* Խոտո-  
րեա՛ ի չարէ , և արա՛ զբարի . գնա՛ զհետ ար-  
դարուէ , և վայելեսցես ՚ի խաղաղուէ ॥ աստ  
և ՚ի հանդերձելումն : Մէյ մը համը առնես  
իշխելու քու վրադ , ան ատեն կիմանաս՝ թէ  
որչափ երջանիկ կեանք է անախտ ըլլալը . իսկ  
զկատարել՛ վարձքը անդին կըվայլես յանպատ-  
մելի թգրուէ երկնից . ուր ան \* թգր առնէ  
զամսին , որք աստէն թգրեցին ՚ի վ ՚ի ախտից ॥ :  
Գանք Տիմա բարի սովորութե՛ վ ՚ի , զբարին  
բարւոք ընելու :

Ժն . Խելացի առակ մընէ . \* Բայն ո՛չ պսա-  
կէ , այլ՝ մակբայն ॥ : Կ՛ սալթ բարին ընելը մի՛  
նայիր , ի՛նչպէս ընելը նայէ : Ողորմուի ըրիր ,  
այս բայն է . ի՛նչ սրտով ըրիր , ան մակբայն է :  
Ալօթք կրնես կոր , խօսք չունիմ , ի՛նչպէս կը-  
նես կոր՝ քեզ նայիմ : Խրատ կուտաս կոր , բայց  
չեմ գիտեր՝ ի՛նչ մտքով , մերամդ առաջ տանե-  
լու համար , թէ եղբարդ շահելու . անոր սի՛ր-  
տը վաստրկելու , թէ ծակելու : Կըհամբերես  
կոր խաչիդ , ամմա չեմ գիտեր՝ մինչև իսպա՛ն ,  
թէ մէկ քանի սահաթ մը . խաչը կըբաշես կոր ,  
ամմա արդեօք աջակողմեան՝ թէ ձախակող-  
մեան աւազակին նման . բերանդ լուռ կեցեր  
է , ամմա սիրտդ տռտռայ նէ , լուռի՛ չեղաւ ,  
հա-

Տապա մենծ աղաղակ՝ անհաճոյ ւնյ ակնջին :  
 Ուրիշին մալը չես դողնարկոր , ամմա անոր  
 հախը կըկտրես , որ է նոյննիս դողուի : Մարդ  
 մը չես սպաններ թրով , հաղարները կըջար  
 դես լեղունովդ . կըգովես եղբարդ , ամմա՛ ե  
 տեէն ամմա ըսելով՝ շինածդ կաւրես . տահա  
 աղէկ էր՝ հիջ չխօսէիր , քան թէ երկսայրի լեղ  
 ուովդ օձի նման խածատես : Աչքդ աղէկ կը  
 պահես մեղքին սէպէպներէն , դուն ինչո՞ւ չես  
 պահուիր . կամ ինչո՞ւ անկաճդ չես պահեր ,  
 լեղուդ չես պահեր . նմանաւն մէկալ դգայա  
 րանքդ : Ասոր նման հասկըցի՛ր ամմէն բարե  
 գործութի՛ վր , որ պէտք է կատարեալ կեր  
 պով ընել՝ որ ստուգապէս բարի ըսուի . չէ՛նէ՛  
 մէկ բանը կի՛մ մէկ պարագան պակաս եղածին  
 պէս՝ անկատարութի կըսուի . և ո՛չ կատարե  
 լութի . այս է իմաստնոց ըսածը . \* կատարե  
 լութին առեալ լինի յամբողջ պատճառէ . իսկ  
 անկատարութին յի՛նչ և իցէ պակասութի ॥ :

Արդ՝ ինչպէս որ մասնաւոր բարի գործ մը  
 ասանկ կատարելութի կի՛մ ամբողջութի կուզէ ,  
 նմանապէս ընդհանուրը՝ ի՛մ ամմէն օրո՞ւն սո  
 վորական բարեգործութի՛ իրեք կատարելութի  
 կուզէ . մտադրութի , մտադիւրութի , և յա  
 ըրտեւութի :

Ժք . Մտադրութի ( ի՛մ ուշադրութի՛ հետն ալ  
 դիտաւորութի՛ ՚ի փառս ւնյ , ) որ բանական  
 ճանաչմամբ և կամօք ընես , չէ թէ բնական  
 շարժմամբ և անբանական յօժարութիք . աս  
 ալ հերիք չէ , բանական գործըդ ալ բնական  
 պատճառէն չըլլայ , հապա գերբնական վախ  
 ճանի համար . մարդու համար չըլլայ նիկթդ ,  
 ւնյ համար ըլլայ . չէ թէ քաղաքական սովո  
 րութի կի՛մ մարդեւարութի համար , հապա քրիս

տոնէական սիրով : Չէ նէ , բնական գործքը՝  
 գերբնական վախճանին չի հասնիր , սոսկ մարդ-  
 կային գործքը՝ անձային վարձք չի կրնար աժել .  
 հապա բնական բարեգործութե՛ն՝ ժամանակա-  
 ւոր վարձք կըլլայ . ( որ անհաւատի ալ կըտը-  
 ունի . ) \* ամէն ասեմ ձեզ , այն իսկ են վարձք  
 նոցա ॥ : Եւ գերբնական առաքինուէ՛ն՝ յա-  
 ւիտենական վարձք . \* ( կայ մնայ ինձ արդա-  
 րութե՛ն պսակն , զոր հատուցէ ինձ յաւուրն  
 յայնմիկ արդարն դատաւոր ) ॥ : Եւ ՚ի վի՛ն անի՛ն  
 գերբնական առաքինուին ալ սովորական բան  
 մը եղած է տէյի՛ մըներ , որ վարձքը քիչ կըլ-  
 լայ . հապա միշտ իբրև նոր փէշկէշ մը ընելով  
 ան , ու զինքդ խուռպան ընելով ամմէն օր՝ ամ-  
 մէն սահաթ . որով վարձքդ կըշատնայ :

ԺԳ . Մտադիւրուի ( քի՛ յօժար սիրտ և յօժար  
 կամք ) , որ դժար բանը՝ դժարելով չիբաշես .  
 հապա յօժար սիրով , անուշութենով , համ-  
 բերօղ համբերութենով . ինչպէս քու արդ-  
 դեթսեմանիին սրխլէթին մէջ՝ \* մտադիւրուք  
 ևս կայր յաղօթս ॥ : Շատ դանձ կըկորսնցնենք՝  
 դժարելով բարեգործութե՛ն ատենը . կըհամ-  
 բերենք ու կըտըժգոհանք , բարիք մը կընենք  
 ուրիշի՛ երես թթո՛ւնցնելով . կըհնազանդինք՝  
 տուտալով . շիտակ ճուղապ կուտանք՝ ամմա  
 կիւճէնմիշ ըլլալով . կաշխատինք՝ ամմա երես-  
 նիս կախ . խոնարհութի կընենք՝ ամմա քըթին  
 տակէն հպարտութե՛ն նշան տալով . և սովորա-  
 բար՝ ամմէն բարի բանին մէջ մէկ դէշութի մը  
 կըխառնենք . և ամմէն բանը սրխլէթով կըբա-  
 շենք . որով պզտի բանը կըմեծցնենք , թեթև  
 բեռը կըծանրացնենք . բաղըր լուծը դառն կը-  
 սեպենք . աշխատանքէն փախչիլ կուզենք՝ որ  
 հանգչինք . անխէ՛ն ան ճամբուն մէջ ամ աշ-  
 խա

խատանք հանդիստ կրքերէ համբերութենով .  
 ամենայն ծանր կըթեթեանայ յուսով , և ամ  
 դառն կանուշնայ սիրով . լի , \* եկայք առիս  
 ամ աշխատեալք և բեռնաւորք , և ես հան  
 դուցից զձեզ . առէք զլուծ իմ 'ի ձեզ , և ու  
 սարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտի՛ն ,  
 և գտջիք հանդիստ անձանց ձերոց . զի լուծ  
 իմ քաղցր է , և բեռն իմ փոքրոզի ॥ :

ԺԴ . Իսկ յարատեւութիւն է՝ սկսած համբերու  
 թիր չէ՛ թէ միայն առաջ տանիլ երկայնամտութիւն ,  
 հապա ինչո՞ւն ետքը՝ ցի մինչև 'ի մահ ամբողջ  
 գլուխ հանել . ուստի և կըսուի՛ իսպառ համ  
 բերել , ցի մինչև 'ի վախճան սապա ընել . հաս  
 տատուն կենալ 'ի բարի դիտաւորուն , և շա  
 րունակել զսովորական բարեգործութիւն ինչ  
 ո՞ւն ետքը , որ ցանածը կարենայ հնձել , ու  
 անկած ծառին պտուղը վայել . ասոր համար  
 պէտք է միշտ խնդրել յի՛ց զշնորհ յարատեւու  
 թեան , որ միայն է արքայութի հասցնող , ու  
 պսակից գործոց :



Գ Լ ԺԵ :

Ներհայնան դեղձ՝ մեղայն ասնելուալէ և զանցատուէ :

Ա . Առնելուն մեղքը՝ ըրած չարիքնիս է . ու  
 թոնց դէմ էր ինչո՞ւն հիմա ըսածնիս , ու տը  
 ո՞ւն զեղերնիս : Իսկ զանցառութիւն մեղքը՝  
 չըրած բարիքնիս է . որոնց համար մասնաւոր  
 խայրէթ կուզեմ տալ աս գլխիս մէջ :  
 Ինչպէս որ՝ առնելուն դեղը զանցառութի է ,  
 S նմա

նմանապէս զանցառուէ դեղը առնելուին է՝  
ի՞նչ բրած չարիքնիս չընենք . չբրած բարիքնիս  
ընենք : Տէյիստի քեզ տեսնամ , ինչո՞ւն հիմա  
սորվեցար պահել այն բանը , թէ \* խոտորեա՛  
'ի չարէ ॥ . ասկից ետև սկսէ՛ պահել այս բանս ,  
թէ \* արա՛ զբարի ॥ :

Աննելութե՛ մեղքը ամմէնքը դիտեն , և սովո՛ւ  
բաբար ան է՛ որ կըխոսատվանին . իսկ զանցա՛  
ռութե՛ մեղքը ամմէնքը ընելը դիտեն , խոստո՛ւ  
վանիլը չեն դիտեր . ինչու որ՛ մեղքի տեղ չեն  
դներ . շատ շատ՛ ծուլուէ տակը կըհասկընան :  
Երաւ է՛ որ լէհանրապէս անոր տակը կինկնայ .  
բայց տահա ստոյգը կուզես նէ , ինքն զանցա՛  
ռութին է գլխաւոր արմատ ծուլուէ , միանձն  
դամայն և նմ պատուիրանազանցուէ և ան  
կարգուէ : Որու դեղն է՛ բայց ՚ի հոգևոր փու  
թոյ կի՛մ յեռանդնէ , որ ծուլուէ դէմ զրեցի ,  
առաւելապէս՛ սէրն ւնայ , փափաք արքայուէ ,  
և քաղց և ծարաւ արդարուէ : Ամմա առաջ  
աս հօտած հիւանդուիս աղէկ մը հասկըցիր  
որ՛ անոր կեօրէ դեղերուն ալ խըյմէթը գիտ  
նաս :

Է . Այ պատուիրանքը երկու սոյ է . պազին  
կըսուի ստորասական , պազին՛ բացասական .  
որո՞ւն դէմ որ ընես նէ՛ պատուիրանազանցուէ  
է , մեղք է . բայց բացասականին դէմ կենաս  
նէ , կըլայ մեղք առնելուէ . ստորասականին  
դէմ կենաս նէ , կըլայ մեղք զանցառութեան :  
Բացասականը ասոնք են . \* մի՛ ունիցիս զայլ  
նմ առաջի իմ . մի՛ առնուցուս զանուն նայ քո  
'ի վր՛ ոնտեաց՛ կամ ընդունայն . մի՛ սպանա  
ներ . մի՛ շնար . մի՛ գողանար . մի՛ երդնուցուս  
սուտ . մի՛ ցանկանայես ॥ . Լն . ի՞նչ այն նմ բան՛  
որ արգելած է յայ , կըսուի բացասական պատ  
ուիր

ոճիրան , որ կը պարտաւորէ միշտ առ միշտ . Կ  
 ամիէն Ճմկ՝ առանց մէկ Ճմկ մը դուրս հանե  
 լու : Իսկ ստորասականը ասոնք են . \* յիշեա  
 սրբել զօր շաքաթուն . պատուեա՛ զհայր քո  
 և զմայր . սիրեսցես զտէր ւծ քո յամ սրտէ  
 քումի . ևն . սիրեսցես զընկեր քո իբրև զանձն  
 քո ॥ . ևն . Կ այն ամ բան՝ որ ւծ մեզի ապօպրեր  
 է ընել՝ տեղւոյն կեօրէ , ատենին կեօրէ , բա  
 նին կեօրէ . ուստի կըսենք՝ թէ պարտաւորէ  
 Տիւր , այլ ոչ առ Տիւր . Կ միշտ պարտրկան ենք  
 ընելու , բայց միշտ ընելու պարտրկան չենք .  
 հապա ատեն կայ որ՝ ան ատեն հէլպէթտէն  
 պէտք է ընել , որ ինքիրմէ պէլլի է շիտակ սիրտ  
 ունեցողին : զօր օրինակ մէկին կըսես , թէ զէ  
 հիր մի ուտեր , ըսել է , հիչ մի ուտեր բոլոր  
 կենացդ մէջ . բայց երբոր կըսես՝ թէ հաց կեր ,  
 կիմացուի ասըլ ուտելու բանը աս է . քանի որ  
 պէտք կըլայ՝ առի կեր . ըսել չէ թէ ամիէն սա  
 հաթ ամիէն թաքիքէ կեր . կամ որչափ հաց կայ  
 նէ պիւթիւնը կեր . հապա այնչափ կեր որ ամ  
 մէն սահաթ ողջ առ ողջ մնաս : Ասոր նման ինչ  
 որ ստորասական հրաման կայ նէ , տեղւոյն  
 կեօրէ պիտի կատարենք . և անանկ կատարենք  
 սրտանց՝ որ անոր ուժովը հողինիս միշտ ողջ  
 մնայ : Աւրեմս երբոր հողիդ հիւանդ է նէ , ի  
 մացիբ որ ատ պատուիրանքն երէն համտես չես  
 ըրած . ետքը անօթի ծարաւ կըմեռնիս . անանկ  
 է նէ՝ նայինք որ ասկից ետև իշտահով ուտենք  
 պէտք եղածին չափ . \* ճաշակեսցուք և մեք  
 զպատուիրանս ւնյ ॥ :

Գ . Քեզի ալ հանդիպած կըլայ , ամմա ուրիշ  
 ներուն վրայ շատ անգամ տեսած կիմ լըսած  
 կըլաս , որ պէսպէս պատճառով անօթի ծա  
 րաւ մնացեր են նէ , ետք ըլնչ իշտահով սալ

արբմիշ են քեր ուտելու խմելու : Աս օրինա  
կովս աղէկ կըհասկընաս զանցառուէ մեղքին  
դէնն ալ դեղն ալ :

Կըլայ որ մէկը հազըր սուֆրայի կըհանդիպի .  
հրամէ կըսեն . ինքն ալ էփէյի անօթի է , ամ-  
մա եա խըպնելէն , եա ուրիշ բանի ետեէ ընկ-  
նալէն՝ չուտեր . ետքը աս զանցառու թէս պա-  
տիժը կըբաշէ . ինչուան իրիկուն անօթու թե-  
նով կըտանջուի , աչու՛ըները խարարմիշ կըլ-  
լայ . ինչու որ Փոսանտը փախցուց , ետքը չը-  
դուաւ : Մէկնալ առջևի դրած կերակուրին չը-  
հաւնելով՝ ետեէն տահա աղէկը կուգայ տէյի  
կըխաբուի , ու անօթի կըլլայ սեղանէն : Մէկ-  
նալ իր տանը հազըր կերակուրը կըթողու , ու-  
րիշ տեղ տավէթի երթամ ըսելն իքէն , մէկ  
դիպու՛ած մը վրայ կուգայ՝ որ ավարայ կըմնայ ,  
անօթի կըչարջըկուի : Մէկնալ ճամբայ պիտի  
ելլայ , տնէն հազըրու թի կտեսնայ կերակրոյ ,  
կի՛ սէֆայի համար մէկ հեռու տեղ մը կուդէ  
հաց ուտել . երթալու ատենը այն հազըրուիը  
տունը կըմոռնայ . դացած տեղը անօթի կըմ-  
նայ , սէֆան ճէֆա կըլլայ : Ատնց նման շատ  
բան կըպատահի՝ որ մարդը զէնճէֆիլ կըլլայ .  
ետքը չոր հացի կի՛ լօխմայ մը բանի խանահաթ  
կընէ :

Աւետարանին օրինակէն մենծը չըլլար եա . ա-  
նառակ որդին իր հօրը տանը խըյմէթը չդիտ-  
նալով՝ գլուխ քաշեց՝ բաժնու՛եցաւ , դնաց հե-  
ռու Յք ունեցածը չունեցածը մօխեց . խողա-  
րած եղաւ , հացի կարօտ եղաւ . այնչափ որ  
խողիբուն կերած քէչի պույնուզիէն փորը կըշ-  
տացընել կըցանկար , ու իրեն տու՛օղ չիկար .  
անով խելքը վրան եկաւ , ու ըսաց . \* քանի՛  
վարձկանք են՝ ի տան հօր իմոյ հացալիցք , և  
ես

Ես աստ սովամահ կորնչիմ . յարուցեալ զնա-  
 ցից առ հայր իմ , և ասացից ցնա . հայր մե-  
 ղայ յերկինս և առաջի քո . ॥ Են : Քանքարա-  
 թաքոյց ծառային բանը ասկից պէթեր է , որ  
 իր զանցառուէ կմ թէժպէլու թէ մեղքին վրայ  
 մեղայալ չըսաց . ու չարաչար պատիժը դտաւ :  
 Մենձ բան կորսնցուցին զանցառուք այն զև-  
 տացին ու քահանան՝ որ երկուքն ալ տեսան  
 ան խեղճ մարդը , որ աւազակները զարկեր ու  
 թալլեր՝ ճամբու վրայ ձգեր էին կիսամահ .  
 վէ լաքին մէկը մէկալը զանց արար . սամարացի  
 եապանճի մարդը ողորմեցաւ , վերցուց տարաւ՝  
 պէտ ըրաւ նէ , քնի օրինակ եղաւ , և ՚ի քնէ  
 դովեցաւ : Պզտի բան չիկորսնցուց այն մենձ  
 տղան ( օրինակ հրէից , ) որ հօրը խօսքին կեօ-  
 րէ կզին կերթամ կըբանիմ ըսաց , ու չիզնաց-  
 և մենձ բան վաստըկեցաւ պզտի տղան ( օրի-  
 նակ հեթանոսաց , ) որ թէպէտ առջի բերան՝  
 չեմ երթար ըսաւ , բայց ետքը զըջացաւ , գը-  
 նաց էզին բանեցաւ : Ո՛րչափ փիւշման եղաւ  
 յովաս թիբ՝ նետը իրեք անգամ միայն նետե-  
 լին ետև կեցաւ նէ , երբոր լսեց եզիսէ մար-  
 գարէէն , թէ օխտն անգամ նետած ըլլայիր  
 նէ , բոլորովին կըջնջէիր թշնամիներդ : ԱԼ  
 ուրիշ անհամար օրինակներ կըգտնաս Քոստանտ  
 փախցընելուն , որ ո՛րչափ որդ կըլլայ մարդուն  
 սրբուն՝ թէ ի՛նչպէս աս շիքեարը փախուցի  
 տէյի . մանաւանդ որ անհողուիը կամաւոր է-  
 ղած է նէ , ինչո՞ւն ՚ի մահ փիւշման կըլլայ  
 մարդը . ամմա նաֆիլէ . եղածը եղած է , գա-  
 ցածը դացած է . առջևի մնացածին նայինք :  
 Դ . Օրինակներէն ճշմարտուիը հասկըցի՛ր քու  
 զանցառուէ մեղքիդ . տարիքդ օրերդ համրէ՛ .  
 քանի՛ ատենդ որ պարապ անցուցիր նէ , մէյ

մէկ տէլ լէթ կորսնցուցիր . Ֆիլան տարի՝ Ֆիլան օր՝ սանկ մենձ առաքինութի մը կրնայիր ընել , չըրիր անհոգութի . զանցառուէ ծանր մեղք գործեցիր . մեղք քեզի՝ որ մեծամեծ պսակ ներէն զրկուեցար : Անցած տարի՝ սանկ օր մը՝ երևելի գործ մը կար ընելու լմ սիրոյն ւնյ , կի՛ եղբօրը սիրուն համար . հոգի չեղաւ . զանց ըրիր . խաղնա մը կորսնցուցիր՝ որ մէյմալ դըռնալու պէս չես : Անցած շաբթուն խզմէթ մը կար ւնյ համար՝ որ անկից մենձ խըսմէթ պիտոր ելլար հոգւոյդ . եազըխ քեզի՝ որ խզմէթէն ետ կենալով՝ խըսմէթէդ ընկար : Երկու՛ն օրը՝ մէկ պզտի համբերութիւն մը կար ընելու . որ ընէիր նէ՛ ւնձ քեզի մարտիրոսական պսակ էր պատրաստեր . չըրիր նէ՛ ալ չեմ գիտեր մէյմալ առ պսակին արժանի ըլլալիքդ : Աս առտու պատարագ տեսնայիր նէ , ւնձ քեզի մէկ մասնաւոր շնորհք մը պիտի տար , որ ասկից ետեւ մահուչափ մեղաց մէջ պիտոր չինկնայիր . դուն ծուլութենով փախուցիր առ շեքեարը . պարէ վաղը պատարագ տես՝ որ պէլքիմ նոյն Փռսանտը ափ ձգես . անալ աղէկ մը չես գիտեր նէ , ամմէն օր պատարագդ տես , որ ւնձ նայի խայրէթդ՝ ու անոր կեօրէ իր ուզած շնորհքը քեզի տայ : Հարանց վարբը գրած պատմութիւր յիշէ՛ , որ հարմը իր դաւկըներուն ապսպրեց որ էգին ամմէն օր փորեն . զերէ տարւան մէջ օր մը կայ կըսէ , ( որ ես մոռցեր եմ զպատկեր աւուրն ) , ան օրն որ փորէք նէ՛ դանձ կը դոնաք . անոնք ալ ամմէն օր փորելով՝ հոգը անանկ փափկացուցին որ իրենց խաղնայ բերաւ շատ բարիքներով : Միշտ յիշէ՛ աս բանս , թէ անցած գահաթը՝ անցած թաքիքէն ի՛նչ որ կըրնայի ընել՝ ու չըրի նէ , յաւիտեան

տեան այն բանէն զրկուած պիտոր մնամ . ինչու որ՝ անցածը մէյմալ ետ չիդառնար :

Ե . Գու՛ն շատ անդամ ցաւեր ես , ու կրցաւ ինձ թէ ետզը՛խ որ պզտրկուէս կարդալ զրել չեմ սորված . մենծցայ նէ՛ ինծի մենծ ցաւ եղաւ , զերէ հիմա խըյմէթը կըզխանամ կոր՝ որ սորվելու ատենս չէ : Ափսոս որ ( կըսես ) կորը ճուճէս ատենը ճահիլուճենով անցուցի , օրերս շարապ անցաւ , մէյէր սա բանիս նա բանիս ետեւէ ինկնալ պէտք է եղեր : Մեղք որ օրթալըխին աժնուէ ատենը՝ քանի՛ որ ձառքս կըհասնէր նէ , սա տեղս չառի , սա տանս փր չեղայ , կեալուրուն աքլը սօնզրատան կէլիը՛ կըսեն եա , ո՛ր է՝ հիմակու՛ան խելքս ըլլար նէ , սանկ կընէր , նանկ կընէր . ինչ ընեմ , հիմա տարիքս առի , ատենը ատեն չէ . հազար փիւշմանուճի մէկ ստակ :

Սուտ չեն , իրաւ են աս խօսքերը . երանի՛ թէ ճահիլները քու օրինակովդ խրատէիր . քու սըխալանքովդ զիրենք շոկէին , ու սորվէին պէտք եղած բաներու ետեւէ ինկնալ , ատեննին պարապ չանցնել . որ ետքը քեզի պէս փիւշման չըլլային : Հայ հայ , անանկ է , կըսես : Հապա հողեորին կողմանէ ալ ասանկ չէ՞ մի . եօսաս աւելի ցաւելու չէ մի . զիտես որ խելացի մարդը ասոր վր աւելի պիտի ցաւի : Աւաղ ափսոս՝ որ պզտրկուց մկրտութե՛ն շնորհքը զրեթէ ամմէնքս կորանցուցեր ենք մէկ քանի մահուչափ մեղքով , որ անոնք չընէինք նէ , մէյմէկ հրեշտակ կըլլայինք . շնորհքնիս օր օրէ կեւելնար , մեծամեծ սքց սըրան կըլլայինք : Ափսոս որ տարիքնիս մենծնալուն կեօրէ շնորհքնիս չէ մեծցեր . քնի նմանութէն շատ հեռու ենք եղեր , որու համար մախսուս գրուած է՝ մեղի օրի-

նակ ըլլալու համար . \* և յն զօրանայր . և ա՛յ  
ճէր հասակաւ , և շնորհօք ॥ :

Պ . Ափսոս չէ՞ մի . որ պզտըկուց պէրի զանցա  
ռուծէ մեղքով ենք շաղուեր , մի անհող ըլլա  
լով՝ մեզի տրուած սերմայէն , առջի շնորհքնե  
րը կրսեմ , չենք բանեցուցեր , որ ետեւէն եր  
կրորդ , երրորդ , տասներորդ , հարիւրերորդ ,  
հազարերորդ , և բիւրերորդ շնորհքներ պիտի  
վաստրկէինք ան . որ տայ \* շնորհս փոխանակ  
շնորհաց ॥ . դուն ան տրուած շնորհքին դլուխն  
ալ կերար , ոտքն ալ կտրեցիր . անշնորհք մնա  
ցիր : Եղաւ որ՝ ան ողորմութիւն պակսութիւն  
ճանչցար , խոստովանանքով և նք հաղորդու  
թենով նոր շնորհք առիր , նոր սերմիէ դլուխ  
ըրիր . ամա ինչ շահ որ՝ մէկ քանի օրէն ետե  
կենէ զանցառուէ մեղքը ափ առիր , ըրած ա  
ռաջադրութիւն չիպահեցիր , աստուծմէ տուն  
տուած բարի բարի նիւթներդ դլուխ չիհանե  
ցիր . մենծ մենծ Քոստանտաներ փախուցիր . հո  
գևոր բանայիրներ եղան ակում օրերը , քա  
րոզ , օրհնուի , ներողուի , դուն սատանային  
տավէթներու դացիր . թէքրար սերմիէդ մըս  
խեցիր՝ նոր վաստակ մը չընէլէն իզատ . խեղ  
ճուի մի ֆիւզուի վրայ հասաւ . ասանկ խեղճ  
ողորմելի մնացիր , չսեմ թէ չխղճալու և չո  
ղորմելու : Խել մը ատեն նոյն հովարտայուէ ,  
ճահիլուէ , կամապաշտուէ , ինքնագլխութեան  
հովին էտեւէն առջեւէն դացիր . պատուական  
ժամանակդ անպիտան բաներով անցուցիր .  
կեանքդ փճացուցիր : Մէկ զանցառուէ մեղ  
քով սկսար . ամմէն ոոյ առնելութէ մեղքը ըն  
կար : Իմացար հիմա , թէ որչափ մենծ չար է  
եղեր զանցառութիւն :

Տղայութի էր ըրածս՝ կրսես . ես ալ դիտեմ ,  
ամ

ամմա չըլլայ թէ քեամիլունդ անունն ալ աւ-  
րես ճահիլութենով . ու ըսես կեննէ քու վրադ ,  
\* ծերունն է կրկին տղայունի ॥ : Չէ նէ , կտոր-  
ճունդ ո՛ր մնաց , պատանեկունիդ և երիտա-  
սարդութիդ կըսեմ՝ ի՛նչպէս անցուցիր . կար-  
ծեմ թէ տղակութիդ անկից աղէկ էր : ծերա-  
նաս նէ՛ ի՛նչ պիտոր ըլլաս . հիմակուննէ աղէկ  
կըլլամ ըսես նէ , ես չեմ հաւատար . դուն ալ  
մի հաւատար : Ամմա դեննք թէ դուն քեամիլ  
ես . առնելութե մեղք շատ չես ըներ . զանցա-  
ռութիդ ո՛ր թողունք . ինչուն հիմա ըրածդ  
չըրածդ դուն գիտես :

է . Հիմա՛ ի՛նչ որ եղաւ՝ եղաւ , ըսենք . դո՛նէ  
առաքելոյն խօսքը քու վրադ յարմարցուր ան-  
յարմար օրինակաւ . անիկակ իր առջի աշխա-  
տանքը չէր յիշեր , նոր աշխատանքի ետեւէ  
կինկնար . դուն առջի զանցառութիդ մոռցիր  
տէ , նոր առնելուն իմ բարեգործուն հետեւէ ,  
ըսելով . \* զառ՝ ի յետոյսն մոռացեալ եմ , և ի  
յառաջադէմսն նկրտիմ ॥ : Ես ալ ասոր խայիլ  
եմ . զերէ ամ ալ խայիլ կըլլայ : հիմա ի՛նչ տա-  
րիք որ հասեր ես նէ , անկից պաշայէ առաջ  
երթալ . ասկից ետեւ հին զանցառութիդ . նոր  
առնելուն ըրէ՛ կըսեմ . իմ \* խոտորեա՛ ի չարէ ,  
և արա՛ զբարի . սիրեա՛ զխաղաղուն , և ե՛րթ  
զհետ նր՛ ॥ : Ինչպէս ճամբուն մէջ ետ մնացողը՝  
պէտք է որ նոր խայրէթի մտնայ , չափողնով  
առաջ քայլէ , որ առաջ գացողներուն հասնի :  
Չարչի հիսապով ալ երթաս նէ , անցած տար-  
ունն քէտէրդ աս տարի հանելու՝ պէտք է որ  
նոր խայրէթի մը դաս : Աս խայրէթիս վրայ  
հերիք խօսեր եմ ծուլուն դէմ . անտեղը ըսած  
հոգևոր եռանդը մի մոռնար . ու հետեւեալ  
մէկ քանի կարճ խրատներս ալ միտքդ առ :

( Թ . ) Ստորասական պատուհիրանն՝ որ ըսի՝  
 դանցառուէ մեղքով կրկնորենք , մի կարծեր  
 թէ բացասական սպտուհիրանէն վարէ՝ որ առ-  
 նելու թէ մեղքով կրկնորի . զերէ վեր չափես՝  
 վար չափես , էն ետքը իմ պատուհիրան կը բռ-  
 վանդակի աս ստորասական հրամանիս մէջ .  
 \* պահեա՛ զպատուհիրանս ॥ . որու հետ նոյն են  
 և այս ստորասականք . \* խոտորեա՛ ՚ի չարէ , և  
 արա՛ զբարի ॥ . որոնցմէ դուրս բան չըլար . ու  
 բով կը հասկընաս , թէ ստորասականին մէջ զո-  
 բուք կայ բացասականն ալ , և բացասականին  
 մէջ կայ զօրուք ստորասականն ալ : Գու՛ն հէ-  
 մէն պատուհիրանքները՝ պահէ՛ տէ , ստորասա-  
 կան բացասական ըլալուն խելք հասցնելու  
 մի նայիր :

( Թ . ) Պատուհիրանք պահելը , ք՛մ թէ՛ չարէն  
 խոտորիլը , և թէ՛ բարին ընելը , չի կրնար ըլ-  
 լալ առանց իյ սիրոյն . իսկ իյ սէրը ըլալուն  
 պէս՝ ամմէն պատուհիրանք կը պահուի . իյ սէրն  
 ալ եղբայրսիրուք կրնաս կատարել , առանց ա-  
 սոր չես կրնար , զերէ իրարմէ չնն բաժնուի ,  
 և մէկ պատուհիրան են՝ դլուխ իմի . ըմ , \* լը-  
 բումն օրինացն սէր է ॥ :

( Թ . ) Այ սէրը բորբոքելու՝ մէյ մը քնի չար-  
 չարանքէն , մէյմալ արքայու թէ մտածու թենէն  
 էւել՝ զօրաւոր բան չեմ կրնար դանալ . միայն  
 դուն ջանա՛ դանալ հոգևոր հայր մը՝ որ քեզ  
 աս մտածականները սորվեցնէ :

( Թ . ) Աս թի չեղօղը իշտահով հաց չուտեր ,  
 ծարաւ չունեցօղը իշտահով ջուր չիսմեր . ուս-  
 աի փափաքէ հոգևոր իշտահ ունենալու իմասի-  
 բուէ , եղբայրսիրուէ , և իմ բարեգործութե՛ ,  
 որ մէկ խօսքով արդարութիւն կը սուի . աս որ  
 ունենաս նէ , երանի՛ քեզ այժմ և յաւիտեան .  
 ըմ ,

լամ, \* երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարուէ, զի նոքա յագեսցին: Ախ օր, տուր ինձ յաղենալ այսպիսի անմահական հացիւ. որ է աստ շնորհք, և անդ փառք քո. փառք քեզ:



Գ Լ. Ժ Զ:

Երբեմն ճանապարհ հապարէլ-ութի:

Անդ կենաց կարդացիր, սորվեցար քսենք. բանը՝ բանեցնելն է, ու ճամբով բանեցնելն է. չէնէ, ի՞նչ շահ հիւանդին զհտնալը՝ թէ որ դեղ իրեն աղէկ է, երբոր չառնէ չի բանեցնէ այն դեղը նէ. ի՞նչ շահ բանեցնելն ալ, երբոր ճամբէ դուրս բաներ ընէ ան միջոցին նէ. հապա որ իւզնիւկ ընելու ըլլայ. տահա դէշ չըլլար մի. ուշ մեռնելու էր նէ՝ շուտով կըմեռնի. խապահաթը ո՞չ դեղին է, ո՞չ դեղ տուողին է, հիւանդին է՝ որ դեղը ճամբով առնելը չի գիտեո, կի՞մ դեղին դէմ մնասակար բան մը կուտէ, կի՞մ մէկ կերպով մը սէպէպ կուտայ՝ ինքիր զինքը կաւրէ:

Ասոր նման կըլլայ հողևոր հիւանդուէ և առողջութի թէրքիմն ալ. մենք սորվեցուցինք թէ աս հիւանդիս սա դեղը պէտք է, ան հիւանդին նա դեղը, որ առնէ նէ՝ կառողջանայ, և կատարել առողջութի կուսենայ: Բայց ի՞նչ ընենք որ շատը կայ՝ որ դեղը գիտէ, ու չառնէր. խրատը ծոցս է կըսէ, չիբանեցներ. ասանկը քանի կերթայ, դէշ պիտի ըլլայ. էն ետքը նոյն ցաւը

ցաւր իր դուռիս պիտի ուտէ՝ պիտի մեռցնէ հող-  
ւով :

Թ . Շատն ալ կայ որ՝ մէկ դիէն խրատը կուզէ  
բռնել , մէկալ դիէն ալ իր խուշը վար դնել  
չուզեր . այնի սամարացիներուն պէս՝ որ հէմ  
դճմարիտ անձը կրճանջնային , հէմ սուտ ան-  
ները քի կուռքերը կրպաշտէին . աստուծմէ ալ  
կրվախնային՝ կուռքերէն ալ : Աս խելքով  
քրիստոնէներ մեր օրերը խիստ շատ են , որ կը-  
կարծեն կրակը ջուրը մէկտեղ միացնել . կու-  
զեն խոնարհ ըլլալ , ամմա հպարտուին ալ բա-  
նեցնել , համբերող կուզեն ըլլալ , ամմա ուղած  
բաներնին կրփնտռեն՝ որ սիրով քաշեն . եղ-  
բայրասէր ենք կրսն , ու իս կրպահեն . հէմ  
մարմինը կրփայփայեն , հէմ ալ հողև որ մար-  
դիկ են դրեր իրենք զիրենք : Ասանկներուն  
դէմ էր քնի ըսածը . \* ոչ ոք կարէ երկուց տե-  
րանց ծառայել ॥ : Եղիա մարդարէնալ ըսաց  
իէլ ազգին . \* Մինչև յերբ յերկուս հետս կա-  
ղայք . եթէ մոր է անձ , երթայք զհետ նորա .  
եթէ բահաղ է անձ , երթայք զհետ նի ॥ . Նա-  
րեկացին ալ իմաստնոյն խօսքովը վայ կուտայ  
ասանկներուն . \* Արդարև վայ մեղաւորին ,  
որ տարակուսեալ կայցէ ՚ի վի երկուց ճանա-  
պարհաց ॥ :

Մէկ սոյ մընալ կայ անձավախ երևցած քրիս-  
տոնէներէն , որ իրաւցընէ խայրէթի կըցըցնեն  
զիրենք իրենց հողւոյն կառարեալ առողջուե-  
լ յաւիտենական կենդանութի , քի փրկութի .  
բայց իրենք պիլէ կրվկայեն՝ թէ կրի կրի բան  
մընեն , առաջ չեն երթար . ( թէ որ էտևորանց  
չերթան նէ . ) առողջ կերևնան , ու հիւանդ  
են . ոտք կելլան չեն ելլար , նորանց տէօշէկ  
կիյնան . ինչու որ՝ կատարեալ առողջ չեն ե-  
ղեր .

զեր . Կ՛մ անկատարուէ մէջ մնացած են , կատարելուէ ճամբան չեն ելեր . անոր համար վրանէն պակաս չէ ամմէն կերպ պակսութի :

Կ՛ . Ասոր պատճառը ուրիշ բան չէ , բայց եւթէ այն՝ որ հողևոր ճամբուն կանոնը չեն գիտեր , կամ չեն բռներ . կենաց դեղը ի՛նչ ճամբով և զգուշ կենալով պիտի բանեցնեն՝ չեն նայիր : Կայ որ՝ կտորմը իշտահը բացուածին պէս՝ էւելօք բան կուտէ , կաւրովի . ալ աշաղը կը լայ . Կ՛մ կտոր մը հողևոր ճամբուն համը առնելուն պէս՝ կուզէ մեծամեծ սքերունը բաժ ջերմեռանդութիւր ձառք դարնել . և իր հպարտութիւր կը կործանի : Կայ որ՝ տահա կիսառողջ իբէն՝ տնէն դուրս կը լայ , հավա կառնէ , կաւրովի . Կ՛մ տահա նոր սկսած առաքինուի սորվելու՝ կուզէ մարդկանց առջև առաքինի և սք անուն հանել . զինքը իրմէն վեր կը դընէ . ինքը զինքը հպարտութիւր կը կործանէ : Կայ ալ որ՝ խիստ արտորալով կուզէ ողջնալ . ուստի ամմէն թիւրլիւ դեղը մէկ երկու օրուան մէջ կուզէ լմնցնել . սրբան չինայիր , ատենը չի պահեր . անով աւելի ետ կը մնայ . Կ՛մ կուզէ մէկ երկու օրուան մէջ կատարեալ ապաշխարող ըլլալ , ամմէն բեռը վրան կառնէ , ամմէն բանը կուզէ շուկել լմնցնել , և մէկ սահթը վան մէջ սք ըլլալ . անով աւելի կը շիթթի , բոլորովին կը յուսահատի , խառնափնդոր բաներ կը նէ . եա խղճահար կը լայ , եա կեղծաւոր . կի՛մ անխոհեմ , և կի՛մ անխելք , կամակոր , անհնազանդ . կըրնայ խելքն ալ փախցընել :

Կ՛ . Աս բաներուս դեղը ան է՝ որ աղէկ նայուի ( հողևոր հօրը առաջնորդութիւր , ) որ ասըլ ճամբով ըլլայ հողևոր դեղը և առողջութիւնը . Աս ճամբան կը սորի ճանապարհ կատարելութի .

ԹԵ՛ . որ իրեք խօնախ կրքաժնու՛նի . ց՛մ իրեք  
կերպ բան կայ՝ մէկ մէկէ ետև բռնելու , ու ա-  
ռաջ երթալու : Առջինը կըսու՛ի ճա՛ն մաքրու՛ն  
( կամ մաքրողական ) : երկգը՝ ճանապարհ լու-  
սաւորու՛ն ( կի՛մ լուսաւորչական ) : և երրորդը՝  
ճանապարհ միու՛ն ( կի՛մ միաւորչական ) :

Չոր օրինակ , մէկ բանի նիզամ կուղենք տալ  
նէ , առաջ խապան կառնենք , ետքը տա՛հ : ա-  
ղէկի՛ք կրկոկենք . էն ետքը կատարեալ ճիւղն  
կուտանք : Տունը առաջ կաւլեն կըմաքրեն , ետ-  
քը կըսրբեն կըթէմիզընեն ամմէն կերպով , ան-  
կից ետքը կըսազեն կը զարդարեն տէօշմէյով .  
որ եկօղը պատուով նստի ու հաղ ընէ : Աս-  
մտքով կըսու՛ի հոգևորապէս . \* այլ լու՛նացա-  
րուք , այլ սրբեցարուք , այլ արդարացարուք  
յանուն ան մերոյ յի քի՛ ॥ : Գարձեալ՝ ինչպէս  
տղայու թին է . սնկատար խելքով . երիտասար-  
դու թին է աւելի խելք սորված . իսկ հասուն  
հասակը՝ որ ծերութի կերթայ՝ եփուն կըլայ  
խելքով . ու կատարեալ խելացի կըսու՛ի . ասոր  
նման է առաքինու՛ն նոր սկսօղը , առաջ դացօ-  
ղը . և կատարելու՛ն հասնօղը : Տա՛հ մենձ օ-  
րինակ . հին օրէնքն էր սնկատար . նոր օրէնքն  
է՛ ի ճա՛նի կատարելու՛ն . իսկ արքայու թին է  
բուն կատարելու՛ն . ասոր պէս ալ մաքրու՛նը  
սնկատարներուն ճամբան է . լուսաւորու՛նը՝  
յառաջադիմողաց կի՛մ զարգացելոց ճամբան է .  
իսկ միութի չէ՛ ան՝ կատարելոց ճամբայ է , որ  
կըհասցընէ արքայութե՛ն դուռը .

Է . ինչպէս որ ասոնց՝ Փարղըյայտնի է , նմա-  
նապէս յայտնի է՝ որ վարի տէրէճէն չանցած՝  
կի՛մ առջի ոտքը չառած , միջինը չելու՛նիր . մի-  
ջինը ոտք չի կոխած՝ վեր ցաթկել չուլար . այբը  
չսորվողը՝ բենն ալ չիգիտեր . գիմէն հիչ խա-  
պար

պար չունենար : Սք հայրն արսենիոս՝ որ ամ կարդացողութի ունէր , և Տիս մէջ կատարել առաքինի կրօնպուճէր , երբոր և զիպտոսի անապատը դնաց նէ , միամիտ պարզամիտ ճգնաւորներէն հոգևոր բան կըհարցընէր՝ որ կատարելուէ ճամբան սորվի . ասոր դարձաւ քսաւ մէկը՝ հայր արսէն՝ դու ամմէն բան կարդացած սորված գիտուն մարդ ես , ի՞նչ կէրթաս կըհարցընես աս պարզամիտ մարդիկներուն . ան ալ պիտն տո՛ւաւ . Տիս ամմէն իմաստուիր զիտեմ . ամմա աս սքերուն զիացածին այբուբեննալ չեմ գիտեր :

Այս է գիտուի սքց՝ իմաստուին ան . զոր ո՛վ որ կուզէ սորվիլ նէ , ասանկ խոնարհութենով այբուբենէն պիտոր սկսի , ու կամաց կամաց առաջ երթայ . \* դնացէ նա զօրութէ՛ ՚ի զօրութիւն , մինչև երևեսցի ան հրեշտակաց ՚ի սիոֆն ॥ :

Յօր . ան :

Ճանապարհ Տաքրուիէ :

Պողևոր ճամբուն մէջ առաջ երթալ կուզես նէ , գիացիր որ ոտք ոտք առաջ պիտի քալես : Առջի ոտքը որն է ըսես նէ . ան . Ինքնաճանաչուին է : Պիտի ճանչնաս քու անմաքրութիդ՝ որ ուղենաս մաքրուէ ճամբայ մտնալ , ու քեզ մաքրելու էն առաջ հոգ տանիս . պիտի տեսնաս հոգւոյդ տանը աղտեղուիր՝ որ իբրահ քնես , ու շուտով աւլելու սրբելու ետեւէ ինկնաս : Ուրեմն ամմէն բանէն առաջ ան բանիս մէջ քեզ կրթէ . աղէկ մը քեզ քննէ , ճանչցիր ոչնչուիր , տկարուիր , տգիտուիր , և չարութիւր .

Եհր . գլխաւոր մեղքդ , պակասուիդ , խույզ ,  
 Թապիէթդ . աշխարհ ամենայն մոռցիր , աչքդ  
 քու վրայդ դարձուր : Հայլի մը շինէ խղճմը  
 տանքդ , ամիէն օր առջևդ դիր , մէջը նայէ ,  
 քու ինչ ըլլալդ ոտից ինչո՞ւնս 'ի գլուխդ ա  
 դէկ կրտեսնաս . ան ատեն չես դիմանար քեզ  
 անանկ աղոտոտ ու փաչատած Թողուլ . շուտով  
 քեզ մաքրելու ու շոկտելու ետևէ կիսկնաս :  
**Օգնական** առ քեզն աղօթքն ալ՝ աս մտքերու  
 յարմար , սրտէդ բխալով , ու զանազան գրք  
 քերէն հանելով :

Է . Երկրորդ ատրմ առնել կուզես նէ , ադէկ  
 խոստովանանքիմը ճար կրտեսնաս . Էհանրա  
 կանի կարօտ ես նէ՝ հոգևոր հօրդ խրատովը ,  
 անկից ադէկը չիկայ . անոր մէջ կրմօնայ ամիէն  
 հարկաւոր բան՝ որ պէտք է մէկ կատարեալ  
 ապաշխարողիմը : Ասիկակ որ ադէկ ընես նէ ,  
 Է . Երրորդ ատրմը ինքիրմէ կառնես , որ է  
 Երկիւղն ւն . ամմա կուզեմ որ աս տեղս քիչ  
 մը յօգնուի առնես , աս բանիս մէջ ադէկ քեզ  
 կրթես , ծանտը քալես , մէկէն 'ի մէկ անձալախ  
 եղայ մըսեր . հապա աշխատէ որ առնես ւն  
 վախուն շնորհքը , գիշեր ցորեկ աղաչելով մար  
 դարէին հետ . \* բւեռեալ Է երկիւղ քո զմար  
 մինիմ , զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ :  
**Մտածէ** որ դատաւորի կմ Թաղաւորի մը առ  
 ջև խապահաթը ըլլայիր նէ , ինչ վախ կըբա  
 շէիր , ինչպէս ասուդողի մէջ կըլլայիր գիշեր  
 ցորեկ , որ չըլլայ Թէ յանկարծ քեզ բռնել տայ ,  
 բանտ դնէ , կամ մեռցնէ : Է՛յ , որչափ Փարդ  
 կայ երկրաւոր և երկնաւոր դատաւորին կամ  
 Թաղաւորին մէջ . անհո՞ւն : և քու խապահաթդ  
 ւն դէմ՝ ք մեղքդ՝ որչափ է . անհո՞ւն : անանկ  
 էնէ , վախդ ալ կերպով մը պիտի ըլլայ անհո՞ւն :

Աս մտածուէս թէ մէլը կենէ ինքնաճանաչու  
 թին է . շէնքին բարձրուէ չափն ալ՝ ւնյ անչափ  
 մենծութին է . իսկ շէնքը առաջ կերթայ՝ մը  
 տածելով մահո՛ւան սահալթդ՝ որ անդիտելի  
 է , ւնյ դատաստանը՝ որ սարսափելի է . և ան  
 փոփոխ վճիռդ՝ որ կասկածելի է , սէլքիմ  
 յայտնի ալ կերևնայ՝ թէ բանդ դէշ է , կամ  
 աչքդ չիկտրեր՝ սիրտդ չիվկայեր՝ թէ աղէկ վը  
 ճիռ պիտոր ելլայ քեզի . անով ինքիրմէ կըծը  
 նանի դժոխքին մտածուիր . ուսկից որ խալը  
 սոււմ չիկայ յաւիտեան , և յւննս յւննից :

Ասանկ ըլլալով՝ կարծես թէ յուսահատութի՛ն  
 մի պիտոր ինկնաս . քաւ լիցի , հապա՛ ւնծալախ  
 կըլլաս . ւնյ ահով ու վախով քեզ կըժողվես .  
 մէյմալ առջի ճամբաներդ չես բռներ . փիւշ  
 մանուիդ և առաջադրուիդ մէկէն կըլլայ . ու  
 հաստատ կըլլայ . և այնպէս կորստեան ճամ  
 քէն՝ փրկուէ ճամբան կելլաս . անմաքրութիդ  
 կըմաքրես , մաքրութեան ճամբան առաջ կեր  
 թաս :

Մէկ խօսքով , թէ որ չես ուղեր ետքը դժոխք  
 երթալ նէ հոգւով և մարմնով , հիմակո՛ւրնէ  
 դժոխքէն մի՛ ելար մտքով . թէ որ կուղես ւնյ  
 դատաստանին մէջ՝ արդարանալ նէ , հիմակո՛ւր  
 նէ դուն քեզ դատէ՛ ու դատափետէ . թէ որ  
 կըվախնաս ւնյ բարկութե՛ր հանդիպիլ նէ , հի  
 մակո՛ւրնէ դուն քեզ բարկայիր . ան ատեն ւնյ  
 քաղցրութիւր ու ողորմութիւր կըտեսնաս . ւնյ եր  
 կիւղն ալ՝ որ քեզ վախ կուտար նէ , կըփոխուի  
 ՚ի ծառայական երկիւղէ՛ յորդիական երկիւղ .  
 ամմա ատոր հասնելու տահա էփ էյի ճամբայ  
 ունինք : Ուրեմն

Դ . Չորրորդ ատրմն է ատելուի անձին , անձն՝  
 ուրացուի , վրէժխնդրութի յանձնէդ՝ կամա

և որ ապաշխարանքներով • խրատել ու չեխել  
 դուն քեզ • երես չիտալ դուն քեզի : Ամա  
 սիրտդ չիկոտրել • մէկ դիէն յանդիմանել , մէկ  
 դիէն ալ յորդորել ու քաջալերել ինքիր զինքդ •  
 յոյսդ քեզնէ կտրել , ւնյ ապաւինիլ : Խոնար-  
 հուծէ դործքեր ալ դրսէն ու ներսէն անպա-  
 կաս ընել • ամիէն բանին մէջ քեզ ցածցնել ,  
 կրծել , թէրպիէ ընել՝ նոր վարպետ դացածի  
 պէս • չար օրինակներէն փախչիլ , բարի օրի-  
 նակներ փնտռել : Ասոնցմով շատ առաջ կեր-  
 թաս մաքրուէ ճամբուն մէջ • այնչափ որ կա-  
 մաց կամաց լուսաւորուծէ ճամբուն լեռներն  
 ալ աչքիդ կերևնան :

Ե • Հինգերորդ ատրմն է՝ ւնյ ոտքը ինկնալ իբ-  
 րև անառակ որդի դժած հօր առջևը • իբրև  
 զմաքսաւոր և զպոռնիկ՝ երկնաւոր դատաւո-  
 րին առջև • իբրև հիւանդ՝ ամենաճարտար  
 բժշկի առջև • իբրև աղքատ մուրացկան՝ մե-  
 ծատան դրանը առջև • աղաչել՝ պաղատիլ ,  
 լալ ու չդադրիլ իր ողորմուէ դուռը չալել : Մի  
 վախնար , ուշացնէ ալ նէ՝ էն ետքը քու գիւ-  
 ցածէդ էւել կուտայ • \* առաւել ք զոր խըն-  
 դրեմք և իմանամք ॥ : միայն հաւատքով ու  
 յուսով խնդրէ :

Պաղի հեղ ալ ւնյ ոտքին առջևը սկսէ խեղճ  
 թափել , ու շիքեայէթ ընել քու հոգիիդ հա-  
 սիմներէն՝ ց սատանայէն , մարմնէն , ու Յքէն ,  
 ըսելով • \* երկնաւոր դատաւոր՝ դատ արա ինձ  
 յոսոխէ իմիկ ॥ : Տես ինչ կըբաշեմ կոր աս ս-  
 սոխներէս , որ մէկ դիէն սատանան , մէկ դիէն  
 մարմինը , մէկալ դիէն Յք՝ իս կըբարչրկեն՝ հա-  
 զար փորձուինքերով ու փորձանքներով • իմ ա-  
 պականեալ բնուիս դործիք են առեր , անով  
 էս անդադար մեղք կըձգեն , չարը ինձի սովո-  
 րոյթ

բոյժ են բրեր • աման էֆէնտիմ իս խալըսէ՛ ա սոնց ձառքէն • ևն :

Պազի անդամ ալ ւայ առջև սիրտդ բաց , ու սանքի գլուխդ ծռած՝ երեսդ վար առած՝ չի համարձակելով երկինքը նայել՝ մեղքերուդ վը նայէ՛ , ու խպնէ՛ խորին պատկառանքով , և ա մօթով սանքի գետինը անցիր • մէկ դիէն կըս կծի՛ խշխշայ սիրտդ՝ ըրած մեղքերուդ վերայ , մէկալ դիէն զարմանք քաշէ ւայ անոխակալուէ ու երկայնմտուէ վերայ , թէ ի՛նչպէս քեղինիս մեղաւորի ինչո՛ւան հիմա կըհամբերէ կոր , ինչ պէս քեզ ողջ ողջ գետնի տակ չիկորսնցներ , կամ վերէն կրակ ու կայծակ վրադ չիջեցներ • ևն :

Ասկից յոյս առ ւայ ողորմուէ , և փափաքէ՛ ի րեն հետ ւամ կերպով հաշտու՛ելու , միանգա մայն փափաք ցցուր քու կողմանէդ հատու ցում ընելու ամէկդ եկածին չափ :

Պ • Վեցերորդ ատըմն է • \* զառ ՚ի յետոյսն մոռանալ , և ՚ի յառաջադէմսն նկրտիլ ॥ : Ստա նան որ կրտեսնայ բնդ ասչափ խայրէթով մաքրութե՛ համբան երթալ , մէկ դիէն յուսահատուի կըջանայ բերել՝ թէ ըրած մեղքդ շատ է , երբ պիտի ապաշխարես • շատ ետև մնացեր ես , երբ առաջ պիտոր երթաս • մէկալ դիէն ալ յանդգնուի կամ հպարտուի , կեօյա էփ էյի առաջ ես դացեր • շուտով մը սք ըլլալու նը շաններ կայ վրադ • զերէ զղջացիր , ապաշխարեցիր • ւայ հետ հաշտու՛եցար • ևն :

Աս մտքերուս դէմ դուն ալ ըսէ՛ մէկ դիանց • Որ ինչ եղև , չար եղև • անցածը չիդառնար • ասկից ետևինը նայինք • ւամ մեղաւորին չիսը դողիր այնչափ ինկնալու համար , որչափ ոտք չելլալուն համար , \* չինկնալը ւայ է • ինկնալը մար

մարդուս . ինկնալ ու չելլալ՝ սատանային ॥ :  
 Ես ամ չեմ , որ հիչ չիյնամ . սատանայ ալ չեմ ,  
 որ մէյժալ չելլամ . մարդ եմ , մարդկօրէն ըն-  
 կայ . ամ ի նօրէն կրկանդնիմ : Ա՛ծ՝ որ մեռեալ  
 մարմինս հողէն պիտի յարուցանէ նէ , հողիս  
 հիմա կրնայ կենդանացնել . զազարոտի ըսածին  
 պէս՝ \* արի՛ եկ արտաքս ॥ , մեռած ալ ըլլամ  
 նէ՛ իսկոյն կողջնամ ան հրամանովը . ինչպէս  
 որ ողջնցան անհամար մեղաւորք՝ որ մեղօք մե-  
 ռեալ էին , ադամ եւայ , դաւիթ , պետրոս , պօ-  
 ղոս , աւազակն , մաքսաւորն , մազդաղենացին ,  
 մարիամ եղիպտացին , տայաս , կիպրիանոս , օ-  
 դոստինոս , կոստանդիանոս , օրդատ . ևն :

Մէկալ դիանց ալ ըսէ . աղէկ եա , էփէյի ա-  
 ռաջ կերթամ եղեր . ամմա տաճա անդին խել  
 մը ճամբայ կայ . հինգ վեց ատրմ առնելով՝  
 երկրէ երկինք չիհասնուիր . ուրիշներուն նայ-  
 իմ՝ որ առաջ գացեր , լուսինը՝ արեգակը՝  
 աստղները անցեր են պայծառ առաքինութի-  
 ներով . շատն ալ արքայուի հասեր են . անոնք  
 ո՛ւր , ես ո՛ւր . անանկ է նէ , խամջին զարնեմ՝  
 իս առաջ տանիմ . քերվանը գնաց , ես էաւ  
 մնացերեմ . նստելու ատեն չէ . քալեմ . ո՛ւր է  
 սքերուն ըրած բաները , ես տաճա ծրարոցին  
 ծարն եմ . այբուբենը նոր կարդալ սկսայ .  
 կարդացողներուն սրբան անցնելու շատ փուռ  
 հաց պէտք է : Բաղդատէ քու վարք սքերուն  
 վարքին հետ . շատ բան կըսորվիս . ու խայրէ-  
 թի կուգաս :

Է . Եօթներորդ ատրմն է աղօթասիրուն . դի-  
 շեր ցորեկ ջերմեռանդուք՝ աղօթքի ատեն է-  
 լելցնել , այ հետ խօսիլ , ու սքերուն միջնոր-  
 դուիը ափ առնել : Չերէ ինքնաճանաչուէ խօ-  
 նախէն ինչու՛ն աս տեղս գալէդ էաւ . կըհաս-  
 կը-

կրնաս որ դուն քեզի մնալով առաջ երթալիք  
 չունիս , նոյն հողեղէն մարմին ես , որ կտոր մը  
 ջուր կաթէ վրադ . նէ , չամուռ կրկտրիս . նոյն  
 հրային բնուին ես՝ որ կայծ մը ցաթկելու ըլ-  
 լայ նէ՝ նորանց պիտի փռնկիս , ու քու տունդ  
 պիտի էրես . նոյն ամկնացու դործու՛ածքն ես ,  
 որ ինքիրմէ կաղտոտիս , կըհննաս , կըպատուիս ,  
 կըփտտիս , հող կըդառնաս . ուստի ան ամենա-  
 կարող ձառքին կարօտ ես , և սքերուն օգնու-  
 թեր կարօտուի ունիս : Ասոր համար՝ աղօթ-  
 քի սէր մը ձգէ . ջերմեռանդուիդ տա՛ք պահէ .  
 ժամ պատարագ , սըխ սըխ հող և որ ընել . մաս-  
 նաւոր նիէթներ դնել ու կատարել . մասնա-  
 ւոր կերպով բարեխօս բռնել պահապան հրեշ-  
 տակդ , այս և այն սքը , և ամ սքերը , և մա-  
 նաւանդ ամ սքց թագուհին՝ ամենասրբուհի  
 տիրամայր անձամբնը՝ զմայրն ողորմութե . որ  
 ամենամաքուր ըլլալով՝ քեզ խօլայ առաջ կը-  
 տանի մաքրութե ճամբուն մէջ , և լուսապայ-  
 ծառ աստղ ծովային ըլլալով՝ քեզ լուսաւո-  
 րուն ճամբան կըհանէ :

Յօդ . Է :

Ճանապարհ լուսաւորութե :

**Մ**աքրուն ճամբուն ծայրը՝ լուսաւորութե  
 սկիզբն է . մանաւանդ թէ կատարել մաքրու-  
 թեր՝ բաւական լուսաւորութի է . մաքրութե  
 ալ կայ՝ որ լուսաւորութե չի զատուիր : Չե-  
 րէ մաքուր կըսենք նէ՝ երկու կերպ կիմացուի .  
 մէյնը՝ մաքուր բացասական , որ եղած աղտը  
 դուրս կըձգէ , կըթէմիզնայ , կըսրբուի . որ  
 ինչու՛ն հիմա խօսած ճամբանիս է : Մէյնալ

մաքուր դրական , որ ըն ինքեան ազտ բան չու  
 նի , միշտ թէմիղ է բնուիք , անանկ որ՝ եա՛ ին  
 քիրմէ փայլուն ու լուսաւոր է , ինչպէս պիլ  
 լօւր . եա սալթ կրմնայ որ առջի մաքրութեը  
 վր ճիւղամը տրուի՝ որ փայլի ու լուսաւորի .  
 ինչպէս են մատենները ու ճէվահիրները : Իշ  
 տէ հոգւոյն մաքրուեն ալ՝ ի՛նչ թիւրլիւ մաքուր  
 ըլլայ նէ , լուսաւորութե ճամբան ճիւղայ կու  
 տայ , կը փայլեցնէ , ու կը պայծառացընէ՝ հե  
 տեալ առաքինութիներով :

Ի՞նչ . Լուսաւորութե ճամբուն առջի ոտքն է՝  
 խղճմտանքին մաքրուիը կմ հանդարտուի խղճի  
 մտաց . անանկ որ՝ չէ թէ միայն մահու չափ մեղ  
 քի սը լէքէ չունենայ , որ խոստովանանքով  
 շուտմը պէտք է մաքրել . հապա կամաւոր նե  
 րելի մեղք մընալ չունենայ . ո՛չ պղտի սուտ մը  
 խօսի . ո՛չ թեթեւ բամբասանքի կամ դատողու  
 թեան տեղիք տայ . Լէն . ըլլայ նէ ալ շուտով  
 զղջայ , մաքրէ , ու նիէթ դնէ՝ որ սահալթ մը  
 առաջ խոնարհ խոստովանանքով խղճմտանքը  
 աղէկ մը սրբէ . Լ ամիէն իժիր ամ կարելի հը  
 նարբով ջանայ մեղքին սէպէպներէն հեռու կե  
 նալ . որ խղճմտանքը միշտ պիլ լօւիպէս մաքուր  
 փայլի , ոսկիի արծթի ու ճէվահիրիպէս ճիւղը  
 պայծառ ըլլայ : Քանի որ զինքը անհանդիստ  
 անհանդարտ տեսնայ նէ , ինքնիրեն ըսէ . ի՛նչ  
 է տէրտդ . որ կայ նէ , դուն բան մը ունիս  
 սրտիդ մէջ . ինչպէս հաց ուտելու ատեն՝ բե  
 քանդ որ կը ճռտայ նէ , կիմնաս որ խիճ մը կայ ,  
 քմ մանտր քարկ խուճ , թէզով կը հանես կը մաք  
 րես . ասանկ ալ սիրտդ անհանդարտ է նէ ,  
 իմացի՛ր որ խիղճ մը կայ . թէզով զատէ՛ մաք  
 րէ , որ հանդիստ ուտես հոգւոր և մարմնա  
 ւոր հացդ ալ :

ք. Երկրորդ ատրմն է Ներկայութիւնն ւնյ. առ  
 բանս որ սովորութիւնն ընես օրը շատ անգամ  
 միտքդ բերել, ինչպէս՝ կէս սահաթն անգամ,  
 կամ սահաթը անգամ մը, բան մը սկսելու կի՛  
 լմննալու ատենդ, մէկ կողմանէ մը միշտ մա-  
 քուր կըմնաս, մէկալ կողմանէ ալ քանի՛ կեր-

թաս կըլուսաւորուիս հողուով:

Մաքուր կըմնաս, ղերէ երբոր միտքդ է ամ-  
 մէն սահաթ, թէ անձ քովս է, ես ւնյ առջևն  
 եմ, ւնյ աչքը իմ վրաս կընայի կոր, ի՞նչ հաղտ  
 ունիս մեղք գործելու. պայտալի մարդու առ-  
 ջև անկարողութիւն մը ընել դժար է. մենձ մար-  
 դու առջև տահա դժար. իսկ թաղաւորի առ-  
 ջև հիջ չի կըրնար ըլլալ. հապա ւնյ առջև ի՞նչ  
 պէս կարելի է ընել: Աս մտածուիս զօրաւոր  
 ըլլալու համար՝ դի՛ր թէ անձ քեզի երևնար տե-  
 սիլքով մը, կի՛ քս ւորն մեր մարմնաւորապէս ալ  
 ինչպէս է երկինքը՝ նոյն փառօք քեզի երևնար,  
 նմանապէս սք անձածինը, կամ ուրիշ որ սքն  
 որ ըլլայ, ի՞նչպէս կըկենայիր առջևը. յայտ-  
 նի է թէ հրեշտակիւնս կըշարժէիր. ուրեմն ներ-  
 կայութիւնն ւնյ խորունկ մը տպաւորուի միտքդ նէ,  
 անանկ մաքուր և սք կըկենաս, ինչպէս կեցեր  
 են հրեշտակները և սքերը երկինքը արքայուե  
 մէջ. ղերէ անձ ինչպէս որ երկինքն է, նմանա-  
 պէս երկիրս ալ է. հոն երևելի փառօք, հոս  
 աներևոյթ կերպով, բայց իսկապէս իր ներ-  
 կայութենով՝ կարողութենով և գոյացութե-  
 նով: Կըլուսաւորուիս ալ, ղերէ կենդանի հա-  
 ւատքով որ զանձ քեզի միշտ ներկայ ճանչնաս՝  
 աչքով տեսածի պէս, ան ատեն հետը անոյշ  
 անոյշ ընտանի խօսակցուի կընես. թախանձա-  
 նօք ողորմութիւնը կըխնդրես, լոյս կըխնդրես,  
 կարողութիւն կըխնդրես, շնորհք կըխնդրես, շնոր-  
 հա-

հակալ կրլլաս , և այլ ամմէն բարի պտուղներ  
կըհանես աս մտածուէս . մանաւանդ սերն ւնյ  
կըլլայ սրտիդ մէջ անշէջ ճրագ մը , որով պէտք  
եղածին չափ կըլուսաւորուիս :

Գ . Երրորդ ատըմն է եղբայրսիրութի . զերէ  
մծսիրութիւնն որ ( գոնէ պատկեր սիրոյն ւնյ )  
վերէ բսած կերպով սրտիդ մէջ դրուի նէ , կը  
նայիս որ ւնյ սիրոյն կարօտը և հավէտը ուս-  
կից պիտի առնես , բայց եթէ սիրելով ւնյ պատ-  
կերը՝ որ է եղբայրդ . և իրաւոր՝ զմծ չես տես-  
նար՝ որ աղէկ մը կուշտ մը ուղածիդ պէս սի-  
րես . եղբորդ սերն ալ որ մծ իր սիրոյն տեղը  
խապուլ կրնէ կոր , տահա ի՞նչ կուղես . \* զի  
որ սիրէ զեղբայր իւր , զմծ սիրէ . և եթէ ոք  
ասիցէ , թէ սիրեմ զմծ , և զեղբայր իւր ատի-  
ցէ , սուտ է ։ Եղբայրսիրուն վն նախանձու  
դէմ հերիք խօսեցանք . հոս տեղը կուղեմ որ  
եղբայրսիրուն կատարելութիւր ձեռք բերելու  
խայրէթ ընես . որ կըլլայ՝ ամմէնուն հետ մարդա  
սեր՝ բարեսիրտ՝ անոյշ լեզու՝ անոյշ սիրտ ըլ-  
լալով . հանդարտ և հեզ ըլլալով խիստերուն  
դէմ , բարերար ատելեաց , անոխակալ և ան-  
յիշաչար թշնամեաց , մեծի պզտկի՝ հէմ աղէկ  
խօսելով , հէմ աղէկուիմը ընելու ետեէ ինկ-  
նալով : Ասոր մէջ կրմտնայ նաև նախանձայու-  
ղուի հոգւոյ , որ մէկիմը հոգևոր զէն չըլլայ ,  
ամմէնուն հոգևոր շահ ըլլայ . անոր հետն է

և նախանձ փառացն ւնյ՝ փրկուք հոգւոց :

Դ . Չորրորդ ատըմն է՝ արիւնի յառաքինուն .  
կտրիճ ըլլալ ամմէն բարեգործուն մէջ . մանա-  
ւանդ հաստատուն ըլլալ ձախորդութեց մէջ ,  
երկայնամիտ , համբերող , չարբաշ , ուրախ , զը-  
ռուարթ : Վախկոտ չըլլալ դժար բաներու մէջ ,  
երկմիտ չըլլալ հնազանդութե մէջ , չճշգոհալ  
նէ

ննդուն և աղքատուն մէջ . հասլա յնճ յուսալ  
լով և ապաւինելով՝ ամմէն բանը իրեն խօլայ  
սեպել վն սիրոյն այ՝ այ օդնականութիւն . ին  
քիր զինքը միսիթարել ամմէն բանին մէջ ամ  
սիրտ տալ ինքնիրեն , և յորդորել զինքը օր օրէ  
ի բարին և ՚ի բարեգոյնն :

Ե . Հինգերորդ ատրմն է՝ փափաք կատարել  
լուէ , որ չէ թէ միայն անկատարութի չունե  
նանք , հասլա կատարելութի էւելցնենք . ինչ  
պէս առուտուր ընօրը չարչըն անոր համար չեր  
թար որ բան չի կորսնցնէ տէի , հասլա վաս  
տակ ընէ տէլի : Աս օրինակովս՝ հոգևոր աղա  
հուն մը ունեցիր , որ շատ վաստակ ընես օրէ  
օր հոգևորամս . որ բանէն որ ըլլայ՝ մէկ շահ  
մը , մէկ փայ մը հանես հոգևորդ , համբերու  
թե աղէկը ընես , եղբայրսիրուն էն աղէկը ափ  
ձգես , խոնարհուն խորունկ մատէնը դանաս ,  
աղօթքին պատուական մարդրիտը ճիտդ անց  
նես , հնազանդուն անգին օրը անկաճդ կա  
խես . և ամ շնորհաց ընտիր ընտիր պատուա  
կան քարերէն գլխոյդ պսակ ընես :

Զ . Անցերորդ ատրմն է մահացուցումն , կիմ մե  
ռելութի մարմնոյ կամաւոր ապաշխարանքնե  
րով . որ վերի ըսած կատարելութե փափաքէն  
առաջ կուգայ . ասոր համար կը տեսնանք՝ որ  
ամմէն բարեպաշտ քրիստոնէ՝ որ կատարելուէ  
սէր ունի , կամաւոր աղօթքներ և ճգնուիններ  
պակաս չըներ . ասկից է՝ որ կրօնաւորք և կու  
սանք , որ կատարելութե ճամբան երթալու  
ուխտ ունին , չէ թէ միայն խրատ կատարելու  
թե դիրքը կրկարդան , հասլա շատ կերպ կա  
մաւոր ճգնուիններ ալ կընեն , պազին կանոնով ,  
պազին ալ հոգևոր հօր խրատով :

Է . Եօթներորդ ատրմն՝ որ լուսաւորուն խօ  
նա

նօխը կըհասցընէ , է ուղիղ դիտաւորուի՝ ամ  
 մէն բանին մէջ դիտելով միայն զփառս ւնյ . քի  
 չէ թէ միայն սոսկ նիւթ մը դնել ու բերնով  
 ըսել առտընանց կի՞ օրը մէկ քանի անգամ՝ էգ  
 պէր բրածի պէս , \* Տի՛ ի փառս քո կընեմ այս  
 օր ամ գործքս և , հապա՛ ինչպէս նետ կի՞ թիւ  
 Ֆէնկ նետողը նշան կառնէ ու կըդիտէ , որ ու  
 զած տեղը զարնէ . ասանկ ալ դիտելու է սրը  
 տանց՝ որ իրաւցընէ մեր ամմէն գործքը հասնի  
 շիփ շիտակ մեր վերջին վախճանին , որ է ամ :  
 Այս , ուր գտնամ ասանկ մաքուր դիտաւորու  
 թի , ասանկ յստակ ջուր՝ որ մէջը պայծառ է  
 բեցնէ զպատկեր վերջին վախճանին . չըլլայ  
 պղտորած օտար բանով մը , ինչպէս է անձնա  
 սիրուի , փառասիրուի , բարայասիրուի կամ  
 շահասիրութի , մարդահաճուի կի՞ մարդկային  
 նկատմունք , և սատանայական կեղծաւորու  
 թի : Այ՛ մարդուն ծոցէն՝ կըսէ ռամկաց առա  
 կը՛ խաչ կելլայ . մէյմալ հասկընաս որ՝ ջերմե  
 ռանդութեան համար չէ եղեր , մէյեր ժամէն  
 գողցեր է արծձէ խաչը : ասանկ ալ շատ մարդ  
 բարեգործուի մը կըցըցնէ , ամմա ուրիշներն ալ  
 խաբուին նէ , իր խիղճը զինքը կըտանջէ՝ թէ  
 ծուռ է դիտաւորուիս . եա՛ բեկիղքը , եա՛ մէջը՝  
 եա՛ վերջը մէկ մարդկային նիւթ մը խառնընած  
 է՝ էն աղէկ բանին ալ : Աւստի ջանալու է , որ  
 դիտաւորուինիս հէ՛մ շիտակ , հէ՛մ յիստակ և  
 պայծառ ըլլայ . քի միայն փառքն ւնյ ըլլայ մեր  
 մէկ հատիկ ուղածը և նպատակը , որ է մեր ա  
 ռաջին սկիզբն՝ և վերջին վախճան : Ասանկ որ  
 ըլլայ նէ , շատ լուսաւորութի կառնենք ներ  
 սէն , և օրէ օր կըմտենանք լուսաւորութեան  
 ճամբուն ծայրը՝ որու հետ կընոյնանայ ճա՛հ  
 միաւորութի լը ւնյ :

Ճանապարհ միապրութեան:

Ո՛ր թէ արքայուն ճամբան ենք ելեր, եկանք եկանք ան՝ մօտեցանք, արքայուն դուռը տեսանք. մէկ քանի ատրմ ալ առնենք նէ, իսկապէս ներս պիտոր մտնանք: Եւ իրաւ որ ո՛վ որ իր կենացը մէջ վերի ճամբաները կը լըմնցնէ, ու միաւորութեան ճամբան ոտք կը կոխէ նէ, ստուգապէս կը մօտենայ արքայութեան դրանը, ու կը սկսի առնել երկնաւոր դրախտին ծաղկըներուն անուշահոտութիւնը, որ ամեն դիաց կը բուրէ միաւորութեան ճամբուն մէջ. արքայուն չէ շնին հոս իքէն կառնէ, և մեռնելու ատեն տարակոյս չունի՝ որ արքայուն դուռը իրեն բաց պիտի գտնայ: Ինչու որ՝ ան հետ արդէն մէկ էր սիրտը. ան բարեկամ էր, չէ թէ միայն ճանչուոր. հէլպէթ բարեկամը գայ դուռը չալէ նէ՝ անոր չէ ըսել չը լըար. բարեկամ տանուտէրը՝ եկող բարեկամին իր դուռը կը բանայ, ուրախ սրտով ալ՝ թող հրամէ ներս գայ, ու վեր գայ կըսէ: Ո՛վ միապրութի վիճակ, ո՛վ անպատմելի երջանկութիւն աս ճանապարհիս՝ որ պիտի հասցնէ մեզ՝ ի վերջին երանութիւն: Հայտնի մտնանք աս ճամբան, ու առաջ վազենք:

Ինչ. Աւրի ոտք առնելը աս ճամբուս մէջ է կատարեալ միաբանութիւն լը կամացն ան, որ համակերպութի կըսուի: Մաքրութեան և լուսաւորութեան ճամբուն մէջն ալ համակերպութի պէտք է, որ կարենայ մէկը համաբերութիւն և ուրիշ առաքինութիւններով շարժիլ. ամմա հոս կատարեալ միաբանութիւն պէտք է. անանկ որ ճշմարտու-



նուէն չի կրնար ըլլալ . անոնք ըլլան նէ , աս  
 ալ էտեան ինքիրմէ կուգայ : Աս բանիս խօլայ  
 ուի կըզտնաս՝ թէ որ գիտցածդ նորանց սոր  
 վելու՛ սրտանց ըսես այն բանը . \* Հայր մեր՝  
 որ յերկինս ես ॥ : Որո՞ւ կըսես կոր հայր . ւայ ,  
 որ է հայր որդւոյն ւայ . ուրեմն զի՞նք քեզ հայր  
 կըճանչնաս , և զմիածինն նր քեզ եղբայր . և  
 զհոգին սք փեսայ հոգւոյդ : Աս ի՞նչ փառք  
 պատիւ է քեզի . աս ի՞նչ մենծ բան է . աս ի՞նչ  
 մենծուի է . ալ ուսկից կըվախնաս , ի՞նչ բանի  
 կըկարօտիս . ի՞նչ տէրտ ունենաս նէ , որդիա  
 կան ընտանու թք՝ ւայ առջև դիր . ալ դուն մի  
 հոգար . \* զի՞մ հոգս ձեր ընկեցէք՝ ի նա , զի  
 նա է՝ որ հոգայ վս ձեր ॥ : Միայն դուն նայէ  
 որ հարազատ որդիուի ընես . \* եթէ հայր եմ ,  
 ո՞ր է պատիւն իմ ॥ : Ճըլլայ թէ խորթ որդի  
 ըլլաս : Աս մտածուես մէջ տալմիշ եղիր . տես  
 ի՞նչ խորհուրդներու խորը կըհասնիս : Իսկ  
 դործքով անանկ կըշարժիս՝ որ ամէն սահաթ  
 ւայ ներկայուէ առջև կուեննաս յարդ և պատ  
 կառանք , սիրտդ կըփառաւորի . ւով կըպար  
 ծենաս , թէ ասանկ հայր ունիմ . սիրտդ ալ կը  
 ճխայ , ուրախուէդ ի՞նչ ընելդ չես դիտնար .  
 կորհնես , կըփառաբանես , կըմեծացուցանես ,  
 և կըցնծաս յիւծ . զոր ես չեմ կրնար սորվեց  
 նել . նք ւածածինը քեզ սորվեցնէ , որ իրեն  
 սրտէն բխածը դուն ալ կարենաս բխել . \* մե  
 ծացուցէ անձն իմ զի՞ր , և ցնծացէ՛ հոգի  
 իմ յիւծ փրկիչ իմ ॥ . Էն :

Գ . Երրորդ . առմն է բոլորական նուիրումն  
 անձին . որ չէ թէ միայն ըսես , \* զքոյս ՚ի քոյ  
 ոցս քեզ մատուցանեմ ॥ . կի՞ \* զանձն իմ է  
 դից ՚ի վր քո ॥ . հապա սրտով քան թէ բեր  
 նով անդադար վկայես , \* նք ես քո եմ . քո  
 եմ

եմ ես, և կեցո՞ զիս . ոչինչ ունիմ, և ո՞չ զանձն  
 իմ ունիմ . ես կամօք իմովք պատարագս մա-  
 տուցի զիս և մատուցից . զանձն իմ բոլոր քեզ  
 ընծայեցի և ընծայեմ . նու՛րբեցի և նու՛րբեմ .  
 ո՞չ իբրև զո՛հ, հասպա իբրև ողջակէզ . մը արա՛  
 իս՝ զինչ և կամիս . մը զիս զի՛նչ կամիս առ-  
 նել . մը զի՛նչ կամիս՝ զի արարից ես . պատրաստ  
 է սիրտ իմ առ քեզ մծ, պատրաստ է սիրտ իմ .  
 անձն իմ՝ ի ձեռս քո է յիմ ժամ : Ասոնք խօս-  
 քով ըսելը անոյշ է՝ զիտեմ . դործքով ըսելը  
 նայիմ :

Գ . Չորրորդ ատըմն է կերպարանակցութիւն  
 փրկչին . խաչելեալ ըլլաս Յի, և Յ քեզի . չիջ-  
 նաս՝ ի խաչէն, հասպա խաչի վր՝ մեռնիս . թաղ-  
 ուիս յսի հետ, Յք քեզ մոռնայ, դուն Յքը .  
 քի անանկ բոլորովին թէսլիմ ըլլաս մյ՝ որ բո-  
 լորովին քեզնէ դուրս ելլաս, քեզ մոռնաս .  
 միայն թէ գտնաս քու ստեղծողդ և փրկիչդ,  
 և նմանիս իրեն հէ՛մ հոս՝ հէ՛մ հոն . \* զի ելթէ  
 կերպարանակից մահու նորա լինիցիմք, այլև  
 յարուե՛ նր լինիցիմք : Ո՛վ երջանիկ խաչ . ո՛վ  
 երջանիկ մահ . ո՛վ երջանիկ յարուե՛ : Յսի նման  
 աղքատ, հեզ և խոնարհ ապրիլ նայէ . անոր  
 պէս հնազանդ ըլլալու հետեէ՛, \* մահու չափ  
 և մահու խաչի || . այս է կատարեալ նշան՝ կա-  
 տարեալ սիրոյն մյ . որ ընդ քսի յիմ կեաս և  
 յիմ մեռանիս . վս մյ յոգնիս, յիմ հանգչիս,  
 յիմ հոգի առնես . \* նովաւ կեաս, շարժիս,  
 և ես . զի որք հոգւովն մյ վարին, նոքա են  
 որդիք մյ : Յիչէ՛ և աղօթէ՛ անգաղար, որ  
 քու վրադ ալ կատարուի այն բանը . \* զի զորս  
 յառաջագոյն սիրեաց, յառաջագոյն և հրա-  
 լիրեաց կերպարանակից լինել պատկերի որդ-  
 ւոյն իւրոյ || :

Է. Հինգերորդ ատրմն է՝ հողի աղօթից և արտասուճաց. շնորհք մը՝ որ տուճօղը և արտօղը միայն դիտէ. դիշէր ցորեկ հառաջել, ան ընել, ասիզար ընել սրտանց, որ կըսուճի հեծուճ անմուռնչ, թախանձանք, թառանչանք. կարօտ և սէր անյ, միախաք տեսուճ նորա. սուղ առնել՝ չէ թէ իր մեղքին համար ( որ մաքրուճ ճամբուն գործն է, և ո՛չ Յքին մեղքին համար՝ որ լուսաւորուճ ճամբուն գործն է ), հապա Յքիս վրայ երկար ատեն խարիպուճ քաշելուն համար. \* էրբ եկից երևեցայց երեսացդ անյ. վայ ինձ, դի ընդերկար եղև պանդխտութիւն իմ ॥ ևն :

Դ. Այցերորդ ատրմն է՝ բարեկամուճ ընդ անյ. նման արբահամու հօրն հաւատող՝ կենդանի հաւատքով, յուսով և սիրով. նման մովսէսի ծառային անյ՝ որ երես առ երես անյ հետ կըսօսակցէր հաւատարիմ և ընտանի բարեկամի անասա տէրէճէն որ հասնիս, անյ հետ սանքի թէք լիճսիզ կընստիս կելլաս. չէ թէ միայն սէրը կըվայլես, այլև կըվայելցնես. և պատրաստ կըլլաս՝ ամմէն սահաթ անյ սիրոյն համար քու կեանքդ դնել, արիւն թափել, մեռնիլ. մարտիրոս չես կրնար ըլլալ նէ, ամմէն բանին մէջ մարտիրոսուճ սիրով կաշխատիս. \* վն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ՚ի կենուճն ॥ : \* մեծ և ս քան զայս սէր ոչ որ ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վճ բարեկամի ॥ :

Է. Եօթներորդ ատրմն է՝ միանալ թ անյ, որ է ծայր միաւորուճ. ո՛չ հանդիստ ճանչնալ, ո՛չ նեղութի, ո՛չ դժոխք, ո՛չ արքայութի հողը ըլլալ, միայն թէ չբաճնուճի իր սիրականէն. որ է մէկ հատիկ իր սրտին կեօղ թաշին. սրտովը զանի կակ

կան դանալ, խուճախլամիշ ընել, փաթթընիլ,  
 չըթողուլ. հալիլ մաշիլ անոր սիրովը. որ կըսուի  
 դրկախառնութի, ոգեխառնութի, նո՛ւաղումս  
 և թալկացումս. չէ՛ թէ պատկեր արքայուէ,  
 հապա բուն իսկ արքայութի. ասանկ բան ալ  
 կըլլայ մի՛ ըսես. խնդրէ՛ որ ըլլայ, ան ատեն  
 կըհասկընաս քնի ըսածը՝ ինչ ըսել է. \* Ար-  
 քայութին այ՛ ի ներքս՛ ի ձեզ է ॥. Ամէն, ե-  
 ղեցի՛ եղեցի՛ :



Գ Լ. Ժ Է :

Կրթութի Տղան Չենատոր :

ա. **Ա**րթուի հոգևոր՝ որ խրատ ալ կըսուի,  
 կընշանակէ հոգևոյն թէրպիէ ըլլալը անպաշ-  
 տութե՛ կողմանէ, և աղէկ թալիմ սորվիլը՝ որ  
 կարենայ Յքի, մարմնոյ, ու սատանայի դէմ  
 դնել ու յաղթել ան, և հասնիլ երկնային պը-  
 սակին ու յաւիտենական վարձքին : Ասանկ է  
 նէ, ասկից հարկաւոր բան չիկայ մեղի աս աշ-  
 խարքիս վր՛. ասոր համար ըսաց առաքեալը .  
 \* Մարմնոյ կրթութի առ սակաւ ինչ օգտակար  
 է. իսկ անպաշտութիւն առ ան՝ ինչ օգտակար  
 է ॥ . ուստի դարձեալ կըպատուի՛րէ . \* կրթեան  
 զանձն քո յանպաշտութի ॥ :

**Մ**արմնաւոր վաստակ չի կընար ըլլալ առանց  
 աշխատանքի, առանց իր բանը դիտնալու, նի-  
 զամ դնելու, տէֆտէր բռնելու : Ո՛չ մարիֆէթ  
 կըսորվը՛ի, և ո՛չ շահաւոր բան մը կըլլայ՝ ա-  
 ռանց թէրպիէ ըլլալու, կամ ընելիքը թալիմ  
 չը-

չըրած : Տիչ տեսեր ես աշկերտ մը՝ որ առանց  
քերական և հեգերէն սորվելու՝ գիրք կարդալ  
գիտնայ . առանց խալէմ բռնել սորվելու՝ վար-  
պետ դիր գրէ . ասեղ բռնել չգիտնայ , ու բա-  
րակ բան բանի , կմ աղէկ կարմը կարէ . չէքիճ  
ձառքը չառած՝ խախմաճի , խույոււմճի , ու ճէ-  
վահիրճի ըլլայ . մարդու հետ ելումուտ չըրած ,  
բանի մէջ չմտած , աղէկ պաղիրկեանուի ընէ .  
Թօի Թիւֆէնկ չիտեսած , Թուր խաղցնել՝ ձի  
հեծնալ չիսորված , ճէնկ մտնայ ու յաղթէ՝  
վարձք առնէ . ասոր նման ամ բան՝ կրթութի

կուղէ :

Թ . Տապա դուն որ կուղես արքայուի երթալ ,  
հիչ կրմտմտան՝ Թէ ատ ճամբուն բաները սոր  
վեր ես մի . վերի գրած իրեք ճամբուն՝ ո՛ր  
տեղը ոտք կոխեր , ո՛ր հասեր ես՝ ո՛ր չես հա-  
սեր . եօխսա՝ տահա ճամբայ ալ ելած չես ,  
ճամբէ դուրս կըբալես : Այ հետ առուտուրդ  
ի՛նչպէս է . ի՛նչ կըվաստրկիս կոր օրէ օր , եօխ-  
սա միշտ կորսնցնելու հետ ես . հիչ հողւոյդ  
տէֆտերը կըքննես , որ չըլլայ Թէ միւհլիւզ  
ելլաս : մարմինդ Թէրպիէ եղա՛ծ է մի՛ հողւոյդ  
հնազանդելու . հողիդ Թէրպիէ եղա՛ծ է մի՛ ւնյ  
հնազանդելու : Չէ՛ . հապա որ աւուր կըսպա-  
սես : Ատեն դտնամ նէ , պիտոր ընեմ , ըսես  
նէ , \* ահա ժամանակ լուսնելի , ահա օր փըր-

կութի ॥ :

Այսօր չընօղը՝ վաղն ալ չըներ . աս տարի չընօ-  
ղը դալ տարի ալ չըներ . աս մեծ պաքը անցնեմ  
տէ , դալ մեծ պաքին խելքս դլուխս ժողվեմ՝  
ըսես նէ , դուն քեզ կրխարես . մէյ մը որ՝ ատ  
սիրտը ունենալէդ ետև՝ իծմէն գիտցիր որ հիչ  
ընելիք չունիս . զերէ ւնյ շնորհքը ոտից տակ  
կառնես կոր . ետքը անշնորհք կըմսաս կըկոր-

անձինս : մէյմալ որ՝ պէլքիմ որջ մնալիք չունինս •  
անկիրթ մնայած՝ անդիլի Ծք կերթաս : Հապա  
որ մի կտրեր • ասորունանը վաղը մի ձգեր , այ-  
սորուննէ պաշայէ , ամմէն որ բանէ քու բանդ •  
որ՝ ո՛ր որ անձ քեզ կանչելու ըլլայ նէ , պատ-  
րաստ դանունինս :

Գ • Ի՞նչ է ընելիքս՝ ըսես նէ , շատ բան չէ •  
\* Ճանիր դքեզ ॥ , ըն առածի նախնեաց • բովան-  
դակ կրթութիւնը՝ ինքիր զինքը ճանչնալն է • ( որ  
տեսար առջի ոտքն է մաքրութե՛ն ճամբուն • )  
անկից ետև դուն քեզ կրկրատես , թէ \* Ճա-  
նիր զանձ քո ॥ • ( որ է սկիզբն լուսաւորութե՛ն ,  
և հիմն տասն պատուիրանաց • ) ան ատեն քեզ  
կրխոնարհեցնես , զանձ կը բարձրացնես • և անձ  
ալ քեզ կրբարձրացընէ անտարակոյս մինչև  
յերկինս յաթող իւր • ( որ է ծայր միաւորու-  
թեան ) :

Աս խօշայ բանս մարդիկ կըդժուարացնեն ի-  
րենց չարութենովը , որ չեն ուղեր զանձ պաշ-  
տել , հապա զանձինս : Ասոր համար պէտք է  
որ՝ պազի պազի անգամ , պարէ տարին անգամ  
քանի մի որ զիրենք ժողվեն , իրենք իրենց դան ,  
ըրածնին չըրածնին իմանան , ու իրենց հոգւոյն  
սէլամէթը նային • և աս տարեկան կրթութիւնս  
'ի զատ ( կի՞ գո՛նէ անոր տեղը ) պէսպէս օրըն-  
րական մտածութենով կրթեն զիրենք • որով  
\* անձ դժուարինքն եղիցին 'ի դիւրինս , և առա-  
պարքն 'ի հարթ ճանապարհս ॥ :

Այսպիսի մտածութեց գլխաւոր նիւթերը ա-  
նոնք են՝ որ առանձին տեսարակով քեզի առա-  
ջուց սորվեցուցի • Ի՞նչ են՝ բարի խորհուրդներ  
որ աւուր մէկ ամսուան վր • անոնցմէ օրը մէկ  
բարի խորհուրդ մը կարդաս , ու ետևէ ինկնաս  
կարդացածդ կատարել նէ , կըլլաս միշտ 'ի կրթ-  
թու-

Թուօթէ , և կըգտունիս միշտ կրթեալ և պատ-  
րաստ հողուով . որ համարձակ կրնաս ըսել  
այլ . \* պատրաստեցայ , և ոչ խռովեցայ ॥ :

Դ . Բայց թէ անոնք կարճ ըլլալուն՝ հերիք չեն  
ըլլար նէ քեզի , ու քու տէրտիդ կատարեալ  
տէրման չեն երևնար նէ , կարդա՛ աս գիրքս՝  
որու անունը դրինք դեղ կենաց , օրը մէյ մէկ  
դլուխ , կամ կիրակուց կիրակի՝ դլուխ մը՝ քա-  
րոզի նիէթով . և այսպէս կըլլայ քեզի բաւա-  
կան գործիք կրթուէ , բարի խորհուրդը՝ մտա-  
ծական , դեղ կենացը՝ քարոզ . զերէ կրթուելը  
կըբաղկանայ՝ ի մտածականէ և ի քարոզէ՝ ա-  
ղօթքի և լռութե՛ հետ :

Բայց հանգիստ մը նալ պէտք է կրթութե՛ մէջ  
ըսես նէ , զո՛ւարձալի և զբօսալի կրթարանը  
մտիր , որ է Բիմառնուի չորից վերջնոց՝ գրա-  
բառ կմ Ծաբառ . մի վախնար՝ թէ մէջը մահ ,  
դատաստան , դժոխք կայ . դուն արքայուելը  
մտիր :

Ե . Ասոնցմէ՛ ի զատ՝ որ գիրքն որ քու սիրող-  
կըշարժէ , և քեզ առաքինուէ ճամբուն մէջ ա-  
ռաջ կըտանի նէ , ձառքէ մի ձգեր . մանաւանդ՝  
թովմա գեմբացին՝ խրատական . և սքց վարք ,  
ու հարանց վարք՝ գործնական : Գլուխ ամի՛  
սք գիրքը , աւելի՛նոր կտակարանը : Իսկ սաղ-  
մոսը ըլլայ քեզի՛ դլուխ աղօթագրքերուն . և  
անոր հետ զանազան աղօթք և աղօթամատոյց  
գրեանք սք վիճպաց . որոնց մէջը՝ հայերէն նա-  
րեկ , և լատիներէն օգոստինոսի առանձնախօ-  
սութիւր կըլլան քեզի . նիւթ վառելոյ՝ ի սրտի  
քում զբոց սիրոյն ան : Օրինակի համար՝ կու-  
ղէի կարճառօտ քաղո՛ւած մը ընել քեզի . որ  
սրխ սրխ բանեցնես աղօթքիդ մէջ՝ իրեք ճամ-  
բու կատարելութե՛ յարմար : Բայց որովհետեւ





անանկ որ հէմ բժիշկ է , հէմ դեղ . և զօրուք  
միածնին՝ ամենաբժիշկ և ամենադեղ . կուզեմ  
ըսել , կատարեալ դեղ կենաց :

Կուզե՛ս իմանալ՝ թէ ի՞նչպէս սք ամածինն մէկ  
հատիկ դեղ կենաց տուած է մեզ աստուծմէ ,  
հասկըցիր նախ այն բանն որ կըսէ սք գրիգոր  
նարեկացին՝ երգերգոցի մեկնուէ յառաջաբա-  
նին . Ազամ \* յեռ ուտելոյն ՚ի պտղոյն ( մա-  
,, հաբեր ծառոյն , ) դիտաց մարդարեու թք  
,, զփրկուին մեր , զոր ՚ի ձեռն կնոջ էր լինել  
,, լոց , քի ՚ի ձեռն սք ամածնին . վս որոյ և  
,, կեանս կոչեաց զկինն . ապա թէ ոչ այդպէս ,  
,, զիարդ կոչէր զնա կեանս , որ ամ ծննդոց  
,, ադամայ մահու պատճառն եղև և : Աւտի  
շարականն ալ կըսէ առ սք կոյսն . \* Ա՛վ գէ-  
,, բահրաշ ծաղիկ բուրեալ յեղեմայ հոս անձա-  
,, հո-բէ ծննդոցս Եւայի , յորմէ սփռեցաւ  
մահ ընդ տիեզերս և :

Մէյ մալ հասկըցիր , թէ ո՞վ է սք ամածինն .  
մայր ւայ չէ՞ մի . ուրեմն ինչպէս ամ ամենակա-  
րող է ինքիրմէ , ւայ մայրն ալ ամմէն բանի կա-  
րող է իր զօրաւոր միջնորդուքը . ուստի կըսէ  
առ նա նարեկացին ՚ի բան աղօթից . ի՛վ . \* դու  
զօրաւոր փրկանակ կենաց՝ իսկուհի երկնի և :  
Հիչ կարելի՞ է որ իր խօսքը պօշ ելլայ իր միած-  
նին առջևը . բաւ լիցի . բանը ան է որ միջնոր-  
դու թի ը՛է . առ եղածին պէս՝ ըսածը հելպէթ  
պիտի ըլլայ : Գիտե՛ս , ե՛րբ կըմիջնորդէ . եր-  
բոր մենք ճանչնանք մեր կարօտութիւնը , մեր  
հիւանդութիւնը , ու ճշմարիտ սրտանց իրեն ոտքը  
դիմենք . չէ՞ նէ , մենք որ չենք ուզեր առողջանալ  
նէ , ինքն ալ չի միջնորդեր . զերէ ի՞նչպէս ըսէ  
ւայ , թէ սա հիւանդները բժշկէ՞ որ չեն ուզեր  
բժշկուիլ :

Ան ալ հասկըցիր , թէ ինչո՞ւ անձաճին եղաւ  
 կոյսն մարիամ . քի ինչո՞ւ մայր ան ընտրուեցաւ  
 ու եղաւ . ասոր համար չէ՞ մի՞ որ իրմէն ծնա-  
 նի բուն կեանքն , ու կենդանացնէ մեզ՝ որ մեղ-  
 քով մեռած էինք . ծնանի կրտսէ՛ երկնաւոր  
 բժիշկը՝ որ մեր ամէն հիւանդութիւնը բժըշ-  
 կէ . անանկ է նէ՛ ինքն սուրբ կոյսն ալ եղաւ  
 գործքով , չէ՛ թէ խօսքով , մայր կենաց , ծառ  
 կենաց , տունկ անմահութե՛ , մայր փրկութե՛ ,  
 ծնող մէկ հատիկ բժշկի . ուստի և իր միածնին  
 հետ՝ պատճառ մեր փրկուե՛ և առողջութեան :  
 Է՛յ , դուն որ ասանկ ճանչցեր ես զինքը նէ ,  
 ի՞նչպէս չես դիմեր առ նա անդադար . որ ա-  
 ռողջ ալ ես նէ՛ հողւով , միշտ առողջուե՛ մէջ  
 պահէ քեզ նախապահօղ դեղերով շնորհաց և  
 առաքինուե՛ : Բայց ես գիտեմ որ դուն հի-  
 շանդ ես . երեսդ կրտեսնուի՛ քի վարմունքդ՝  
 որ աղէկ չես . պէլքիմ դուն որ ներսդ տահա ա-  
 ղէկ կը հասկընաս , կը վախես ալ , թէ մեռած ըլ-  
 շաս հողւով՝ ի մահուչափ մեղս . ուրեմն ի՞նչպիս  
 չես դիմեր առ սբ անձաճինն , որ քեզ առողջարար  
 և կենարար դեղով գործունեայ շնորհաց կեն-  
 դանացնէ ու առողջացնէ . ինչպէս որ կարող  
 է և կամեցօղ . կրմնայ բանը քու կողմանէդ՝ որ  
 ուզենաս քու աղէկուիդ , և խնդրես հաւատ-  
 քով անանկ գլծած մօրմէն՝ որ է բոլորովին  
 մայր գլծուե՛ և ողորմութե՛ :

Ասոր համար՝ հասկըցիր էն ետքը , թէ որչափ  
 շատ մեղաւորք՝ իսկապէս մեռեալք մեղօք , ան-  
 զեղջներ ու յուսահատներ ալ , ան շնորհքով և  
 բարեխօսութիւն սբ անձաճինի՛ իրենք իրենց ե-  
 կան , զղջացան ու ապաշխարեցին , և այնպէս  
 կենդանացան հողւով հրաշալի դեղով ջերմ-  
 աանդութե՛ սբ անձաճինի . ու դժոխքին դուռը

մօտեցած իբէն՝ արքայուն արժանի եղան . կան  
որ մեծամեծ սք ալ եղան՝ պահելով իրենց մաս-  
նաւոր ջերմեռանդութիւնը առ սք անձամբինն :  
Կարդա՛ հրաշից գիրքը , ուր կը տեսնաս ամեն  
պապէթ մեղաւորաց դարձը անձամբ ձառ-  
քով . ու քու վրադ դարձնուր ամեն օրինակը՝  
որ կը լսես ՚ի պատմուեց . զերէ դուն ալ ինծի-  
պէս մեղաւորին մէկն ես : Եւ իրաւ որ՝ ամ  
մէնքս մեղաւոր ենք , գիտենք . քի կամ մեռած  
և կի՛մ հիւանդ հողուով , որ կարգէ դուրս դե-  
ղի կարօտ ենք . արդ երբոր ունինք ասանկ զօ-  
րաւոր և մէկ հատիկ դեղ կենաց սք անձամբինը ,  
ի՛նչ կեցեր ենք , որ աւուր կը սպասենք անոր  
ապաւինելու՝ որ օր մը առաջ կեանքերնիս ալ  
առողջուինիս ալ գտնանք : Բայց մեր հպար-  
տութիւն է՝ որ մեզ կը կուրցընէ . մեզ հիւանդի  
տեղ չենք ուզեր դնել . և մեր անհողունն է՝  
որ չենք ուզեր մէյ մը մեր հալը նայիլ . ուրիշի  
պահսուիլ կը քննենք , մեզ երեսի վ՛ր ենք ձգեր .  
չէ՛ նէ՛ իմանալունպէս մեր ողորմելուիլ՝ մէկէ-  
նիմէկ անձամբ ի՛նչ կը կրփակչէինք . որ մեզի  
ողորմի՛ ճար մը ընէ . ինչպէս որ սովորուի էր  
սքերուն՝ որ խոնարհ էին , ու խայրէթի իրենց

Հողուոյն վ՛ր :

՛ք . Տես ի՛նչպէս հրեշտակն ՚ի մարմնի նարե-  
կացին , քու կողմանէդ՝ հիւանդ , ցաւադար ,  
ջախջախած ու մահուան դուռը հասած զն-  
քը ձեւացնելով՝ ասանկ կաղաղակէ հաւատքով  
առ տիրամայրն . \* Ազաչեմ դքեղ սք անձամբին ...  
» արասցեն տօն ինձ բերկրուէ զօրն իմ տաղ-  
» նապի՝ ողջացուցի՛չ երկանցն եւայի . . . ձե՛ռն  
» տուր անկելոյս տաճար երկնային . փառա-  
»ւորեա՛ զորդիդ քո ՚ի քեզ՝ անձօրէն ինձ հրա-  
» շագործել քաւուի և ողորմուի . բարձրաս-

,, ցի պատիւ բո ինև , և ցուցցի փրկուի իմ քև .  
 ,, եթէ զիս դտցես տիրամայր . թէ ինձ ողոր  
 ,, մեսցիս սըրբուհի . . . . թէ զմատնեալս մա  
 ,, հու փրկեսցես կենդանի լոյս . թէ զլալեացս  
 ,, ձայն հատցես բերկրուի . թէ զխորտակելս  
 ,, կաղդուրեսցես զեղ կենաց . . . Ահա կաթիլ  
 ,, մի կաթին քումդ կուսուե յանձն իմ անձրև  
 ,, եալ՝ կենաց ինձ զօրէ , մայրդ բարձրելոյ  
 ,, նն յմի արարչին երկնի և բնաւին երկրի ॥ :

( 'ի Բան . Ծ : )

Աս կերպով խօսէ դուն ալ սք անծածնայ հետ՝  
 նոյն աղօթքը ընելով . և դարձեալ աղօթելով  
 պաղատէ ամենասք կուսին՝ նոյն նարեկացիին սք  
 բերնովը . \* Այլ բեկեալ սրտիւ մատանց տա  
 ,, տանմամբ՝ յոյս առեալ դարձի , զդէմս 'ի  
 ,, յերկիր եդեալ պաղատիմ մօրըդ յմի . բարե  
 ,, խօսեա՛ մաղթեա՛ քաւուի ինձ մեղաւորի՛ դու  
 ,, զօրաւոր փրկանակ կենաց իսկուհի՛ երկնի .  
 ,, քեզ օրհնուիք ձայնից , և բուրմունք խնկոց  
 ,, 'ի յերկրի , և անուշից իւղոց մատուցումըն  
 ,, յամի ॥ . ( Բան . ին ) :

Ասոնց հետ սերտէ՛ ու բանեցո՛ւր աս բաներս  
 ալ՝ 'ի դանձարանէն և 'ի տաղարանէն . \* Գանձ  
 ,, անապական սք կոյս , սրովբէ հողեղէն և  
 ,, լոյս . կենաց ապաւէն և յոյս , մայր մանուէ  
 ,, լի սք կոյս : Ճառ դու կենսառիթ պողոյն ,  
 ,, տնկեալ 'ի բնուի մարդոյն . կեանք մահացե  
 ,, լոյ նախնոյն , մայր մանուէլի սք կոյս : Հուրն  
 ,, անձ 'ի քեզ վառեալ , յարգանդ բո մաքուր  
 ,, բուրվառ . հոտ անմահուե՛ բուրեալ , մայր  
 ,, մանուէլի սք կոյս : Ադամ մեր նախնին՝ և  
 ,, որդիք նորին՝ քեզ եմք 'ի յանձին . ցաւ նոցա  
 ,, սրտին՝ խոցմամբ բանսարկո՛ւին՝ քև փարա  
 ,, տեոցին . դռչեմք լալազին՝ մեք ողորմագին՝  
 առ

11 առ քեզ մա'յր բանին : Մք կոյս տիրամայր . . .  
12 անձն իմ ցաւագար , դու բուժել յարմար ,  
13 11 Լեր դեղ ծածկաբար :

11 Յոյս և ապաւէն՝ Նեղեւոցս յախտէն . Հնչեա՛  
12 11 զհողմն քո Մա'րիամ , Ողջացո՛ւ աստէն :

11 Չքնաղ օրհորդ , Պսակ մաքրաղարդ . Չուր  
12 11 զովացուցիչ մա'րիամ , Ռեւին քաղցրածոր :

11 Արամարդ բարի , Վարսդ մարդարտալի .  
12 11 Տատրակ տենչալի մա'րիամ , Բասդոն դեղ  
13 11 վերի :

11 Միջնորդ հաշտութեան մօր մեղուցելոյն ,  
12 11 դաւազան յուսոյ հօր դըլորելոյն . կտակ ան  
13 11 ջինջ . արձան օրհնուէ հօր այ առ իւր արա  
14 11 րածս . ահա հայցեմք 'ի քէն մա'յր կենաց ,  
15 11 զմերս ընծայեա՛ աղերս մաղթանաց , աղա  
16 11 չեմք ॥ :

Շարականին բաներն ալ սրտանց ըսէ՛ առ սք  
11 11 անծածինն պաղատելով . \* Պու լուծիչ երկանց ,  
12 11 բարձօղ անիծից . դուռն երկնից , և ճանա  
13 11 պարհ արքայութե . միջնորդ այ և մարդկան ,  
14 11 բարեխօս միշտ Յի . օգնական և շնորհ Յի .  
15 11 փրկուէ մայր , մայր կենդանուէ . մայր հաս  
16 11 տատուէ մարդկան . յոյս հաստատուէ մարդ  
17 11 կան . յոյս մեր և ապաւէն . խարխիս յուսոյ  
18 11 հաստատուէ . գրաւական կենաց մարդկան :  
19 11 ( վայ ) Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի ,  
20 11 գերագոյն և հրաշալի , և բաշխօղ բարուեց .  
21 11 աղբիւր ես ծարաւեաց , և հանգիստ աշխա  
22 11 տելոց . և եղեր վերընկալ անծային բանին ॥ :

11 11 Կուզես նէ , քեզի Յաբառ խօսքերով ա  
12 11 զօթք մընալ դրեմ , որ սիրտդ բանաս սք ան  
13 11 անծայ առջև , ու ամեն հողևոր տէրտիդ տէր  
14 11 ման դանաս :

\* Ո՛վ ամենասուրբ տիրամայր կոյս անծածին՝  
11 11 մա'յր

11 մայր ողորմութե , կաղաչեմ որդիական հա-  
11 մարձակութե , մէյմը նայէ՛ մայրական և զթած  
11 աջօրդ ինծիպէս ուղորմելի ու իողճալի հիւան-  
11 դի վր . որ քանի կերթամ՝ մահունան դուռը  
11 կրմօտենամ կոր մեղքով . չըլայ թէ արդէն  
11 մեռած ալ ըլլամ հողուով : Դուն աւելի դի  
11 տես իմ ցաւս , ու աւելի կրցաւիս իմ վրաս ,  
11 քան թէ ես՝ որ ցաւին փոքն եմ , ու հիւան-  
11 դունես ծանտրուիր չեմ իմանար . անոր հա-  
11 մար իմ երկնաւոր բժիշկս քու միածինդ սրբ-  
11 տանց չեմ փնտռեր . անոր համար քու ոտքդ  
11 չեմ դար՝ որ մէկ հատիկ դեղ կենաց կրնաս  
11 ըլլալ ինծի :

11 Ներէ՛ կաղաչեմ իմ ինչունան հիմա ըրած ան-  
11 հոգունես , և դուն տուր ինձ է՛ն առաջ դեղ  
11 մը իս արթնցնելու ՚ի մահաբեր քնոյ աս հի-  
11 շանդուն : Էտեէն դուն տուր ինձ , ի՛նչ որ  
11 դիտես իմ հոգւոյս հարկաւոր , օգտակար և  
11 վայելուչ դեղ՝ առողջարար և ամէն իժիբ  
11 առողջ պահօղ . ինչպէս են պէսպէս շնորհք  
11 և առաքինուիք . որոնց ինչունան հիմա չեմ  
11 ճանչցեր պիտո՛ւականուիք , անոր համար ետ  
11 եմ կեցեր : Դուն տուր ինձի քու ամէնօրհ-  
11 նեալ ձառքովդ՝ որով կերակրեցիր ՚ի ման-  
11 կուն զյս փրկիչն իմ , դուն տուր կրսեմ ին-  
11 ծի պէտք եղած դեղ կենացը , թէպէտե ին-  
11 ծի առջի բերան անհամ ալ երևնայ կի՛ լեղի .  
11 դերէ ես հիւանդ եմ , իմ բերնիս համը կորու-  
11 սեր եմ . ես հիւանդ եմ , զարարլք քաներ կու-  
11 ղեմ ուտել . ես հիւանդ եմ , դեղէն կրփախ-  
11 չիմ : Բայց դուն որ բժիշկ ես հոգւոյս , և  
11 մէկ հատիկ դեղ կենաց , վրայ տուր , ու տուր  
11 ինձի՛ ի՛նչ որ պէտք է իմ առողջունես ու կեն-  
11 դանունես համար . կուղէ լսա՛չ ըլլայ , կուղէ

,, աշխատանք , կուզէ մարմնաւոր չքաւորու  
 ,, թի , կուզէ մարմնաւոր հիւանդուի , և ամ  
 ,, մէն կերպ մարմնաւոր ձախորդութի . միայն  
 ,, թէ հոգւոյս յաջողութի ըլլայ , հոգիս ողջըն  
 ,, նայ առողջանայ ու կենդանի մնայ յաւիտեան :  
 ,, Աս հաւատքովս կը յանձնեմ զիս քու մայրա  
 ,, կան ձեռքդ . և կը հաւատամ որ անտարակոյս  
 ,, կընես՝ իմ ուզածէս էւել , ՚ի փառս միածնի  
 ,, որդւոյ քո և նոյ մերոյ , որում փառք յաւի  
 տեանս . ամէն ॥ :

Ե . Ասչափս հերիք է քեզի՝ որ ճանչնաս սք  
 անծածնայ խըյակթը . կատարեալ դեղ կենացը  
 գիտնալէն ետև՝ անկից վաղ չես իգար . միայն  
 թէ քու հիւանդ ըլլալք գիտնաս . ( բանը հոս  
 է , ) քու մահուչափ ցաւդ ճանչնաս , բուն  
 ախտդ աղէկ հասկընաս , ու ուզենաս առող  
 ջանալ ու կենդանի մնալ յաւիտեանս . ապա  
 թէ ոչ զինքը ողջ առողջի տեղ դնողը՝ հիջ դեղի  
 ետևէ չինկնար . ոչ բժիշկ կը փնտռէ , ոչ դեղ կե  
 նաց կուզէ . և այսպէս կըլլայ անբժշկելի , ու  
 ինքը իր արուեր կը մտնայ . մարդասպան է , անձ  
 նասպան է . որով և հոգեսպան :

Շատ բան պէտք էր հոս խօսիլ սք անծածնայ  
 գթութիւնը վր , խնամակալութիւնը , և ճշմարիտ  
 մայրութիւնը . և այնպէս շարժել կարդացողաց  
 սիրտը ՚ի ջերմեռանդութի . բայց ուղօղը կը գտ  
 նայ զայս ամ ուրիշ գրոց մէջ , մանաւանդ ՚ի  
 տասներորդ ճառն նոր տպուած պատկերի տօ  
 նից սք անծածնի . որ գրաբառ է՝ ամմա մախ  
 առևս Յաբառի մօտիկ պարզ ոճով գրած է , որ  
 ամմէնքը կարենան հասկընալ . իսկ այնչափն  
 ալ չի հասկըցողին՝ վերջին ըսելիքս հիմա կը  
 սեմ :



Վերջաբանական յորդոր առ դրագիտութի, ըստ որում է դեղ առողջարար հոգւոյ :

**Լ**ինչն երկնաւոր բժշկապետն այսպէս ի շնորհակալե՛ ռ  
 բնոյ որ իրենց հոգին ապրեցնել ի շնորհակալե՛ն . \* **Քըն**  
**նեցէք զգիրս , զի դուք համարիք նորօք ունել**  
**զկեանսն յաւիտենականս ॥ : ( յովհ . Ե . 39 : )** Եւ  
 իրաւ որ առանց փեղեկոմէ գրոց՝ ո՛չ ճշմարիտ հաստա  
 քը մշտան ի շնորհակալե՛ն , որ է արժապ ծառայն հոգեւոր ի շնորհակալե՛ն .  
 Եւ ո՛չ առաքիլի վարձը հասըլ ի շնորհակալե՛ն , որ է պարտաւ ծա  
 ռայն ի շնորհակալե՛ն : Ո՛չ ի շնորհակալե՛ն մարդ հապարտաւ ի շնորհակալե՛ն  
 առանց գիտումէ որ ՚ի գիրս ի մասանոց եւ ի մասառաւ  
 ըաց , եւ ո՛չ հապարտաւ քրիստոնէոմէ ի շնորհակալե՛ն գիտումէ  
 առանց գիտումէ սԲ գրոց եւ գրեանց սԲ վարդապետաց :  
**Մ**արդ հայ՝ մարդ ալ հայ . քրիստոնէայ հայ՝ քրիստո  
 նէայ ալ հայ . նմանապէս գիրք հայ՝ գիրք ալ հայ . ուս  
 փի յինեցէ՛ք զգիրս ի շնորհակալե՛ն արեւմտեաց , աճմե՛ն Բանը մեջը  
 ի շնորհակալե՛ն . ահանէ՛ որ՝ վախճանը ըլլայ յառա՛ք Բերել  
 զառողջարար դեղ հոգեւոր , եւ անո՛վ սքանալ աղէկ ի շնորհակալե՛ն  
 Բարի առ աշխարհիս վրայ , եւ աճե՛նալաւ ի շնորհակալե՛ն յառե՛ն  
 փենահան անդին :

**Ա**հանէ՛ եւ նե՛ մեր ազգին մէջն որ հոգեւոր անձ ծաղկեց  
 նել զնորքին եւ զարքային գիտումէ , եւն առաջ պիտոր  
 ջանանք գրագիտումէ դառուը Բանալ . դառուը գոց է  
 նե՛ ի ներձ ի շնորհակալե՛ն . յայտ է թէ Բալլէրո՛վ . գրոց գե  
 փումէ Բալլէրո՛վ որն է . յայտ է թէ գրոց լեզուն , որ է  
 առել գրաբանու համ գրաբարբանու : Ասոր համար մեր  
 երջանի՛ն նախահայրը՝ Միսիկար Աբբայհայր հեղինակ  
 էրաւ առջի Բարագրի գրաբան լեզուն . եւ անոր պը  
 փումն է՝ զոր ի շնորհակալե՛ն մե՛նք իր աշխարհիս , եւ մեղի  
 հե՛ք

հէփ ալ Բողոք աչգը : Ո՛չ աչգը Ինքեար իննէ առ Երախ  
 փոքս , և ո՛չ Տէնք Ինքեար իննէնք աչգին Երախափե-  
 փո-իը , որ չանի՛ գնաց նէ՛ ա-եւի Բացոնեցաւ Գրա-  
 փոքո-է Տէջ . այնչափ որ պէտք էր Տէչի հեփպհեփե՛ ա-  
 -եւի Խօյոս Գրաքառ լեզունով ա-եւի Խորին և Բարձր  
 Բաներ Դո-բս հանել . և սահայն ցա-աւի Ժորձը՝ ցա-ին  
 ինօրէ Դէչ քաւը հարկա-որ աեանալով՝ հարկա-որեց  
 Տէչ որ շափ Բան չէ՛ թէ Տիայն պարզ և շի-արեմաց Գրա-  
 քառ ընէնք , հապա նաև աշխարհաքառ գրքեր ալ հա-  
 նէնք . Ինչուն առ Գէչ իննայն ալ սփաստօլոս- լեզունով  
 Գրենք ո-ասիօրեն , այսինքն աշխարհաքառ Տը քաճէե-  
 րենով Խառն . զերէ նիէն-ս ասպեղը լեզոս սորվեցնել  
 չէ , Բան հասկըցընել է . օգոսփինոսին ըսածինպէս՝  
 Բաւլեփք Դո-առը Բանայ փե , իո-պէ սսիէ Բաւլեփ է Ե-  
 շեր , իո-պէ Երկնէ , իո-պէ Ժայտէ : Բան հասկըցօղ  
 Տարբը ինհասկընայ՝ որ Ժողովարդին հաւը հասկընաւին  
 իո-գայ սասնչ Բան ընելը . Բայց Տէյճալ Ինծի հարցը-  
 նելոս ըլլան նէ , ո-րիչ Բան ալ ինչլսեն . աշէն աշէն ա՛լ  
 Տա , Ինչուն էրք աչգերնիս անգրափեփ փայ , ո- Տէչ  
 սասնչ Բանի պարփա-որէ . և չիթողոս որ ա-եւի ա-  
 տալ Երնայ ան գիտո-ի և Իճասփո-նի-ան աչգին Տէջ :  
 Քիչ Տալ Խայրեն ընէն՝ իաղաչեմ , զերէ Տէ՛ իոչմանէ Տը  
 շափ հարկա-որ , օգոսկար և զոճարճալի Բաներ իան  
 հանելոս գրոց լեզունա . Բայց արդեն Ելածնէրն որ չեն  
 հասկընար , Ինչ ընէնք . Տէյ Տալ որ՝ սք Վրայաց Վճիտ  
 է , Թէ անո-սո-մոս-նէ ատալ իո-գան ան իոպո-ա-իք  
 և անկարգո-իք . Իսչ ընք հահառ-անն ցայտնի է որ ան  
 պիտոճան Բաներ , Բարակ արհեստներ ալ , ոսոման  
 պո-ո-ղ է : Ո՛վ իննայ Ճանչնալ ի՛ն՝ պարտել ի՛ն՝ գո՛վել  
 Գիտո-նի և Իճասփո-է արդի-նիք , և հասկընալ անի-  
 ճասփո-նի փաները , ըսք հոգո-այ և ըսք Տարփոյ .

Բայց Տիայն Իճասփո-անն :

Մէն չանի Խօսք յիշեցնէմ առ Բանիս Վրայ , Իճասփո-ն  
 Վրայ գրքերէն . \* Ուսանելն է առաջին ք զառ-  
 նելն .

նելն . և բազում անգամ առանց դիտուեն հրա-  
հանդեալն սխալ դտաւ ॥ . Իգնաս . Տէն . Ղ . Ժ .  
40 : \* Չի՛ք խաւար դգալի՛ որ դիտէ այնպէս կու-

րացուցանել զմարմինն , որպէս տգիտութիւն  
զմիտա . և ոչ դոյ լոյս՝ որ այնպէս լուսաւորէ  
ղաջս , որպէս դիտութի՛ն զհոգին ॥ . սարգ . Տէն .  
յաչ . ճառ . Դ :

\* Ամ չարիք մտանեն՛ի միտս մար-  
դոյ յանուսու մնուէ . կոյր զրկի՛ ՚ի ճառագայ-  
թից արեգական , և տգիտութի՛ն զրկի՛ ՚ի կատա-  
րեալ կենաց ॥ . եղիշէ . ԳԼ . Բ :

\* Բիւր չարեաց պատահեմք ՚ի գրոց ազիտու-  
թէ . ղի զոր օրինակ առանց լուսոյ ոչ ոք կարէ  
ուղիղ գնալ , սոյնպէս և որք ոչ հային ՚ի ճա-  
ռագայթոս անձային գրոց , հանապազ մեղան-  
չեն ॥ . Բարսէղ ճոն . Տէն . Տարչ :

\* Արջափ դիտուին բազմանայ ՚ի մեզ , այնչափ  
և շնորհն . քանզի յորժամ առաւելու դիտու-  
թին , հանգոյն նմին և սրբութին . և որքան  
սրբիմք , այնչափ և զանձ յանձինս տանիմք ॥ .

Շարհ . ՚ի ծաղիսառ Տէն . կաթուղ . Բ . պեք :

\* Արջափ ՚ի դիտութի՛ն հասանէ մարդ , հիմն լինի  
առաւել բարձրագոյն դիտուէ ॥ . Նարեկ . Տէն .  
Երգ . Գ . 3 : Ասոր ճը գրաբառ հասնչոյչը՝ առ խօս-  
տերէս շաք Բարակ Բան կըհասնչնայ . ու աւելի գրա-  
գիտ և Իմաստան ըլլալու սիրաբ կըվառուէ : Իսկ Է-  
Թէ աշխարհաբառ ուղեկայի Բարգճանել սք գրոց համ  
Վրացայ վէպոսիները , ո՛չ նոյն Բարակ Ռոքալ Տէրաան էել-  
լեր , և ո՛չ նոյն անուղ հաճը կառնուէր :

Չէ՛մ ուզեր երչան Բացարել յայանի Բանը . ես ուրիշ  
Բանձալ ունիմ պրոպելլում՝ որ գիտնոց և պգիտաց Ռա-  
պէս հարչաւոր է գիտնալը . այսինքն ամեն ազգի Տեջ  
աշխարհաբառ լեզուան Երաս որ գրով ալ ծաղիեալ է ,  
ճանաւանդ Եւ աշխարհաբառ գիրք ըլլայնէ՛ գրաբառ  
գրտերոան խըյեթը չգիտացուէր , ու գրաւոր գիտու-  
նին

Բնին ալ շաք առաջ չէր լար . ոռոտի Ինչեար չէ՛ ընէր  
 աշխարհաբառին պիտանոնին ալ : Եւսայն չէ՛ Լե Տիայն  
 ամեն Բան աւելի շէնքով շորհչով ի՛րլլայ գրաբառ ,  
 ( Վն զի է հանոնաորեալ և վարդեպ լեզու և Բոն  
 նախնեաց աւանդոտիւր . ոռոտի աս գիրքս գրաբառ շէ  
 նէի , Ինժի քասը Խալի Խօլայ էր՝ ու չառստան Խալի ալ  
 անոն շէնգար , ) հասպա նաև Բոն գիրքոտի և Իճաս  
 քոտի ըսածնիս՝ Տանաւանդ անժայիսն՝ գրոց լեզունա  
 ի՛րլլայլէ , գրոց լեզունա Խորոննէ ի՛րհասնըլնէ ու ի՛ր  
 հասնըլոտնէ , և աւելի ի՛րճօքեցնէ Տիպը այ . որոն ներ  
 հանը ի՛րնայ ըլլալ ամեն Բան որ աշխարհաբառ գրոտնէ  
 նէ :

Փորձով յայտնի է շաւ Ես . արեմոտքը արեւելքէն լու  
 սաւոր էր ան Իճասքոտի և գիրքոտի՝ գրոց լեզուն չա  
 նի՛ որ ծաղկեալ էր . չանի՛ որ գրաբառէն ճաննըլցան ,  
 ու աշխարհաբառի ընկընցան նէ , ամեն ի՛րոց պիտա  
 նի և անպիտան Բաներ շապան չափէ՛ Ի Դոտրս . և  
 Տոտքը է շաւ Տոտի : Բայց Ինչո՞ն էս Իճ քերքս Թը  
 շէր է՛՛ , ու ոտրիշի քերքը ի՛րհոգա՛մ :

Մեր ազգին Տնժ պահստոտիւր ( շաք ինչճանէ՛ շաք Բա  
 նին Տը ) աս չէ՛ Տի , որ Տէն լեզու Տէն աչգ չէ՛ Ինչպէս  
 որ պէտք էր . Իր լեզուն այնչափ չի գիտեր , որչափ օ  
 քար լեզու . ոռոտի ո՛չ Իրարոտ Խօսքը աչէն ի՛րհասնը  
 նան , ( որ է արճապ անժաբանոտի՛ և սիշլին Բաժան  
 Տան , Ինչպէս Բաբելոնը է շաւ , ) և ո՛չ Իրենց իճճ է շէր  
 ցը քերքը գիտեն՝ որ անոր ի՛տօրէ Դեշը ընեն : Աս  
 Բանիս Տը էս ամեն ընելիս լինոցոտի . Ինչ գրոց լե  
 զուն հասնըլոշնէրը՝ ասից ամեն Բանը հասնըլնան .  
 \* որ ունիցիս սկանջս լսելոյ՝ լուիցէ ॥ : Ալ չէ՛՛ էր  
 ի՛րնըլնէր . շէրէ հիճոհրապէս Բժշիին Խօսքն ալ Իրաւ ի՛ն  
 ընանայ . \* Ա՛յ շատ՝ պատերազմօղ է քնու թի ॥ :  
 Եւ Դարձեալ ի՛րէ . \* Քուս և տքնու թի՛՛ երկա  
 քանչիւրն աւելի քան զչափ եղեալ , չափ ( է ) ॥ :  
 Նճանապէս ի՛րէ . \* Ո՛չ շատակերուի , ո՛չ սով .  
 և .

և ոչ այլ ինչ՝ բարի, եթէ առաւել քան զընու-  
թին իցէ: Միայն հիբոհրաբէսէն հալար խառն խե-  
շացի բժիշէ Տէ Գրայ. անոր Բանը աղէէ է հոս յիշաբանի  
փեղ Դնէլ. \* Եհարց ոմն ՚ի հարանցն լէ իմաս-  
տուն բժիշկ մի, և ասէ, ամ ցաւոց դեղ գի-  
տենս ո՞վ իմաստուն: Ասէ բժիշկն. յոյժ գի-  
տեմ, թէ լսես ինձ: Առ զշաքարն ապաշխա-  
րութէ, և զծաղիկ եղբայրսիրութէ, զտերևն  
աղքատսիրուէ, և զպտուղն խոնարհութէ. և  
լից ՚ի հաւան սղորմուէ. և աղա՛ զինքն ծունր  
ածելով. և քամէ՛ ՚ի դաստառակն տո՛ւայտու-  
թէ. և արտասո՛ւախանն ըմպէ յամ մէջ գիշե-  
րի: Այս է ամ ցաւոց դեղ. որ ոչ միայն զներ-  
քին մարդն բժշկէ, այլև զարածքինն սրբէ և  
նորոգէ և մաքրէ ॥ Վարձ հարանց. Գլ. ԺԺ. Ե-  
րէս 403:

Ի վախճանի իշխիշէցնէմ և Ոսկէբերանին հարհատոր  
խօսքերը վերջաբանուէ փեղ. ( Ոսկ. ամ. 22. եր-  
էս. 220. ) \* Բանս այս ընդ ամենեսեան խօսի,  
և դեղս կենաց կայ առաջի հասարակաց: Ար  
կարօտուի ունիցի իւրաքանչիւրոք յունկնդրո-  
ղաց՝ զոր յարմարագոյն է իւրոյ ախտին. . . .  
Ապաքէն զի և բանս գտանիցէ զպէտս իւր, որ  
սիւռեալ է ՚ի վր ամցն: Ամկ և գիրք անձայինք  
բազմադէմ և յաղագս բիւր իրաց խօսին լէ մեղ.  
քիլի լէ համօրէն բնուիս մարդկան խօսի. և  
՚ի բազմուիս յայսքան՝ հարկ է զախտ հոգւոցն  
իմանալ, և զդեղն ՚ի բանիցս գտանել. . . .  
Հնորհօք և մարդասիրութ՛ ան մերոյ յի ըն. լէ  
որում հօր և հոգւոյն սէյ փառք, իշխանուի  
և պատիւ այժմ և միշտ, և յաւիտեանն յամ խոթ

նից. ամէն:  
Վ Ե Ր Զ:  
X. ՄԱՍՍ Ի ՏԱՆԿ



# Յ Լ Ե Կ

Գլխոց բովանդակելոց 'ի մատենիս .

Յանաջաբանութի .

iii .

ԳԼ. Ա: Անաջին ողնութիւն Տարրոյն , եր-  
տի ցաւը , և զէշը . այսինքն են  
երես վեճակս՝ անմեղ բնութիւն , ան-  
կեալ բնութիւն , և նորոգեալ բը-  
նութիւն : 1

ԳԼ. Բ: Դեշ սկզբնական մեղաց . որ է  
մարտութիւն : 7

ԳԼ. Գ: Դեշ ներգործական մեղաց ան հա-  
սարակ , որ է ապաշխարութի : 16

Յօդ . iii : Բացարարութի քեսական ներգոր-  
ծական մեղաց : 20

Յօդ . iv : Եղանակ ճշմարիտ ապաշխարու-  
թեան : 28

ԳԼ. Դ: Հարկատրութի Տանաւոր զէշոց՝  
ընդդէմ իւրաքանչիւր մեղաց 'ի  
Տանաւորի : 37

ԳԼ. Ե: Անոք հոգարարութի . և զէշ նորա՝  
խոնարհութի : 43

ԳԼ. Ջ: Անոք նախանջոտ . և զէշ նորա՝  
եղբայրսերութի : 60

ԳԼ.

ԳԼ. Ե:	Ախար Բարկոս-ԼԷ. և զԵՂ նորա՝ հեղոս-ԼԷ:	80
ԳԼ. Ը:	Ախար Ժոսալոս-ԼԷ. և զԵՂ նորա՝ ժոյլ, համ էոսանդն հոգոյ:	101
ԳԼ. Թ:	Ախար ագահոս-ԼԷ. և զԵՂ նորա՝ չափաորոս-ԼԷ և աղասորոս-ԼԷան հոգոյ:	121
ԳԼ. Ժ:	Ախար որհրաճոլոս-ԼԷ և Բըլախո- հոս-ԼԷ, և Տէհ հասիհ զԵՂ նորա՝ Բարեխոսանոս-ԼԷ:	136
ԳԼ. ԺԱ:	Հասարակաց համ Բալճոս-ԼԷ ներ- գործական ցասա՝ որս աւելի զԵ- ղոյ հարօթին շնորհացն ան:	165
ԳԼ. ԺԲ:	Փորջոսիս՝ առ հասարակ և Տաս- նասոր. և Գըլխոսար զԵՂ նո- յա:	200
ԳԵՂ. ան:	Արևնոս-ԼԷ:	202
ԳԵՂ. Բ:	Ալօս:	209
ԳԵՂ. Գ:	Համբերոս-ԼԷ:	226
ԳԵՂ. Դ:	Ապս-ինոս-ԼԷ աս անծ:	235
ԳԼ. ԺԳ:	Երեք նախապահօղ զԵՂ, սԷ հա- շորդոս-ԼԷ, համասոր ապաղխո- րոս-ԼԷ, և զգոս-ըն-ԼԷան ցաս- ԼԷց:	239
ԳԼ. ԺԴ.	Ոսանոս-ԼԷ. որ է չար համ Բարե սոլորոս-ԼԷ:	251
ԳԼ. ԺԵ:	Ներհական զԵՂ՝ Տըլացն առնե- լոս-ԼԷ և զանցասոս-ԼԷ:	265
ԳԼ. ԺԶ:	Երբեան Ճանապարհ հասարելոս- ԼԷան:	275
Յօդ. ան:	Ճանապարհ Տաքոս-ԼԷ:	279
Յօդ. Բ:	Ճանապարհ լոսասորոս-ԼԷ:	285
Յօդ. Գ:	Ճանապարհ Տիասորոս-ԼԷ:	291

ԳԼ. ԺԷ : Կրթն-նի ճշանջենասոր : 296

ԳԼ. ԺԸ : Վերջին ճանա-անդ թէ աստղին  
հասարեալ Կէշ հենաց սԲ անժա  
ծին : 300

Վերջաբաննան յորդոր աս Գրա-  
Գեոր-նի. ըստ որում է Կէշ ա-  
սորջարար հսգորց : 309





# Յ Ե Ն Կ

Բանից ըստ այբո-բէնից •

- Ա գահաձուլի • իմ թամազ • 121 = 135 :
- Աղօթք • 209 = 225 : 254 : 259 : 284 : 295 :
- Ամբարտաւանութի • տէս Հսպարաութի :
- Անգահաձուլի • տէս Որհրամոլութի :
- Անէծք • 94 :
- Անիրաւութի կամ խարդախութի • 174 :
- Անհողութի • 166 : 172 :
- Ամառաձուլութի • 1 = 7 :
- Ամառածութի • 166 :
- Անոխահալութի • 91 :
- Ապաշխարութի • 16 = 42 : 243 :
- Ապաւինութի առ ամ • 235 = 238 :
- Ասիթք մեղաց • 249 :
- Ասեղութի մեղք • 20 = 26 : 265 :
- Այ խրատք • 179 :
- Ածածին՝ գեղ կենաց • 300 :
- Ատելութի • 89 = 93 :
- Արբեցութի • 140 :
- Արթնութի • 202 = 209 :
- Արիութի • 236 = 239 : 260 : 288 :
- Արծաթսիրութի • տէս Ագահութի :
- Բամբասանք • 96 = 100 :
- Բարեխառնութի • 136 = 165 :
- Բարկութի • 80 = 93 :
- Բղջախոհութի • 136 : 142 = 146 :
- Բնական աուրք • 1 :
- Գերբնական շնորհք • 1 = 4 :
- Գիտութի յորդորանք • 309 :
- Դանդաղութի • 171 :
- Դեղ կենաց հարկաւոր • ք • Է : 7 :

Դ ժ ո լ ա

- Դժռւարին և դիւրին • 258 : 261 : 288 :
- Դիաաւորուն ուղիղ • 290 :
- Դրախաին վիճակը և կորուսար • 1 = 7 :
- Եղբայրսիրուն • 60 = 80 : 288 :
- Եռանդն հոգւոյ • տէս Փոյթ :
- Երկայնմաութի • 234 :
- Երկիւղն ան • 280 :
- Ջանցառուն մեղք • 28 : 265 = 274 :
- Ինքնաճանաչուն • 279 :
- Խղճմտանքի մարբուն • 286 :
- Խոնարհուն • 43 = 59 :
- Խոստովանութի • 30 = 37 :
- Խրատ մտիկ ընել • 180 :
- Խօսք հասկընալ • 191 :
- Ճուլուն • 101 = 120 :
- Կատարելութի • 265 : 175 : 289 :
- Կեանք ինդրելի • ան = 6 :
- Կենդանի • քանի՞ կերպ • ան = 7 :
- Կրթուն • 40 : 296 :
- Հաղորդութի • 239 :
- Համակերպութի • 291 :
- Համբերուն • 226 = 235 :
- Հաւատք • 32 : 258 : և գործք • 183 :
- Հիբոկրատէսին առածները • 119 : 120 : 312 :
- Հիւանդունք հոգւոյ • 4 = 7 : 17 : 18 :
- Հպարտունք • 43 = 59 :
- Ճանապարհ մարբուն • 279 : լուսաւորութի • 285 :  
և միաւորուն • 291 :
- Ճգնուն կի՞ մահացուցումն • 243 : 289 :
- Մահ • 3 : մահը չի մոռնալ • 169 : 260 :
- Մեղք • քանի՞ կերպ • 7 : 16 : 20 = 42 :
- Մենծ ու սղախի բան • 187 :
- Մկրտուն • 7 = 16 :
- Մտադրուն, և մտադիւրուն • 263 : 264 :
- Յանդգնուն • 185 :
- Յարատուն • 265 :
- Յիշոցք • կամ քիւֆիւր • 94 :
- Յոյս հաստատուն • 32 : 236 :
- Նախանձ • 60 = 80 • բարի • 65 : 79 :

- Կերկայուէն նոյ • 287 :  
Շորհր • 1 = 4 : 199 • 200 :  
Ուսակալուէն • 89 = 93 :  
Ողջախոհուէն • 148 = 165 :  
Որկրամնչութի • 136 = 140 :  
Ունակուէն • տէս Սովորուէն :  
Չարութի • 26 :  
Պատուէրան ստորասական և բացասական • 266 :  
274 :  
Պարկէշուէն • տէս Ողջախոհուէն :  
Սէր նոյ • 33 = 36 : 274 : 295 :  
Սկզբնական մեղք • 7 = 16 :  
Սովորուէն բարի և չար • 251 = 265 :  
Սքերուն բարի օրինակը • 107 : 247 : 262 : 284 :  
Տգիտուէն • 25 :  
Տժգոհանք • 177 •  
Տկարուէն • 23 :  
Փոյթ և եռանդ • 117 = 120 :  
Փորձուէք • և անոնց դեղք • 200 = 238 :  
Քահանայից խրատ • 111 : իրենց պատիւը • 193 :  
Քս նորն մեր է դեղ կենաց, և բժիշկ հոգւոց :  
5 = 8 : 46 = 49 : 107 : 152 : 192 : 239 : 294 :







